

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ

ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵց՝ ԱՀԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ



Փետրուար 22, 1920
Լոնդոն

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊՈԼ ԿԱՄԲՈՆԻ ՀԵՏ

Մեր սահմանները որոշող յանձնաժողովի առաջին նիստին իմ եւ կամերերի հետ եղած վիճաբանութիւնից յետոյ, գնացի Ալբերդ Թոմային գանգատ, որ այդ պահուն Լոնդոն էր գտնւում, որպէս Ազգերի կիզային կից Միջազգային Աշխատանքի կոմիտէի նախագահ։

Ես ասացի, որ մեզ համար ծանր է ու կակծալի ֆրանսիայի ներկայացուցիչի վարմունքը եւ բնաւ չի համապատասխանում տարիների մեր գուրգուրած յոյսերին եւ մեր խորունկ համակրանքին դէպի ֆրանսիան։

- Ո՞վ է մեր ներկայացուցիչը Յանձնաժողովում։
- Կամերեր, — պատասխանեցի

— Oh, il est peu français, que son nom! (Նա նոյնքան քիչ Փրանսիացի է, որքան իր անունը) :

Ուզեց ասել, թէ կամերեր հրէայ է, ինչ որ ճիշդ է։

— Թող այդպէս լինի, — ասացի, — բայց նա խօսում է ֆրանսիայի անունից։ Շատ եմ խնդրում ձեզ, որ մեր բարեկամ միջնորդ լինել մեր եւ ձերոնց մէջ։ Բերթըլօն էլ բաւական վատ է տրամադրուած։

Եւ խնդրեցի Փաշային եւ ինձ տանել Միլլրանի մօտ։ Խոստացաւ։

Այս տեսակցութիւնն էր նշանակուած այսօր։ Մեզ հետ լինելու էր եւ պատրիարքը։ Եւ երբ հասանք ֆրանսիական դեսպանատան, փոխանակ Միլլրանի, մեզ ընդունեց Paul Cambon — դեսպանը։

Փաշան, ըստ սովորութեան, խօսեց Կիլիկիայի մասին։ Ես զգուշութեամբ խօսքը դարձրի ամբողջ Հայաստանին վերաբերեալ խնդիրների մասին։

P. Cambon-ի տուած պատասխաններից պարզուեց։

1) Որ ֆրանսիան տրամադրի չէ Կիլիկիայից հեռանալ, եւ գուցէ ստիպուած լինի պահել այնտեղ թուրքական Suzerainete'։ Ի հարկէ, կայ Suzerainete' եւ Suzerainete' անուանական է լինելու, առանց վալիների, միւթէսերիների։

2) Որ Կիլիկիայում հայերը նկատում են, որպէս մի գաղութ, որ իր պաշտպանութիւնը կ'ունենայ։

3) Որ մենք անպատճառ ծով կ'ունենանք, — որովհետեւ աւելացրեց, Լե-

Հաստանն անցեալում ծովի պակասից մեռաւ : Նոյնը կը լինի եւ ձեզ հետ, ևթէ մնաք առանց ծովերի ելքի :

Մարտ 16, 1920
Լոնդոն

ԵՐՐՈՐԴ ԶՐՈՅՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՈՐՈՇՈՂ
ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ» ՀԵՏ

Այսօր երրորդ անգամ լինելով ներկայացանք Յանձնաժողովին Փաշան, ևս, գեներալ Կորգաննեան եւ Պատրիարքը :

Ներկայ էին՝ Vansittard, Kamerer և գնդապետ Castoldi : Նախագահը յայտարարեց հետեւեալը .

«Conseil Suprême-ը, միաձայն որոշած լինելով կարմել աղատ անկախ հայ պետութիւն, եւ քանի որ մինչեւ այժմ կարելի չ'եղաւ որեւէ պետութեան յանձնել Հայաստանի մանդան, ուստի առաջարկուեց Ազգերի Լիգային իր հովանու տակ առնել նորակաղմ Հայ պետութիւնը : Յանձնաժողովը հրահանգ ունի հարցնել Հայ պատրաստակներին, թէ ի՞նչպիսի կարիքներ կան, որ մանդատերը պիտի լրացնի, զինուորական, ֆինանսական, վարչական ինչ կարիքներ կան, եւ ո՞րն է այդ կարիքների չափը» :

Մենք ժամանակ խնդրեցինք պատասխանելու այդ հարցերին : Մեզ տըրուեց 4-5 օր ժամանակ :

Ես հարց դրի, թէ որո՞նք են սահմանները Հայաստանի : Դա անհրաժեշտ է զիտենալ դրուած հարցերին պատասխանելու համար :

Vansittard ասաց ինձ թէ «իրաւացի էք՝ բայց ևթէ մենք գաղտնիք ենք պահում այդ առժամանակ : Դա պարզապէս ձեր շահերի տեսակէտից : Լաւ չէ, որ թուրքերն այժմէն իմանան, թէ ի՞նչ է խւում նրանցից : Այլապէս նրանք կարող են պատրաստութիւններ տեսնել : Սակայն, կարող եմ ձեզ ասել, որ զուք կ'ունենաք երկու խոչոր հատուածները Հայաստանի՝ կովկասեան ու թուրքական, Վան, Բիթլիս, Մուշ, Նաեւ էրզրում, եւ շատ աւելի անդին քան էրզրում, բայց առանց հասնելու Երզնկային, ի հարկէ մէջ առնելով Մամախաթուն : Մնացածը յոյս ունեմ զուք զիտէք» :

Անախորժ տպաւորութիւն գործեց սկզբում եւ որ երր նախագահը յայտնեց թէ մեր մանդատն առաջարկուած է Ազգերի Լիգային, Փաշան ի պատասխան յայտնեց թէ՝ մենք այդ զիտենք Matin-ից եւ շտապով գրպանից հանելով յիշեալ թերթի մի կտրոնը, սկսեց բարձրածայն կարդալ այդ լուրը :

Այս ժողովից յետոյ՝ Աջմեանի եւ Օհաննէս Խան Մասեհեանի մասնակցութեամբ պատրաստեցինք խորհրդականների վերաբերեալ փաստաթղթերը, ինչպէս եւ մեր զինուորական պէտքերի չափը : Այս առթիւ եղած ժողովում Փաշան ներկայացրեց մի ծրադիր, որով մեր անկախութիւնը շատ էր սղմուում եւ շատ լայն իրաւունքներ էր տրուում մանդատէրի ներկայացուցիչ բարձր կոմիսարին եւ մասնաւորապէս ինչ որ վարչական մարմնի որը կոչւում է Canseil Mixte — բազկացած կիսով չափ հայերից եւ պետութիւնների ներկայացուցիչներից բարձր կոմիսարի նախագահութեան տակ :

Իմ եւ Փաշայի մէջ այս առթիւ բուռն գէճ եղաւ : Փաշան եւ Պատրիարքը պնդում էին թէ՝ մենք անկարող պիտի լինենք մեզ կառավարել, հետեւապէս օտար ներկայացուցիչների իրաւասութիւնը պէտք է շատ լայն լինի, մասնա-

ուրապէս Canseil Mixte-ի : Ես դիմաղրում էի եւ դէմ էի մասնաւորապէս
Canseil Mixte-ի գոյութեանը :

Ի վերջոյ, փոխադարձ զիջողութեամբ համաձայնութեան եկանք : Ես ըն-
դունեցի, որ մանդան լինի փոխանակ տասնի քսան տարով : Փաշան եւ իւրա-
յինները համաձայնուեցին հրաժարուել Canseil Mixte-ից եւ խորհրդականնե-
րին տրուելիք մի շարք իրաւունքներից :

Ինձ յաջողուեց վերջնական տնօրէն պահել մեր պարլամենտը :

Մարտ 17, 1920
Լոնդոն

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒԽԻՆ ԼՈՆԴՈՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Այսօր 0հաննէս իսան Մասեհեանի հետ գնացինք տեսնուելու ամերիկեան
դեսպանի հետ :

Յայտնեցինք, որ Դաշնակիցները մեր խնդիրը կարգադրուած են ըստ ի-
րենց քմաց : Այս պարագաներում որքա՞ն յոյս կարող ենք դնել ամերիկեան
ազդեցութեան վրայ յօդուած մեզ :

Դեսպանը յայտարարեց, որ Ամերիկան պաշտօնապէս չի մասնակցում,
բայց բոլորովին անմասն չէ : Այսօր այլեւս անօգուտ է յուսալ Ամերիկեան
մանդատի վրայ . մեր երկրի ներքին չփոթն առ այժմ այդ անհնարին է դար-
ձընում : Դա կարող է լինել, բայց բաւական ուշ :

Այս վերջին յայտարարութիւնը մեզ համար անակնկալ էր :

Մարտ 18

Մեր կառավարութեան հրահանգի համաձայն այսօր գնացի չնորհակա-
լութիւն յայտնելու ճապոնական դեսպանին՝ մեր պետութիւնը ճանաչելու
առթիւ :

Փաշան ինձ հետ էր :

Մարտ 22, 1920
Լոնդոն

ԶՐՈՅՑ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ Ա-ՐԴ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆԻԿԸԼՍԸՆԻ ՀԵՏ

Այսօր Ալէքսանդր Բաքտո-ից ճաշի հրաւէր ստացայ, ուր յատուկ նպա-
տակով լինելու էր եւ Նիկոլսըն :

Ճաշի ընթացքում Նիկոլսըն խնդրեց ինձ մի քանի տեղեկութիւն պանթու-
րանիզմի մասին եւ շատ զարմացաւ լսելով ինձնից, որ պանթուրանիզմի իս-
կական հայրենիքը թուրքիան չէ, այլ Ադրբէյջանը, եւ առհասարակ թաթար
աշխարհը : Բուն պարսիկ ժողովուրդը անմասն է եւ այդպէս էլ կը մնայ :

Ապա նա ինձ յայտնեց հետեւեալը . . .

Աղերի Լիգան, ստանալով Canseil Supreme-ի առաջարկը Հայաստանի
մանդատի մասին, խիստ մտահոգուել է : Առաջին մտածումն է եղել մերժել:
Յետոյ, խորհրդ են, թէ գուցէ լաւ առիթ է այս ցոյց տալու թէ՝ Լիգան մի ի-
րական, կենդանի օրգանիզմ է . ուստի որոշել են պայմաններ դնել Conseil
Supreme-ին . . .

1) Քանի որ Աղերի Լիգան ո՛չ միջոցներ ունի եւ ոչ իսկ ցանկութիւն
պատերազմ յայտնելու թուրքիային մաքրելու հայ հողերը, ուստի Դաշնա-

կիցները պէտք է միջոցներ ձեռք առնեն հեռացնելու Մուստաֆա Քևմալի եւ առհասարակ Միլլի ոյժերը Հայաստանից.

2) Պէտք է յանձն առնեն ապահովել 5,000,000 ֆունտ ստերլինդ փոխառութիւն Հայաստանի համար: Այս փոխառութիւնն, ասաց, կամ պէտք է բաժանել Ազգերի Լիղայի անդամ բոլոր պետութիւնների վրայ, կամ Թուրքիայի հետ դաշնագիրն ստորագրող պետութիւնների.

3) Conseil Suprême-ը պէտք է ապահովի նաեւ ուղամական օպնութիւն.

4) Պէտք է տայ բոլոր պէտք եղած քաղաքացիական եւ զինուորական խորհրդականները.

5) Պէտք է ապահովել Բաթումից մեր ելքը:

Աւելացրեց, որ կան պետութիւններ, որոնք տրամադիր չեն ընդունել նիւթական զոհաբերութիւններ: Լաւ կը լինի խօսել Վենիդելոսին, որը անկեղծօրէն հայասէր է: Եռանդուն պաշտպան է նաեւ Բելղիայի ներկայացուցիչ-զենսպանը: Խորհուրդ տուեց առհասարակ պատրաստել մտքերը:

Իմ հարցին թէ՝ ովքե՞ր են լինելու խորհրդականները, պատասխանեց. «Հաւանաբար անդիհացիներ եւ ամերիկացիներ. առաջինները քաղաքացիական, երկրորդները՝ զինուորական»:

Իմ միւս հարցին թէ՝ ինչո՞ւ Անգլիան չընդունեց Հայաստանի մանդատը, պատասխանեց թէ Ֆրանսիան կը դժկամակի: Յայտնեց, որ մեզ մեծ պաշտպան է Ազգերի Լիկայի զիմաւոր քարտուղար Eric Drummond:

Մարտ 23, 1920
Լոնդոն

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԹՈՓՉԻԲԱՇԵՒԻ ՀԵՏ

Ինքն էր խնդրել տեսնել Պօղոս փաշային: Վերջինս ցանկացել էր, որ դա իմ ներկայութեամբ լինէր: Եկաւ եւ Օհաննէս Խան Մասեհեան:

Թոփչիբաշեւը նախ երկար նստեց լուռ: Իր հետ էր Մեխտիկվը: Ստիպուած եղանք մենք զրոյց բաց անել մեր սահմանների մասին եւ հարց դրինք, թէ քանի որ երկիրները, մեր կառավարութիւնները ցարդ համաձայնութեան չեկան, զուցէ լաւագոյնն է այդ խնդիրը փոխադրել այստեղ Խաղաղութեան Համագումարին մօտիկ լուծելու համար:

Թոփչիբաշեւը խուսափողական պատասխաններ տուեց. առարկեց, որ տեղում այդ հարցն աւելի լաւ կը լուծուի. ապա վերկացաւ գնալու ու ասաց, որ ինքը պատրաստ չէր այս զրոյցին եւ եկել էր պարզապէս քաղաքավարական այցի:

Երբ նա դուրս գնաց, Փաշան հիասթափուած ու ձանձրացած՝ բացականցեց.

— Tout a fait comme le turc!

«Ես ուրախ եմ, որ դուք ճանաչեցիք սրանց եւ այլեւս չէք մեղադրի մեզ, թէ մենք անհաշտ ենք մեր հարեւանների հետ:

Մարտ 28, 1920
Լոնդոն

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԶԽԵԴՔԻ ԵՒ ԱԻԱԼՕՎԻ ՀԵՏ

Մեր սահմանները որոշող Յանձնաժողովում մեզ յայտնեցին, թէ առ այժմ որոշուելու են մեր սահմանները թուրքերի հետ, մինչդեռ կովկասում

Երեք հանրապետութիւններն իրենք պիտի համաձայնութեան դալու աշխատին: Երբ այդ չինի, Խաղաղութեան Համագումարը կը միջամտի: Եւ մեզ խորհուրդ տուին զրուցել մեր հարեւանների հետ:

Այս պատճառով նախ ես մենակ տեսնուեցի Զիսէիծի եւ Աւալօվի հետ, յայտնեցի, որ մենք կը կամ ենայինք մեր սահմանների մասին խօսել իրենց հետ եւ հրաւիրեցի հանդիպել իմ երկու ընկերներ՝ Փաշայի եւ Օհաննէս Խանի հետ: Նրանք համաձայնեցին:

Այս քայլն անելու պէտք տևսայ.

1) որովհետեւ այդպէս էր Խաղաղութեան Համագումարի ցանկութիւնը.

2) Խատիսեան իր փետրուար 6-ի նամակով յայտնում էր ինձ, թէ զեռ համաձայնութեան չեն եկել վրացինների հետ եւ «թէ դիտաւորեալ ձեւով ձգձում ենք բանակցութիւնները».

3) Խորէն Սրբազն Մուրագբէզգեան կովկասից յայտնեց, որ Մամիկոնեան Ստեփանը նրան ասել է, թէ իրենք սպասում են սահմանավէճի լուծումը Խաղաղութեան Համագումարից:

Ահա այս պատճառներով ես այս տեսակցութիւնն առաջ բերեցի, եւ մենք հաւաքուեցինք Փաշայի մօտ: Եկան Զիսէիծէ, Աւալով: Ներկայ էինք Փաշան, Օհաննէս Խանը եւ ես:

Մեր դիտաւորութիւնն էր համաձայնութեան դալ վրացինների հետ, իսկ Աղրբէյչանի մասին անմիջապէս դիմել Խաղաղութեան Համագումարին եւ խնդրել լուծել մեր սահմանավէճը, քանի որ ո՛չ մի յոյս չկայ թաթարների հետ իրաւախոհ լինել: Ուստի եւ առաջարկեցինք վրացիններին հետեւեալը — թէ քանի որ, հակառակ կնքուած համաձայնութեան, մեր կառավարութիւնները ցարդ անկարող եղան համաձայնութեան դալ, լաւագոյնն է՝ դիմենք եւ խնդրենք, որ այդ հարցը մեզ յանձնուի, պատուիրակութիւններս, այստեղ՝ կամ համաձայնութեան դալու, կամ այստեղ արբիդրաժի յանձնելու:

Զիսէիծն եւ Աւալովն սկզբում պատրաստակամութիւն յայտնեցին քըննել այդ խնդիրը: Երկուքն էլ գտան, որ մենք պարտական ենք քայլեր անել, եւ թէ իրաւ է, որ տեղում այդ խնդիրը չի լուծուի եւ դրանից մենք ամէնքս էլ կը տուժենք: Միայն աւելացրին, թէ բարւոք կը համարէին, ինչ եւ լինի, այդ դիմումը մեր կառավարութիւններին թաթարների ընկերակցութեամբ կատարել:

Մենք պատասխանեցինք թէ՝

1) Թոփչիրաշեւի հետ ունեցած մեր զրոյցից յետոյ, այդպիսի փորձն անօգուտ ենք համարում.

2) Զենք հաւատում առհասարակ նրանց հետ դէմ առ դէմ բանակցութիւններով համաձայնութեան հասնելուն: Ապացոյց՝ նրանց յարձակումները մեր երկրի վրայ եւ նրանց ուխտազրուժ ընթացքը.

3) Նրանց դաշնագիրը թուրքերի հետ, որ հրատարակեց Times-ը այլեւս տեղիք չի թողնում նոր փորձի:

4) Նրանց պահանջներն ու ընթացքը հնար չեն տալիս նմանողութիւն գտնել մեր երկիրն զրազեցնող խնդիրների հետ եւ հետեւապէս չի կարելի նըրանց հետ ընդհանուր լեզու գտնել:

Վերջապէս, 5) երբ մենք իրար հետ համաձայնենք, աւելի կը հեշտանայ համաձայնութիւնը եւ թաթարների հետ, որ համարում ենք անհրաժեշտ:

Զիէիձէն եւ Աւալովը առարկեցին, թէ առանց թաթարների որևէ քայլ մեր կողմից կը նկատուի փորձ նրանց առանձնացնելու և թէ երեքի միասին կատարած դիմումը լաւ տպաւորութիւն կը թողնի ամէնքի վրայ:

Մենք հասկցրինք թէ տպաւորութիւն թողնելու համար չէ, որ մենք խօսում ենք, այլ իրական հետեւանքի հասնելու համար, և քանի որ մենք ո՛չ մի յոյս չունենք իրաւախոհութեամբ համաձայնութեան դալու թաթարների հետ, — ինչպէս հաստատում են իրենք վրացիները — անօգուտ, նոյնիսկ վնասակար էն րանց էլ հրաւիրել, քանի որ նրանք ձգձգելով, արդեւք կը լինեն առասարակ գործի յաջողութեանը:

Զիէիձէն եւ Աւալովը, իրենք եւս համաձայնելով, որ մենք իրաւունք ունենք մեր զնահատումի մէջ, բայց շարունակեցին ինդրել արտօնել իրենց գէթ խօսել թաթարների հետ, գուցէ լաւ տրամադրութիւն գտնեն:

Մենք պատասխանեցինք թէ՝ «կարող էք խօսել, ո՛չ մեր կողմից այլ ձեր կողմից»:

Միաժամանակ նրանք համաձայնեցին մեզ հետ համանման դիմում անել իրենց կառավարութեան եւ խնդրեցին մի օր ժամանակ տալ խորհելու այս դիմումի մասին:

Մեր հարցին՝ եթէ թաթարները չհամաձայնին, իրենք դարձեա՞լ պատրաստ են մեզ հետ քայլեր անելու թէ ոչ, նրանք խուսափողական պատասխաններ տուին:

Նրանք զուրս գնացին եւ մենք այն հաստատ համոզման մնացինք, որ վրացիք ու թաթարները գաղտնի դաշնագրով կապուած են եւ անջատ քայլեր անելու տրամադիր չեն: Մենք գրեթէ կասկած չունէինք, որ յաջորդ նիստին նրանք աւելի խուսափողական ընթացք են ունենալու:

* * *

Յաջորդ տեսակցութիւնը տեղի ունեցաւ մարտ 30-ին, վրացիների մօտ:

Զիէիձէն յայտարարեց, թէ ինքը խօսել է Թոփչիրաշեւի հետ եւ թէ վերջինս համաձայն է մեր ընդհանուր քայլին մասնակցել, թէ ամէն ինչ կախուած է մեր անելիք դիմումի բնոյթից:

Մենք՝ (Փաշան, Օհաննէս Խան եւ ես) պատասխանեցինք, որ անցեալ նիստում գրեթէ մենք համամիտ եղանք, թէ խնդրելու ենք մեր կառավարութիւններին սահմանավէճը փոխադարձ պատուիրակութիւններին յանձնել լուծելու համար, քանի որ տեղում այդ անհնարին է:

Զիէիձէն պատասխանեց մի երկար ոռուերէն ճառով (որ ի դէպ էր ասել խիստ երկար ու ձանձրալի թուաց իմ երկու ընկերակիցների), որով ճգնում էր ապացուցանել թէ՝ 1) իր կառավարութիւնն այսպիսի դիմում չի ընդունի առանց խորին դժկամակութեան, 2) իր համար շատ էլ պարզ չէ այդպիսի դիմումի անհրաժեշտութիւնը, 3) այդպիսի քայլին չեն մասնակցի թաթարները: Ուստի առաջարկում էր մի պարզ հեռազրով խորհուրդ տալ մեր կառավարութիւններին, որ նրանք փութացնեն սահմանավէճերի լուծումը եւ այդպիսի դիմումն այն լաւութիւնն ունի, աւելացնում էր նա, որ թաթարներն էլ կը ստորագրեն:

Մենք պատասխանեցինք, որ 1) վերջին տեսակցութիւնից յետոյ, մենք փոփոխութիւն ենք գտնում վրացիների տրամադրութեան մէջ, 2) թաթարների մասնակցութեան վերաբերեալ մեր արտայայտած տեսակէտը մնում է

ՍԱՐՏԱՐԱՊՈՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

Իր ոյժի մէջ եւ մենք չենք կարողանում ըմբռնել պ. Զիէիձէի յամառութիւնը նրանց եւս քաշելու մեղ հետ, երբ ինքն էլ հաւատացած է, որ դրանից արդիւնք ստացուելու չէ. 3) լոկ այդպիսի խորհուրդը մեր կառավարութեան կը նկատուի պարզապէս հեգնութիւն, քանի որ Կովկասում նրանք շատ աւելի դառնօրին զգում են ու գիտակցում խաղաղութիւն հաստատելու անհրաժեշտութիւնը, թէ ցարդ չեն կարողացած համաձայնութեան գալ, պարզապէս նրա համար, որ շատ են խափանառիթ տեղական հանգամանքները, եւ 4) եթէ դիմումն լինելու է մեր կողմից, դա պէտք է լինի առաջին տեսակցութեանը արտայայտած մեր հիմունքներով, այսինքն՝ փոխադրել տալ այստեղ այդ ժանր վէճերը, որոնցից հաւասարապէս տուժում են ամէնքը:

Կարելի չեղաւ համոզել վրացիներին: Հետագայ խօսակցութեան մէջ աւելի եւս պարզուեց, որ վիրա-թաթարական գաղտնի համաձայնութիւն գոյութիւն ունի:

Մարտ 31, 1920
Լոնդոն

ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՆՈՐ ՈՏՆՉԳՈՒԹԻՒՆԸ


Այսօր Լոյդ-Զորջից ստացուեց մեր պետութեան փոքրամասնութիւն կազմող ցեղերի եւ լեզուների վերաբերեալ Խաղաղութեան Համագումարի կաղմած Statut-ը, որի մասին մեր նկատողութիւններն էին պահանջւում: Մենք քննեցինք եւ եկանք այն եղբակացութեան, որ այդ Statut-ը կաղմուած է շատ լաւ ոգով եւ ընդունեցինք զրեթէ անփոփոխ:

Փաշան վերջում կարդաց իր կազմած գիրը Խաղաղութեան Համագումարին սւլլած, որով յայտնում էր մեր գոհունակութիւնը յիշեալ Statut-ի ողուն ու տառին:

Ես զարմանքով տեսայ, որ առաջին անգամ ամիսներից ի վեր, Փաշան պաշտօնական նամակը գրել է իր անունից եւ ըստ երեւոյթին, աշխատել է ինձ, իրրեւ Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահի, անգիտանալ եւ մենակ ստորագրել: Ես յայտնեցի իմ զարմանքն ու դժկամակութիւնը:

Փաշան յայտնեց, որ ինքը տրամադիր էր մենակ ստորագրել, բայց նա դէմ չէ, թէ ես էլ կամենամ ստորագրել:

Ես հասկացրի թէ դա իմ ցանկութիւնը չէ միայն, այլ իմ պաշտօնական պարտքը: Եւ ստորագրեցի:



ՄԵԾ ԵՐԱԺԻՉՄ ԶԵՐԻՄԱՐՈՍԻ
Եւ կորովի Կվաղինդի :
Ու ապրեցին նրանք երկար ,
Իրարու հետ խաղաղաբար ,
Զերմ ուս սրտբաց զրոյց արին ,
Թէ ի՞նչ անեն , ի՞նչ հնարքով
Համայն ցեղերն յառաջ տանին :

(Շարունակելի)

- ՃՆԴԻԿ ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ
Զիբիաբու — երաժիշտ , ոգիների աշխար-
հի տէրը .
2) Կվազինդ — զօրեղ մարդ .
39 Պոնիմակ — հանդերձեալ աշխարհ .
4) Ենադիչէ — ծոյլ եւ խաղամու , թե-
թեւսովիկ .
5) Պովիտինգ — Սէնթ Մարի գետը , Մի-
ացեալ նահանգներում .
6) Ահմիկ — կուզբ :

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՒԶԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵՑ՝ ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ



Ապրիլ 8, 1920

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԼՈՐՏ ԿԸՐՁԸՆԻ ՀԵՏ

Այսօր , ապրիլի 8-ին , ճաշից յետոյ՝ ժամը 7-ին Բրիտանական արտաքին գործոց նախարարութեան շխնքի մէջ Պօղոս փաշան , Զաւէն պատրիարքն ու ես տեսակցութիւն ունեցանք արտաքին գործոց նախարար Լորդ Կըրգընի հետ :

Ես դէմ էի պատրիարքի ներկայութեանը ինչպէս եւ բոլոր նման դէպքե-
րում , ուր նա միայն դիւնագիտական զրոյցի բնոյթն է փոխում դարձնելով
այն աղերսական : Բայց ինչպէս միշտ , ե՛ւ պատրիարքը ե՛ւ Պօղոս փաշան ու
իր շրջապատը պնդեցին նրա ներկայութեան անհրաժեշտութեան վրայ : Անօ-
գուտ համարեցի դիմադրել խոյս տալու համար անհաճոյ զրոյցից , մանա-
ւանդ , որ պատրիարքը այդ նպատակով կանչուած էր Մանչեստրից : Ուզեցին
Կըրգընի մօտ տանել նաեւ Խորէն Սրբազնին : Վերջինս մերժեց , համարելով
իր ներկայութիւնը անօգուտ : Համոզուած եմ , որ Խորէն Սրբազնը իր ըն-
թացքով կամեցաւ օրինակ տալ պատրիարքին , բայց այդ նպատակին չծառա-
յեց :

Լորդ Կըրգընը 60-ին մօտ մարդ է , նեղ ճակատով , վառ , բայց անհաճոյ
աչքերով , եւ ընդհանրապէս անհրապոյր արտաքինով : Խօսում է ցածրա-
ծայն , թաւ շեշտով , որ նրա խօսքին տալիս է առանձին անախորժ խորհըր-
դաւորութիւն :

Կանխապէս համաձայնել էինք, որ Փաշան կը խօսի Կիլիկիայի եւ մեր մանդատի մասին, իսկ ես՝ Կովկասեան մեր սահմանների:

Փաշան անգլիերէն չնորհակալութիւն յայտնեց Լորդին իր բոլոր բարեացակամութեան համար դէպի հայ ժողովուրդը, ապա նրա ուշադրութիւնը հրաւիրեց ընդհանրապէս Կիլիկիայի եւ մասնաւորապէս Հաճընի հայութեան օրհասական վիճակի վրայ: Ասաց, որ անգլիացիք տուին Կիլիկիան Ֆրանսիային, որ սակայն լքել է հայերին թիւրք բանդաների կատաղութեանը:

— Մենք չենք «տուել» Կիլիկիան, — պատասխանեց Լորդը Փրանսերէն — այլ միայն «թողինք» այն Ֆրանսիային: Տարաբաղտաբար, Փրանսիացիք ինչ որ արին այստեղ, վատ արին: Միւս կողմից՝ մենք այլեւս անկարող ենք ձեզ օգնել Կիլիկիայում, որովհետեւ Սըր Մարք Սայքս ժորժ Պիկոի 1916-ին, համաձայնութիւնը կայ, որով Կիլիկիան նկատում է որպէս Փրանսիական գոնա (շրջան): Ես իմ բոլոր ուշադրութիւնը դարձրել եմ Հիւսիսային Հայաստանի վրայ, որ ես կը կամենայի դարձնել կազմակերպուած, հաստատուն պետութիւն: Դուք զիտէք իմ համակրութիւնը դէպի ձեզ: Զեր պետութիւնը ես առաջինը պահանջեցի ճանաչել. եւ այսօր Պարիզ մեկնող մեր ներկայացուցիչներին ես վճռապէս հրահանգեցի Ligue des Nations-ի (Ազգերի Լիգի) խորհրդի առաջիկայ նիստին խանդով պաշտպանել ձեզ:

— Հայաստանի մանտաղի համար անշուշտ, — վրայ բերեց Փաշան:

— Ռ'է, այլ protection-ի, Ligue des Nation-ի Protection, — պատասխանեց Լորդը:

Ես միջամտեցի:

— Դուք Հիւսիսային, այսինքն՝ Միացեալ Հայաստանի մասին խօսեցիք, Միլօրդ ասացի, այս առթիւ ներեցէք ինձ երկու խօսք ասել: Երբ Գերազոյն Խորհուրդն այստեղ մեր պետութեան սահմանների քննութիւնը ձեռք առաւ, մենք հաւատ ունէինք, որ միաժամանակ որոշուելու են մեր սահմանները նաեւ մեր երկու հարեւանների՝ Վրաստանի եւ Աղրբէյջանի հետ: Տարաբաղդաբար, Գերազոյն Խորհուրդը վերջին պրոբլեմը թողեց առկախ: Խնդրում եմ նկատի առնել, որ զինադադարից ի վեր սահմանների անորոշութեան պատճառով մեր երկիրը ենթակայ է բազմապիսի աղէտների: Վրացիք, օգտուելով իրենց Հաղորդակցութեան գերակշուրջիւնից, ճնշում են մեզ տնտեսապէս, որպէսզի ստիպեն մեզ զիջել յօդուտ նրանց մեր մի քանի հայաշատ հողամասերը՝ Լոռի, Բօրչալու, Ախալքալակ: Թաթարները, օգտուելով մեր ծանր կացութիւնից, թէեւ ժամանակաւորապէս — բայց տիրեցին Ղարաբաղին եւ աշխատում են զինու ուժով տիրել նաեւ մեր Զանգեզուրը եւ Նախիջևանը, ուր մեր դէմ հանեցին ապստամբութիւն եւ ջարդեցին տեղական հայ ազգաբնակութիւնը: Այս բոլորից ծագում է մի անհանդուրժելի կացութիւն, որ կորստարեր կերպով է անդրադառնում բոլոր տարրերի տնտեսական ու Փիգիկ գոյութեան վրայ: Հակառակ բազմիցս կատարուած փորձերին, երեք կառավարութիւնները, տարաբաղդաբար, չկարողացան ցարդ որեւէ համաձայնութեան գալ: Յոյս ունէինք, որ Գերազոյն Խորհուրդը կը միջամտէր եւ կը լուծէր այս կնճիռը, որ արիւնհեղութեան եւ աւերածի պատճառ է: Զեմուզում մեղադրել մէկ կողմը եւ արդարացնել միւսը: Բայց խնդրում եմ հաւատալ, քանի որ սահմանապէճերը Կովկասում հարթուած չեն, անհնարին:

կը լինի խաղաղութիւնը այդ երկրներում։ Երբ թուրքաց Հայաստանի գրաւման ժամը հասնի եւ մեր զօրքերը զործուկցութեան կոչուին, նրանք պէտք է իրենց թիկունքն ապահով զգան Վրաստանի եւ Աղբրէջանի կողմից։ Մենք խնդրում ենք ձեզ աշակցել, որ մեր կովկասեան սահմանավէճերը ժամ առաջ յարդարուեն։ Մեր երկրի ապագան ու խաղաղութիւնը ամբողջապէս կախուած է դրանից։ Խնդրում ենք լուծել այդ հանդույցը, թերեւս արbitrage-ով (իրաւարարութեամբ)։

— Իրաւունք ունիք, — պատասխանեց Լորդը, — մենք այդ գիտակցել ենք։ Արbitrage-ը անօգուտ է։ Այս մտքով լինելիք զիմումը չի կարող հետեւանք ունենալ։ Մենք վճռել ենք՝ երբ թիւրքիայի հետ դաշնագիրն ստորագրուի, Անդրկովկաս ուղարկել մի քանի յանձնաժողովներ՝ երեք պետութիւնների սահմանները որոշելու։ Ստիպուած, եմ, սակայն, նկատել, որ ձեռնք, յատկապէս Դաշնակցական կուսակցութիւնը, որին դուք եւս կարծեմ պատկանում էք պ. Ահարոննեան — իրենք են, որ խաղաղութիւնը յաճախակի խանդարելու առիթներ են տալիս։ Զեր երեք չէֆերը՝ Դրօ, Համազասպ եւ Գիւլիանդաննեան պարագլուխ եւ առաջնորդ են այն խմբերի, որոնք թաթար զիւղեր են աւերել եւ կոտորած արել Զանգեզուրում, Սուրմալուում, Էջմիածնում, Զանգիրասարում։ Սա անհանդուրժելի է։ Նայեցէ՛ք, — նա ձեռք առաւ սեղանի վրայից մի ծալ պաշտօնական թղթեր—նայեցէ՛ք, ահա դեկտեմբերի մէջ, վերջին ամիսները օր աւուր ինձ հազորդում է իմ ներկայացուցիչ Վարդրոպը աւերուած թաթար զիւղերի ցանկը։ Թաթարական պաշտօնական զեկոյցը խօսում է 300 թաթար զիւղերի աւերումի մասին։ Սա ձեր դատին կարող է մեծապէս վնասել։

Լորդն այս բոլորն ասում էր ջերմութեամբ եւ գրեթէ վրդովմունքով։

— Պ. նախարար, — ասացի, — ձեր մեղադրանքը չափազանց ծանր է եւ չափազանց վճռական։ Ներեցէք, որ պիտք եղած բացատրութիւնը տամ։ Իրաւունք չեմ համարում ինձ վէճի ենթարկել ձեր արած յայտարարութեան պատճառ եղող փաստերը, քանի որ դրանք պր. Վարդրոպի զեկոյցներն են։ Բայց կ'ասեմ, որ անչուշտ ինքը պ. Վարդրոպ ցաւալի թիւրիմացութեան զոհ է։ Յիրաւի, կան ձեր յիշատակած վայրերում բնակիչներից թափուր, թաթար զիւղեր, բայց դա բնաւ չի նշանակում, թէ հայերն են աւերել այդ զիւղերը։ Զանգիրազարի պատմութիւնը ձեզ յայտնի է անշուշտ։ Թաթարներն աշխատում են զրաւել հայկական այդ բնագաւառը, մերոնք դիմագրում են։ Կոիւ է անընդհատ։ Եւ ի՞նչ զարմանք, որ այդ տեղ աւերուած են թաթար զիւղեր բնակիչների փախուստով, եւ աւերում են հաւասարապէս, գուցէ ե՛ւ աւելի հայ զիւղեր, որոնց բնակիչները յաճախ են սրի քաշում։ Ղարաբաղի անցքերը զիտէք, հայ զիւղերի աւերածը Սուլթանովի ձեռքով։ Սուրմալուն իմ ծննդավայրն է եւ Էջմիածինը նրան կպած, երկուսն էլ ճանաչում եմ մօտիկից։ Ճշմարիտ է, այնտեղ կան թաթար զիւղեր բնակիչներից թափուր, բայց դա էլ իր ցաւոտ պատմութիւնն ունի, որ յամենայն դէպս ի վնաս հայերի բարի համբաւի չէ։ Երբ 1918-ին, հայերի յամառ ու յուսահատ դիմագրութիւնից յետոյ՝ թիւրքերը կարողացան գրաւել այդ գաւառները, տեղական թաթարները ամէն տեղ հայերի ջարդ կազմակերպեցին թիւրքերի հետ։ Հայերի մնացորդները խոյս տուին երեւան։ Դաշնակիցների յաղթութեամբ ու

Կովկաս մտնելով, թիւրքերը տեղի տուին, քաշուեցին մեր գաւառներից եւ հայերի մնացորդները նորից զիմեցին զէպի Սուրմալու, ուր թաթարները քիւրդերի հետ նոր զիմադրութիւն ցոյց տուին հայերի զարձին եւ, ի վերջոյ խոյս տուին զէպի Աղրբէյջանի հողը։ Այսպէս են զատարկուել Սուրմալուի թաթար զիւղերը։ Նոյնը կատարուել է ե՛ւ կջմիածնի զաւառում։ Միւս կողմից մեր հողի վրայ գտնուող թաթար համայնքները շարունակ յուղումի ու զաւաղբութեան մասնակից եղան Աղրբէյջանի կառավարութեան զրդութեամբ։ Եւ ամէն անդամ Զանգեզուրի վրայ քալող Աղրբէյջանի զօրքերին աշխատեցին մեր երկրի ներսից օժանդակել։ Այս լնդհանուր շփոթի մէջ՝ բնական է որ վնասուող գիւղեր եղան երկու կողմից։ Կրկնում եմ։ այս տնաքանդյարաբերութեան, այս աւեր ու արիւնի հիմնական պատճառն սահմանների եւ իւրաքանչիւր պետութեան ապագալի անորոշութիւնն է, որ Conference-ը ցարդ, տարաբաղդաբար, չկամեցաւ կարգադրել։ Յանուն իմ կառավարութեան եւ մեր ժողովրդի ես վճռապէս յայտարում եմ, որ զիտակցաբար կամ անմիտ վրէժինդրութեամբ թաթարների ջարդեր տեղի չեն ունեցել. վընասուել են այս անվերջ կոփիւների մէջ թաթար գիւղեր, բայց նոյնքան եւ աւելի հայ գիւղեր, որոնք ո՛չ միայն աւերուել են, այլ եւս բնակիչները կոտորուել թաթար բանդաներից։ Յուսամ ձեր ներկայացուցիչ պ. Վորդրոպ ձեզ հաղորդել է այն սարսափելի կոտորածը, որին ենթակայ եղան Արէլի, Նուխու, Նախիջեւանի, Ագուլիսի, աւելի վաղ՝ Բաքուի եւ Շամախու հայերը։ Նուխում եւ Արէլում մենք ունինք 60 հազար հայ, այսօր գրեթէ մարդ չի մնացել։ Բաքուի աղէտը գիտէք, ուր մենք 28 հազար մարդ կորցը-րինք։

— Այդ փաստերն ինձ յայտնի են, — պատասխանեց Լորդը՝ վերցնելով առջեւի փաստաթղթերը. նայեցէք, ահա՛ այստեղ շարքով նշանակուած են յարձակումները ե՛ւ թաթարների ե՛ւ հայերի։ Ահա դեկտեմբեր ամիսը՝ հայերի անվերջ յարձակումներ, — Լորդը կարդաց շարանը, — եւ ահա վերջում թաթարական պաշտօնական զեկոյց՝ թէ 300 թաթար գիւղեր են աւերուած։

— Անշուշտ, բարձր Լորդը կը համաձայնի, որ թաթարական պաշտօնական զեկոյցը ենթակայ է ծանր չափազանցութեան, — ասաց Պօղոս Փաշան։

— Այսո՛, ի հարկէ, բայց մնացածը մեզ գրում է Վարդրոպը։ Կրկնում եմ, մինչեւ դեկտեմբեր թաթարներն են նախայարձակ եղել, բայց այնուհետեւ՝ վերջին ամիսները միշտ հայերը։ Ահա՛ այս ցանկը։

— Բարձր Լորդը յուսամ ստացել է Աղուլիսի հայ ազգաբնակութեան սարսափելի կոտորածի լուրը, որ տեղի է ունեցել յունուարից յետոյ, — ասացի ես։

— Ճշմարի՛տ է, այդ մէկ փաստից դուրս, վերջերս միշտ հայերն են նախայարձակ։ Ես այս ասում եմ ձեր շահերի տեսակէտից։ Ես կը կամենայի, որ այս պահուն, երբ ձեր հարցը մտել է շատ սուր շրջան, եւ երբ այնքան դժուարութիւններ կան մանդատի համար, դուք նորերը չստեղծէք։ Դուք զիտէք, որ ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Խոտալիան եւ ո՛չ իսկ Ամերիկան կամեցան ձեր մանդան ընդունել։ Յոյսներս Աղրբէրի Լիզան է։ Լաւ չէ, որ ձեր յարուցած այս նոր դժուարութիւնները պատճառ դառնան, որ Աղրբէրի Լիզան էլ մերժի։ Այսպէս չի կարելի, դուք մշտական կոփիւների մէջ չէք։

— Բարձր Լորդը գիտէ անշուշտ, — պատասխանեցի ես, — որ կռուանձորը մեր հողն է : Զանգեզուրը հայ է, Ղարաբաղը հայ է, Նախիջեւանը մեր երկրի անկապտելի մասն է հազար տարուց ի վեր : Բնական է, երբ թըշնամիներն աշխատում են գրաւել մեր երկիրը, մենք ստիպուած ենք պաշտպանուել ինչ եւ լինի :

— Ձեր շահը պահանջում է խաղաղ լինել, այլապէս մենք չենք կարող ձեզ օգնել, չենք կարող ձեզ զէնք ու ոազմամթերք հայթայթել, որովհետեւ դուք այն գործ կ'ածէք թաթարների դէմ :

Այս ասելով՝ Լորդ Կըրզըն վերկացաւ, ներողութիւն խնդրելով՝ թէ զբաղմունք ունի: Եւ արդէն ոտքի էինք, երբ ես ասացի.

— Բարձր Լորդի ուշազրութիւնն եմ հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ ամէն անզամ երբ մենք զէնք ու ոազմամթերք ենք խնդրել, միաժամանակ խնդրել ենք ե՛ւ Դաշնակիցների կամ Անդլիայի զինուորական միսիոն դրկել տեղում հետեւելու մեր գործողութիւններին, որպէսզի մենք անարդար, անիրաւ գնահատումների առարկայ չդառնանք: Ես շատ կը խնդրէի, որ Բարձր Լորդը զէնքի ու ոազմամթերքի խնդրիր չկապէր հայ-թաթարական յարաբերութիւններին:

Պօղոս փաշան, որ մինչեւ այդ կամ լուռ էր, կամ թարգմանում էր, երբ Լորդը խօսում էր անդլիերէն, ասաց.

— Բարձր Լորդը կը կամենար անշուշտ, որ այս զրոյցի մասին հեռագրէինք կառավարութեան:

— Այո՛, անշուշտ: Կը կնում եմ, մինչեւ թաթարների ջարդը չը դադարի, եւ այդ երեք չէ ֆերը չհեռանան զինուորական զեկավարութիւնից, դժուար թէ հնարաւոր համարեմ զէնք ու ոազմամթերք հասցնել ձեզ: Խնդրում եմ այս նկատի առնէք:

Եւ յետոյ, փոխելով իր խիստ տոնը աւելացրեց ժպտալով.

— Ես շատ եմ ցաւում, որ ստիպուած եղայ այս խիստ տոնով խօսել: Խնդրում եմ հաւատալ, որ ես շատ բարեկամ եմ ձեզ եւ թէ այսպէս խօսեցի, պարզապէս ձեզ ճշմարտութիւնն ասելու համար էր: Կարծում եմ, բարեկամը պէտք չէ ճշմարտութիւնը թագցնի:

Մենք դուրս եկանք:

Տեսակցութիւնը տեւեց մօտ 45 րոպէտ, որի ընթացքում նախարարի եւ իմ մէջ ամենածանր վէճը տեղի ունեցաւ:

Տուն դառնալով՝ Փաշան առաջարկեց իսկոյն հեռագրել երեւան: Նա խիստ կոտրուած էր եւ շատ յուսահատ:

Ես փորձեցի սրտապնդել ասելով, որ Լորդ Կըրզընի յայտարութեան տակ թագնուած է անշո՛ւշտ ո՛չ պարզ բարեկամութիւն, այլ եւ քաղաքական նպատակ: Աւելցրի, որքան եւ այս բոլորը ցաւալի լինի, դարձեալ աւելի վատ չէ, քան այն լուրերը, որոնք հասնում են մեր կոտորածների մասին:

Փաշան, միշտ շատ կոտրուած, պատասխանեց, թէ իմ սառնասրտութիւնը նրան զարմացնում է et vous avez l'epiderme assez solide:

Ահա այն հեռագիրը, որ Փաշան թելադրեց, որպէսզի մեր երկու ստորագրութեամբ Երեւան դրկենք.

Խատիսեան,
Վարչապետ
Երեւան

Տեսանք Լորդ Կըրգընը: Խորապէս յուզուած ենք իմանալով որ, ըստ իր տեղեկութիւններուն, հայ խումբեր, Դրոյի, Համազապի եւ Գիւլիսանդաննեանի կողմէ ղեկավարուած, վերջի ամիսներու ընթացքին, յարձակած եւ աւերած են բաղմաթիւ թաթարական գիւղեր: Զարդերու պաշտօնական ամբաստանութիւն կայ: Մեղ կանխազգուշացուցած են, որ եթէ իրերու այս վիճակին վերջ չգրուի եւ եթէ հրամանատարութիւնը չառնուի վերեւ յիշուած այդ երեք անձնաւորութիւններու ձեռքէն, մեզ պիտի մերժեն զէնքերու հայթայթումը, եւ մենք պիտի կորսնցնենք ամէն օժանդակութիւն եւ պաշտպանութիւն: Զեզ հաղորդելով այս ազդարարութիւնը, որուն ծանրակշուութիւնը չի կրնար չափաղանցուիլ վայրկեանի մը, երբ մեր հայրենիքի բախտը պիտի վճռուի:

Հարկադրաբար կը խնդրենք ձեռք առնել ամենավճռական միջոցներ՝ վերջ տալու համար կացութեան մը, որ կրնայ աղէտալի դառնալ եւ անկարելի դարձնել մեր պաշտօնի կատարումը:

Այս հեռագիրն ինքը Փաշան ստորագրեց ու մեկնցե Պարիզ նոյն օրը: Մինակ մնալով՝ ես գտայ, որ այսպիսի հեռագիրը կարող է չափանցրացրած տպաւորութիւն գործել: Այս պատճառով խմբագրեցի նոր հեռագիր, ուր պահելով Լորդ Կըրգընի յայտարարութեան մասը, զգայապէս թուլացրի մեր խորհրդի խստութիւնը: Եւ որովհետեւ Փաշան բացակայ էր, ստորագրեցի ինքս մինակ:

Ահա այդ հեռագրի պատճէնը, որ անձամբ տարայ Foreign Office, տեսնուեցի Vansittart-ի հետ եւ ասացի հետեւեալը.

8 Ապրիլ, 1920
Լոնդոն

Վարչապետ Խատիսեան
Երեւան

Տեսանք Լորդ Քըրգընը Պօղոս Փաշայի հետ միասին: Խորապէս յուզուած ենք իմանալով որ, Համաձայն իր տեղեկութիւններուն, Դրօյի, Համազապի եւ Գիւլիսանդաննեանի կողմէ ղեկավարուած Հայկական խմբերն են, որ վերջին ամիսներու ընթացքին յարձակեր եւ կործաներ են Սուրմալուի, Էջմիածնի, Զանգեզուրի, Զանդիրասարի բաղմաթիւ թաթարական գիւղերը: Կան ջարդերու պաշտօնական մեղադրանքներ: Մեզ նախագուշացուցին, որ եթէ այս կացութիւնը չփոխուի, մեզ պիտի մերժուի բոլորովին զէնքերու մատակարարութիւնը եւ մենք պիտի կորսունցունենք ամէն օդնութիւն ու հովանաւորութիւն:

Հաղորդելով ձեզ այս ծանր լուրը՝ կը խնդրեմ ձեզ անմիջապէս հեռագրել կառավարութեան կողմէ ձեռք առնուած միջոցներու մասին:

ԱՀԱՐՈՒԵԱՆ

Ահարոնեան

Բոյեալ Փալաս Հոբէլ

Քէնսինգտոն, Լոնդոն

— Դուք զիտէք, որ երէկ մենք տեսնուեցինք Լորդ Կրղընի հետ, որը մեղաղբեց մեղ թաթարների ջարդերի մէջ: Իմ պարտքն է այս ծանր յայտարարութիւնը հաղորդել իմ կառավարութեան: Բայց պէտք եմ համարում կանխապէս յայտնել, որ այս հեռագիրը կարող է իր ծանր տպաւորութիւնը թողնել Երեւանում եւ նրանց մտածել կը տայ, որ Անգլիա, որ համարում էր ներկայ պայմաններում մեր միակ յոյսը, ձեռնթափ է լինում մեղնից: Ես վախենում եմ, որ այս տպաւորութեան տակ, նրանք յուսահատ քայլեր առնեն, որոնցից կարելի էր խուսափել: Մասնաւորապէս զէնքի եւ ռազմամշթերքի մերժումը ամենածանր տպաւորութիւն կը թողնի: Ես խնդրում եմ այդ յայտնել Լորդ Կրղընին:

— Ես գտնում եմ, որ աւելի լաւ է այս հեռագիրը դրկէք, — ասաց Vanssittart — վնաս չունի թէ ձերոնք մի փոքր վախ զգան: Ճշմարիտ է, որ այս մեղաղբանքների մէջ շատ շափազանցութիւն կայ, բայց եւ ճշմարիտ է, որ ձերոնք բաներ թոյլ տուել են իրենց:

— Ես նորից պնդում եմ ասացի, — որ Վալդրօպ զոհ է ծանր մոլորութեան, ուր գեր են կատարել մեր հարեւանները: Այո՛, ես կը դրկեմ հեռագիրը, բայց պէտք էր որ ես ձեզ ասէի, թէ նա ինչ տպաւորութիւն կը թողնի: Այնուհետեւ Vanssittart երկար խօսում ու համոզում էր ինձ ընդունել Դաշնակցութիւն (Federation) երկու հարեւանների հետ՝ բոլշևիկներին դիմադրելու համար:

— Սա միակ միջոցն է պահպանելու այդ երեք պետութիւնները: Հակառակ դէպքում, վստահացնում եմ ձեզ, որ մեր բոլոր աշխատանքները ջուրը կ'ընկնեն Հայաստան կազմելու համար: Բոլշևիկները շատ մօտ են Բաթումին ցամաքով: Երբ Բաթում առաւ, դուք՝ երեք ժողովուրդներդ էլ նրանց ոտքի տակ էք:

— Բայց մի՞թէ դուք լրջօրէն հաւատում էք, — հարցրի ես, — թէ Կովկասեան ազգերը պիտի կարողանան դիմադրել բոլշևիկներին: Ես չեմ հաւատում: Ուուսական զէնքի վարկը շատ բարձր է այդ կողմերում: Ի՞նչ զօրք կայ: Թաթարակա՞ն: Դա զօրք չէ, այլ բանդա: Վրացիք միշտ վատ կոռուզներ են եղել: Մենք էլ խնդրեցինք վաղուց հետէ միջոցներ բանակը կազմակերպելու համար: Զկամեցաք: Ո՞վ պիտի կոռուի բոլշևիկների դէմ:

— Բոլշևիկների յաղթութիւնների մէջ մեծ բլըֆ կայ, — ասաց Vanssittart եւ վերջում առաջարկեց իր ծառայութիւնը մեր երեք պատուիրակութիւնները հաւաքելու եւ խօսելու:


Ես խուսափողական պատասխան տուի:

(Շարունակելի)

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵԿ՝ ԱԽԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ



ԵՐԿՈՒ ՀԵՌԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պարիզ, 12 ապրիլ, 1920

Լոնդոնից Պարիզ վերադարձիս, եկեղեցում զատկական տօնի առթիւ Փաշային հանդիպեցի: Եւ նրա առաջին հարցն եղաւ, թէ ղրկե՞լ եմ հեռագիրը Երեւան Լորդ Կըրքընի հետ ունեցած զրոյցի առթիւ: Ես երկու խօսքով ասացի:

— Այո՛, միայն յետոյ խորհելով ինչ որ անպատճեռթիւններ գտայ, որ շտապ կազմելիս նկատած չէինք, մի փոքր փոփոխեցի եւ, քանի որ դուք բացակայ էիք, մենակ ստորագրեցիք»:

Նա սաստիկ դժկամակեց եւ կողքիցս քաշուեց խոռված երեխայի պէս, առելով.

— O, c'est tres fort:

Նոյն օրը թիւկ նէվրուզը եկաւ ինձ ասելու, թէ Փաշան սաստիկ զայրացած է հեռագրի պատմութիւնից եւ ուզում է բողոքել Լորդ Կըրքընին: Ես ժպտացի ու աւելացրի՝ թէ Երբ հանդիպեմ վաղը ժողովին, ես նրան շատ հեշտութեամբ կը համոզեմ, որ վշտանալու տեղիք չկայ, որ ուրիշ կերպ անհնարին էր վարուել, քան ես վարուել եմ: Նէվրուզն աւելացրեց, թէ կասկածում է իմ յաջողութեանը եւ թէ Փաշան մտադիր է այս խնդիրը Միացեալ Պատուիրակութեան ժողովին բերել: Ես պատասխանեցի, թէ այդ աւելի լաւ ինձ համար; եւ դուք կը տեսնէք որ Փաշային ես հէնց ժողովում կը համոզեմ:

Արդարեւ, յաջորդ օրը Միացեալ Պատուիրակութեան նիստին, ուր ներկայ էին Պատրիարքը, Փաշան, Զօպանեան, Նէվրուզ, թէքեան, ես պատմեցի Լոնդոնում մեր զրոյցի արդիւնքը թաթարների եւ վրացիների հետ: Փաշան յանկարծ նիւթը փոխելով՝ դարձաւ երկու հեռագրի պատմութեանը: Նորից երկարօրէն պատմեց մեր տեսակցութիւնը Լորդ Կըրքընի հետ, հեռագրի կազմելը, ապա եկեղեցու միջադէպը եւ խնդրեց, որ ժողովն իր կարծիքն ասի:

— Շատ եմ ցաւում, որ այս խնդիրը Փաշային այդքան ծանր զբաղում է դարձել եւ խնդրում եմ հաւատալ, որ եթէ այս բոլորի մէջ ինձ համար անխորժ մի բան կայ, դա այն է, որ ես առանց բնաւ այդ ցանկանալու՝ զայրոյթ եմ պատճառել Պօղոս Փաշային: Կըկնում եմ ես այդ չեմ հետամտել: Ես սիրով կը լսեմ, թէ նա ցոյց տայ, որ ես սիալ եմ գործել: Բայց կը խնդրէի փո-

խաղարձ վիրաւորանքի եւ անվստահութեան մտածումները մէկդի դնել։ Վստահ եմ, սակայն, որ իմ կազմած հեռագիրը հաւատարիմ մնալով հանդերձ կորդ Կըրդընի յայտարարութեան, միայն մեղմացրել է վերջին մասը։ Եւ այդ անհրաժեշտ էր այլապէս, դուքս էր գալիս, որ 1) Ես ու Փաշան բաժանում ենք Լորդ Կըրդընի կարծիքը ջարդերի մեղադրանքի մասին. 2) մենք էլ նրա հետ միացած պահանջում ենք հեռացնել ասպարէդից մեր երեք կարեւոր զործիչներին. 3) առանց սպասելու եւ ինդրելու մեր կառավարութիւնից պէտք եղած բացատրութիւնը, մենք մեր կողմից պահանջում ենք համակերպուել՝ ի վերջոյ. 4) սպառնում ենք նոյնիսկ հրաժարուել։ Ինչ վերաբերում է իմ մինակ ստորագրելուն, դուք երեւի չփատէք, որ Ես ինքս ինդրեցի Փաշային ինձ հետ ստորագրել առաջին հեռագիրը։ Հետեւապէս պատճառ չունէի նրան զրկել այդ հաճոյքից, եթէ նա Լոնդոն լինէր։ Այժմ կը ինդրէի կարդալ երկու հեռագրերը եւ համեմատել՝ տեսնելու համար իմ ասածի ճշմարտութիւնը։

Փաշան կարդաց երկու հեռագրերը։ Ժողովականները լուռ էին։ Ես շարունակեցի։

— Դուք տեսնուած էք, որ տարբերութիւն գրեթէ չկայ։ Նոյնիսկ Vansittart որին ես յաջորդ առաւօտ Լոնդոնում ցոյց տուի իմ հեռագիրը, այն գտաւ շատ խիստ, բայց աւելացրեց թէ՝ «պարտական էք զրկել, դա անհրաժեշտ է»։ Եթէ Vansittart-ը այն գտաւ լիապէս գոհացուցիչ, նոյնիսկ խիստ, կարծում եմ, որ մենք աւելի պահանջող լինելու չենք մեզնից։

Փաշան պատասխանեց։

— Այո՛, բայց նոյն Vansittart-ը այսօր, երբ տարայ նրան ցոյց տուի առաջին հեռագրի տեքստը, եւ ասացի, թէ Ահարոնեան այս չէ զրկել, շատ զարմացաւ, որ դուք նրան ուրիշ հեռագիր էք տուել եւ շատ վշտացաւ։

— Ի՞նչպէս դուք ցոյց էք տուել մի օտար պետութեան ներկայացուցին այն հեռագիրը, որ երկրորդի մեկնելէն յետոյ՝ պիտի համարուի Պետական դադանիք, աղջային գալունիք։ Դուք, որ գիտէիք, թէ իր երկրորդ հեռագիրն արդէն զրկել եմ։ Սա մի վատ, շատ ստոր արարք է, հաւասար դաւաճանութեան, եւ թէ եթէ դուք սկզբից ինձ յայտնէիք ձեր այդ անարժան արարքի մասին, ես ձեզ այնքան քաղաքավարութեամբ բացատրութիւն չէի տայ։ Ես ձեզ շատ վատ մարդ եմ կարծել, բայց այս աստիճան ստոր երբեք չէի կարծի։ Եւ դուքս գնացի ժողովից։

Այսօր՝ ապրիլ 22-ին Խորէն սրբազան Մուրատրէգեան, գրում է ինձ Լոնդոնից՝ թէ Փաշայի ներկայացուցիչ՝ տիրահոչակ Մալքոմը, անշուշտ Փաշայի հրահանգով, առաջին հեռագրի պատճէնը Լոնդոնում տարել է Foreign Office, ցոյց է տուել, յայտնել է թէ Ահարոնեանը չի զրկել այս եւ յաջողեցրել է այն եւս հեռագրել երեւան Փաշայի եւ իմ ստորագրութեամբ։

Այս բոլորը կատարում է իսկապէս Դաշնակցութիւնն ու մեր արդի կառավարութիւնը հարուածելու համար, եւ մանաւանդ Դրոյին, որի դէմ պ. Մ. Պապաջանեան բոլոր շրջաններուն, ուր կարող է, մղում է անպատիւ պրոպագանդա։

Զաւէն պատրիարքը, որ Փաշայի հետ ունեցածս ընդհարման երեկոյին

Եկաւ ինձ խնդրելու, որ մոռանամ միջադէպը եւ շարունակեմ գործակցութիւնը Փաշայի հետ, չկարողացաւ թագցնել, որ Փաշան այդ «յիմարութիւնն ըրած է պարզապէս քիչ մը Դաշնակցութիւնը նեղը ձգելու համար»:

Եւ ես ստիպուած եմ նորից գործակցել Փաշայի հետ, նորից տեսնուել, նորից ժողովներ անել, դիմումներ կատարել միասին: Ի՞նչ տանջանք:

ԽՈՐՀՈՂԱԿՑՈՒԹԻՒՆ ՎՐԱՅԻՆԵՐԻ ԵՒ ԹԱՄԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Ապրիլ 13, 1920, Պարիզ

Լորդ Կըրդընի քարտուղար Vansittart-ի հրաւերով — որ յատուկ եկել էր Լոնդոնից այդ նպատակով, տեղի ունեցան մի քանի խորհրդակցութիւններ Կովկասեան երեք պատուիրակութիւնների մէջ սահմանային խնդիրների առթիւ: Vansittart, հրաւերելով մեզ իր մօտ ապրիլ 12-ին, յայտարարեց, որ թէ՛ ինքը եւ թէ՛ մանաւանդ Լորդ Կըրդըն անկեղծօրէն բարեացակամ են երեք հանրապետութիւններին, եւ ահա թէ ինչո՛ւ: Ինքը Լորդ Կըրդինի հրահանդով խորհուրդ է տալիս մեզ շտափով համաձայնութեան դալ: Հակառակ դէպօւմ, աւելացրեց նա, ես շատ վհատուած պիտի լինիմ ձեր ապագայի մասին:

Յաջորդ օրը, ապրիլ 13-ին, տեղի ունեցաւ մեր առաջին նիստը:

Ներկայ էինք ես ու Փաշան, գեն. Կորդանով եւ Փիրալեան, յետոյ եւ Նորատունկեան, վրաց կողմից՝ Զիէիձէ, Գրէվաշաճէ, Գորէչիա, Ավալով, Թաթարների կողմից՝ Թոփչիբաշեւ, Մեխտիէվ, Շէյխ իւլ Խալամով:

Ժողովի նիւթն էր՝ 1) համաձայնութեան եզր գտնել սահմանավէճերի առթիւ. 2) Բաքուի շրջանի եւ քաղաքի ապագայի մասին:

Ժողովը տեղի ունեցաւ վրաց պատուիրակութեան չէնքի մէջ, նախագահութեամբ Զիէիձէի:

Արոյհետեւ վրացիք ու թաթարները դէմ եղան սահմանային խնդիրները ամբողջապէս այստեղ, Խաղաղութեան Համաժողովին մօտիկ լուծել, մնում էր համաձայնութեան մի այլ ելք դտնել: Հիմք ընդունուեց Կովկասում երեք կառավարութիւնների ստորագրած համաձայնութիւնը միջնորդ դատարանի մասին, եթէ համաձայնութեան չգան: Եւ քանի որ այդ համաձայնութեամբ նախատեսուած չէ ո՛չ բանակցութիւնների եւ ոչ արրիդրաժի համար որոշ ժամանակ, վճռուեց սահմանէլ որոշ ժամանակամիջոց եւ մէկի ե՛ւ միւսի համար:

Մենք առաջարկեցինք բանակցութիւնների համար ամենաշատը մի ամիս: Վիրօ-թաթար բլոկը պնդեց 2 ամսի վրայ: Նկատելի էր, որ նրանք կը ցանկանային որչափ կարելի է ներկայ դրութիւնը ձգձգել: Կանդ առանք վեց շաբաթուայ վրայ, որից յետոյ, եթէ բանակցութիւնները չեն յաջողուում, կողմերը համաձայն իրենց նախկին որոշման, դիմում են արրիդրաժի:

Երկրորդ խնդիրը արրիդրաժի ձեւն էր, որ նոյնպէս նախորոշուած չէ կառավարութիւնների մէջ:

Վիրօ-թաթարական բլոկը, բացառութեամբ Շէյխ-իւլ-Խալամովի, առաջարկեց հետեւեալը: «Իւրաքանչիւր կողմ իրենից ընտրում է մի անձն, յետոյ, այդ երկուսը միասին համաձայնութեամբ ընտրում են երրորդին՝ տարականի, որ ե՛ւ լինում է նախագահ»:

Մենք առարկեցինք, որ այդպիսի արբիրաժը էտք էս դառնում է մի անհատի՝ նախագահի, որովհետեւ երկու կողմերի երկու ներկայացուցիչները իրար կը չեղոքացնեն։ Այդ դէպում այդ երկրի ներկայութիւնը (օրինակ մի հայի եւ մի վրացու) սոսկ կը ծառայի ծանր վէճերի եւ յաճախ անախորժութիւնների։ Ուստի առաջարկեցինք, որ իւրաքանչիւր կողմ ընտրի իր ներկայացուցիչը, բայց ո՞չ իր շեղից, այլ օտար, չեղոք պետութիւնից, (օրինակ՝ Շվեյցարիա, Հոլանտիա, Շվեյցարիա) եւ յետոյ՝ դարձեալ երկու կողմերը համաձայնութեամբ ընտրեն նախագահին, նոյն երկրներից մէկի քաղաքացի։ Եթէ, սակայն, նախագահի ընտրութեան վրայ չհամաձայնին, պէտք է դիմեն կամ Գերագոյն Խորհրդին, կամ Ազգերի Լիգային եւ կամ որեւէ պետութեան, որ նշանակի մէկին նախագահ։

Անցաւ մեր առաջարկը։ Որոշուեց այս ընդհանուր հիմունքներով թուղթը խմբագրել եւ հեռագրով հաղորդել երեք կառավարութիւններին։

Զիսիձէն յայտնեց, թէ ինքը Բաթումի խնդիրը եւ այս միւս սահմանակէտերը նկատում է միացած։ Եւ նոյնիսկ նա նախ Բաթումի խնդիրն առաջ ձգեց օրակարգով, բայց որովհետեւ նրա մասին համաձայնութիւն չգոյացաւ, մենք խոստացանք գրաւոր ներկայացնել 1-2 օրի, այս պատճառով նախ սահմանային արբիրաժը քննութեան առանք։

Բաթումի մասին Vansittart խնդիրն այսպէս էր դրել։ Թէ նախ ծրագիր կար Բաթում եւ իր շրջանը յայտարարել մի չեղոք պետութիւն, բայց հետագայում այդ ծրագիրն ընկաւ։ Եւ այժմ, եթէ երեք կառավարութիւնները Կովկասեան համաձայնութեան գան Բաթումի մասին, Գերագոյն Խորհուրդը շատ գոհ կը մնայ։ Նա աւելացրեց, թէ գէմ չէին լինի, որ Բաթում ու շրջանը վրացական գերիշխանութեան ենթարկուի, բայց ապահովելով 1) միւս երկու հարեւաններին՝ Հայաստանին ու Աղբբէյանին ելք Բաթումից Սեւ ծով, եւ 2) անպայման Բաթումը պատ պորտո-ֆրանկո դարձնելով։

Վերջին երկու պայմանները նկատի առնելով, վրացիք առաջարկեցին համաձայնութեան գալ հետեւեալ Փորմուլայի վրայ։

«Հայաստանն ու Աղբբէյանը ընդունում են Վրաստանի գերիշխանութիւնը, (կամ աւելի ճիշդ միացած իրաւունքը) Բաթումի ու շրջանի վրայ, իսկ վրացիք իրենց կողմից ապահովում են երկու յիշեալ հարեւաններին տընտեսական ելք Սեւ ծովը Բաթումի վրայով։»

Թաթարները համաձայնեցին իսկոյն։ Ես առարկեցի հետեւեալը։

— Երբ դուք ասում էք հարեւանները ընդունում են ձեր «սուվըրինիտիտը», դա բոլորովին հասկանալի է։ Բայց երբ ասում էք, թէ մենք կը տանք բոլոր անհրաժեշտ երաշխիքները ձեր տնտեսական ելքի, դա անորոշ է եւ կարող է պատճառ դառնալ շատ թիւրիմացութիւնների։ Նախ՝ պէտք է որոշել ձեր տալիք երաշխիքների բնոյթը եւ տեսնել, թէ մինչեւ ո՞ր աստիճան նրանք կարող են ապահովել մեր տնտեսական ելքը։

Զիսիձէն պատասխանեց, թէ իրենք աղնիւ խօսք են տալիս։

Ես ասացի թէ՝ ձեր աղնիւ խօսքը անհատապէս ինձ համար շատ յարգելի է, բայց պետական քաղաքական ինդիրների կարգադրութեան ժամանակ դա առանձին արժէք չունի։ Գարանտիան (երաշխիքը) պիտի լինի որոշ, յստակ եւ հաստատուն։

Չխէիձէն առաջարկեց մեղ ներկայացնել գրաւոր, թէ մենք ի՞նչպէս ենք հասկանում զարանտիաները՝ ապահովելու համար մեր տնտեսական ելքը:

Մի օր յետոյ մեր առանձին խորհրդակցութեանը, ուր ներկայ էին Փաշան, ես, Նորատունկեան, զններալ Կորպանեան, Փիրալեան, Վարանդեան, Սիմ. Յակոբեան, եկանք այն եղրակացութեան, որ մենք պահանջելու ենք ձորոխի ձախ ափը ուն ուրութեան, որ Vansittart յայտնեց մեղ առանձին, որ մենք այդ պահանջելու իրաւունք ունինք եւ Գերագոյն Խորհուրդը կը առաջ մեղ այդ: Նաեւ պահանջեցինք մեր յատուկ քարափը Բաթումում եւ նրա շուրջը բաւարար չափով հող, ուր կարելի լինի շինել պէտք եղած ամբարները եւ այլ անհրաժեշտ ծածկերը: Ճորոխի գետաբերանից մինչեւ Բաթում 7-8 վերստ տարածութիւն հողաբաժնի վրայ, որ վրացական է լինելու, մենք պէտք է իրաւունք ունենանք մեր երկաթուղիին գիծը անցկացընելու, որ գալու է Արդահանի եւ Կարսի շրջանից:

Այս որոշումն էր, որ մենք յաջորդ օրը յայտարարեցինք ժողովում:

Վրացիք բացէ ի բաց մերժեցին: Բաթումի մասին համաձայնութիւն չը գոյացաւ:

Մենք առաջարկեցինք ստորագրել առայժմ գէթ արրիդրաժի մասին մեր կայացրած համաձայնութիւնը: Վրացիք յայտնեցին, թէ քանի որ Բաթումի մասին համաձայնութիւն չկայ, նրանք հնարաւոր չեն գտնում առաջինն ստորագրել:

Vansittart սպասում էր պատասխանի: Երեք պատուիրակութիւններս ապրիլի 17-ին ներկայացանք եւ յայտնեցինք կատարուածը: Նա շատ վշտացաւ, նորից պնդեց, թէ պէտք է համերաշխիլ եւ առաջարկեց այս ձախողանքը չնկատեն վիճումն եւ վերսկսել Սան-Ռէմում, ուր լինելու է ե'ւ ինքը, եւ ուր ապրիլի 19-ին, ասաց, սկսուելու են Խաղաղութեան Համաժողովի նիստերը:

Ես մեկնեցի Սան-Ռէմո ապրիլի 18-ին Գեն. Կորպանեանի, Ս. Յակոբեանի, Միքէի հետ. Հոռոմից էլ կանչեցի Վարանդեանին: Եկան եւ Փաշան ու Նորատունկեանը: Վերջինիս ես հրաւիրեցի:

ԽՈՐՃՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՎՐԱՑԻՆԵՐԻ ԵՒ ԹԱԹԱՐՆԵՐԻ ՀԵՏ
ՍԱՆ-ՌԷՄՈՈՒՄ

1920 թ. ապրիլ 21

Սան-Ռէմում Vansittart մեղ առանձին յայտնեց թէ՝ մեր կացութիւնը իսխսուած է, թէ Թուրքիայի կողմից մեր սահմանները սղմելու տրամադրութիւն կայ (խօսքը էրզրումի մասին էր) Հայաստանը շրջապատող բազմաթիւ թշնամիների պատճառով եւ թէ լաւագոյնն է զիջումով համաձայնութեան գալ վրացիների եւ թաթարների հետ եւ խորհուրդ տուեց Ճորոխի ձախ ափի սեփականութեան պարման չղնել եւ պահանջել իրաւունք երկաթուղային գիծ անցկացնելու վրացական հողով, բայց մեղ պատկանող իրեւ Հայաստանի անձեռնմխելի սեփականութիւնը մինչեւ Բաթում, որը մնալու է Port Libre et Franc:

Ստիպուած էինք համակերպիլ, քանի որ իրօք էրզրումի մասին շշուկները քանի զնացին աւելի ճշմարտապատում պատկեր առան: Եւ առաջին ժողովում իսկ, երկար վէճերից յետոյ, աշխատելով թանկ ծախել, մենք յայտ-

նեցինք որ հրաժարւում ենք հողային պահանջից եւ կը բաւականանանք լուրջ դարանդիաներով մեր երկաթուղային գծի համար, որը անցնելով ձորոխի հովտով՝ վրացական հողով կ'երթայ դէպի աջ՝ Բաթում եւ զէպի ձախ՝ դէպի Աթինէ եւ Թիղա, որոնք մեղ խոստացուած են որպէս սեփական նաւահանգիստներ :

Վրացիք, ընդունելով մեր երկաթուղային գիծը, աւելացրին սակայն, որ իրենք պէտք է որոշ կոնդրովի իրաւունք ունենան երկաթուղու կառուցման եւ շահագործման մէջ: Նրանց հակառաջարկն այս մասին պարզապէս մեր միջոցներով շինուած երկաթուղին դարձնում էր վրացական գիծ: իսկ զէպի Աթինէ եւ Թիղա ծրւղ տանելուն հակառակեցին:

Առարկութիւնը հետեւեալն էր, որ Զիէիծէ, Գորեչիա եւ Գրժվալիմէ արտայայտեցին երկար ճառերով: Նրանք ասում էին ,թէ մեր պահանջը Լազիստանի վրայ հակադեմոկրատիկ է եւ ազգերի ինքնորոշման դէմ է. ի՞նչ պէս կարելի է լազերի երկիրը պահանջել, առանց նրանց կամքն առնելու. «այո՛, մենք, վրացիներս, արդէն իսկ Բաթումի շրջանին ինքնավարութիւն ենք տալի»:

Ինչ վերաբերում է երկաթուղային գծին դէպի Բաթում, նրանք դէմ չեն, ասաց Զիէիծէն, բայց հարկաւոր է այս մասին առաջարկել մեր երկու կառավարութիւններին համաձայնութեան զալ, որովհետեւ իրենց պատուիրակութիւնը իրաւասու չէ այդպիսի զիջումն անել:

Նախընթաց օրը նրանք տեսնուելու էին իտալացիների հետ:
Ես ասացի.

— Ետա ուրախ եմ, որ դուք ազգերի ինքնորոշումը եւ ժողովուրդների իրաւունքը մէջ բերիք: Բայց ինչո՞ւ այդ յիշեցիք այժմ լազերի առթիւ եւ այնպէս մոռացել էք Ախալքալակը պահանջելիս, ուր 80 հազար հայի դէմ հազիւ 4-5 հազար վրացի կայ, եւ Լոռին ու Բորչալուն պահանջելիս, ուր 60 հազար հայութեան մօտ հազիւ 4-5 հարիւր վրացի կայ: Պ. Զիէիծէ, կամ շարունակ լինինք իսկապէս զեմոնկրատ, պաշտպան ժողովուրդների իրաւունքի, կամ երբեք չինինք: Հարցը էլ էք արգեօք լոռեցիներին թէ նրանք կամենում են վրացի դառնալ: Հարցը էլ էք ախալքալաքցիներին... Ինչ վերաբերում է ձեր իրաւասութիւն չունենալուն, մեղ զարմացնում է, որ դուք միայն այժմ այդ յիշեցիք, այժմ, մի ամրող ամիս այս մասին ժողովներ անելուց յետոյ:

Ժողովը ցրուեց՝ վճռելով Vansittart-ին հաղորդել կատարուածը հարազատութեամբ:

Vansittart-ը, լսելով ինդիրը, ասաց հետեւեալը.

— Պարոններ, Լորդ Կըրրընի մեսսաթն է, որ ես ձեղ յայտարարում եմ: Համերաշխութեան փորձի այս տիսուր վիժումը մէծապէս վշտացնում է Լորդ Կըրրընին, որ իրեն իրաւունք է համարում ձեր հովանաւորը կարծել, քանի որ նա էր, որ խանդով պաշտպանեց եւ ձեր պետութիւնները ճանաչել տուեց: Նա խորապէս զառնացաւ իմանալով այս բոլորը: Ես գտնում եմ, որ հայերը հասել են կարելի զիջումի եզրին, նրանից դէնը զնալու չեն: Յայտնում եմ ձեզ, որ Conference-ը վճռել է Հայաստանին ծովային ելք տալ ինչ զնով եւ լինի, որ Բաթումը պիտի մնայ Port Libre et Franc, եւ հայերը պէտք է զիծ ունենան ե՛ւ դէպի Բաթում, ե՛ւ դէպի Աթինէ:

Չլէիծէ: — Երբ դէպի Բաթում կայ, ինչո՞ւ այս երկրորդ գիծը:

Vansittart. — Տարօրինակ է. բայց դա ձեզ ի՞նչ վնաս: Ես ձեզ ասում եմ, պարագիներ, ի զուք մի՛ հակառակէք հայերի համեստ պահանջներին, այլապէս դուք աւելի կը կորցնէք Բաթումի շրջանում: Ես առաջարկում եմ ձեզ նորից հաւաքուել եւ սկզբունքը այս է համաձայնութիւնան. «1) հայերը չեն հակառակի մեր իրաւունքին Բաթումի եւ շրջանի մէջ. 2) Բաթումը Port Libre et Franc:

3) Հայաստանը պիտի իր երկաթուղին ունենայ ձորոխի հովտով ու tout propriété, որի մի ճիւղը կ'երթայ Բաթում սերվիտ-ի իրաւունքով եւ միւսը Աթինէ եւ Թիգէ, հայկական նաւահանդիսուները: Թաթարները եւ հայերը կ'ունենան Բաթումում իրենց քարափը (quai) եւ Zone Franche-ը շէնքեր կառուցանելու»:

Յաջորդ օրը 23-ին ապրիլի նորից ժողովեցինք: Նորից վրացիք երկար ճառեր ասացին. դարձեալ համաձայնութիւն չկայացաւ, քանի որ Ավալով ու Զիէիծէ երկաթուղագծի մասին այսպիսի Փորմալ առաջարկեցին թէ՝ «Վրաստանի սուվըրէնիտէտ (վեհապետական) իրաւունքը տարածւում է եւ հողի վրայ ե՛ւ երկաթուղային գծի վրայ»: Իսկ դէպի Թիգէ գնացող գիծը մերժեցին:

Վերջին անգամ հաւաքուեցինք Vansittart-ի մօտ յայտնելու, թէ համաձայնութիւն դարձեալ չկայացաւ:

Vansittart շատ յուզուած, շատ դառնացած ձայնով ասաց.

— Պ. պ. վրացիներ, դուք չկամեցաք ընդունել հայերի համեստ պահանջները: Թոյլ տուէք այժմ ձեզ ասել, որ դուք ձեր հայրենիքի շահերի դէմ ընթացաք: Դուք չուզեցիք Հայաստանի իրաւունք տալ հարեւանօրէն ձեր հողով երկաթուղի տանել: Վստահ եղէք, որ հայերը կ'ունենան նոյն երկաթուղին, բայց իրենց սեփական հնդով, եւ դուք կը կորցնէք Բաթումի շրջանի 2/3-ը: Գիտցէք, որ թուրքական հարցի կարգադրուելով, այստեղ կը լուծուի Հայաստանի հարցը, եւ նրա սահմանները կ'որոշուին: Բայց դուք եւ Աղրբէյջանը դեռ կը սպասէք: Դուք չկամեցաք համաձայնիլ, եւ հնար չտուիք, որ Conference-ը ե՛ւ ձեղնով զբաղուի: Ես վերջացրի, եւ խոստանում եմ ձեզ այլեւս անհանդիստ չանել:

Ասաց եւ վերկացաւ դուրս գնալու:

Ավալով. — Պ. Vansittart, կը խնդրեմ, սպասէք, մինչեւ որ ձեր ասածները ես ոռուներէն թարգմանեմ պ. Զիէիծէին:

Vansittart. — Ես հաւատուած եմ, որ դուք ճիշդ կը թարգմանէք: Ես չպիտի մնամ:

Vansittart դուրս գնաց:

Այդ օրը հաւաքուած էինք Փաշայի մօտ: Երբ վրացիք ու թաթարները հեռացան, Vansittart ուշ զիշերով, ժամը 12-ին, նորից եկաւ, եւ ցոյց տալով մեզ մի թուղթ, ասաց:

— Ահա՛ ձեզ մի փաստաթուղթ վրացիների եւ թաթարների վատ մտայնութեան եւ բացերեսութիւն: Ես ծանօթ եմ բոլոր այս բանակցութիւններին: Գիտեմ, թէ ի՞նչ արին վրացիք, որպէսզի այս համաձայնութիւնը վիճի: Եւ այնուամենայնիւ այս մարդիկ երես են ունեցել զեկոյց տալ Conference-ին

մեղադրելով՝ թէ դուք՝ հայերդ էք պատճառ համաձայնութեան ձախողան-քին։ Նրանց համարձակութիւնն ասեմ, թէ յիմարութիւնն այնքան մեծ է, որ նոյն գեկոյցը դրկել են եւ ինձ, որ ամէն ինչ գիտեմ։ Ահա այդ փաստաթուղթը, որ լիք է աներես ստերով։ Պատասխանեցէք կէտ առ կէտ, եւ կարող էք իմ վկայութիւնն առաջ բերել։


Մենք յաջորդ օրը պատասխանեցինք վիրօ-թաթարական այս ստայօդ գրութեանը՝ միաժամանակ ներկայացնելով Conference-ին մեր իսկական պահանջները։ Եւ այս առթիւ վերստին կանգնեցինք Պարիզում արած մեր առաջարկի վրայ, այսինքն՝ պահանջեցինք ձորոխից ձախ ափը միացնել Հայաստանին՝ մեզ երկաթուղային գիծ ապահովելու համար, քանի որ, ինչ-պէս բանկացութիւնները ցոյց տուին, եթէ մեր երկաթուղին մեր սեփական հողով չ'անցնի, ո'չ մի ապահովութիւն չունենք, թէ վրացիք իրենց հազար ու մի միջամտութիւններով չեն խանգարելու մեր ելքը դէպի Սեւ ծով։

Այսպէս վերջացան մեր բանակցութիւնները վրացիների եւ թաթարների հետ։

Պօղոս փաշայի տպաւորութիւնը այնքան ծանր եղաւ վրացիներից, որ նը-րանց մեկնելուց յետոյ բացականչեց։

«Ah, les menteurs, fripouilles, canailles, je n'ai jamais vu de gens pareils»*) :

*) «Ահ, խարեբաներ, դատարկապորտներ, սրիկաներ, ես կեանքիս մէջ այդպիսի մարդկանց չեմ տեսել»։



ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ

ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

Գրեց՝ Ահետիս ԱշԱՐՈՆԵԱՆ

ԳԵՐԱԴՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋ

Ապրիլ 23, 1920
Սան-Բենտո

Գերագոյն Խորհուրդը Սան-Բէմօ հաւաքուած օրից գրեթէ մենակ թիւր-
քական եւ հայկական հարցերով է զբաղուած :

Երկու օրից ի վեր լուրեր են շրջում, թէ էրզրումը մեզնից ուզում են խը-
լել, հակառակ լոնդոնուած կայացած որոշման. որովհետեւ մենք՝ հայերս
հարկաւոր ոյժը չենք ունենայ այն գրաւելու թիւրքերի ձեռքից եւ մանաւանդ
պահելու: Պետութիւնները մեզ զինուորական օգնութիւն տալու չեն:

Երէկ երեկոյ կանչեցին Պօղոս Փաշային, — որ եկաւ յայտնեց, թէ ճշմա-
րիտ է, դրուած է էրզրումի խնդիրը եւ թէ դրա մասին իրեն հարցեր տուին:
Աւելացրեց թէ ինքը յայտնել է, որ հայերը մենակ իրենց ոյժերով կարող են
գրաւել էրզրումը եւ պահել:

Նոյն երեկոյեան Hotel Royal-ում պատահեցի Galli-ին, իտալական
պատուիրակութեան գլխաւոր քարտուղարին: Նա զարմանք յայտնեց, որ ես
չեմ եղել Գերագոյն Խորհրդում այօր, եւ աւելացրեց, թէ նիտաիի հրամա-
նով ինքն է կարգադրել, որ ինձ ու Փաշային միասին հրաւիրեն եւ թէ եկել
են իրեն յայտնել, թէ ինձ իրը թէ չեն գտել հիւրանոցում: «Բայց եթէ դուք
այնուամենայնիւ կամենում էք լսուել Գերագոյն Խորհրդում, դուք անպատ-
ճառ կը հրաւիրուէք»:

Ես պատասխանեցի դրական մտքով, եւ յաջորդ առաւօտ ժամը 10-ին
հրաւիրն ստացայ մի ժամ յետոյ՝ ժամը 11-ին ներկայանալու համար:

Շտապեցի Փաշայի մօտ, նրան հազորդեցի լուրը եւ ինդրեցի ընկերանալ
ինձ այս կարեւոր խնդրում՝ լիակատար համերաշխութեան ապացոյց տալու
համար: Նա առարկեց, թէ գուցէ անպատեհ է երկրորդ անդամ գալ, քանի
որ եղեր է երէկ: Ես պնդեցի: Նա համաձայնեց՝ ներս մտնելու կամ չմտնելու
համար ըստ հանգամանաց:

Մենք արդէն Villa Devachan-ի սրահումն էինք, երբ հետզհետէ հասան
Միլըրան, Նիտաի, Լոյդ Զորջ, Լորդ Կըրքընը, Բերթըլօ: Վերջինս մօտեցաւ
ինձ ու Փաշային ու ասաց, թէ էրզրումի շուրջը շատ մեծ վէճ կայ, թէ ինքը,
Լորդ Կըրքըն մեզ կողմնակից են, մինչեւ Լոյդ Զորջ, Նիտաի՝ հակառակ են:
Աւելացրեց, որ Պօղոս Փաշայի երէկուայ բացատրութիւնը լաւ տպաւորու-
թիւն է թողել, բայց հարցը դեռ լուծուած չէ: Նա հեռացաւ:



Մօտեցաւ մեզ Վենիդելոս : Նա ասաց . «Զդուշացէք, Դաշնակիցներից օգնութիւն չխնդրէք ի զուր : Տալու չեն, եւ դրանով միայն կը զրկուէք էրզրումից : Ինչ եւ լինի, ասացէք, եթէ ձեր ուժերով կարող էք գրաւել էրզրումը, պէ՛տք է նախ իրաւունքը ձեռք բերէք, զրաւումը կարող է ուշանալ» :

Ես պատասխանեցի, որ մենք էլ նոյն կարծիքի ենք եւ տարբեր բան անելու չենք, թէ եւ Փաշային ու ինձ զատ զատ կանչելով, Նիտոին գուցէ նպատակ ունի մեզնից տարբեր կարծիքներ լսել :

Ինձ հրաւիրեցին : Փաշան մնաց Վենիդելոսի հետ խօսակցելով :

Ես ներս մտայ : Պայտաձեւ սեղանի ճակատին նստած էր Նիտոին՝ նախագահ . նրանից դէպի ճախ լոյդ Զորջ, Լորդ Կըրզըն՝ իրենց թիկունքին ունենալով իրենց խորհրդականներին : Նիտոիից դէպի աջ՝ նստած էր Շայօլա, ապա Միլըրան, Բերթըլօն, դարձեալ իրենց քարտուղարներով թիկունքում : Աւելի վար, դէպի դուռը նստած էին Զինուորական Յանձնաժողովի անդամները Մարեշալ Ֆօչի նախագահութեամբ :

Ես Նիտոիի հրաւէրով տեղ բռնեցի իր դէմ ու դէմ :

Նիտոին, որ առաջին անգամ էի տեսնում, հաստ, թանձրամարմին մարդ էր կարձ պարանոցով, մեծ գլխով, ապակու փայլով անախորժ, բայց խելացի աչքերով : Ամբողջ արտաքինը խորամանկ մարդու տպաւորութիւն էր զործում, կարծեմ եւ չոր, անսիրտ մարդու :

Նա դարձաւ ինձ մօտաւորապէս հետեւեալ բառերով .

«Պ. Աշարոնեան,— ասաց նա,— Խաղաղութեան Համաժողովը շատ մտահոգ է Հայաստանի խնդրով, եւ շատ կը ցանկանար յանգել մի որոշման, որ յօդուտ այդ երկրի լինէր : Եւ քանի որ դուք լաւ ճանաչում էք ձեր երկիրը, ինչպէս եւ գիտէք էրզրումի կարեւորութիւնը, եւ նոյնպէս դիտէք որ այնտեղ Մուստաֆա Քեմալը 14 հազար զօրք է կենտրոնացրել, որ դաշնակից պետութիւնները անկարող են օգնական զօրք զրկել Հայաստանին : Յանուն Խաղաղութեան Համաժողովի ինք այժմ կը ցանկանար իմանալ, ընդունելով, որ դաշնակից պետութիւնները տրամադրիր լինին տալ զէնք, ուազմամթերք եւ սպաներ, հայ զօրքը ընդունակ կը լինէ՞ր զրաւել եւ պահել էրզրումը, ինչպէս եւ առհասարակ գրաւել ձեր նոր սահմանները : Մի ուրիշ հարց, որ ես կ'ու զի՞ ուզդել ձեզ հետեւեալն է՝ որո՞նք կը լինէին Հայաստանի շահերին համապատասխան սահմանները» :

Ես պատասխանեցի .

«Զեր հարցին պատասխանելուց առաջ, թոյլ տուէք շնորհակալութիւնս յայտնել Զեզ, պ. նախագահ եւ ամբողջ Գերագոյն Խորհրդին,— որ հաճեց ինձ ունկնդրել իմ երկրի համար այսքան կենսական մի հարցի մասին : Ապա կը խնդրէի նկատողութեան առնել 1) թիւրքերի վիճակը եւ նրանց ոյժերի արժէքը, 2) հայերի վիճակը եւ նրանց բանակի արժէքը :

«Առաջինի ժամին պէտք է ասել, որ Մուստաֆա Քեմալի բանակի ե՛ւ քանակը ե՛ւ արժէքը շատ չափազանցուած է թուրք զործակալների եւ նրանց համակիր օտարականների միջոցով : Մուստաֆա Քեմալ 14 հազար զօրք չունի, այլ շատ պակաս, եւ այն էլ մեծ մասամբ անկանոն զօրք, գիւղացիներ, շատերը բռնի զէնքի տակ պահուած, ամէնքը վատ հագուած, վատ դինուած, անվարժ : Կան եւ քիւրդ ձիաւորներ 1200 հոգի, որոնք միայն թալանի համար են

զնում: Մեր բանակի գլխաւոր շտարի տեղեկութիւնները, որոնք ճշգրիտ են, կասկած չեն թողնում այս մասին:

«Յետոյ, մի փաստաթուղթ, որ մեր ձեռքի տակ կայ, ապացուցանում է, որ երր Մուստաֆա Քեմալի զօրքերը լսեցին, թէ էրզրում եւ իր շրջակայքը միացուելու են անկախ Հայաստանին, ահազին թուով դասալքութիւն սկսուեց դօրքի մէջ: Մուստաֆա Քեմալ, այս մասին հաղորդելով կենտրոնական կառավարութեան, պահանջում է թոյլ շտալ Պոլսի մամուլին խօսել այդ գաւառները Հայաստանին կցուելու մասին: Խնդրում եմ նկատի առնել այս հոգերանական կացութիւնը:»

«Գալով հայ հանրապետական բանակին, պէտք է ասեմ, որ նրա թիւը երերուն է՝ 20-25 հազարի մէջ, նայելով թէ զէնք ու ուղմամթերք որչափ կայ: Դուք գիտէք, որ այդ զօրքը պատերազմի սկզբից մինչեւ այսօր կռւում է Entente-ի թշնամիների դէմ՝ առանց ստանալու մեր դաշնակիցներից ո՛չ մի փամփուշտ, ո՛չ մի հրացան եւ առհասարակ որեւէ օգնութիւն: Սակայն, կորիների մէջ վարժուած այդ բանակը, ենթակայ հազար ու մի զրկանքների, այդ փոքրաթիւ բանակը կարողանում է պաշտպանել մեր երկիրը բազմաթիւ թշնամիների դէմ: Եւ ես վստահաբար կարող եմ յայտարարել, որ մենք հեշտութեամբ, ինչպէս այդ հաստատում են մեր լաւագոյն զինուորական մասնագէտները, 1-2 ամսում կարող ենք հասցնել մեր բանակը մինչեւ 40-50 հազարի, եթէ մեզ տրուի համապատասխան քանակով զէնք ու ուղմամթերք:»

«Այդ վերակազմուած ու մեծացրած բանակով, վստահաբար կարող եմ ասել, որ մենք պիտի կարողանանք մեր սեփական ուժերով գրաւել եւ պահել ե՛ւ էրզրումը ե՛ւ մեր միւս զաւառները թիւրքիայում: Դրա համար մեզ հարկաւոր է, ինչպէս ասացի, զէնք ու ուղմամթերք, աւելացնեմ նաեւ՝ դաշնակից պետութիւնների սպաներ եւ Գերագոյն Խորհրդի վարկն ու դրօշակը:»

«Քանի որ խօսքը էրզրումին է վերաբերում, թոյլ տուէք ինձ, պ. նախադահ, քանի մը խօսք ասել նաեւ այդ բերդաքաղաքի կարեւորութեան մասին մեր պետութեան ապահովութեան տեսակէտից: Էրզրումը իր դիրքով ուղմապէս իշխում է ամրող Հայաստանին: Բոլոր ճամբաները դէպի մեր երկրի սիրտը՝ այնտեղից են անցնում: Նա առաջացած մի մշտական սպառնալիք պիտի մնայ մեր պետութեան սրտին ուղղուած, եթէ Հայաստանին չմիացուի: Անհնարին է երեւակայել Հայաստան առանց էրզրումի: Վերջապէս այդ քաղաքը մեր իսկական մայրաքաղաքն է: Երեւանը ժամանակաւոր է, մինչեւ որ էրզրումը գրաւենք:»

ԼՈՅԴ ՋՈՐՋ. — Ո՞րչափ հայ կայ էրզրումում:

ԵՍ. — Անյայտ, պ. նախադահը ամրող վիլայէթն ունի աչքի առաջ եւ պատերամից առաջ եղած թիւերը:

ԼՈՅԴ ՋՈՐՋ. — Այս', ի հարկէ:

ԵՍ. — Պատերազմից առաջ ամրող էրզրումի վիլայէթում կար 240 հազար թուոք, եւ 227 հազար հայ, մէջը լինելով ե՛ւ փոքրաթիւ այլ քրիստոնեաներ: Սակայն, խնդրեմ նկատի առնել որ 240 հազար թիւրքերի հետ է եւ IV (4-րդ) բանակը, որ միշտ երզնկայ էր, թուով՝ 40 հազար, էրզրումի զարնիզոնը, վիլայէթի քաղաքացիական եւ զինուորական պաշտօնեաները: Այնպէս որ, շատ չենք սիալուի, եթէ 240 հազար թուրքերից պակսեցնենք 50 հազար:

Այսպիսով հայերի թիւը պատերազմից առաջ դարձեալ թուրքերից բարձր էր : Ճշմարիտ է, հայերը մեծապէս տուժեցին թուրքերի հալածանքներից եւ գգալապէս նօսրացան ջարդերով եւ տարագրութեամբ, բայց սկզբ է նկատել տամ, որ թուրքերն էլ մեծապէս վնասութեցին ու նուազեցին պատերազմի ար-հաւիրքների երեսից, քանի որ կովկասեան ճակատի բոլոր յեղյեղումները կատարուեցին էրդրումի շրջանում :

Լ. ԶՈՒՇ. — Թուրքական վիճակալրութիւնը շոյց է տալիս էրզրումի վի-լայէթում 800 հազար աղջաբանակութիւն, որ ձեր տուածից շատ տարբեր է :

ԵՄ. — Ձեզ յայտնի է, անչուշտ, պ. նախաղահ, որ թուրքական վիճակա-գրութիւնը ծայրայեղ չափականցութիւնների վրայ է հաստատուած եւ շատ հեռու է ճշմարտութիւնից : Իմ բերած տեղեկութիւնները հաստատուած են մեր Պատրիարքարանի եւ եւրոպացի ճամրորդների տուած թուերի վրայ :

ԼՈՅԴ ԶՈՒՇ. — Ո՞րչափ հայ կայ Հայաստանի Հանրապետութեան մէջ :

ԵՄ. — Հայաստանի Հանրապետութեան հողի վրայ կայ մէկ միլիոն 292 հազար հայ, չհաշուած 1) Թիւրքահայ մօտ 220—230 հազար գաղթականները եւ 2) այն հայերը, որ փախած են Աղրբէյջանի բռնութեան երեսից :

ԼՈՅԴ ԶՈՒՇ. — Ո՞րքան թաթար կայ Հայաստանի Հանրապետութեան մէջ :

ԵՄ. — 300 հազարից քիչ աւելի :

Այս պատասխանիս վրայ, ես նկատեցի, որ իտալացի խորհրդականներից մէկը փախաց Նիտիի ականջին եւ սա դարձաւ ինձ ու հարցրեց —

ՆԻՇՏԻ. — Պ. Ահարոնեան, դուք ասացիք, թէ միայն ձեր ոյժերով պիտի կարողանաք գրաւել էրզրում եւ թուրքաց Հայաստանը : Արդ՝ քանի որ դուք այժմ Աղրբէյջանի հետ կոռւի մէջ էք, կարո՞ղ էք ասել, թէ ո՞րքան զօրք պիտի թողնէք Աղրբէյջանի դէմ, մնացածով թուրքերի վրայ գնալու համար :

Ես զդացի, որ այս հարցը մի թակարդ էր՝ ինձ զժուար կացութեան մէջ դնելու համար, ուստի պատասխաննեցի :

— Պ. նախաղահ, մենք Աղրբէյջանի հետ պատերազմի մէջ չենք եւ չենք եղել : Մեր եւ նրանց մէջ պարզ սահմանային ընդհարումներ կան, որոնք իս-կոյն պիտի դադարին, հէնց որ Գերագոյն Խորհուրդը հաճի մեր սահմանների կնձիոնները լուծել : Այդպիսի սահմանավէճեր այս պատերազմից յետոյ ամէն տեղ կան եւրոպայում : Եւ արդէն մենք բանակցութեան մէջ ենք թաթարների հետ, դուցէ եւ համաձայնութեան դանք :

ՆԻՇՏԻ. — Այլեւս հարց չունինք :

Ես դուրս եկայ: Դրսի դահլիճում Վենիդելոս հանդիպեց, հարցրեց : Ես պատմեցի: Նա շատ գոհ մնաց իմ պատասխանից :

Էրդրումի մասին իմ եւ Պօղոս Փաշայի տուած բացատրութիւնը Գերա-գոյն Խորհրդին թուացել էր շատ համողիչ, ինչպէս այդ իմացանք յետոյ :

Տարաբախտարար, երբ մեղնից յետոյ հարցրել են Զինուրական Յանձ-նաժողովի եւ իր նախաղահ մարեշալ Ֆօշի կարծիքը, սրանք դրեթէ միարե-րան մերինին հակառակ կարծիք են յայտնել:

Գերագոյն Խորհուրդը դուրս մեր եւ դին . Յանձնաժողովի հակաղիք կարծիքների մէջ, մնացել է վարանոտ եւ լուծումն տալու անկարող լինելով,

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

Ժիջին ելք է գտել՝ առաջարկել նախագահ Վիլսոնին՝ 1) որպէս միջնորդ դատավոր (Arbitre) որոշել Հայաստանի սահմանները Բիթլիսի, Վանի, Երզրումի, Տրավերնի վիլայէթներում և 2) ընդունել Հայաստանի մանդատը:

ԻՆՉՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵՑ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԹԻՒՐՔԵՐԻՆ

Մայիս 11, 1920

Պարիզ

Երկու օր առաջ մեր քարտուղարութիւնը Գերագոյն Խորհրդի քարտուղարութիւնից պաշտօնական նամակ ստացաւ հաղորդելու՝

1) Ո՞վքեր են մեր կառավարութեան ներկայացուցիչները (կամ ներկայացուցիչը) ներկայ լինելու համար հաշտութեան պայմանագիրը թիւրքերին տալու ցերիմոնիային եւ ապա ստորագրելու, երբ պէտք լինի եւ

Ի՞նչ Lettre de Cre'ance ունին:

Մեր քարտուղարը պատասխանեց թէ ներկայացուցիչը Պատուիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանն է եւ թէ Lettre de Cre'ance կը ներկայացուի:

Միւս օրը քարտուղարը տարաւ իմ Lettre de Cre'ance-ը եւ միաժամանակ ստացաւ հրաւիրագիր ինձ համար carte pour le Delegue' plenipotentiaire de la Republique de l'Armenie, վեց կարտ-հրաւէր մեր քարտուղարների եւ 3 կարտ-հրաւէր մեր ժուրնալիստների համար:

Նոյն օրը, երեկոյեան, Գերագոյն Խորհրդի քարտուղարութիւնը մեր ըստացած վեց քարտուղարական կարտերից մէկը յետ ինդրեց Փաշային տալու համար, որովհետեւ ասել էր իւրաքանչիւր պետութիւն մի աթոռ ունի պատուիրակի, հետեւապէս Փաշան կարող է ներկայ լինել միայն քարտուղարի եւ ոչ պատուիրակի կարտով:

Փաշան ինձ պատահելով ասաց, թէ ինքը Quai d'Orsay է գնացել, խօսել է քարտուղարի հետ, եւ ստացել է կարտ հրաւէրի: Այդ կարտը ես չտեսայ:

Միայն այսօր 11-ին ճաշից յետոյ, ժամը 4-ին երբ պէտք էր Quai d'Orsay գնալ, մի դժբախտ պատահար արգելք եղաւ, որ ես ժամանակին հասնեմ, եւ ես իմացայ, որ գնացել է մենակ Փաշան:

Միլրանը հինգ րոպէի խօսքով՝ Տէֆֆիկ փաշային եւ իր ընկերներին (4 հոգի) յանձնել էր խաղաղութեան պայմանագիրը, որ Տէֆֆիկ փաշան դողդողուն ձեռքով ընդունել էր, յայտնելով, թէ պատրաստ են այն քննել եւ պատասխան տալ մի ամսում:

ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ LETRE DE CRE'ANCE-Ը

Մայիս 10, 1920

Պարիզ

Այսօր միացեալ պատուիրակութեան նիստին, ուր ներկայ էր ե'ւ Աջէմեանը, ես յայտնեցի, որ Գերագոյն Խորհրդի քարտուղարութիւնը ինձ հրաւի-

րել է ներկայ լինել մայիս 11-ին թիւրքերին խաղաղութեան պայմանագիրը տալու ցերեմոնիային եւ թէ պահանջելու եմ Lettre de Cr'ance-ը։ Արդեօք Փաշան ստացե՞լ է նոյնը, հարցորի։

Նա պատասխանեց թէ չի ստացել, բայց ինքը անձամբ գնացել է, երկարորէն խօսել գիւլ Կամրոնին եւ ներկայացրել է իր երկու Lettre de Cr'ance-ները, մէկը Կաթողիկոսից եւ միւսը՝ Պոլսի Ազգային Խառն Խորհրդից եւ թէ ինք չգիտէ արդիւնքը։

Աջմեան ասաց թէ՝ կարող է պատահել որ Զեզ, Փաշա, Թոյլ տան ներկայ լինել վաղուայ ցերեմոնիյին, բայց ստորագրելու համար ձեր հաւատարմագիրը Կաթողիկոսից եւ Ազգային Մարմնից Պոլսի բաւական չէ, թիւրք պատուիրակութիւնն իսկ կարող է ինդիր հանել։

Թէքէեանը նոյնը հաստատեց եւ աւելացրեց թէ՝ «Ստորագելու իրաւունք ունին միայն կառավարութեանց ներկայացուցիչները»։

Այս յայտարարութիւնը շատ ազդեց Փաշայի վրայ։ Նա կոտրուեց, կծկուեց, վարի ծնօտն ուժգնօրէն դողդողաց ու հարցրեց Աջմեանին։

— Ի՞նչ պէտք է անել։

Աջմեան։— Ես կարծում եմ, որ միակ միջոցը դուրս գալու այս դրութիւնից այն է, որ պ. Ահարոնեանը գրի մեր կառավարութեան եւ ինդրի, որ Դուք էլ ստորագրութեան իրաւունք ստանաք որպէս կառավարութեան պատուիրակ։

Փաշան շատ խեղճացած եղանակով դարձաւ ինձ։

— Դուք ի՞նչ էք կարծում պ. Ահարոնեան։

Ես։— Ես համաձայն եմ գրել, որովհետեւ բազմաթիւ պատճառներով, որ աւելորդ է առաջ բերել, ես կը կամենայի, որ դուք էլ ստորագրէք։

Փաշա։— Ժամանակ կը լինի՝ մեր կառավարութեան պատասխանը ստանալու։

Աջմեան։— Պէտք է հեռագրել, թէ չէ՝ ուշ կը լինի։

Ես։— Հեռագիրն անյարմար է։ Աւելի լաւ է մինչ գրենք, թո՛ղ կառավարութիւնը հեռագրի։

Փաշային երբեք այս աստիճան խեղճացած, ընկճուած տեսած չէի։ Թիւրքերին առւած պայմանագիրը չստորագրելու վախը այնպիսի հարուած էր իր փառասիրութեան, որ հակառակ իր ամրող դժկամակութեան դէպի ինձ եւ մեր կառավարութիւնը, յանձն առաւ ինդրել, որ ես այդ դիմումն անեմ։

Ցաւով ու կարեկցութեամբ իմացայ, որ գժրախտ ու փառառէր ծերունին մինչեւ այդ՝ արդէն շատ անհանդիստ, դիմել է մի կեղծիքի, պատրիարք Զաւէնի հետ շտապով մի հաւատարմագիր են կազմել։ Պոլսի Խառն Ազգ։ Մարմնի անունից, որը իրը պատճէն շտապել է ներկայացնել Գերագոյն Խորհրդին, մինչեւ որ իսկականը ստանայ կ. Պոլսից։ Լաւ, որ Գերագոյն Խորհրդի քարտուղարութիւնը չի պահանջել իսկականը։

Երբ ես այսօր յայտարարեցի, թէ պատրաստ եմ ինդրել մեր կառավա-

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

բութիւնից, որ Փաշան նշանակուի պատուիրակ, Նորատունկեան բացական-չեց.

— «Je rend hommage à la loyauté de Mr. Aharonian»:

Ես վճռել էի խոստում կատարել, երբ վրայ հասան կովկասեան ցաւալի անցքերը, բոլէւելզմի վախը մեր երկրում եւ առհասարակ անորոշութիւնը:

Միաժամանակ Պարիզում գումարուեց թիւրքահայ համագումարի երկրորդ նստաշրջանը, եւ Փաշան նորից թափ առաւ, որովհետեւ այժմ կարծում է, որ եթէ մեր կառավարութիւնը ստիպուած լինի ինքոյնքը յայտարարել բոլշեվիկ, ինքը Փաշան կը հոչակի այստեղ թիւրքահայ կառավարութիւն:

Երեւի, այս է պատճառը, որ այլեւս բնաւ չի խօսում մեր կառավարութիւնից մանդատ ստանալու մասին:

Անցեալ օրը, մի զրոյից ժամին, ուր ներկայ էինք Փաշան, Աջէմեանը, Նորատունկեանն եւ ես, Փաշան հարցը դրեց վճռական եղանակով.

— Ես, — ասաց նա, — հէ՞ց որ Երեւանը յայտարարի ինքինքը բոլշեվիկ, պիտի հրաժարուեմ այդ կառավարութիւնից: Դուք ի՞նչ կ'անէք, Պ. Ահարոնեան:

— Վաղաժամ է, — ասացի, — այսպիսի յայտարարութիւններ անել: Ես կը վարուեմ ըստ հանդամանաց՝ միշտ նկատի առնելով մեր պետութեան գերագոյն շահերը:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԱԼԷՈՂՈԳԻ ՀԵՏ

Յունիս 17, 1920

Պարիզ

Ես առաջին անգամ էի տեսնում Պալէոլոգին, արտաքին գործոց Ենթաքարտուղարին:

Շնորհակալութիւն յայտնեցի յանուն մեր կառավարութեան ֆրանսիայի ներկայացուցիչ Երեւանում Poidebard-ի գործունէութեան համար եւ խնդրեցի նորից թողնել նրան իր պաշտօնում Երեւան: Դիմումս եւ խօսքս նրան հաճոյ թուեց եւ նշանակեց block-note-ում:

Բաթումը դատարկելու իմ հարցին պատասխանեց դրականապէս.

Que voulez-vous, il est si difficile de travailler avec les Anglais dans la politique. Ils nous ont poussé pour y enveoyer des troupes et maintenant il faut le quitter:

«Ի՞նչ կ'ուղէք որ, շատ գժուար է անգլիացիներուն հետ քաղաքականութեան մէջ միասին աշխատիլ: Մեզի մղեցին որ զինուոր դրկենք հոն, այժմ ալ պիտի լքենք»:

Կիլիկիայի կացութեան մասին երկարորէն խօսեցի:

Պալէոլոգ յայտնեց.

— Մենք, — ասաց, Կիլիկիան ճգելու չենք, մինչեւ որ կարողանանք տանելի բեժիմ ստեղծել հայերի համար: Մենք առ այժմ մեր ճակատը նեղացը-նելու համար դէպի ծովափը քաշուեցինք: Այս է բոլորը: Պիտի աշխատենք

այնպիսի վարչութիւն հաստատել այնտեղ, որ հայերը կարեւոր դեր ունենան եւ ինքինքները ապահով զգան:

Շատ թերահաւատեցայ այս յայտարարութիւնը լսելով, եւ շատ ջղայնութեամբ զգալ տուի, որ երաշխիքը դժուար է ձեռք բերել առանց մեծ պետքեան դրօշակի: Պալէոլոգ անպատասիան չթողեց, բայց անորոշ խօսքեր ասաց:

Ծնորհակալութիւն յայտնեցի քանի մի օր առաջ իր գրած նամակի մասին, որով ֆրանսական կառավարութիւնը խոստանում էր մեզ զէնք եւ ուղամամթերք:

— Զէ՞ք գտնում, որ այժմ շատ դժուար կը լինի այդ ուազմամթերքը Հայաստան հասցնել, քանի որ Բաթումը ձգելու ենք,— ասաց Պալէոլոգ

Պատասխանեցի, որ այդ դէպքում կը յուսամ անհնարին չլինի, քանի որ մեր յարաբերութիւնները վրացոց հետ այժմ լաւ են:

«Անզլիացիների զրկած զէնքի տեղ հասնելուն պէս, կը պարզուի, ասացի, մեր անելիքը»:

Պ. Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆԻ ԱՅՑԸ

(Մեծ Վեզիրի հետ տեսակցելու առթիւ)

Յունիս 19, 1920

Պարիզ

Այսօր առաւտեան Նորատունկեան եկաւ ինձ հաղորդել հետեւեալը.—

«Պոլսից իմ մի բարեկամը գրում է թէ՝ ես տեսնուեցի Զաւէն պատրիարքի հետ, որ յայտնեց թէ, հայերը բոլորովին գոն պիտի մնան, երբ կարողանան ստանալ իրենց պահանջած դաւաները Թիւրքիայից, եւ թէ Վիլսոնի իրաւարութիւնը կը լուծի այդ խնդիրն ապահովաբար, որից յետոյ փոքրամասնութեանց վերաբերեալ օրէնքն էլ կ'ապահովի մնացած հայութիւնը Թիւրքիայում: Այս բոլորը երբ իրականանան, ասել է Պատրիարքը, հայերը Թիւրքիայից պահանջ չունեն եւ կարող են հաշտ հարեւան լինել»:

Այս յայտարարութիւնը թուացել է այնքան հաշտարար, որ Նորատունկեանի բարեկամը իսկոյն հաղորդել է Մեծ Վէզիրի Դամաղ Ֆերիտ փառշային: Վէրջինս որ իբր թէ միշտ էլ հայերին բարեացակամ է եղել, ցանկութիւն է յայտնել, որ Պարիզում իրեն հետ տեսնուի Նորատունկեանը: Այս նըպատակով նամակ է գրուել Նորատունկեանին, որ բերել է ինքը՝ Դամաղ Ֆերիտ:

Նորատունկեան կարդաց այդ նամակը, որով իր բարեկամը խնդրում եւ խորհուրդ էր տալիս զնալ տեսնուել Մեծ Վեզիրի հետ:

Նորատունկեան եկել էր իմանալու իմ կարծիքը՝

1) Պէ՞տք է տեսնուել Մեծ Վեզիրի հետ, թէ ոչ.

2) Եթէ այո՛, ի՞նչ պէտք է խօսել. կարելի՞ է արդեօք մէկդի թողնել Վիլսոնի իրաւարարութիւնը եւ անմիջական համաձայնութեան գալ թիւրքերի հետ:

Առաջին հարցին տուի իմ լիակատար համաձայնութիւնը: Երկրորդ հարցին ասացի.

— Վիլսոնի միջնորդութիւնից մենք հրաժարուելու չենք, որովհետեւ այդպիսով՝ կը խախտենք գաշնազրի յօդուածը։ Նորատունկեանը կարող է նրանց հասկացնել, որ թէ ուղում են մեր վստահութիւնը շահել, ապա պէտք է չբողոքեն Վիլսոնի միջնորդութեան դէմ, որ լաւագոյն ու արդար ձեւն է լուծելու հողային վէճը։ Երբ մենք ընդունում ենք այդ իրաւարարութիւնը, թիւրքերի կողմից մերժելը մենք կը համարենք իրաւախոհութեան ոգու պակաս։

Նորատունկեան ինձ հետ համաձայնեց։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԲՈՒԼՈՆՈՒՄ Ծ/Վ.

22 յունիս

Այսօր Բուլօն գնացի տեսնուելու Վենիզելոսի հետ, քանի որ Գերագոյն Խորհրդում հարց էր դրուած Յունաստանին մանդատ տալ՝ զսպելու թիւրք ազգայնական բանդաների շահագործումները եւ բոնադատելու ստորագրել դաշնակիրը։

Յունիս 23-ի առաւօտեան ժամի 10-ին տեսնուեցի Վենիզելոսի հետ։ Իմ հարցին՝ թէ անդարձ է Գերադ։ Խորհրդի վճիռը Յունաստանին տրուելիք մանդատի մասին, Վենիզելոսը պատասխանեց։

— Այո՛, վերջնական է եւ մեր զօրքերը հրաման ստացան առաջ շարժուել։

Իմ ակնարկը, թէ դուցէ նպատակայարմար կը նկատէր ոտքի հանել Պոնտոսի յոյները եւ դեսանդ անել այստեղ, Վենիզելոսին շատ չժպտաց։

— Վախենում եմ ինձ մեղադրեն շափազանց ախորժակի համար, ստիպուած եմ խոյս տալ շատ տեղ շարժուելուց։

— Դուցէ կարելի էր Կիլիկիայի մեր կոռուպներին օգնութեան հասնել, յ

— ասացի, — սա կը լինէր փոխադարձ օգնութիւն երկու ազգերի։

— Ճշմարիտ է, — պատասխանեց Վենիզելոսը, — բայց բանակ զրկել չեմ կարող, այնքան ոյժ չունինք, իսկ դէնք ու ուղմամթերք, վախենում եմ, նոյնիսկ մեր պահեստներին իսկ չբաւի։ Զգիտէք թէ որքա՞ն թամիտ եղան մեր մեծ դաշնակիցները, կատարեալ ապուչներ են։ Եւ Վենիզելոս գլուխը բռնեց երկու ճեռքով — ապուչներ, ապուչներ... Ունենալով մեր 90 հազար-նոց բանակը Զմիւնիայում, որ վերջապէս Դաշնակից բանակ է, թողին, որ Մուստաֆա Քէմալ կաղմակերպուի, ու զարկի, որ կողմն ուզում է, մինչդեռ ինձ արգիլեցին առաջ շարժուել։ Որչափ ճիզ եմ թափել համոզելու համար, թէ յունական բանակը կարող է եւ պէտք է շարժուի վերջ դնելու Քէմալեան սկանդալին։ Հաւատացնում եմ Ձեզ, որ անուշներ են։

— Իրաւոնք ունիք, — պատասխանեցի։ — Մի՞թէ նոյնը չարին մեղ հետ։ Ամբողջ 1½ տարի է դէնք ու ուղմամթերք ինդրեցինք մեր բանակի համար, մեղ մերժեցին, բայց թիւրքերի դաշնակից Աղրբէյջանի թաթարներին լաւ կազմակերպեցին։ Մի քանի օր է միայն, ինչ անդիմացիք վերջապէս մեղ դէնք ու ուղմամթերք տուին։ Շատ պիտի խնդրեմ Ձեզ՝ 1) քանի օր գնում էք Լոնդոն, միջնորդէք, որ Բրիտանական կառավարութիւնը յարատեւի իր այս նոր ընթացքի մէջ մեր վերաբերմամբ եւ աջակցի նիւթապէս կազմակերպե-

լու մեր բանակը, որ լուրջ սպառնալիք կը դառնայ թիւրքերին էրզրումի կողմից, եւ 2) եթէ հար է Բաթումի պարպումը յետաձգեն անորոշ ժամանակով, մինչեւ որ այս կրիզիսը անցնի:

Վենիգելոսը խոստացաւ Պարիզ վերադարձին ինձ պատասխան տալ:

Այնուհետեւ ճաշից յետոյ, նոյն օրը ժամը 2.30-ին, Hotel Imperial գնացի տեսակցելու իտալական պատուիրակութեան քարտուղար Galli-ի հետ:

Galli-ն շատ սիրալիր կերպով ինձ ներկայացրեց իրենց արտաքին գործոց նոր նախարար կոմս Սփորցային, որին ճանաչում էի Կ. Պոլսից ու Հռոմից: Սփորցան ձեռքս սեղմելով եւ ժպտալով ասաց.

— Կարող եմ ձեզ լաւ լուր տալ. Հայաստանի կառավարութեան մօտ ամենահայասէր իտալացի նշանակեցի, ապ. Կորինին:

Ես չնորհակալ եղայ ու յայտնեցի, թէ ճանաչում եմ, նա աւելի քան հայասէր է, գրեթէ հայ:

Ապա զրոյցն անցաւ մեր եւ թիւրքերի յարաքերութեան: Սփորցայի կարծիքով՝ թիւրքերը մեզ զիջումներ անելու տրամադիր են եւ նրանց հետ անմիջական զրոյցը շահաւէտ կը լինէր:

Ես պատասխանեցի, թէ թիւրքիան ու թիւրքերը ոչնչացնել ոչ կարող ենք եւ ո՛չ հետապնդում ենք, հակառակ այն ահոելի չարիքին, որ մեզ հասցըրին: Եւ զիտենք, որ պիտի ապրինք նրանց հետ եւ հետագայում. բայց անհրաժեշտ է, որ նրանք ընդունին մեր մինիմալ պահանջները, որ ներկայացրել ենք Խաղաղութեան Համաժողովին:

— Այդ պահանջները նրանք կ'ընդունին, եւ դուք կոիւ անելու պէտք չունիք ուրիշների պէս (ակնարկը յոյների մասին էր): Արժէ, որ նրանց հետ խօսուի:

Galli-ն աւելացրեց, որ թիւրքերը միայն էրզրումի մասին են առարկութիւն անում: Այդ խնդիրը նրանք շինել են ազգային արժանապատուութեան հարց:

Սփորցան հեռացաւ, եւ իմ խօսակցութիւնը շարունակուեց Galli-ի հետ:

— Էրզրումը թիւրքերը պահանջում են էտնոգրաֆիական (ազգագրական) տեսակէտով:

— Դա բացարձակ սիսալ է, — պատասխանեցի, — պատերազմից առաջ մեծամասնութիւն էինք:

— Թէեւ միւս կողմից, — աւելացրեց Galli-ին, ես որչափ մտածել եմ, անկարող եմ եղել զտնել Հայաստանի սահմանին մի այնպիսի գիծ, որ էրզրումը դուրս մնար:

Մօտեցաւ Բելգիական արտաքին գործոց նախարար Հիմանս, մի քանի ըոպէ զրոյցեց: Այդ պահուն դուրս եկան Լոյդ Զորչ, Կըրզըն իրենց հետեւրդներով՝ մեկնելու համար, եւ բազմութիւնը գնաց ողջ երթ ասելու:

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ

ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵց՝ ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ



ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ԱՆԱԿԱՆԱԼ ԱՅՑԸ

30 յունիս, 1927,

Պարիզ

Այսօր առաւտու Պօղոս փաշան անակնկալ կերպով ինձ այցի եկաւ ու ասց մօտաւորապէս հետեւեալը —

— Դուք զիտէք, որ ես հրաժարական տուի, քանի որ շատ յոզնած եմ ու հիւանդ: Բժիշկները խորհուրդ են տալիս ինձ անպարման հանգիստ առնել: Բայց զիտէք, որ ինձ մեր համագումարը նեղել է, որ յետ ընդունեմ հրաժարականս: Փորձեցի զէթ պ: Գ. Նորատունկեանին պատուիրակութեան մէջ առնել, որ ինքս աւելի թեթեւանամ, բայց նա մերժեց, ասելով թէ դրսից աւելի օգտակար կը լինէր: Սակայն, մէկ-երկու հոգի նորերը պիտի խնդրեմ, որ ընտրեն, ինչպէս Սինապեան, Մկրտիչեան, ինքս էլ պէտք է 4-5 շարթով բացակայեմ, հանդստանամ հանքային ջրերում: Արդ՝ եկած եմ ձեզնից իմանալու թէ այսուհետեւ մեր աշխատակցութիւնը ի՞նչպէս պիտի լինի:

Ես պատասխանեցի, որ այս հարցի ծագումն ինձ համար անհասկանալի է: Մենք ցարդ աշխատակցել ենք, երեւի այսուհետեւ էլ պիտի կարողանանք միասին աշխատել՝ հակառակ ծագող դժուարութիւններին, որ պիտի հարթենք:

— Ո՞չ, — ասաց Փաշան, — ես կուզէի աւելի պարզաբանել մեր յարաքերութիւնները:

— Այդ դէպքում, թոյլ տուէք ինձ խորհել եւ ձեզ պատասխանել ճաշից յետոյ:

Ճաշից յետոյ, ժամը 3.30-ին, գնացի իր մօտ: — Ես նորից կրկնում եմ, — ասացի, որ ձեր հարցը չեմ հասկանում: Եթէ համագումարը չհաւաքուէր, դուք երեւի հրաժարական չպիտի տայիք եւ այս հարցն էլ տեղի չէր ունենայ: Ի՞նչ է պատահել: Նորից ասեմ, որ մենք կը գործենք, ինչպէս անցեալում: Ի հարկէ, թղթեր կը լինին, որ մենք միասին կը ստորագրենք: Կը լինի նաեւ, որ ես մենակ կը ստորագրեմ, երբ այդ պահանջի մեր պետութեան եւ աղլի շահը:

— Ես կարծում էի, թէ մենք ամէն թուղթ միասին պիտի ստորագրենք: Այլապէս մեր ասածը պիտի նկատեմ պառակտում, — ասաց Փաշան:

— Ես շատ եմ զարմանում, — պատասխանեցի, — որ դուք այսքան պարզ խնդրում պառակտում էք վնտուում: Ամբողջ 1½ տարի ծանր պայմաններում աշխատակցելուց յետոյ, տարօրինակ է այսօր եւ անհասկանալի պառակտու-

մի խօսքը, երբ 1-2 ամիս է մնացել վերջին։ Ես կրկնում եմ, որ մենք համերաշխ գործնէութեան պատուանդան կը կտնենք։

Իմ խօսքը նրան չդոհացրեց, եւ մենք բաժնուեցինք զրոյցը շարունակեալու համար։

Յաջորդ առաւօտ ինձ մօտ եկան ♀. ♀. Սինապեան եւ գոկտոր Նեվրուզ, խօսելու նոյն նիւթի մասին։

Նէվրուզի առջեւ ինչ որ թուղթի կտոր կար, որի վրայ նա մատիտով գրուում էր։

— Ի՞նչ է, զրաւո՞ր զրոյց պիտի անենք Փաշայի հետ։

— Ո՞չ, — ասաց, — սա սոսկ յիշողութեան համար է։

Եւ կարդաց թղթի վրայ նշանակած քանի մը կէտեր, որոնք կարող էին հիմք լինել իմ ու Փաշայի աշխատակցութեան։

— Գիտէ՞ք ինչ, — ասացի, լսելով այդ ընթերցումը, — գիտէք որեւէ թղթով հնարաւոր չէ առաջն առնել բոլոր կարելի միջադէպերի։ Հաշտարար ոգին եւ հայրենիքի սէրը միայն կարող է հարթել դժուարութիւններուն։ Այդ ես չեմ տեսած մինչեւ այժմ եւ այսուհետեւ էլ յոյս չունեմ տեսնելու։ Անախորժ միջադէպերն անախորժ են, գիտեմ, բայց պէտք է աշխատենք հարթել։

— Իրաւունք ունիք, — ասաց Սինապեան, — միջադէպերը այդ թղթով դժուար է կանխել։

— Փաշայի համար, — ասացի, — գործից աւելի միշտ իր անձի ինդիրն է մէջ տեղ։

— Իրաւունք ունիք, — կրկին ասաց Սինապեան, — այս դէպքում գործի շահը չէ, այլ պարզապէս Փաշայի անձի ինդիրը։

— Տարարախտարար, — շարունակեցի ես, — քանի որ համագումարը քաջալերում է Փաշայի այդ հիւանդուտ անձնափութիւնը, ես, աղմուկներից խուսափելու եւ դրսի աշխարհի առջեւ մեր պառակտումն ու անհամաձայնութիւնները չցուցադրելու համար, ստիպուած եմ հաշուի առնել ե՛ւ այդ «անձը», — ասացի։ Կարող էք յայտարաբել Փաշային, որ պիտի աշխատեմ համերաշխ գործակցել, ինչպէս անցեալու։

Նրանք հեռացան։

Նոյն օրը երեկոյեան եկան ինձ ասելու, որ Փաշան համագումարի նիստին մի թուղթ կարդաց, որպէս զրաւոր համաձայնութիւն իմ եւ իր մէջ։

Հեռախոսով հարցրի համագումարի նախագահ Նորատունկեանին, նա հաստատեց լուրը։ Ես ինդրեցի յայտնել ժողովին պաշտօնապէս, որ բերանացի համաձայնութիւն տալով գործակցել Փաշային՝ ես որեւէ զրաւոր համաձայնութիւն կնքած չեմ։

Հետազայում պարզուեց, որ գոկտոր Նէվրուզ եւ Սինապեան ինձանից յետոյ, տարել եւ Փաշային են ներկայացրել իրենց ձեռքի անդամութեան մասին մէջ, համարելով այդ իմ զրաւոր համաձայնազիր, տարել կարդացել է համագումարում եւ նոյնիսկ քննութեան դրել իւրաքանչիւր կէտ։

Կանչեցի ինձ մօտ Դր. Նէվրուզին եւ Սինապեանին ու դժկամութիւնս յայտնեցի, եւ նրանք էլ խոստովանեցան, թէ այդ թիւրիմացութեան արդիւնք է, եւ թէ պիտի կարողանան հարթել։

Այսօր ինձ մօտ եկաւ Զայեանը նոյն ինդրի մասին խօսելու։ Կրկնեցի, որ

եռ գրաւոր ոչինչ ունիմ Փաշայի հետ եւ որ, եթէ գրաւոր լինէր, շատ բան ունիմ ասելիք, ճշդելիք ու աւելացնելիք:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ

Յուլիս 2, 1920

Նկատելով որ նախընթաց օրուայ համաձայնութեան խնդիրը վայրիվերոյ զրոյցներով բարդանում է, այսօր ես զնացի անմիջապէս Պօղոս փաշային՝ պարզելու իմ վերջնական հայեցակչար եւ խնդրեցի պ.պ. Զայեանին, Սինապեանին եւ բժ. Նէվրուգին նոյնպէս ներկայ լինել, որպէսզի հետագայում իմ խօսքերին ծուռ բացատրութիւններ չտրուին:

Եւ այսպէս, այսօր ճաշից յետոյ, ժամը 4-ին, յիշեալ երեք անձանց ներկայութեամբ, Փաշային ասացի.

— Նախ՝ ես տակաւին չհասկացայ, Փաշա, թէ ի՞նչ պատճառ ունէիք սա նոր համաձայնութեան խնդիրը մէջտեղ նետելու: 1½ տարուայ գործակցութիւնից յետոյ, կարծում եմ առաջիկայ 1½ ամիսն էլ որեւէ կերպով կը գործակցէինք:

Պօղոս փաշան պատասխանեց.

— 1½ տարուայ ընթացքում մէնք յաճախ անախորժ վէճեր ենք ունեցել: Բայց այժմ իմ առողջական կացութիւնն այնպէս է, որ ես կարողութիւն չունեմ նոր ծանր վէճեր ու գուարութիւններ տանել: Ուստի Պատուիրակութեան մէջ մտնելուց առաջ, ես ուզեցի իմանալ թէ կարո՞ղ ենք խաղաղ աշխատակցութեան հիմունք գտնել, թէ՞ նորից պիտի գուարութիւններ ունենանք: Ահա միակ պատճառը իմ այս յարուցած համաձայնութեան խնդիրի:

— Ընդունում եմ ձեր պատասխանը բաւարար: Ապա՝ թոյլ տուէք նախ պարզել անցեալ օրուայ թիւրիմացութիւնը: Ինձ մօտ եկան ներկայ պարուներից Սինապեան ու Նէվրուզ եւ ինձ մի թուղթ կարդացին, կէս մատիտով, կէս թանաքով գրուած: Իմ հարցին թէ՝ գրաւո՞ր համաձայնութիւն է այդ, պատասխանեցին ոչ, զրաւոր ոչինչ լինելու չէ, ոս պարզ անձուութեան, առանց իմ կողմից պայմաններ աւելացնելու կամ կրծատելու, որովհետեւ ընդհանուր պատասխանն ունէի: Ասացի, թէ այսպիսի համաձայնութիւնները չեն, որ միջադէպերի առաջը կ'առնեն, այլ մեր իմաստութիւնն ու գործի սէրը: Հետեւապէս, ասացէք Փաշային, որ մէնք կը գործակցինք, ուստի ու առաջանանքը՝ մեր պետութեան ճանաչումը: Հետեւապէս, մնացածն ինչ որ պատահել է, ձեր ընթերցումը այդ թղթի, համագումարի քննադատութիւնն ու քուէարկումը պարզապէս թիւրիմացութիւն է միայն, եւ, իրեւ այդպիսին, պէտք է մէկ նոր յայտարարութեամբ չեղեալ նկատուի: Ի հարկէ, դուք անմիջապէս կը հարցնէք՝ «ապա այնուհետեւ ի՞նչ պիտի լինին մեր յարաբերութիւնները»:

— Այո՞— ասաց Փաշան, — դուք կուահեցիք:

— Մեր յարաբերութիւնները, ահա այն ֆորմուլան, որ հիմք պիտի ծառայի մեր գործակցութեան Nous allons collaborer comme par le passé' en

tenant compte de la nouvelle circonstance, qui résulte du fait de reconnaissance de notre état.

«Մենք պիտի զործակցինք անցեալին նման, նկատի առնելով նոր պարագան, որ առաջ եկած է մեր պետութեան ճանաչումի իրողութենէն»:

Այս ես ասել եմ առաջ, ասում եմ այսօր եւ նաև հետադայում: Կը հարցնէք անշուշտ նորից թէ ի՞նչ եմ հասկանում ասելով collaboration en tenant compte de la reconnaissance de notre état:

«Փորձակցութիւն նկատի առնելով մեր պետութեան ճանաչումը»:

Պատասխան պարզ է՝ chaque fois que la d'ele'gation serait appellée à présenter la figure de l'état, je singnerai seul les documents»:

«Ամէն անդամ որ պատուիրակութիւնը պիտի կանչուի ներկայացնելու պետութիւնը, ես միայն պիտի ստորագրեմ փաստաթուղթերը»:

Ես այլեւս ոչինչ աւելացնելու չունիմ:

— Բայց դուք կարող էք այս Փորձուլան շատ լայն բացատրել, — ասաց Փաշան:

— Փաշա, — ասացի, — ո՛չ մի Փորձուլ չի կարող բոլոր հնարաւոր վէճերի եւ միջադէպերի առաջն առնել: Ես յոյս դրել եմ ոչ այս Փորձուլայի եւ ոչ մեր բոլոր զրոյցի վրայ, այլ մեր իմաստութեան եւ մեր հաշտարարուգու, ու մեր պարտքի գիտակցութեան վրայ: Դուք պէտք է ընդունէք, որ մենք երկուվ էլ պիտի աշխատենք մեր կառավարութեան դիրքն ամրապնդելու:

— Ես ալ նոյն եմ հետապնդում, բայց պէտք չէ Թիւրքաց Հայաստանը լքել: Այ, փաստաբան Lapradelle — ասում էր, թէ ոռւսները կովկասեան Հայաստանը ձգեցին նախ քան Վիլսոնի արքիցքամբ: Զեր պետութիւնը կարող է կործանուել: Ես պէտք է ներկայացնեմ Թիւրքաց Հայաստանը:

— Փաշա, Lapradelle-ը կարող է հմուտ օրէնսդէտ լինել, բայց վատ քաղաքագէտ է եւ անծանօթ իրերի ընթացքին մեր երկրին վերաբերեալ: Միջազգային յարաբերութիւնների մէջ ամէն ինչ օրէնսդրական կարգով ու մտածումով չի լուծւում: Յետոյ, դուք շարունակելով ձեղ յայտարարել Թիւրքաց Հայաստանի ներկայացուցիչ, թուլացնում էք մեր կառավարութիւնը, որ Թիւրքական դաշնագիրն իսկ նկատում է որպէս Միացեալ Հայաստանի միակ կառավարութիւնը: Եւ յետոյ դուք շարունակ հակասութեան մէջ էք: Դուք այդ կառավարութիւնը չէք համարում համայն Հայաստանի, բայց եւ Խաղաղութեան Համաժողովում նոյն կառավարութեան բանակին էք յենուում, երբ պէտք է Թիւրքաց Հայաստանի հողը զրաւել: Յետոյ, ես լսել եմ, որ դուք փորձում էք անգլիական ու ֆրանսիական կառավարութիւնների միջոցով ձեր դիրքը, իրեւ Թիւրքաց Հայաստանի ներկայացուցիչ ամրապնդել: Սա լւա ճամբայ չէ, որ դուք ընտրել էք, ո՛չ ձեղ համար եւ ոչ հայրենիքի: Օտարների միջամտութիւնից շահ չունինք: Լաւ զիտցէք, որ ձեր ամրող դիւանագիտութիւնը ձախողած է եւ իմը ձերի հետ: Ինչ որ կայ, ինչ որ վաստակուած է, այդ՝ մեր կառավարութիւնը, մեր բանակը, մեր պետութիւնն է, եւ նրան միայն պիտի յենուինք:

Ես վերջացրի:

Դուքս եկայ:

Երեկոյեան նեկրուզն եկաւ ինձ ասելու, թէ Փաշան շատ մտախոհ է եւ ընդունել է իմ առաջարկը՝ ասելով ի սենտ օր!

ՍՊԱՅԻ ՀԱՄԱՓՈՂՈՎԻՆ

Յուլիս 7, 1920

Առաջին այցը Սպայում ևս ու Փաշան արինք Բելգիական արտաքին գործոց նախարար Հիմանսին:

Սա լոկ քաղաքավարական այց էր, թէ եւ զրոյցի ընթացքում պարզուեց, որ թիւրքերին տրուելիք պատասխանը խիստ է լինելու եւ սրանց հակառակարկները մերժուելու են:

Յաջորդ օրը տեսանք Բելթըլոին: Նա առանձին սիրալիրութեամբ ընդունեց մեղ. հաստատեց Հիմանսի ասածները եւ կարդաց մեզ թուրքերին տրուելիք պատասխանի բնադիրը, որ, ըստ երեւոյթին, իր խմբագրածն էր:

Պարզուեց, որ 1)թիւրքական պայմանագիրը մնում է անփոփոխ հողային տեսակչով, 2) վոքրիկ վոփոխութիւն յօդուա թիւրքերի նեղուցները կառավարող Յանձնաժողովում թիւրք ներկայացուցիչ ունենալու մասին, 3) նրանց տրուելու է տասն օրուայ պայմանաժամ ստորագրելու կամ մերժելու դաշնագիրը, 4) նորից առանձնապէս պնդում են Հայաստանի անկախութեան վրայ այնպէս, ինչպէս դաշնագիրն է նախատեսել Վիլսոնի արեւագե-ով, եւ 5) պատասխանը տրուելու է թուրքերին յուլիսի 17-ին, հետեւապէս նրանք իրենց խօսքն ասելու են յուլիս 27-ին:

Սրանից վերջը Փաշան փորձեց խօսք բանալ Կիլիկիայի մասին՝ ներկայացնելով, թէ Ամանոսի Հայ Հանրապետութիւնը ֆրանսայի աջակցութեան պտուղ է եւ թէ լաւ կը լինէր իսկոյն այնտեղ զրկել Անդրանիկին՝ սկսուած գործը դուրս բերելու համար:

Բերթըլոն խուսափողական պատասխան տալով այս բոլորին՝ կարճ կապեց տհաճութեամբ:

Մենք եկած էինք Սպա այն մտածումով, թէ գուցէ թիւրքական դաշնագիրը վերաքննուի եւ, հետեւապէս, մենք էլ մեր խօսքը կ'ասենք: Բարերախտաբար, Բերթըլոի յայտարարութիւնը մեր բոլոր կասկածները ցրեց: Մնում էր սպասել, որ այս պատասխանը հաստատի Գերազոյն Խորհուրդը:

Փաշան, չսպասելով այլեւս, մեկնեց Բրիտանի: Ես մնացի իմ աշխատակիցների հետ, — Կորպանեան, նէվրուզ եւ քարտուղար Հանըմեան:

Մի քանի օր յետոյ, յուլիս 11-ին, տեղի ունեցաւ թիւրքերի տալիք պատասխանի վերջնական վճիռը: Բերթըլոի մեզ կարդացած բնադիրը հաստառուեց անփոփոխ: Միայն Վենիգելոսի պահանջով վերջում աւելացրեց. Եթէ թիւրքական կառավարութիւնը հրաժարուի ստորագրելուց կամ ստորագրելով հանդերձ անկարող հանդիսանայ կարգ հաստատել Անատոլիայում, ապա Դաշնակիցները վճուել են վերջնական ձեռով վնասել թիւրքերին Եւրոպայից, այսինքն՝ կ. Պոլսից, ուր թիւրք մեծամասնութիւնը շատ կասկածելի է, ընդհակառակը քրիստոնեայ ազգաբնակչութիւնն էլ թւում աւելի մեծ:

Յուլիս 11-ի երեկոյին տեսնուեցի Վենիգելոսի հետ: Ինձ ընկերացաւ եւ զօր. Կորպանեան, քանի որ նիւթը զրոյցի նաեւ զինուորական էր:

Իմ հարցին, թէ ի՞նչ է մտածում նա (Վենիգելոսը) մեր բանակի առաջինացման մասին դէպի թիւրքահայ գաւառները, նա պատասխանեց, թէ ինքը միանդամայն դէմ է այդ մտքին, որովհետեւ երկիւղ ունի, որ մեր ոյժերը

բաւարար շլինին, իսկ որեւէ ձախողանք կարող է մեզ համար ճակատագրական լինել, քանի որ ո՛չ յոյները, ո՛չ Անդլիան եւ ոչ Ֆրանսիան կը գան օգնութեան:

Գեներալ (զօրավար) Կորդանեան պատմեց մեր զօրքի քանակը եւ կարողութիւնը: Ասաց, որ մենք կարող ենք, եթէ ուղմամթերք ունենանք, մեր բանակի թիւը հասցնել 40 հազարի: Անգլիացիք զրկել են ուղմամթերք: Յուսանք թէ ուրիշ տեղից էլ կ'ուղարկուի: Ասաց նաև, որ յոյն կառավարութիւնն եւս մեզ տասն հազար հրացան է տուել: Ծնորհակալ եղանք որա համար:

Վենիդելոսը գտաւ այս տեղեկութիւնները մեր բանակի մասին շատ խրախուսական:

Այնուամենայնիւ մեր զրոյցից պարզուեց, որ 1) մենք այժմ չպիտի առաջ շարժուինք. 2) պիտի սպասենք մինչեւ դաշնագիրը ստորագրուի. 3) մինչեւ Վիլսոն իր խոսքն արտասանէ սահմանների մասին. 4) եթէ այդ պահուն մեր բանակը պատրաստ լինի 40 հազարով, եթէ մեր թիկունքը ապահով լինի բոլշեվիկներից կամ թաթարներից այդ ժամանակ առաջ շարժուել:

Իմ հարցին, թէ մտադիր չէ՞ տիսսանտ անել Տրապիզոն, Վենիդելոս պատասխանեց, թէ դա հնարաւոր է, եթէ թիւրքերը մերժեն ստորագրել հաշտութեան պայմանագիրը:

— Այս տիսսանտի պահուն, — ասաց նա — մեր առաջիաղացումը կը դառնայ աւելի անհրաժեշտ եւ յաջողութեան հաստատ գրաւականով:

Սակայն, Վենիդելոս կարծում է որ թիւրքերը կը ստորագրեն:

— Պիտի խնդրէի, որ պահէք մեր նոր գրաւումներն, — ասացի, — մինչեւ թիւրքերը իրագործեն դաշնագիրն ամբողջութեամբ եւ դուրս քաշուեն ե՛ւ Հայաստանից: Արդեօք պետութիւնները նոյն մտածումը չունի՞ն:

— Անչուտ դա միակ ճամբան է, — ասաց նա, — թիւրքերին ստիպել իրագործելու դաշնագիրը եւ ես մտադիր չեմ թողնել՝ մեր բոնած հողերը: Զգիտեմ՝ ի՞նչ կանեն Դաշնակիցները: Դուք զիտէք, թէ մեր մեծ Դաշնակիցները յաճախ ի՞նչ յիմարութիւններ են անում: Առայժմ գոհ լինինք, որ մենք կարողացանք Քեմալի ոյժերի լեզենդան ցրել: Նայինք մնացածին: Յամենայն դէպս դուք դեռ սպասելու էք:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ Պ. Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆԻ ՀԵՏ

Յուլիս 16, 1920

Այսօր պ. Նորատունկեան եկաւ ինձ եւ հաղորդեց հետեւեալը —

«Աղքային Համագումար»ի վերջին նիստին նորից խնդրի եղաւ, թէ Փաշան ի՞նչպէս պիտի ստորագրի դաշնագիրը եւ թէ ԱՀարոնեանը խոստացած է իր կառավարութիւնից խնդրել գրա համար պէտք եղած արտօնութիւնը, եթէ Փաշան այդ կամենայ: Բայց Փաշան յայտարարեց. «Քանի որ Երեւանում coalition կառավարութիւն չկայ, ինքը այնտեղից որեւէ արտօնագիր եւ իրաւունք խնդրելու ցանկութիւն չունի»:

«Այսպիսով, — աւելացրեց պ. Նորատունկեան, — դուք այլ եւս պատասխանատու չէք, եթէ Փաշան հնարաւորութիւն չունենայ ստորագրել»:

ԹԻՒՐԳԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Օգոստոս 10, 1920, Պարիզ

Կեանքիս ամենաերջանիկ օրն է այս: Երեսուն տարուայ պայքարս, բողոքս, տառապանքս ու յոյսերս պսակուեցին փառաւոր յաջողութեամբ: Թիւրքական դաշնագիրն ստորագրուեց եւ բոլոր դաշնակից պետութիւնների Համաժողովն այսպիսով հոչակեց Միացեալ, Անկախ, Աղատ Հայաստանը Սեվրի սրահում:

Այսօր ճաշից յետոյ, ժամը 4-ին, երկու օթոմորիներով մեկնեցինք Պարիզից: Ինձ ուղեկցում էին կինս, խորհրդականներ պ. պ. էնֆիամեան եւ դոկտ. Նէվրուզ եւ երկու քարտուղարներ:

Սեվրի պալատի առջեւ ճգուղող ծառուղին երկու կողմից բռնուած էր զինուած պատոյ պահակների երկու շարքով, որի միջով մեր կառքերն անցան մինչեւ հանդիսաւոր մուտքը:

Առաջին յարկի ընդարձակ դաշլիճը, ուր բարձրացանք, արդէն շարուած էին պատուիրակների սեղաններն ու աթոռները, եւ նրանց յետեւներում տեղեր պատրաստուած իւրաքանչիւր պատուիրակութեան քարտուղարների համար: Իմ աթոռը գտնուում էր Զեխօ-սլովակների եւ ուումէնների ներկայացուցիչների կողքին: Սեղանի վրայ առջեւ մի քարտ կար: «Ple'niotentiaire de l'Arménie»: «Լիազօր Հայաստանի»:

Իմ դէմ առ դէմ, հակառակ պատի տակ, տեղ ունէր Յունական պատուիրակութիւնը, գլուխ ունենալով Վենիգելոսը: Նրանցից վար թիւրքերի տեղն էր: Ճակատի պատի տակ տեղ էին բռնել մեծ Դաշնակիցները:

Հետզհետէ դաշլիճը լցուեց պատուիրակներով: Ժամը ուղիղ 4-ին հասաւ Միլլրան, նախագահը Conſe'rence-ի: Եւ գրեթէ անարջապէս յետոյ ներս հրաւիրեցին թիւրքերն վարի յարկից, ուր նրանք սպասում էին:

Կարգագրիչը, ներս առաջնորդելով թիւրք երեք պատուիրակներին, բարձրածայն ասաց: Messieurs les ple'niotentiaires de l'Empire Ottomane. «Պարոնայք լիազօրներ Օսմանեան Կայսրութեան»:

Ամէնքը ոտքի կանգնեցին: Թիւրքերը ողջունեցին գլխի շարժումով եւ բռնեցին իրենց տեղերը:

Տիրեց ընդհանուր լուութիւն: Բոլոր այս ցերեմոնին մահուան պատժի ի կատար ածումի պատկեր ունէր: Պատժուղղը թիւրքին էր:

Ընդհանուր լուութեան մէջ, ոտքի կանգնեց Միլլրան եւ ասաց հետեւեալը — Messieurs. Je declare que le traite' que nous allons signer est en tout exactement conforme a l'original:

«Պարոննե՞ր, կը յայտարարեմ որ Դաշնագիրը զոր պիտի ստորագրենք հիմա, իր ամբողջութեան մէջ ճիշդ կերպով համաձայն է բնագրին:

Ապա հրաւիրեց թուրքերէն ստորագրել առաջինը:

Տեղից բարձրացաւ Հազի փաշան, նախագահը, եւ հաստատ, վճռական քայլերով առաջացաւ դէպի կեղրոնի սեղանը, ուր դրուած էր դաշնագիրը, առա իրեն մեկնուած գրեւը եւ ջլուտ շարժումով, արագութեամբ ստորագրեց յոյց տրուած տեղը: Նրա հետեւեցին իր երկու ընկերակիցները՝ Ռիզէ Թէֆէկի բէյ եւ Ռէշիտ բէյ: Վերջինի գէմքը լզաձգաբար շարժում էր, թէեւ

նա աշխատում էր առհարկի անյոյդ երեւալ, իսկ Ռիզէ Թէֆվիկը ծնօտն էր ջղայնօրէն շարժում:

Ստորագրեցին թիւրքերը եւ շտապով գրաւեցին իրենց տեղերը:

Այնուհետեւ հերթով նկան ստորագրելու Անդլիայի, Ֆրանսայի, Խոալիայի, ծապոնիայի ներկայացուցիչները:

Երբ հերթը հասաւ փոքր Դաշնակիցներին, այրութենական կարդով Հայստանը լինելով առաջնը, ինձ հրաւիրեցին ստորագրել: Ես ստորագրեցի երեք փաստաթուղթ՝ 1) բոն թիւրքական դաշնապիրը, 2) փոքրամասնութիւնների ստատուտը Հայստանի եւ մեծ պետութիւնների մէջ կայացած եւ 3) արձանագրութիւն այն մասին, թէ իւղօ-սլաւները եւ Հէջաղ բացակայեն եւ կարող են ստորագրել:

Երբ վերջացաւ ստորագրութիւնը եւ բարձութիւնը վերկացաւ, Վենիկոլուն ասածինը վաղեց դէպի ինձ, ձեռքս բոնեց երկու ձեռքով եւ զրեթէ բացադաշնեց յուղուած. «Mes félicitations, mon cher pré'sident, après vous, c'est moi qui est le plus heureux pour l'Algérie»:

«Ենորհաւորութիւններս, իմ սիրելի նախական. «Զեղմէ յետոյ, Ես Եմ Հայստանի համար ամենաերջանիկ անձը»:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԵՆԻԶԵԼՈՍԻ ՀԵՏ

Օգոստոս 11, 1920, Պարիզ

Այսօր առաւօտ, ժամը 10-ին, տեսնուեցի պ. Վենիզելոսի հետ:

Նիւթն էր՝ 1) Տրապիզոնի խնդիրը:

Պատուիրակութեան վերջին խառն ժողովի եւ Վիլսոնին մեր ներկայացըրբած վերջին զրի վրայ հիմնուած յայտնեցի, թէ իոյս տալու համար Պոնտոսի յոյների հակամարտութիւնից եւ, նկատի առնելով նրանց վճռական բողոքը, մենք որոշեցինք հրաժարուել Տրապիզոնից եւ բաւականանալ դաշնագրի յօգուտ մեզ եղած տրամադրութեամբ այդ նաւահանգստի մասին:

Վենիզելոս բարձրացաւ տեղից՝ երկու ձեռքով իմ ձեռքը թօթուեց ու ասաց:

— Ենորհակալ եմ: Դուք ձեր այդ որոշումով ինձ մեծ հոգսից ակատեցիք:

2) Հարցը, թէ Յունաստանի ո՞րպիսի օգնութեան վրայ կարող ենք յուսալ մեր թիւրքահայ գաւառները գրաւելու պահուն: Նա պատասխանեց բառացի այսպէս.

— Այնքան ժամանակ, որ թիւրքերը չեն դատարկի Հայստանը եւ չեն քաշուի Վիլսոնի մեզ յատկացնելիք հողերից, յունական բանակը գրաւած պիտի պահի բոլոր այն հողամասերը, որ դաշնագրի տրամադրութիւնից դուրս մենք բռնած ենք: Այս յայտարարութիւնս,— ասաց,— պաշտօնական է, եւ դուք ամէն առթիւ, ուր պատշաճ եւ օղտակար նկատէք, կարող էք ձեղ ծառայեցնել Դաշնակից կառավարութիւնների հետ զրուցելիս: Անդրում եմ, երբեք չմոռանաք ամէն տեղ ձերոնց յիշեցնելու, որ մենք — յոյն եւ հայ — բնական դաշնակիցներ ենք եւ թիւրքիայի բնական ժառանգները, Արեւմուտքի քաղաքակրթութեան յառաջապահներն ենք ու ապագան Արեւելքում մերն է:

3) Խնդիրը մեր ներկայացուցչութեան հարցն էր Աթէնքում։ Ես մի քանի թեկնածուների անուն տուի։ Վենիզելոս պատասխանեց.

— Ում որ նշանակէք, ինձ ընդունելի է, միայն թէ աշխատի հայ եւ յոյն բարեկամութիւնը ամբապնդել։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆ

HUGH CAMPBELL WALLACE-Ի ՀԵՏ

Սեպտեմբեր 1

Ամերիկեան դեսպանի յատուկ հրաւէրով այսօր իրեն տեսակցութեան զնացի առաւօտեան ժամը 12-ին։

Նա ինձ յայտնեց հետեւեալը, թէ օգոստոսի 26 թւով հեռագիր ունի Վաշինգտոնին, որով իր կառավարութիւնը հաղորդում է, թէ մեր սահմանների գործը շատ լաւ հիմների վրայ է, նախագահ Վիլսոնը շատ լուրջ ըդրազուած է այս խնդրով, եւ թէ կարող ենք վստահ լինել, որ մեր իդձերի եւ յոյսերին համապատասխան սահմաններ կ'ունենանք։ Յաւ յայտնեց, որ պատուիրակութեան ներկայացրած փաստաթղթերն ու կարտերը նա միայն օգոստոս 20-ին է ճամբռու ձգել այստեղից, հետեւապէս հեռագիրը դրկուած պահուն (օգոստոս 26-ին) յիշեալ փաստաթղթերը տակաւին ստացուած չէին։

Ես պատասխանեցի թէ մեր դատն այնքան արդարամիտ եւ հայասէր անձի ձեռքեր ունին, որ մենք շատ անհանգիստ չենք մեր փաստաթղթերի յապացումից։ Եւ ինդրեցի միաժամանակ ասել՝ արդեօք նախագահը պիտի սպասի՞ վաւերացումին թիւրքական դաշնագրի, թէ՞ առանց այդ իր որոշումը կը տայ։ Սա մեզ համար կենսական նշանակութիւն ունի, որովհետեւ մեր գաղթականները 5-6 տարուց ի վեր սպասում են վերադարձի ժամին։

Դեսպանը պատասխանեց.

— Կարող էք վստահ լինել, որ նախագահը լիովին իրազեկ է Հայաստանի եւ հայերի կացութեան եւ նա ամէն ինչ պիտի անի փութացնելու հարցի լուծումը։ Ինչ վերաբերում է ձեր վերջին հարցին, հազիւ թէ ես կարողանամ, — ասաց, — ձեզ պաշտօնական կարծիք յայտնել։ Կ'ասեմ միայն իմ անձնական մտածումը։ Ես հաւատացած եմ, որ նախագահը բնաւ պէտք չունի սպասելու որեւէ նոր պայմանի դաշնագրին ստորագրելուց յետոյ, եւ նա չի սպասի, վըստահ եղէք, որ ձեզ համար ձեր երկրի համար ամէն բան լաւ կ'ընթանայ։

Շնորհակալ եղայ եւ գուրս եկայ։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 8, Պարիզ

Այսօր առաւօտ, ժամը 11.30-ին, ամերիկեան դեսպան Հիւ-Վալլաս ինձ հրաւիրեց իր մօտ մեր սահմանների մասին խօսելու։

Զրոյցը մեր սահմանների հարցից անցու լոկ Տեսպանը

ցանկութիւն յայտնեց այս մասին մեր բացատրութիւններն ունենալ իր երկու խորհրդականների միջոցով:

Ճաշից յետոյ ժամը 3-ին, զեներալներ (զօրավարներ) Բագրատունի եւ Կորդանեանի հետ ընդունեցինք ամերիկեան դեսպանատան քարտուղար պ. George Anderson Gordon-ին, որ դրեց մեզ հետեւեալ հարցերը.

1) — Ո՞րն է այն հողամասը, որից դուք հրաժարում էք Վանի վիլայեթում:

Մենք ցոյց տուինք քարտէղի վրան Հէքքարին ու Սղերդը եւ բացատրեցինք այն պատճառները, որոնք թելաղրում են մեզ մեր շահերի տեսակէտից հրաժարուել այդ հողերից:

Բացատրութիւնը նրան գոհացրեց:

2) — Ինչո՞ւ էք հրաժարում Տրապիզոնից եւ ո՞րն է լինելու ձեր նաւահանդիսուը:

Վերջին հարցին պատասխանեց զօր. Կորդանեան, թէ մենք ստիպուած եղանք գոհանալ Ռիզէով, հակառակ բաղմաթիւ իր անյարմարութիւններին եւ կառուցանելու դժուարութիւններին համեմատելով Տրապիզոնի հետ:

Այս բացատրութիւնն էլ աւելի հետաքրքրեց պ. Gordon-ին իմանալու Տրապիզոնից հրաժարուելու բուն պատճառը, մասնաւորապէս, թէ ինչո՞ւ մենք սկզբում պահանջեցինք Տրապիզոնը եւ միայն վերջերս նախադահ Վիլսոնին ուղղած յուշագրով՝ հրաժարում ենք նրանից:

Ես պատասխանեցի հետեւեալը —

— Մենք պահանջել ենք Տրապիզոնն անցեալ տարի մեր յուշագրով Conseil Suprême-ին, դրդուած այն անհրաժեշտութիւնից, որ հանրածանօթ է եւ մանաւանդ քաջալերուած Վենիզելոսի արած յայտարարութիւնով Գերագոյն Խորհրդի առաջ թէ՝ «Donnez Tre'bizonte aux Arme'niens, ils l'ont bien mérité».

«Տուէք Տրապիզոնը հայերուն: Անոնք իրապէս արժանի են անոր»:

Բայց հետազայում Պոնտոսի յոյների բողոքի առջեւ Վենիզելոս տեղի տուեց եւ ձեռքերը լուաց այդ հարցից:

— Ե՞րբ պատահեց այդ, — հարցրեց Gordon:

— Մարտ ամսին Լոնդոնում, — պատասխանեցի. — Եւ յետոյ դրանից շատ առաջ և այդ օրերուած իսկ Պոնտոսի յոյն պատուիրակութիւնը ներկայացաւ մեզ յայտարարելու վճռապէս, որ եթէ մենք շարունակենք պահանջել եւ եթէ մանաւանդ յաջողեցանք այն ստանալ, իրենք՝ յոյները պիտի միանան թիւրքերին մեր դէմ, «որովհետեւ, ասում էին նրանք, Տրապիզոնը Պոնտոսի գլուխն է, եւ մենք թոյլ չենք տայ գլուխը բաժնել մարմնից»: Յունական այս հակառակութիւնը քանի գնաց՝ սաստկացաւ: Վերջում աւելացաւ Քեմալիստների շարժումների ընդհանուր վտանգը, սրա հետեւանքով թիւրք դաշնագրի վերաքննութեան հաւանականութիւնը եւ յունական բանակի առաջնացութիւնը, որ այնպէս զուգաղիպում էր մեր շահերին: Այս փափուկ պարագաները, երբ թիւրքական վտանգի դէմ մենք միմիայն յունական բանակի վրայ կրթնելու հնար ունէինք, բնականապէս յունական բարեկամութիւնը գարձաւ մեզ համար բացարձակ անհրաժեշտութիւն: Մենք գիտէինք, որ Դաշնակիցները երբեք մեզ օգնելու չեն, մինչեւ Վենիզելոս օգոստոսի 4-ին ինձ յայտարարեց, թէ նա չպիտի դատարկի յոյն բանակի դրաւած թիւրքա-

կան հողերը, մինչեւ որ թիւքերը հեռանան հայկական բոլոր հողամասերից : Եւ այսպէս մեր բաղմաթիւ դժուարութիւնների վրայ չաւելացնելու համար յունական թշնամութիւնը եւ պահելու համար յոյն կառավարութեան բարեացակամութիւնը, մենք վնուցինք չպահանջիլ Տրապիզոնը, եւ ո՛չ թէ հրաժարուել նրանից :

— Բայց դուք ուրիշ նաւահանդիստ չունիք, — ասաց պ. Gordon:

— Ճշմարիտ է, սա շատ ծանր վիճակ է մեզ համար, բայց Տրապիզոնի պատճառով յոյների հետ թշնամանալն էլ աւելի աղէտաւոր կը լինէր մեզ համար մեր ներկայ պայմաններում :

— Վենիգելոս, կամ իր կառավարութիւնը ուղղակի ճնշումն չի՞ գործ դրել մեզ վրայ :

— Ես ճեզ ներկայացրի այս հարցի պատմութիւնը ճշգրիտ կերպով եղրակացութիւնը կարող է լինել զանազան :

— Պոնտոսի յոյները որեւէ քաղաքական կազմակերպուած մարմին չունին անշուշտ, — ասաց Gordon, — որի հետ դուք բանակցէիք :

— Ո՛չ, — ասացի, — նրանց ունեցածը մի պարզ անուանական պատճերակութիւն էր, որպիսին ունէին Պարիզում բաղմաթիւ մանր ժողովուրդներ ու կրօնական համայնքներ :

— Վերջին անգամ դուք ե՞րբ դադարեցիք պահանջել Տրապիզոնը :

— Մոտերս, օգոստոսի սկիզբներին :

Եղրակացութիւն . . .

Պ. Gordon-ի հարցուփորձը մեզ վրայ այն տպաւորութիւնը թողեց, թէ նախագահ Վիլսոնի համար Տրապիզոնի հարցը տակաւին գրուած չէ, եւ թէ նա կասկածում է, որ մենք հրաժարուում ենք Տրապիզոնից յոյն կառավարութեան եւ մասնաւորապէս Վենիգելոսի ճնշման տակ :

✓

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ ՏԱԿՕ-ԻՕՆԵՍԿՈՒԻ ՀԵՏ

Հոկտեմբեր 4, Պարիզ

Տակօ-իօնեսկուն 58-60 տարեկան ժարդ է, շեշտուած հայկական դիմագծերով (ասում են հայ ծագումից է), որ ինձ ընդունեց grave ճեւհվ եւ շատ տրտում տոնով հարցուց . է

— Ի՞նչպէս է ճեզ մօտ, լաւ չէ, կարծեմ :

Ես պատասխանեցի թէ՝ մեր դրութիւնը ծանր է եւ ուզեցի իմանալ ի՞նչ կարող ենք յուսալ Ռումինիայից :

— Զեմ ուզում ճեզ աւելորդ յոյս տալ : Մենք անզօր, միանգամայն անզօր ենք ճեզ օգնելու : Թէրթերում գրած էին, իբր թէ Ռումինիան զօրք է զըրկում Տրապիզոն : Ցնորամտութիւն : Մանտաղի հեռաւոր միտք իսկ ունեցած չենք :

Այնուհետեւ մենք երկար խօսեցինք Քեմալիստների ոյժի եւ շարժումների մասին, բոլշեվիկների մասին :

Իմ հարցին, թէ կարո՞ղ ենք յուսալ գէթ նաւթ ստանալու Ռումինիայից, նա պատասխանեց բացասարար :

Կարող եմ ճեզ խոստանալ, — ասաց նա, միմիայն հրացաններ, ոռւսա-

կան հրացաններ 4-5 հազար եւ ոչ վճարելով, այլ որպէս ընծայ Հայաստանին:

Եւ սրա համար էլ չնորհակալ եղայ եւ դուրս գնացի:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԼՆ ԴԵՍՊԱՆ ՀԻՒ-ՎԱԼԱՍԻ ՀԵՏ

ՀՈԼԵՏՄԲԵԲ 11, 1920

Կիլիկիայից ու Հայաստանից սրտաբեկիչ հեռագրեր ստանալով, տեսակցութիւն ինդրեցի պ. Հիւ-Վալասից: Տուի նրան կարդալու հեռագիրը: Բացատրեցի դրութիւնը ե'ւ Կիլիկիայում ե'ւ Հայաստանի սահմաններում:

Նա, շատ ուշադրութեամբ ինձ լսելուց յետոյ, հարցրեց, թէ տեսնը-ւե՞լ եմ արդեօք Փրանսիական իշխանութիւնների հետ:

Պատասխանեցի, որ տեսնուելու եմ առաջին նախարարի հետ ամսոյս 13-ին:

— Զէ՞ք կարծում, — ասաց նա, — որ լաւ կը լինի այդ տեսակցութիւնից յետոյ վերյիշել մեր զրոյցը:

Ես գտայ նրա մտածումը գործնական եւ չնորհակալ լինելով դուրս եկայ:

(Շարունակելի)



ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՒԶԵՒ ԱԵԽԻ ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

Գրեց՝ Ահեքիս ԱՀԱՐՈՒԵԱՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՖՐԱՆՍԻԱՑԻ ՎԱՐՉԱՊԵՏ G. LEYGUE-Ի ՀԵՏ



Հոկտ. 13, 1920

Պարիզ

Այսօր, ճաշից յետոյ ժամը 4-ին, տեսակցութիւն ունեցայ Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Լէյգի հետ։ Զբոյցի նիւթն էր՝ Քէմալիստանի արշաւանքը դէպի Հայաստան եւ Կիլիկիայի անցքերը։

ՀԱՅԱՍՏԱՆ.— Կարդացի նրան ստացածս վերջին հեռագրերը թիւրքիայի արշաւանքի մասին։ Բացատրեցի մեր զօրքի վիճակը, պարզեցի կատարած արիութիւնը եւ այն, որ այդ զօրքը այսօր վարում է Դաշնակիցների պատերազմը նրանց թշնամու դէմ, որ շատ հայ զինուորներ արդէն կռւում են վեց տարուց ի վեր, զէնքի տակ շատերը գրեթէ ութ տարուց ի վեր։ Մասնաւորապէս կանգ առայ այն վտանգի վրայ իրենց իսկ շատերի տեսակէտից, թէ Քէմալիստներ ու բոլեւիկներ յաջողել են միանալ Հայաստանի վրայ։ Եւ խնդրեցի ասել, թէ ի՞նչ միջոցներ են խորհում օգնելու Հայաստանի։

Պ. Լէյգը շատ սիրալիր, շատ քաջալերիչ կերպով ինձ լսեց ու ասաց թէ՝ «Ձեր միտքը գրաւել Տրապիզոն-էրզրում դիծը արժանի է խորին ուշադրութեան, եւ ես դրանով լուրջ զրազուած եմ։ Իրաւունք ունիք, Հայաստանի վըտանզը մերն է։ Հաւատացէք, որ մենք չենք լքի նրան։ Դուք գիտէք, թէ ես անձնապէս որքա՞ն համակիր եմ ձեզ։ Մենք տեսնուել ենք 1915 թուին պարլամենտական յանձնաժողովում, երբ իմ նախազահութեամբ ձեր զեկոյցը լըսեցինք։ Այն ժամանակից իմ զգացումները փոխուած չեն։

ԿիլիկիԱ.— Պատմեցի իմ ստացած հեռադրերի բովանդակութիւնը, եւ այն՝ թէ Հայերի կացութիւնը դժուարացել է՝ գաղթում են, կամ գուցէ գաղթեցնում են։ Մեր կամաւորները զինաթափ են եղած, թիւրք վարչութիւն հաստատելու վրայ են։ Բողոքեցի այդ փութկոտութեան դէմ, քանի որ թիւրքերը խախտում են Սեվրի դաշնազիրը, անիրաւութիւն կը լինի Կիլիկիայում յօդուտ թիւրքերի իրազործել նոյն դաշնագիրը։

Նա պատասխանեց — «Ճարաբախտաբար, ձեր տեղեկութիւնները ես չունիմ տակաւին, բայց կարող եմ յայտարարել՝ 1) երեք օրից ի վեր դրութիւնը հիմնաւորապէս փոխուել է դէպի լաւ, 2) մենք Կիլիկիան դատարկելու մտադրութիւն չունինք, 3) Հայերի պաշտպանութիւնը կը շարունակենք ուսուցանելու ժամանակամ եմ ձեզ։

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

Նախարարապետը այնուհետեւ լսեց իմ երրորդ խնդիրը, որ վերաբերում էր դիւանագիտական ներկայացուցչութեան: Ես ասացի որ Ֆրանսիան մինչեւ այժմ նշանակում է մի Haut Commissaire pour trois Républiques Trans-Caucasiennes «Բարձր Կոմիսար Անդրկովկասեան երեք Հանրապետութեանց»: Եթէ, ասացի, մինչեւ օգոստոսի 10-ը այս բացատրել կարելի էր, Սելրի դաշնագրի ստորագրութիւնից յետոյ, զառնում է մեզ Համար չափազանց անպատճեն: Մենք այլ եւս Կովկասեան Հանրապետութիւն չենք, այլ անկախ մի պետութիւն ծագած մանաւանդ, Թիւրքիայի անկումից ու Հողերից: Ուստի մենք պէտք է ունենանք մեր ներկայացուցիչը երեւանում, անկախ Թիֆլիսից:

Նախարարապետը պատասխանեց, թէ նա լիովին բաժանում է իմ հայեցակէտը եւ անպայման ընթացք կը տայ իմ խնդրին իմ առաջարկած ձեւով:

Պ. Լէյգը սկզբից մինչեւ վերջը շատ սիրալիր եղաւ, շատ ուշադիր: Տեսակցութեան ընթացքին մի անդամ երբ պատրաստում էի վեր կենալ, խնդրեց նստել ու շարունակել զրոյցը, որ այսպիսով տեւեց մօտ 50 րոպէ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏ ԵՒ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎՐԴԻՆ
ԱՐՏԱԳԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱԳԱՀ Պ. ԲԱՐԹՈՒԻԻ ՀԵՏ

Հոկտ. 16, ժամը 10, 1920

Շվէյշարացի մեր բարեկամը Demorsic-ի հետ այսօր առաւօտեան այցելեցինք Բարթուին, որ նոր վերադարձ ճամբորդութիւնից, ցանկացել էր լսել իրերի կացութիւնը Հայաստանում եւ Կիլիկիայում: Կէս ժամի չափ պատմեցի նրան ինչ պատմել էի նախարարապետ Փ. Լէյգին, խնդրեց, իրեն յատուկ գարօն ներկայացնել այս բոլորի մասին:

Նախընթաց օրը երկար տեսակցութիւն ունեցայ Սենատոր Դումերի հետ, որի աջակցութիւնը խնդրեցի կառավարութեան առաջ Հայաստանի համար որի հին բարեկամն է ինքը:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐՏ. ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԽՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Պ. ԲԵՐԹԸԼՈՒ ՀԵՏ

Հոկտ. 17, 1920
Պարիզ

Պ. Բերթը երկու տարուայ ծանօթ էր: Շնորհաւորել էի իր անուանումը եւ ստացել էի սիրալիր պատասխան, ասացի, որ մի քանի անդամ իրեն տեսած եմ, վերջին անդամ 21 օգոստոս եւ ամէն անդամ դուրս եմ գնացել սրտապնդուած եւ յոյս ունեմ այս անդամ եւս յուսալից դուրս գնալ:

Նա պատասխանեց: — Այս անդամ յոյսից աւելին կարող եմ ձեզ ասել, խնդիրն աւելի լուրջ զործնական շրջան է մտած:

Ես կարդացի նրան իմ ստացած երեք հեռագրերը Թիւրքերի շարժումների մասին. նա նոթ առաւ եւ Կաղզուան, նովո Սէլիմ, Սարիղամիշ տեղերը ուղեցի բացատրել, ասաց շատ լաւ գիտեմ: Եւ առհասարակ զրոյցի ընթացքին նկատեցի, որ լաւաեղեակ էր նիւթին: Ինձնից նոթեր առնելուց յետոյ՝ ասաց.

— Անհանգիստ լինելու տեղիք չունիք. վստահացնում եմ ձեզ, որ լուրջ քննութեան առարկայ է Հայաստանին օգնութեան գալու հարցը:

Հարցը, թէ իմ ներշնչումը՝ դրաւել Տրապիզոն-էրդրում զիծը, հաւանութեան երաշխիքներ չունի՞ արդեօք:

— Դա դժուար կը լինէր, ասաց, բայց հաւանարար Դաշնակից նաւատորմիղի չնորհիւ կարելի կը լինի զրաւել Տրապիզոն-Սամսոն, առհասարակ Սեւծովի ափերը՝ փակելու համար քէմալիստների հաղորդակցութիւնը:

— Յոյները դադար առան, ասացի, արդեօք չե՞ն կարող շարժուել առաջ, չեն կամենում, թէ թոյլ չեն տալիս:

— Պատասխանս կարճն է, ասաց Բերթըլօն, այդ երեք պատճառներն էլ կան եւ նա երկարօրէն բացատրեց Վենիդելոսի ներքին դժուարութիւնները 150 հաղարանոց բանակը պահպանելու ծանրութիւնը եւ նրա վախը շատ առաջ գնալու երկրի խորքերը այդ ահազին ճակատով:

— Այնպէս որ կարծում էք թէ յոյները մեզ օգնել չեն կարող նոր առաջ-խաղացումով:

— Զեմ կարծում:

Ես անցայ Կիլիկիայի խնդրին եւ շտապով հաղորդեցի ստացածս տեղեկութիւնները— Բերթըլոն պատասխանեց հետեւեալը.— «Կիլիկիայի դրութիւնը հետեւեալն է, ասաց Բերթըլօն, թրքերն ինչպէս երեւում է, զերմանական մեթոտով աշխատում են մաս-մաս հարուածել հակառակորդին եւ դառնալ միւսին։ Նրանք հանդիստ են թողել յոյներին եւ ուշադրութիւնը դարձրել դէպի ձեզ եւ դէպի Կիլիկիան, կամ աւելի ճիշդ՝ միայն դէպի հայերը։ Միւս կողմից պէտք է ասել, որ ձերոնք եւս Կիլիկիայում մի շարք անզդուշութիւններ թոյլ տուին իրենց։ տարարախտարար, զնդապես Բրեմօնը քաջալերեց այդ եւ ստեղծեց դժուարութիւններ ե՛ւ ձեզ համար ե՛ւ մեզ համար։ Գնդապետ Բրեմօնի չնորհիւ ստեղծուել էր մի կացութիւն, որ կարելի էր բնորոշել «հայկական բռնութիւն մաւսուլմանների վրայ որոշ շրջաններում», համաձայնեցէք, որ այս դրութիւնը դժուար էր յարատեւել։ Այժմ գնդ։ Բրեմօնը հեռացած է, եւ դժուարութիւնները հարթաւմ են։

— Դժուարութիւնները, հարթում են, ասում էք, պատասխանեցի ես, բայց ըստ երեւոյթին ո՛չ Հայերի համար, քանի որ, ինչպէս իմանում եմ մեր ազգայինները գաղթում են բռնադատուած եւ այլ ծանր միջոցներ են գործադրում մերոնց դէմ։ Ես համաձայն եմ, որ մերոնք քանի մը չափազանցութիւններ արին, բայց սրբազրել հեշտ էր։ Սակայն, ըստ իմ տեղեկութեանց Փրանսիական իշխանութիւնները պարզապէս ճգնում են իրագործել թրքական դաշնագիրը Կիլիկիայում այն ժամանակ, երբ, թիւրքական նացիոնալիստ դօրքերը ամէն օր խախտում են նոյն դաշնագիրը եւ, ինչպէս զիտէք, շարժում են դէպի մեր Հանրապետութեան սահմանները։

— Ո՛չ, ասաց Բերթըլօ, Կիլիկիայում թիւրքական դաշնագրի խօսք լինել չի կարող առայժմ, կարող եմ ձեզ վստահացնել 1) մենք Կիլիկիան չենք թողնի, 2) Հայերին կը պաշտպանենք, 3) ձեր ստացած տեղեկութիւնների դրութիւնը այս պահուն հիմնաւորապէս փոխուած է։ Ճշմարիտ է, քանի մի աքսորներ եղած են, բայց դա պարզապէս խաղաղութիւնը, հաւասարակշուութիւնը վերահաստատելու համար է։

Այնուհետեւ խօսեցի Ֆրանսիոյ ներկայացուցչութեան մասին Հայաստանում եւ խնդրեցի Lepiclus նշանակել անկախ Haut Commissaire-ից,

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

ապա խնդրեցի թոյլտուութիւն մեր փոխառութեան եւ կարգադրութիւն Մարսէյլի 24 հակ փութ բամբակի համար : Նա նոտեր առաւ :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱԿԱՆ CHARGE' D'AFFAIRE Պ. LEON V. ME'LAS-Ի ՀԵՏ

Հոկտ. 18, 1920
Պարիզ

Պ. Լէօն Մելաս նախ յայտնեց ինձ, թէ իր կառավարութիւնից հրահանդ ունի խնդրել Հայաստանի կառավարութեան հաճութիւնը նշանակել երեւանուամ որպէս Ministre Re'sident պ. Jean Papas. Ես չնորհակալութիւն յայտնեցի հելլէնական կառավարութեան այս ձեռներէցութեան համար եւ աւելացրի՝ թէ «ես այս առթիւ պիտի կրկնեմ պ. Վենիգելոսի խօսքերը, որ նա ասաց, երբ ես agree'ment էի խնդրում պ. Գայեանի համար. «Մեզ համար բոլորովին մէկ է, թէ ում կ'ուղարկէք, բաւական է, որ նա աշխատի աւելի եւս սերտացնել մեր երկու ազգերի բարեկամական յարաբերութիւնները»: Եւ աւելացրի, թէ անմիջապէս կը դիմեմ իմ կառավարութեան պէտք եղած հաւանութիւնն ստանալու, որ կասկած չ'ունեմ իմ կառավարութիւնը կը տայ հաճոյքով»:

Ապա պ. Մելասը հաղորդեց ինձ Վենիգելոսի պատասխանը իր այն հեռագրին, որով ես խնդրել էի յունական բանակի աջակցութիւնը մի նոր առաջնալացութեամբ թիւրքերի շարժումը մեր ճակատում թուլացնելու համար: Վենիգելոսը յայտնում է, թէ տարաբախտաբար չը պիտի կարողանայ իմ խնդիրն իրագործել, որովհետեւ յունական բանակի առաջ թշնամի չը կայ, հետեւապէս առաջացումը կը լինի թիւրքական հողերի նոր գրաւումն, ինչ որ կարելի չէ անել առանց Դաշնակից պետութիւնների հաճութեան:

— Կարո՞ղ եմ արդեօք դիմել Դաշնակից պետութիւններին, հաղորդել Վենիգելոսի պատասխանը եւ խնդրել նրանց արտօնութիւնը:

Պ. Լ. Մելաս մի փոքր շփոթուած իմ հարցից, պատասխանեց թէ «Մեր յաջորդ նպատակը կը լինէր գրաւել Աֆիոն-Գարահիսար — ինչպէս գիտէք, ձմրանը այդ գրաւումը շատ դժուար է, մեր բանակը ձմրան պատրաստութիւններ չունի. այս է մտածում Վենիգելոս»:

Պարզ էր — Վենիգելոս մերժում էր:

Հոկտ. 22, 1920, Բրիւակէ

Այսօր Բելգիական արտաքին գործոց նախարար եւ Ազգ. Լիգայի Խորհրդի ժամանակաւոր նախագահ Հիմանսի տանը երեկոյեան 9-ին հրաւիրուած էի բոլոր միւս պատուիքակութիւնների հետ, ինձ հետ ունենալով պ. Տիգրան Գայեանին: Այստեղ ժան Գուն ինձ ներկայացրեց Իտալիայի դելագադ Տիտանիին, որի հետ առանձնած ես հնար ունեցայ երկարատեւ պարզել Հայաստանի արդի կացութիւնը եւ խնդրել իտալական կառավարութեան ազդեցութիւնը յետ կասեցնելու թիւրքերի արշաւանքը դէպի Հայաստան: Ես ասացի, որ Իտալիան անմիջապէս շահագրգուուած չը լինելով. Հայաստանում՝ նրա միջամտութիւնը եւ ձեռներէցութիւնը կասկածից դուրս կը նկատուի: Նկատի ունենալով, աւելացրի, թիւրքերի մասնաւոր վստահութիւնը դէպի

իտալիան, elle pourrait, jouer un beau rôle*). Տիտանին խոստացաւ ինձ Հռոմ վերադարձին զրուցել ՍՓոցային:

Հիմանսի հետ զրոյցից պարզուեց, որ Քեմալիսաների շարժման մասին դէպի Հայաստանի Ազգերի Լիդային տուած իմ երեք յուշագրերը արժանացել են նրա խորհրդի ամենալուրջ ուշագրութեան եւ նոյն օրը Խորհուրդը որոշել է դիմել Դաշնակց պետութիւններին, առաջարկելով Լիդայի հետ միախորհուրդը միջոցներ հայթայթել Հայաստանի շտապ օգնութիւն հասցնելու:

Յունական դեսպան Կակլամանոսը, որին լաւ ծանօթ էի դեռ Լոնդոնից, երկար զրոյցի մէջ պարզեց ինձ, որ 1) Ազգերի Լիդան Ժընեվում նոյեմբեր 15-ին իր համաժողովում պէտք է լրջօրէն զբաղուի մեր պետութեան աջակցելու խնդրով, 2) գրեթէ հաստատ է, որ պիտի առաջարկուի Լիդայի բոլոր անդամ պետութիւններին մեծ փոխառութիւն տալ Հայաստանին՝ բաժնելով իրենց վրայ հայթայթելիք գումարը, 3) որ Քեմալիստների շարժումը անխուսափելի կերպով նրանց դէմ պիտի միացնի Դաշնակիցներին, մանաւանդ, ասում էր նա, Ֆրանսիան եւ Իտալիան են անհանգիստ, վախնալով թէ մի գուցէ Անգլիա երկրորդ անգամ յունական բանակը շարժէ դէպի Թիւրքիայի խորքերը: Այս է պատճառը, որ Ֆրանսիան եւ Իտալիան պիտի միանան Անգլիային բռնադատիչ միջոցների գործադրութեան պահուն, 4) ասում էր նա, որ առհասարակ նոյեմբերի 15-ին բացուող համաժողովին պէտք է մեր վիճակը ուժգնորէն եւ հարազատութեամբ ներկայացուի, ուստի, նա խորհուրդ էր տալիս ինձ ներկայանալ այդ ժողովին եւ զեկոյց անել, որի համար եւ, անշուշտ, կը հրաւիրուեմ պաշտօնապէս, 5) նրա կարծիքով, Ժընեւի համաժողովը Լիդայի առանց որ եւ է առարկութեան, պիտի ընդունի Հայաստանը իրեւ անդամ, քանի որ նա հոչակուած է դաշնակցից:

Երկար զրոյց ունեցայ նաեւ Ազգերի Լիդայի ընդհանուր քարտուղար Սըր Էրիկ Դրումօնդի հետ եւ երկրորդ քարտուղար Մանթուի հետ, որոնք երկուսն էլ իրենց գոհունակութիւնը յայտնեցին իմ ներկայացրած զեկոյցներից մեր ընդունելութեան մասին Ազգերի Լիդայում:

ԲԱՆԿԵՏ ԲՐԻՒՍՍԵԼՈՒՄ

Հոկտ. 24, 1920

Այսօր հազիւ, Բրիւսսելում տեղական հայ գաղութը եւ Անվերսից եկած հայեր մեր հիւպատոս Զըմքերթինի եւ պ. Դաւիթ Մարլեանի ձեռներէցութեամբ պատույ սեղան էին կազմել, ուր հրաւիրեցին ինձ, պ. Զայեանին եւ քարտուղար Ղազարեանին:

Բանկետի վերջում շատ ջերմ ճառեր արտասանուեցին, ապա ես խօսեցի երկար պարզելով Հայաստանի կարիքները եւ իրենց պարտքը հայրենիքի հանդէպ եւ առաջարկեցի փոխառութեան համար կազմել մի յանձնաժողով: Կազմը յանձնաժողով 4 հոգուց բաղկացած նախագահութեամբ Սըվաճեանի: Անմիջապէս ձեռնարկեցին ստորագրութիւններու, որի արդիւնքը եղաւ մօտ 300,000 Փրանկ: Խնդիր յարուցին, որպէսզի կառավարութիւնը գործնական տեսակէտից դուլարի սիստեմը փոխի զոնէ իրենց վերաբերմամբ Փրանկի:

*) Նա կարող է լաւ դեր խաղալ: ԽՄԲ.

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԳԱԼԼԻՒ ՀԵՏ

27 հոկտ., Պարիզ

Այսօր Գալլիից իմացայ. 1) որ Անգլիական կառավարութեան պահանջով Դեսպանական Խորհուրդը չպիտի դրադուի թիւրքական դաշնագրի գործադրութեան հետ կապուած խնդիրներով, եւ որ այս կարգի հարցերը Դեսպանների Խորհուրդը ստիպուած է ուղարկել Դաշնակից պետութիւններին, եւ 2) այդ պատճառով մեր դիմումը Պոլիտիկ զինուորական ներկայացուցիչ ունենալու մասին յիշեալ Խորհուրդը նոյնպէս ներկայացրել է Դաշնակից կառավարութիւններին, որոնք այդ առթիւ գրադրութեան մէջ են իրար հետ, եւ նա չգիտէ թէ երբ պիտի լինի լուծումը:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՊԱՐԻԶԻ ԼԵԶԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԿՈՄՄ ԶԱՄՈՅՍԿՈՒ ՀԵՏ

Նոյեմբեր 5, Պարիզ

Մեր կառավարութիւնը հեռագրել էր աշխատել, եթէ հնար է, լեհ-ռուսեւիկ-եան դաշնագրի մէջ մէկ յօդուածը մտցնել, որով Հայաստանի անկախութիւնը ապահովուի: Այս նպատակով տեսնուեցի կոմս Զամոյսկու հետ: Իմ առաջարկը լսելով՝ կոմսը սկզբում ասաց, որ իրենց դաշնագրիը բոլցեւիկների հետ գըրեթէ մշակուած, վերջացած է, եւ ինքը հնար չի տեսնում, թէ ինչպէս կարելի է Հայաստանի մասին այդ դաշնագրի մէջ խօսք ասել: Ես պատասխանեցի, որ եթէ դաշնագրիը կնքուած է, բնական է այդ դժուար է, հակառակ դէպքում, ինչքան եւ այդ տարօրինակ թուայ, Հայաստանի ու Լեհաստանի շահերի մէջ ներդաշնակութիւն կայ: Անշուշտ, կոմսը, ասացի, չի կարծում, թէ իրենց այս խաղաղութիւնը բոլցեւիկների հետ տեւական է: գարնանը նոր պատերազմը անհնար չէ, եւ այդ դէպքում բոլցեւիկները պիտի աշխատեն ամէն կողմից եւ մասնաւորապէս Անդրկովկասից զինուորական եւ այլ ուժեր տանել դէպի լեհական ճակատը, ինչպէս այդ արեցին անմիջապէս, երբ մտան Ադրբէջան: Այդ ինքն իր բազդին լքուած Հայաստանը կարող է ընկճուել եւ այս ժամանակ ամբողջ Անդրկովկասը եւ ամբողջ Թիւրքիան նրանց տրամադրութեան տակ կը լինի, որովհետեւ միայն Հայաստանն է անկարելի դարձնում թուրքերի եւ բոլցեւիկների փաստական միացումը եւ գործակցութիւնը: Կոմսը ինձ հետ համաձայնեց: ինչ վերաբերում է, ասացի, առաջարկածս յօդուածին ձեր դաշնագրի մէջ, բնական է, որ դուք չէք կարող յատուկ Հայաստանի համար խօսք անել, բայց կարծում եմ որ այսպիսի մի Փորմիւլ անգործնական չէր լինի. «Քանի որ Լեհաստանի ազատութիւնը ծագել է այս մեծ պատերազմից եւ Դաշնակիցների յաղթութիւնից առաջ եկած խաղաղութեան դաշնագրերով, Սովետական Ռուսաստանը յանձն է առնում չը խափանել յիշեալ դաշնագրերի գործադրութիւնը, Կոմսն ասաց. C'est une formule tout à fait heureuse*): Այս ձեւով ես կարծում եմ, շարունակեց նա, հնարաւոր է դաշնագրի մէջ մտցնել, ուստի այսօր եւ եթ ես կը հեռագրեմ իմ կառավարութեանը եւ պատասխանը անմիջապէս կը հաղորդեմ ձեղը: Ես աւելացրի, որ

*) Ասիկա բոլորովին բախտաւոր (ընդունելի) բանաձեւ մըն է: ԽՄԲ.

Ճեր պատասխանի դրական դէպքում իմ աշխատակիցներից մէկ երկուսին պատրաստ եմ ուղարկել մինչեւ Վարչավագա: Այնուհետեւ զրոյցը շարունակուեց Ռուսաստանի ապագայի մասին, եւ կոմսը ժպտալով՝ վերջացրեց, թէ իր կարծիքով Ռուսաստանի նախկին հողերի վրայ կաղմուած պետութիւններից միայն Հայաստանը ու Լեհաստանն են ճանաչուած եւ պիտի կարողանան ապրել, մնացածները, Լատվիա, Լիտվիա, Կովկասի պետութիւնները հազիւ թէ գոյութիւն ունենան, երբ Ռուսաստանը նորից կազմակերպւի եւ ի վիճակի լինի իր հողերը պահանջել:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

**ՊԵՐԵՏՏԻԻ ՀԵՏ (DIRECTEUR DES AFFAIRES POLITIQUES
DU MIN. D. AFF. ETR.**

Նոյեմբեր 7, 1920

Այս տեսակցութեան մէջ ես խնդրեցի կարգադրել հետեւեալ խնդիրները. 1) Ֆրանսիան, ժամանակ է որ, իր դիւնագէտ-ներկայացուցիչը նշանակի Հայաստան եւ նոյնը մեզ արտօնել Պարիզում, դադարեցնելով Haut Commissaireի իրաւասութիւնը մեզ վրայ, քանի որ Հայաստանը ճանաչուած է անկախ գաշնակից պետութիւն: 2) Կարգադրել Բաթումում կոմս տը Մարտելի կարգադրութեամբ գրաւուած մեր 24,000 բամբակի գործը, բացատրեցի այդ գործի գրութիւնը եւ մեր իրաւունքը:— 3) Արտաքին գործ. նախարարութիւնը մեզ մերժած լինելով փոխառութեան արտօնութիւն՝ ես բացատրեցի, որ այդտեղ թիւրիմացութիւն կայ, մեր փոխառութիւնը նման չէ սովորական փոխառութիւններին. մերին պիտի մասնակցեն միայն հայերը, հազիւ մի քանի միլիոն ֆրանկով. բորսային դիմում լինելու չէ, եւ հաւաքուած գումարն էլ ըստ մեծ մասին պիտի ծախսւի ֆրանսիայում ասլրանքներ գնելով Հայաստանի համար: Պերետտին ընդունեց, որ այս ձեւով հայ փոխառութիւնը ֆրանսիայում միանգամայն հնարաւոր է, եւ առաջարկեց նոր թղթով դիմել, խոստանալով միանգամայն ամակցել: Առաջին երկու խնդիրների մասին եւս գըտաւ, որ ես իրաւունք ունեմ եւ խոստացաւ նրան լուծումը փութացնել: 4) Այնուհետեւ խօսք արի Կիլիկիայի մասին, եւ Պերետտին ինձ հաւաստիացրեց թէ, ա) իրաւ է, որ Կիլիկիայում մի կարճ ժամանակում շփոթ է եղել, որ ֆրանսիական ջոկատներ ճախողանքի են ենթարկւել, բայց զրութիւնը այժմ վերահաստատել է, բ) Փրանսիական զօրքերը Ատանան չեն թողել եւ նոյն իսկ շարունակում են առաջանալ, ու գ) որ ֆրանսիան բնաւ մտադիր չէ Կիլիկիան թողնել, ուր նա եւ հնուց ու Սեվրի դաշնագրով իրաւունքներ ունի մնալու եւ պաշտպանելու փոքրամասնութեանց իրաւունքը եւ իր էկոնոմիք շահերը համաձայն Zones d'influence economique-ի պայմանադրի տրամադրութիւններին: Աւելացրեց որ իրենց Zone-ը տարածւուած է դէպի հիւսիս մինչեւ Տիգրիսի ակունքը, Դիարբէքի եւ Մամուրէթ ուլ Ազիզ (Խարբերդ):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԵՐԵՏՏԻԻ ՀԵՏ

Նոյեմբեր 9, 1920

Այսօր Կարսի առումը հաստատուելով՝ գնացի Quai d'Orsay եւ Բերթույի ցանկութեամբ նորից տեսնուեցի Պերետտի հետ իմանալու համար, թէ ի՞նչ են

մտածում ֆրանսիան եւ դաշնակիցները մեր այս ծանր ճգնաժամին օգնելու համար իրենց դաշնակից Հայաստանին։ Նորից եւ նորից պարզեցի թիւրք-բոլշևիկեան կօալիցիօնից ծագող բոլոր ծանրակշիռ հետեւանքները, յիշեցրի մեղ արւած հանդիսաւոր խոստումները, Սևվրի դաշնագրի արժէքը, մեր հանդէպի կատարուած անիրաւութիւնները Դաշնակիցների կողմից զինադադարի կնքումէն մինչեւ այսօր եւ աւելացրի, որ եթէ արագ ու վճռական միջոցներով Դաշնակիցները Հայաստանին օգնութեան չհասնեն, ես երկիւղ ունեմ, որ բոլշեւիկները թիւրքերի հետ կը ստիպեն Հայաստանին ընդունել սովետական իշխանութիւն։ Պերետտին ասաց, թէ հրահանգ ունի Mr. Berthelot-ից ինձանից իմանալ՝ թէ ինչ ձեւով կարելի է օգնել Հայաստանին։ Ես նորից յիշեցրի։ 1) Տրապիզոնի գրաւումը, 2) յունական բանակի առաջնադաշումը, եւ 3) ճշնշում Պոլսի վրայ։ Տարաբախտաբար, ասաց Պերետտին, Տրապիզոնի գրաւումը անկարելի է, քանի որ ոչ Անգլիա, ոչ Էլ մենք կարող ենք բանակ դրկել։ Այդ դէպօտմ, ասացի, Դաշնակիցներին է մնում ուրիշ բան մտածել։ Նա շրւարած նայեց երեսիս եւ կոտրուած շշնչաց։ մենք հնար չենք գտնում, մեր հոգսը կիլիկիայում արդէն շատ է։ 80,000 մարդ ունինք Սիափիրում եւ կիլիկիայում։ Նոր ոյժեր տրամադրել չենք կարող, իսկ Անգլիան մարդ չունի։ Ես պատասխանեցի։ սա անհնարին անիրաւութիւն է՝ Սիւրիան, Մեսսոպոտամիան, Պաղեստինը, Նեղուցները գրաւելու համար մարդ ճարուեց, եւ երբ հերթը Հայաստանին հասաւ, Դաշնակիցները դարձան անզօր, եւ աւելացրի։ Նորից կրկնում եմ, որ դուք այսպիսով Հայաստանը նետում էք բոլշևիկների գիրկը։ Այս', պատասխանեց նա, պէտք է վրկել Հայաստանը, ձեզ խորհուրդ եմ տալիս նորից մի պատետիկ կոչով դիմել Դեսպանների Խորհրդի նախագահին, որ ինքը լէյդն է, եւ այդ հիման վրայ մենք անմիջապէս հեռագրական բանակցութիւններ կը սկսենք դաշնակից պետութիւնների հետ։ — Ես դուրս եկայ։



ՍԱՐՏԱՐԱՊՈՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵց՝ ԱԽԵՏԻՍ ԱՀԱՐՈՒՆԵԱՆ

12 նոյեմբեր, 1920
Լոնդոն

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐԲ-ԶՈՆ-ՏԻԼԻԻ ՀԵՏ

(FOREIGN OFFICE-ԹԻՄ)

Երեւանից ստանալով մեր ձախորդութեան ու կարսի անկման լուրը, զօր Բագրատունու միջոցով պատասխան ստացայ, որ Սըն-Զոն-Տիլին (Sous-Secrétaire d'état) ինձ կ'ընդունի 12 հոկտեմբերին:

Ես մեկնեցի Լոնդոն Փարիզից 11-ին նոյեմբերին: Սըր-Զոն-Տիլին գընացինք զօր. Բաղրատունու հետ: Ես ասացի թէ՝ «Դուք ծանօթ էք կացութեանը, հետեւապէս ինձ մնում է միայն խնդրել Մեծն Բրիտանիայի անմիջական ժիշտամութիւնը»: Աւելացրի, որ ես արդէն տեսնուել եմ ֆրանսիական կառավարութեան ներկայացուցիչների՝ լէյդի եւ նոյնիսկ Միլըրանի հետ եւ, տարարախտարար, նրանց յայտարարութիւնից տեսնում եմ, որ Ֆրանսիան մեզ օդնելու անկարող է:

Սըր-Զոն-Տիլին միջամտեց ասելով. «Մենք էլ անկարող ենք: Մեր կացութիւնը, դիմէք, շատ զժուար է. զօրք զրկել չենք կարող: Բայց ի՞նչ էք կարծում, ի՞նչովէս կարելի էր օդնել զայաստանին»:

Ես. — «Տրապիզոն-էրզրում զծի անմիջական գրաւումով: Սա կը սովիալի թէմալիստներին անմիջապէս յևս քաշուել: Եւ զրա համար մեծ զօրք հարկաւոր չէ»:

Սըր-Զոն-Տիլին ինձ հետ համաձայն չէր: Նրա կարծիքով ձմբանը անհնարին է Տրապիզոն-էրզրում զիծը զրաւել եւ առհասարակ Դաշնակիցներն այդ չեն կարող անել: Զօրք չկայ, զրամ չկայ:

Ես. — «Այս իմ առաջարկի իրադորձման համար հայերը պատրաստ են իրենց մհծագոյն ճիզը թափել: Ես հաւատացած եմ, որ եթէ Անդլիան այսօր յանձն տոնի մի արշաւանք կարմակերպել, հաւատացած եմ, որ 10-15 հազար հայ կամաւորներ կարելի է ունենալ արտասահմանի հայ զաղութներից, մասնաւորապէս Ամերիկայից: Հաւատում եմ, որ զես կան սրտի տէր օտարականներ եւս, որոնք կ'իրթային այդ բանակը: Եւ որպէսզի առիթ չորուի Նւրուպայի ծայրայի դասերին՝ իմպերիալիզմ՝ ճշալ, կարելի էր, օրինակ այս բանա-

կը անուանել՝ 'խաղաղութեան բանակ', որ կը մտնի Անատոլիա՝ պարզապէս կոռուզ ցեղերին ու կողմերին խաղաղեցնելու համար, տալով իւրաքանչիւրին իր տեղը: Ես կ'աւելցնեմ, որ նոյնիսկ նիւթական օժանդակութիւններ (մէկ բառ ամբոք եռնելի) հայերը կ'անեն: Դուցէ այդ բանակը կարող լինի գործել յանուն Աղդերի Լիգայի, ևթէ Անգլիան չկամենայ միջամտել»:

Սըր-Զոն-Տիլիի.— «Այդ գաղափարը ուշադրութեան արժանի է: (Նա նօտագրեց) Ես կը խօսեմ Լորդ Կըրդլինին»:

Ես.— «Թինդրում եմ չմոռանալ, որ թուրքերի եւ բոլշևիկների նպատակն է Հայաստանի վրայով իրար ձեռք մեկնել եւ, եթէ այդ նրանց յաջողութ, այն ժամանակ Մոսկուայից մինչեւ Միջերկրական միապաղապաղ կ'իշխնեն թուրք-բոլշևիկները: Մի՞թէ սա համապատասխան է Դաշնակիցների եւ մասնաւորապէս Անգլիայի շահերին: Զէ՞ որ Անատոլիայում շուտով Դաշնակիցները կարող են գործ ունենալ արգելն ո՛չ միայն քէմալիստների, այլ եւ բոլշևիկների հետ: Եթէ նոյնիսկ բնաւ Հայաստանի հարցը չլինէր, միշտ կը մնար Մերձաւոր Արեւելքի հարցը, Թիւրքիայի խաղաղեցման հարցը Դաշնակիցների համար, Սեվրի գաշնադրի իրադրութեամբ»:

Սըր-Զոն-Տիլիի.— «Մուստաֆա Քեմալը չի կարող մեզ արգելել իրագործելու Սեվրի գաշնադրը ո՛չ Միջազետքում, ո՛չ Սիւրբիայում, ո՛չ Զմիւռնիայի շրջանում, ո՛չ Թրակիայում եւ ո՛չ Նեղուցների զոնայում: Հայաստանի վրայ քալելը նրանց չի կարող ազատել Սեվրի գաշնադրից: Մենք արգելն իսկ Կ. Պոլսում ձեռնարկել ենք թիւրք նոր բանակի կազմակերպութեան, որ մեզ կ'աջակցի իրագործելու գաշնադրիք: Հաւատացէք ինձ, որ Քեմալն անզօր կը լինի մեզ արգելելու»:

Ես.— «Արքան տեսնում եմ, դուք նպատակ ունիք ամէն աեղ իրագործել դաշնադիրը, բացի Հայաստանից: Այսպիսով երկու անդամ զրկւում է Հայաստանը. մէկ զինազադարի կնքմանը, երբ Հայաստանի զրաւումը մոռացուեց, մէկ էլ այժմ»:

Սըր-Զոն-Տիլիի.— Հայաստանը նոյնուի կ'օգտուի, երբ յաջող լինինք դաշնադիրն իրագործել յիշածս վայրերում: Զեզ մնում է քաշ տալ թիւրքերի հետ, մինչեւ մի որոշ ժամանակ: Մենք պատրաստ ենք ձեղ տալ նորից պէտք եղած քանակով ուազմամթերք եւ վասելիք երկաթուղիների համար: Յուսուհատուելու չէք»:

Վերջում խօսք բաց արի այն թղթի մասին, որով Foreign Office-ը մեղ առաջարկում էր Ֆինանսական խորհրդական, Համաձայն Խատիսնեանի յայտնած ցանկութեան:

Ես ասացի, որ մեր կառավարութիւնը հակառակ հրահանդ չի տուել, միայն ներկայ ծանր պարագաներում, երեւի, դժուար կը լինի մեր կառավարութիւն Համար այդ խնդրով զրազուել: Յամենայն դէպս, ասացի, ևս Բրիտ. կառավարութեան այդ սիրալիք առաջարկը անմիջապէս յայտնեցի մեր կառավարութիւն եւ սպասում եմ պատասխանի: Եւ անմիջապէս աւելացրի, թէ քանի որ Բրիտանական կառավարութիւնը այդքան բարեացակամօրէն մեզ խորհրդական է առաջարկում, արգեօք չէ՞ր վերցնի Հայաստանի մանդան:

Սըր-Զոն-Տիլիին վճռապէս բացական պատասխան տուեց:

Յաջորդ օրը, նոյեմբեր 13-ին, ևս տեսնուեցի արեւելեան գործերի դի-
րեկտոր Օսրօնի հետ:

Նիւթը նոյնն էր զրեթէ ևւ պատասխանը՝ նոյնը: Միայն թէ երբ ևս ակ-
նարկեցի բրիտանական շահերին Հայաստանում, Օսրօն պատասխանեց.

«Հայաստանում մենք միայն մարդասիրական տեսակէափ կարող ենք
գործել, այլ չահ չունենք: Եւ եթէ իշխանութիւնն իմը լինէր, ևս կը հե-
ռացնէի մերոնց ե՛ւ Միջազնութից ե՛ւ Պարսկաստանից»:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԼՈՐԴ ՌՈԲԵՐՏ ՍԵՍԻԼԻ ՀԵՏ

Նոյեմբեր 18, 1920
Ժ.Ը.Ա.Ը.

Լոնդոնից նոյեմբերի 16-ին շտապով Փարիզ ևւ այնուղից էլ նոյեմբերի
17-ին ժամանեցի Աղջերի Լիզայի Համաժողովի համար: Եւ յաջորդ օրն
իսկ տեսակցութիւն խնդրեցի մեր յարտնի բարեկամ Լորդ Ռորերդ Սեսիլից:
Իր քարտուղար Պ. Տիւրմերի իսկոյն ինձ լուր տուեց, որ Լորդը ինձ կը սպասի
նոյն օրը ժամի 3½ ժողովից յետոյ:

Երկրորդ անդամն էի տեսնում Լորդին, ու նա գործեալ շատ սիրալիք ու
չափազանց ուշադիր էր դեսի մեր վիճակը: Հարաւիրել էր նաև իր մի քանի
խորհրդականները: Հարցրեց Հայաստանի զրութեան մասին:

Ես համառօտակի տեղեկութիւններ տուի: Պատմեցի մեր զօրքի կրած ձա-
խողանքի պատճառը ու արդի կացութիւնը, եւ աւելացրի, որ մեր յոյսը իր
վրայ է եւ որ միայն արագ զինուրական միջամտութեամբ կարելի էր մեզ օդ-
նել դուրս գալու տյո ծանր կացութիւնից:

Նա հարցրեց, թէ ո՞ր տեղից կարելի է միջամտել ևւ ո՞րքան զօրքով:

Ես.— «Միջամտելու երկու կերպ կայ՝ կամ Բաթումի վրայով, երկաթու-
ղով Հայաստան, կամ Տրապիզոն-էրզրում վիճը զրաւելով, ինչ որ պիտի
ստիպէր թուրքերին յետ քաշուել»:

Սկսեցինք այդ կէտերը նայել քարտէզի վրայ:

Լորդ Սիսիլ.— «Որքա՞ն զօրք հարկաւոր կը լինի:

«Ես.— «Աչ աւել քան 25-30 հազար, որի կազմութեան մէջ հայերը կարող
են բաւական խոչըր մասնակցութիւն ունենալ 10-15 հազար մարդով»:

Լորդ Սիսիլ.— «Ես հաւատում եմ, բայց գրամ չկայ: Դժուարին հարցը
սա է»:

Ես.— «Գուցէ Ամերիկան տար: Հայերն էլ կ'օդնէին մասնաւոր հանգա-
նակութեամբ: Գուցէ փոխառութիւն անէր ունէ պետութիւն»:

Լորդը թիրահաւատում էր նիւթականի համար:

Լորդ Սիսիլ.— (Խօսքը փոխելով) «Ես ձեզ մի թուղթ կը կարդամ, ասացէք
ձեր կարծիքը»:

Եւ նա կարդաց մի ծրագիր, որ ասաց թէ կուղէր առաջարկել Աղջերի Լի-
զային: Համաձայն գրան, 1) Աղջերի Լիզան ուլութատում է տալիս Հայերին
ու թիւրքերին դադարեցնել կուրը եւ յետ քաշուել՝ թողելով չէղոք դոնա: Ե-
թէ որեւէ կողմը չի հպատակւում, ա) նրա երկիրը ենթարկւում է պաշարման,

ր) իսկոյն գրաւում է Կ. Պոլիսը : Բայց եթէ կոխոք դադարում է , այն ժամանակ Աղջերի Լիդան միջամտում եւ հարթում է խնդիրը :

Ես պատասխանեցի , որ այս բոլորը առանց բանակի անհնարին է եւ որ թիւրքերը միայն զրանով կը քաշուին յետ :

Նորից խօսքը դարձաւ բանակ կազմելու հնարաւորութեանց մասին : Լորդ Սևել ասաց , որ ինքն այդ նորատակով կանչել է Լոնդոնից գեներալ (զարավար) Մորիսին :

Այն ժամանակ ես պատասխանեցի , որ դուք լաւ լինէք կանչել ե՛ւ մեր զինուորական խորհրդական դօր . Կորդանեանին :

Միտքս շատ հաճելի հղուած է Լորդն առաջարկեց ինձ իսկոյն հեռագիր պատրաստել , որ ինքը իր միջոցներով կը հաղորդի 1-2 ժամում Փարիզ :

Արգարեւ , հեռազիրը տուի եւ յետոյ իմացայ , որ հասցրել էին մեր զօրավարին նոյն երեկոյ : Ես պատասխան ստացայ , որ զօրավարը ճամբայ է ընկել յաջորդ առաւօտ 19-ին , նոյնօք իմելու համար :

Բ. ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԼՈՐԴ ՌՈԲԵՐԴ ՍԵՍԻԼԻ ՀԵՏ

19 նոյեմբեր , 1920
Ժընեվ

Այսօր , դօր . Կորդանեանի ընկերակցութեամբ երկրորդ անգամ զնացի Լորդ Սևելին տեսակցութեան : Խորհրդակցութեան նիւթն էր Տրապիզոն անելիք գեսահանալ :

Զօրավարը , իրեւ քաջածանօթ այդ շրջաններին , երկարօրէն բացատրեց եւ համոզից Լորդ Ռոբերդ Սևելին , որ գեսահանը հնարաւոր է նոյնիսկ ձըմքանը եւ որ ոռւս բանակը այդ կողմերը ձմբանը գործնց վերջին պատերազմին :

Որոշուեց , որ զօր . Կորդանեան հանդիսի մեզ մօտ Անգլիացի զօրավար Մորիսին , որ Լորդ Սևելի հրաւէրով եկած էր Լոնդոնից :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԶՕՐ. ՄՈՐԻՍԻ ՀԵՏ

Նոյեմբեր 21

Մեզ մօտ եկաւ զօր . Մորիս : Զրոյցը տեսեց մի ժամ : Նիւթը նոյնն էր , ինչ որ լսեցի Ռոբերդ Սևելի հետ :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՕՍԲՈՐՆԻ ՀԵՏ

Փետրուար 22 , 1921
Լոնդոն

Օսրօնին տեսայ այսօր՝ յարանելու համար , որ իր լսածը Հռոմում իրը կայանալիք Պան-Արմէնիէն կոնֆերանսի մասին թիւրիմացութիւն է , եւ որ Պ. Խամբանան զալիս է մեր հրաւէրով՝ պարզապէս , ճշգրիտ անդեկութիւններ բերելու համար իրերի արդի կացութեան մասին Հայաստանում :

Այնուհետեւ մեր զրոյցն անցաւ Հայաստանի ապագային : Եւ Օսրօն , ի մեծ զարմանս իմ , յայտաբարեց , թէ հայերի շահը պահանջում է ձեռք քաշել

Թիւրքաց Հայաստանից եւ պահանջել Կիլիկիան, ուր և՛ հաստատուել՝ պետութիւն կազմելու յուսով:

Ես ցաւս յայտնեցի այս յայտաբարութեան առթիւ եւ խնդրեցի պարզել, թէ ի՞նչն է դրապատճառը այսքա՞ն ծանր առաջարկի:

Օսրօն. — «Պատճառը պարզ է: Հայաստանում Հայ չը կայ: Ինչո՞վ էք ուզում այսուեց պետութիւն կազմել»:

Ես. — «Սեվրի դաշնադրի ստորագրութիւնից յետոյ չէ, որ Հայերը նուազեցին այսուել: Եթէ պետութիւնները հնար գանձ այդ դաշնագիրը կազմել ու ստորագրել, ասել է թէ՝ նրանք մեր իրաւունքն էին նկատում այդ հողերը: Այդ երկրում հայ չկայ, եւ դուք զիմէք թէ ինչո՞ւ: Բայց կոտորածից աղաւած 300 հազար հայութիւնը սպասում է Կովկասում եւ մօտ 500 հազար էլ աշխարհի չորս ծայրերում: Մանց յուսով է, որ կազմուեց Սեվրի դաշնադրը, եւ սրանք սպասում են անհամբեր երկիր դասնալու»:

Օսրօն. — «Ո՞ր մասը կը գտանայ:

Ես. — «Խոշորագոյն մասը»:

Օսրօն. — «Չեմ կարծում Մանչեստրի, Լոնդոնի, Փարիզի հարուստ Հայերը շահ չունին աւեր երկիր դասնալու»:

Ես. — «Գիտեմ, գարձողները նրանք չեն, այլ աշխատող, գեղջուկ ժողովուրդը»:

Օսրօն. — «Գեղջուկներով պետութիւն չի չինուի»:

Ես. — «Գիտեմ, միւսները կը տան իրենց միաքերը: Վերջապէս, մեր ժողովուրդը ստեղծագործող է, մեր գեղջուկները մեր երկրի աղն է, հիմնաքարն է: Փարձը ցոյց կը տայ:

Օսրօն. — «Ո՞վ պիտի քչի Մուսուաֆա Քհմալին՝ Հայերին աեղ տալու համար»:

Ես. — «Դաշնակիցները պարագական են այն զոհերի հանդէպ, որ մենք յահճն տոինքք»:

Օսրօն. — «Կովկասահայաստանը բոլշեւիկ է այժմ: Թիւրքական հողերը նրան կցելով՝ մենք զօրացրած կը մինհնք ուսւաներին»:

Ես. — «Բայց Եթէ դուք այդ նահանջները թողնէք թիւրքերին, կարծո՞ւմ էք, որ ուսւները կը խնային թիւրքերի սիրուն աչքերի համար: Մի մոռանաք, որ 1916 թուի գազանի դաշնագիրը որոս իրաւունքներ է տալիս աղավայ Ռուսաստանին, եւ այդ իրաւունքը շատ աւելի քիչ կ'արժենայ, եթէ ուսւների առաջ լինի մի բարեկամ հայ պետութիւն, քան մի հին թշնամի՝ Թիւրքիան»:

Օսրօն. — «Այս, իրաւունք ունիք այս կէտում, — ասաց նու մտածկու: Կարծեմ Պոլիսն էլ մէջն էր այդ դաշնագրով յատկացրուած Ռուսաստանին»:

Ես. — «Այս, Պոլիսն էլ: Եւ դուք թողնելով մեր Հայ վիլայէթները Թիւրքիային, այս ամրող Հարցը բաց էք անում: Ես չեմ հասկանում, Պրն. Օսրօն, այս զրոյցի խորհուրդը: Մենք գուցէ միամտօրէն միշտ կարծել ենք, թէ Բրիտանական շահերին հակառակ է ուսւների վերահաստատուիլը Կովկասում: Բայց այս բոլորից ես զժուարանում եմ եղանակացութիւն անել:

Օսրօն. — Ի հարկէ, մեր շահերին դէմ է ուսւների երեւալը Կովկասում: Բայց ի՞նչ արած, երբ դուք, երեք ժողովուրդներդ, չկարողացաք Փեղերացիա կազմել ու ամրանալ: Վրացիք արգելք եղան:

Ես. — «Միայն վրացիք չեն պատճառը, նաև Դաշնակիցների անհոգութիւնը: Մակայն, անհնարին չէ այժմ փորձել: Հայաստանի կազմակերպումը մեծ

քայլ կը լինի դեպի Փեղերացիա : Առանց Հայտոտանի , ճամբան լայն կը բացուի ոռուսների համար :

Օսրօն — Զգիտեմ , զուցէ , բայց Հայտոտան ստեղծել անհնարին է , և պէտք է զուք դիմէք Կիլիկիա :

Ես .— Պ . Օսրօն , մեր ժողովուրդն այդպէս հեշտ չի հրաժարի իր ժող 3000 տարուայ Հայրենիքից , քաղաքակրթութիւնից :

Օսրօն — Որ դուք չկարողացաք պաշտպանել :

Ես .— Պաշտպանեցինք մինչեւ այս պատերազմը , երբ մեր յոյար դրինք Դաշնակիցների վրայ : Եւ թող մեզ օդնեն Դաշնակիցները , կը տեսնէք , որ ինչողէս կը պաշտպանենք և կը փերաշիննք երկիրը : Լաւ չէ , որ դերման Chiffon de papier-ն , որի դէմ ծառացան Դաշնակիցները հինգ տարուայ պատերազմով , վիճակուի Դաշնակիցների ակտին , Անվրի գաշնադրին :

Օսրօն — (Խօսքը փոխելով) Ատկայն , Դուք ևս Պօղոս Փաշան համաձայն չէք երեւում : Նա պնդում է Կիլիկիայի վրայ , զուք՝ Մեծ Հայտոտանի :

Ես .— Ոչ , մենք բոլորովին համերաշխ ենք : Ինձ համար նոյնպէս կայ Կիլիկիայի խնդիր , բայց դա մեր Հայութեան ապահովութեան խնդիր է թիւրք բէժիմի տակ : Դուք զիտէք , որ փոքրամասնութեան որեւէ դաշնադիր չի կարող ստիպել թիւրքերին խնայել Հայ ազգարնակութիւնը , եթէ չհաստատուի մի յատուկ բէժիմ , որ ապահովէք մերոնց կեանքը , պատիւր , վաստակը , մի խօսքով՝ քաղաքակրթութիւնը : Եւ այս է , որ մենք պահանջում ենք , ես ու Փաշան :

Օսրօն .— Ոչ , վստահացնում եմ ձեզ , որ Ամերիկացի Հայասէրներ կան այսուղ , որոնք խօսում են Կիլիկիայի մասին յիշածու մտօք , և Փաշան նրանց հետ է եւ ոչ ձեզ հետ :

Ես .— Ամերիկացիք չեն , որ մեր ապագան ու մեր բախտը պիտի վարեն : Ինչ վերաբերում է Պօղոս Փաշային , ես պատրաստ եմ նրա հետ նորից զալ այսուղ ձեզ ապացուցանելու համար , թէ մենք միանգումայն համերաշխ ենք մեր պահանջների մէջ , որ է՝ Սելիրի գաշնադրի իրազործումը Մեծ Հայտոտանի վերաբերմամբ և Կիլիկիայում յատուկ բէժիմ :

Օսրօն .— Հաւատացնում եմ ձեզ , Պօղոս Փաշան ձեզ հետ համամիտ չէ :

ՁՐՈՅՑ ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ

Փետրուար 22 , 1921
Լոնդոն

Այսօր պատմեցի Պօղոս Փաշային իմ տեսակցութիւնը Օսրօնի հետ և մասնաւորապէս այն , թէ նրա կարծեքով մենք համերաշխ չենք , թէ ինքը պատրաստ է հրաժարուել Մեծ Հայտոտանից՝ Կիլիկիան ունենալու համար :

Պօղոս Փաշան .— Օսրօնի տածը արտուրդ (անհեթեթ) է : Երբեք որեւէ Հայ աշխարհում չի համարձակուի հրաժարուել Հայկական վիլայէթներից եւ ես եւս առաւել : Ես Օսրօնին տեսել եմ , խօսել եմ , նա նոյն բաներն ինձ տաց , բայց ես երբեք չեմ տսել , թէ պատրաստ եմ հրաժարուել Մեծ Հայտոտանի թիւրքական պատառներից :

ՄԻԱԲԱՆՈՒԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

24 վերուար, 1921
Լոնդոն

Այսօր առաջին անգամ Հաւաքուեցինք Պօղոս Փաշայի մօտ De'legations Armeniennes Re'unies նիստին կարգալու Համաժողովին ներկայացնելիք մեր յուշագիրը:

Երկու թուղթ կար պատրաստուած, մէկը՝ մերը եւ միուը՝ Պօղոս Փաշայի գրածը:

Կարգացինք նախ երկրորդը: Այստեղ մասնաւոր վէճի նիւթ եղաւ Փաշայի գրածի այն մասը, որ վերաբերում էր կիլիկիային: Այդ գրութեամբ պահանջւում էր թիւրքերին ձգուած կիլիկիայում տեղական վարչական ինքնավարութիւն ֆրանսիական հովանու տակ, իսկ ֆրանսիային ձգուած մասում ինքնավարութիւն հայերի:

Մենք գիտել տուինք Փաշային, որ այս կերպով, առանց որեւէ արդիւնքի յոյսի կիլիկիայում, մենք կը թուլացնենք Մեծ Հայաստանի թէզը, որովհետեւ միաժամանակ մենք պահանջում ենք եւ Կովկասեան Հայաստանը եւ Թիւրքաց Հայաստանը եւ կիլիկիայի երկու մասերը: Աւելացնենք նաև, որ եթէ հեռաւոր հիմք կայ վարչական ազահովութիւն խնդրելու թիւրքական կիլիկիայի համար, մենք սակայն, շատ պիտի վշտացնենք ֆրանսական կառավարութիւնը եթէ այստեղ, լոնգոնի Համաժողովից պահանջենք ֆրանսիական կիլիկիայում ինքնավարութիւն մացնել: Աւելի լաւ է այդ խնդրել առանձին ֆրանսիական կառավարութիւնից:

Փաշան յամառեց: Պէտք եղաւ երկար համոզել, որ կարողանանք դուքս ձգել տալ ֆրանսիական կիլիկիային վերաբերեալ մտու: Մնացածն էր լրացրինք ու սրբազրեցինք մեր թղթի համաձայն եւ սուրբողջը սուրբազրեցինք երկուվ եւ զրկեցինք Conseil Suprême-ին:

ԼՈՆԴՈՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋ

Փետրուար 26, 1921
Լոնդոն

Երէկ ժամը 11-ին ես ու Փաշան ներկայացնեալու Conseil Suprême-ին, Foreign Office-ի մէջ:

Նախագահում էր Լորդ Քըրդլն, ունենալով իր հետ Vansittart-ը: Ֆըրանսացւոց կողմից ներկայ էին Berthelot և Camerer, Իտալացւոց կողմից՝ Count Sforza և Galleli, Ճափոնի կողմից՝ Conte Hayashi: Մեզ հետ էր զօրքադրատունին, որի մասին Vansittart-ը յայտնեց Լորդ Քըրդլին եւ նա համաձայնուեց: իսկ Մալքոմ, ըստ իր սովորութեան, նոյնպէս ներս սովորեց Փաշայի յիտեւից:

Նիստը բանալով՝ Լորդ Քըրդլն յարտարարեց հետեւեալը:—

«Մեհեղծուած նոր հանդամանքների չնորհիւ, Գերազոյն Խորհուրդը, Արեւելեան խնդիրը քննութեան նիւթ դարձնելով, հարկ է տիսնում լսել եւ Հայ Պատուիրակութեան կարծիքը Հայաստանի մասին: Կուղէի դիմանալ թէ

(Պիմելով Պօղոս Փաշային) դուք ի՞նչ մարմնի եւ կամ ի՞նչ կազմակերպութեան անունից պիտի խօսէք» :

Փաշտն պատասխանեց մասնաւորապէս հետեւեալը .—

«Մինչեւ զինադարը ևս մինակ ներկայացում էի Հայկական դատը եւ յետոյ, երբ Կովկասեան Հայաստանը անկախ յայտարարուեց, պրի. Ահարոնեան եկաւ որպէս նորակազմ պետութեան ներկայացուցիչ, եւ մենք միասին պաշտպանեցինք մեր դատը : Այժմ էլ մենք մեր երկու պատուիրակութիւնները ներգանակել ենք. ես ներկայացնում եմ Թթքահայերին եւ պրի. Ահարոնեանը Ռուսահայերին եւ նախազարդ ես եմ» :

Այս յայտարարութեան փաստական կոպիտ ու գիտաւորեալ տհճշութիւնը ստիպուած եղայ տանիլ Գերազոյն Խորհրդի առջեւ, անմիարանութեան առիթ չտալու համար : Մեր երեք միջնորդ բարեկամները, որոնց կարող էի հազորդել այս փատը, կը յուսամ թէ այժմ կը հասկնան իմ բոլոր երկիւղներն ու կասկածները, որ ես արտայատել էի այս առթիւ:

Ապա Փաշան զրպանից Հաննց մի ծալ թուղթ եւ սկսեց կարդալ իր Expose'ն Փրանսերէն, որի միտքը մօտաւորապէս հետեւեալն էր .—

Այս ստիթը եւ այս ժողովը խորապէս յօւղում է նրան : Այդքան զոհողութիւններից յետոյ, հայ ժողովուրդը չի կարող հրաժարուել Սեվորի գաշնագրով իրեն արուած իրաւունքներից : Եթէ բոլշևիկները գրաւել են Կովկասեան Հայաստանը, աս չի կարող թուլցնել հայ պետութիւն կազմելու մեր իրաւունքները, քանի որ Թթքահայաստանի Հողերը կան : Արդ՝ այդ Հողերն են որ կազմում են հիմունքը հայ պետութեան, նրանց հետ է կազմուած եղել Հայկական Հարցը իր ծագումով, Թթքահայ ժողովրդի կրած մարտիրոսութեան պատճառով : Եւ եթէ Կովկասեան Հայաստանի մասին խօսք եղաւ հետազայում, այդ միայն նրա համար, որ Ռուսաստանի քայքայումի չորհիւ Կովկասահայերը իրենց հոչակեցին անկախ եւ միացան Թթքաց Հայաստանին : Այլապէս Դաշնակիցները սկիզբում չեն էլ կարող մտածել Կովկասեան Հայաստանի անկախութեան մասին, քանի որ այն պատկանում էր իրենց դաշնակից մէկ պետութեան՝ Ռուսաստանին :

Վերջում Պօղոս Փաշան աւելացրեց, որ Հայերի համար կայ նաեւ Կիլիկիոյ խնդիրը : Յայտնի է, որ Կիլիկիոյ մեծագոյն մասը Սեվորի գաշնագրով թողուած է Թուրքիոյ եւ որ կազմում է, սակայն, Փրանսիական անտեսական գոտին : Սեվորի գաշնագրի իրազործումը պահանջելով մեզ համար՝ մենք չենք կարող միաժամանակ բոլորքել այդ դաշնագրի դէմ Կիլիկիայում : Բայց քանի որ Թթքական ոչ մի վարչութիւն չի կարող ապահովել հայ ժողովրդի դույութիւնը, մենք պիտի խնդրէնք եւ երախտադէտ կը լինէինք, եթէ Թթքանսա Հանձէր այստեղ ստեղծել անզական մի ինքնավարութիւն, իր հովանու տակ :

Այն ժամանակ նախազահը զարձաւ գէպի ինձ եւ հրաւիրեց, որ իմ խօսքն ասեմ : Ես ասացի հետեւեալը .—

«Ես խօսում եմ յանուն անկախ եւ միացեալ Հայաստանի, կազմուած ու ճանչցուած Սեվորի գանչագրով, որը ստորագրել եմ, եւ յանուն այն Ազգային կառավարութեան, որ բոլշևիկնեան թէժիմը տապալելով՝ Հայաստանում այս օր վերատին իշխանութեան գլուխ է անցած : Անձանօթ են ինձ Դաշնակիցների նոր տեսակեանները այն նոր հանդամանքների հետեւանքով, որոնց մասին այստեղ խօսուում է : Հայաստանի կառավարութեան համար այս նոր հանդամանքները, եթէ կան իսկ, ոչնչով չեն կարող խախտել Սեվորի գաշնագրի տրամա-

գրութիւնները յօդուած Հայաստանի : Այդ դաշնապիրը կազմել են մեր Դաշնակիցները, հաշուի առնելով հայոց անծայր զոհաբերութիւնները եւ ծառայութիւնները Դաշնակիցների ղործին : Այդ դաշնապիրց մենք չենք կարող հաժախտուել : Նա դարձել է հայ ժողովրդի չարթը : Առում են— այդպէս եմ կարդում լրագիրներում — թէ Կովկասեան Հայաստանը դարձել է Առվիէթ, իսկ Թրքաց Հայաստանում արդէն հայ չկայ, հետեւապէս Հայ Պետութիւն այլեւս չի կարող լինել, թէ Հայաստան չկայ : Այս է մօտաւորապէս թրքերի թէզը :

«Թոյլ տուէք ինձ, ինդրում եմ, ծանրանալ այս երկու կէտերի վրայ, որոնք մեղ համար կենաւկան են : Ես կարող եմ այստեղ վճռապէս յայտարարել, որ եթէ թրքական այդ զաւագիր արշաւանքը տեղի չունենար դէպի Հայաստան, բոլչեւիզմը ո՞չ Հայաստան կարող էր թափանցել եւ ոչ իսկ այսօր Վրաստանին սպանալ : Թիւրք արշաւանքը դէպի Հայաստան կազմակերպւած դաւադրութիւն էր յատկապէս Սեվոփի դաշնապիրի դէմ, հետեւարար եւ Դաշնակիցների դէմ : Եւ հասկնալի է թէ ինչո՞ւ : Դեկտեմբեր 2-ին Ալեքսանդրարուում, մեր պարտութիւնից յետոյ, մեր կառավարութեան պարտադրուած պայմաններից առաջինը Սեվոփի դաշնապիրց հրաժարուելու պահմնն է, — մի պայմանագիր սակայն, որ ԽՍ կառավարութեան 1920 նոյեմբր . 2-ի հահանգով ես յայտարարում եմ չեղեալ, որպէս բռնութեան տակ սառապրուած :

«Սեվոփի դաշնապիրով Հայաստանի ստեղծումը թիւրք Աղդայնականների համար անհանդուրժելի էր, քանի որ դա խափանում էր իրանց համաթուրանեան ծրագիրները : Կարսի եւ Ալեքսանդրովի զրաւումով է, որ նրանք ճզդնում են հայ աշխարհի միջով ճեռք մեկնել Թուրքանեան աշխարհին, մինչեւ Ասիա, իրագործելու համար համաթուրանականութիւնն ու համիսլամութիւնը : Եւ նոյն այս նպատակով է որ քէմարտականներն այսօր աւերում ու կոտորում են կարսի ու Ալեքսանդրովի շրջանները ճիշդ նոյն մեթոսով, ինչով աւերածու անմարդարնակ են արած Թրքաց Հայաստանը : Բոլոր արու հայ ազգաբնակչութիւնը իբր թէ աշխատանքի պատրուակով քշուում է Թուրքիոյ խորերը եւ ջարդուում հանապարհին . նրանց կանայքն ու տղջիկները առեւանդուում են, եւ այդ շրջաններում այլեւս կանգուն ու շէն հայ զիւղ չի մնացել . թալանուածէ ամէն ինչ, ուտեւիքից սկսեալ մինչեւ անտեսութեան պիտանի ամենաշնչին իրը*):

«Հաւատացած եմ, որ Դաշնակիցները թրքական այս ոճրային ծրագիրները չեն սրբագործելու եւս առաւել այժմ, երբ հայ ժողովուրդը, հակառակ այն դժոխային պայմաններին, որոնց մէջ զանուում է, նորէն միանդամ զէն է չպրդել Սովիէթ թէժիմը, որպէս խորթ ու անհարազատ իր հողուն, եւ վերահաստատել իր ազգային իշխանութիւնը :

«Կարձում եմ, որ այս իմաստը բաւական է՝ ապացուցանելու համար որ բոլչեւիզմը հայ Աշխարհում հող չունի բնաւ եւ ներմուծուել է բացառապէս թրքերի յառաջիսառացման եւ բարբարոսութեան շնորհիւ : Ես աւելին կ'ոսեմ, բոլչեւիզմը հող չունի Կովկասեան որեւէ ուրիշ երկրի մէջ, եւ նա երրեք չողիւի կարողանայ արժատ ճղել :

*) Իմ այս ասածները ճշդելու համար կը խնդրէի մի միջազգային յանձնաժողով զրկել տեղի վրայ քննութիւն կատարելու : Ա.Ա.

«Ես դառնում եմ թրքահայաստանի գաւառներին : Այնուեղ հայ չկայ, առում են թիւրքերը : Իրենք գիտեն սակայն, թէ ո՞ւր են այդ հայերը, գիտեն, որ ջարդերով ու տարագրութիւնով փճացուցած են մեծաղոյն մասը, բայց բարերարաբար ոչ ամբողջ $1\frac{1}{2}$ միլիոնը, որովհետեւ նահատակների գաւակեներից ու եղրայրներից 300,000 հոգի պատերազմից ի վեր սպասում են Կովկասում՝ իրենց հայրենիքը մտնելու համար : Եւ նկատի առէք, որ եթէ թրքահայաստանում այսօր հայ չկայ, այսակ չկան ե՛ւ միւսիւլմաններ : Վերջին վիճակագրութեամբ հաստատում է, որ միւսիւլմաններու թիւը հայկական վիլայէթում 96,000-ից չէ անցնում, որի մէկ երրորդն իսկ թիւրք չէ, մնացածը քիւրտ և ոչ-թուրք ցեղեր : Եւ դրա հանդէպ 300,000 թրքահայեր պատրաստ են Կովկասից Հայաստան մտնել, չհաշուած գեռ այն հաղարաւոր հայերը, որոնք աշխարհի բոլոր ծայրերից աշքերը սեւեռած՝ սպասում են ե՞րբ կարող են իրենց երկիրը վերագտանալ :

«Անգստ զաշնազրի մէջ մի յօդուած կայ, 218-րդը, որով Դաշնակիցները իրը բացարձակ ուժականութիւն ձեռք են բերում թիւրքիոյ այն հոգերը, ուր թաղուած են Դաշնակից բանակներից սպանուածներն ու մեսեալները այս սպատերազմի ընթացքին, և այդ հողերը յայտարարում են, որպէս ամենէն նըւիրական : Արդ, Կովկասի երկու միլիոն հայութիւնը, ի սփիւռս աշխարհի ցրուած մէկ միլիոն հայութիւնը, նախկին թիւրքիոյ զաւաները գիտում են որպէս 1,500,000 ազգակիցների գերեզմանը : Խնչպէս որ Դաշնակիցները չկամցան լքել իրենց մեռեներին, նոյնպէս և հայ ցեղը երբեք չպիտի կարողանայ լքել իր մէծ ու նույիրական գերեզմանը :

«Մենք հոււասացած ենք, որ մեր Դաշնակիցները մեզ կը տան մեր քանզըւած ու աւեր հայրենիքը^{*)}) : Հայ ժողովուրդը սպասում է եւ, երէ նորից յուսիւար դառնայ այս կողմից, նա կը հետամտէ այլ նամրաներ, այլ հնարներ, այլ օգնութիւն, բայց երբեք չի երաժարուի իր նույիրական հողերից : Յամենայն դէպս, ես յայտարարում եմ, որ Եթէ այս տրամադրութիւններից տարբեր կարգազրութեան խօսք լինի, ես սիտի խնդրեմ հնար տալ ինձ յարաբերութեան մէջ մտնելու իմ կառավարութեան հետ» :

Դրանից վերջ, Լորդ Քըրքըն, որ խնամքով նօթեր էր տոնում, երբ ես վաստեր ու թիւեր էի տալիս, չնայած որ ամէն ինչ դրւում էր Ste'nographicie-ով, գարձու ինձ հետեւեալ հարցով .

— Արդեօք դուք անզեկութիւն ունի՞ք այն սահմանների մասին, որ թուրքերը պարտազրել են Ալեքսանդրովում՝ հայ կառավարութեան :

Ես սպասախանեցի :

— Այս : Մօտաւոր կերպով սահմանն անցնում է մինչեւ Արքաչայ գետը, այնուհետեւ մինչեւ Արաքս հայարանը երկաթուղիի, ապա Արաքս գետով անցնում է մինչեւ Նախիջեւան : Սուրբալուն յայտարարում է ple'bicie-ի ենթակայ, իսկ Նախիջեւանի շրջանը թուրքիոյ protectorat-ի տակ :

Դարձեալ Լորդ Քըրքըն հարցուց ինձ.

— Ձեր քրօնութիւնի մէջ յիշատակեցիք Ալեքսանդրովի դաշնազիրը, որ ձեր օրինական կառավարութիւնն է սարազրել թրքերի հետ : Հայաստանի

^{*)} Եւ այդ իրաւունքը ազատութեան, հայ ազդը ձեռք է բերել հինգ դարերի տառապանքի, 30 տարուայ պայքարի եւ վեց տարուայ պատերազմի գնով : Ա.Ա.

Պատուիրակութիւնը ի՞նչ ունի ասելու այդ դաշնագրի իրաւական արժեքի մասին :

Այս հարցը, ինչպէս եւ շատ ուրիշ հարցեր, Լորդ Քըրզըն դնում էր խիստ բարեացակամօրէն, յօգուտ մեղ պատասխան ստանալու համար :

Ես պատասխանեցի :

— Այդ դաշնագրիր մենք ժխտում ենք ամենավճռական կերպով, որպէս չարաչար բռնութեան տակ ստորագրուած : Եւ սա միայն Հայոստանի Պատուիրակութեան կարծիքը չէ, այլ նաև մեր օրինական կառավարութեան, որ կարսի անկումից անմիջապէս ետք, նախատեսելով գալիքը, նոյնամբ 2 թուով ինձ հրաման էր տալիս զբաւոր, թէ քանի որ մեր աշխարհը չորս կողմից պաշարուած է թիւրք եւ բոլշևիկ թշնամիներով, կառավարութիւնը կարող է ստիպուած լինել ծանր յանձնառումներ ստորագրելու : Արդ Պատուիրակութեան եւ մեր Դաշնակիցներին է մնում, ասում էր պաշտօնական թուղթը, չընդունել մեր ստորագրելիք այդ ծանր պայմանները եւ վերահաստատել նախկին դրութիւնը : Ահա թէ ինչո՛ւ ես վերստին յայտարարուած եմ, որ Ալբանիայորօնի Դաշնագիրը գոյութիւն չունի մեղ համար եւ հաւատացած եմ, որ մեր Դաշնակիցների համար էլ նա չեղեալ մի փաստաթուղթ է, որպէս բանութեան տակ ստորագրուած :

Սրանից յետոյ, Լորդ Քըրզը մեղ դարձաւ մի վերջին հարցով .

— Յայտնի՞ է Ձեզ, որ Սան Ռեմոյի քոնֆերանսի որոշումով Միացեալ Նահանգների նախագահնին է յանձնուած Հայաստանի եւ Թիւրքիոյ միջնեւ սահմանը գծելու գործը : Դուք գիտէք անշուշտ, որ այդ սահմանները, չնորհիւ մի շարք հանդամանքների, այսօր անդորրադրելի են : Ի՞նչ է կարծում Հայ Պատուիրակութիւնը, որո՞նք կը լինէին գործադրելի սահմաններ այս նոր պայմաններուած :

Եւ մինչ Լորդ Քըրզընի այդ ասածը, ըստ սովորութեան անգլիերէնից թարգմանում էին Քրանսերէն մեղ համար, ես կացայ եւ Փաշայի ականջին տացի :

— Լաւ է, որ մենք ժամանակ ինդրենք պատասխանելու այս հարցին : Սա փակուկ խնդիր է :

Փաշան կարուկ թօնով ինձ առարկեց .

— Անկարելի է այդ : Մենք չենք կարող չպատասխանել այժմ եւ գրեթէ անմիջապէս, — եւ, առանց որ ես հար ունենամ նորից միջամտելու, նա բարձրաձայն յայտարարեց հետեւեալը . — Մենք գիտակցում ենք դժուարութիւնները եւ արդէն իսկ այդ պատճառով էր, որ մենք Տրապիզոնը չենք պահանջել եւ նոյնիսկ նախագահ Ուլյունին այդ մասին յայտնել ենք : Այժմ եւս մենք պատրաստ ենք զիջել Տրապիզոնը :

Եւ դարձեալ ինչ որ նախագահութեան ասաց, որից կարելի էր այն տպաւորութիւնը ստանալ, թէ մենք հրաժարում ենք ե՛ւ Տրապիզոնից ե՛ւ նոյնիսկ Երգնկայից :

Այսուհետեւ խօսք առաւ Բերտըլօն Կիլիկիոյ մասին եւ ասաց .

— Մենք Կիլիկիան պիտի թողնենք, բայց կարող եմ յայտարարել, որ Ֆրանսան, իր զօրքը քաշելէն առաջ, անպատճառ ձեռք կը բերէ հաստատուն երաշխիքներ՝ ապահովելու համար քրիստոնեայ եւ, ի մասնաւորի, հայ փոքրամասնութեանց գոյութիւնն ու իրաւունքները : Այսպէս, ինչպէս թուրք կայրութեան բոլոր միւս տարրերի իրաւունքները, ի հարկէ, ինքնավատ-

վատահութիւնը Փրանսական կառավարութեան հայեացքներում չի մտնում:

Սա, ըստ երեսոյթին, Փրանսական կառավարութեան վերջին եւ պաշտօնական յայտարարութիւնն էր, որ, տարարախտարար, շատ հեռու է մեզ գոհացնելուց, քանի որ մերանսան հրաժարում է մեզ համար որեւէ բացառիկ իրաւունք ճանաչելուց Կիլիկիոյ մէջ:

Փաշան խօսք առաւ եւ ասաց.

— Պրն. Բերտրլոն խօսեց Կիլիկիոյ հայ վոքրամտանութիւնան մասին: Սակայն, հայերը միշտ մեծամասնութիւն են եղած Կիլիկիայում: Ահա իմ առջեւը դրուած է մի զիրք, որ մօսերս կազմած է Փրանսացի մի սպայ: Այդ զրքի մէջ ես դանում եմ թրքական 1912-ի պաշտօնական վիճակագրութիւնը եւ զոհ եմ ասելու, որ անդամ թիւրքերը պաշտօնապէս ընդունում են, թէ մէնք Ատանայի շրջանում մեծամասնութիւն ենք եղած:

Բերտրլոն ի պատասխան, ասաց Քամերերին եւ վերջինս կտրդաց այլ թըւանշաններ, իրենց տաելով՝ նոյնպէս թիւրք ազրիւրից, ուր թիւրքերն են համարում մեծամասնութիւն:

Այս անախորժ միջադէպով կնքուեց մեր ունկնդրութիւնը, որ տեսէց 1 ժամ 10 րոպէ:

Իտալական ներկայացուցչին՝ Կոմս Սփորցային տեսած եւ հետը խօսած էի ժողովի սկիզբին, բայց ժողովի ընթացքին նա լուռ մնաց, ինչպէս եւ ձափոնի ներկայացուցիչ Կոմս Զայտչին:

Տպաւորութիւնն այնպէս է, որ Անդրկական կառավարութիւնը եւ մասնաւորապէս Լորա Քըրզընը շարունակում են ուժքնօրէն պաշտօնական Հայաստանը: Կարծում եմ, որ սստիպուած կը լինենք Ուիլորնի դժած սահմաններից քիչ ներս քաշուիլ: Խորապէս հաւատացած եմ, որ Ակէքսանդրօրօլի այդ ոճքային դաշնադիրը ոչ մի Դաշնակից չպիտի ընդունի:

ՄԻԱՅԱՆՈՒԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿԱՌԻԹԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Մարտ 2, 1921

Ներկայ էին Պօղոս փաշա, Ախնապեան, Պապաջանեան, Վարանդեան, Բագրատունի, Աստիսեան, Արտրատեան եւ ես:

Նկատել առուի Պօղոս փաշային, թէ Խաղաղութեան Համաժողովի առաջիր քրէքոսէ՛-ի մէջ նա ասաց՝ թէ՝ «Պատուիրակութիւնները միացել են եւ իմքը նախագահ է»: Մինչդեռ այդ ճիշդ չէ. ինքը միայն նիստերի նախագահն է, եւ այդպիսի յայտարարութիւնը կարող է թիւրքմացութիւնների տեղի առլ: Փաշան պատասխանեց.

— Կամենում էք, ես մի նամակով ուղղեմ այդ անհջողութիւնը:

Ես պատասխանեցի.

— Այդ այժմ աւելորդ է, բայց կը խնդրէի հետազում այդ կարգի թիւրքմացութիւններից խոյս առլ:

Երբ պիտի զուրու զայի, Փաշան նորից անհանդիստ կերպով ասաց.

— Յուսամ, զուք ձեր կողմից բան չէք զրի Conseil Suprême-ին, այլապէս ինքս պատրաստ եմ զրել»:

— Ո՞չ, ասացի, — ինձ բաւական էր այս յայտարարութիւնը:

Նկատել տուի նաեւ, որ մի այլ թիւրիմացութիւն Մալքոմի ներկայութիւնն էր «որպէս պատուիրակ»։ Այս անընդունելի է։
Փաշան պատասխանեց թէ Մալքոմը ինքն է մտել, նա չի հրաւիրել։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՈՄՍ ՍՅՈՐՑԱՑԻ ՀԵՏ

Մարտ 5, 1921
Լոնդոն

Արտաքին Գործոց նախարար Խոալիայի
երէկ զնացի Carlton Hotel իմ բարեկամ C. Galli-ին խնդրելու, որ ինձ եւ
Փաշայի համար տեսակցութիւն խնդրի կոմս Սֆօրցայից։
Փաշայի անունը տալուս պէս՝ նա գժկամակեց։ Ես պնդեցի, որ նա ան-
պատճառ ինձ ընկերանայ։

— Դուք կը ներկայացնէք իրականութիւն մը, ասաց Գալլին, — մինչդեռ
Պօղոս փաշան ոչինչ կը ներկայացնէ։

Ես նորից պնդեցի՝ խնդրելով տեսակցութիւն երկուս համար։ Գալլին
համաձայնեց, եւ քիչ յևոյ եկաւ ինձ յայտնեց, թէ տեսակցութիւնը կը լինի
յաջորդ օրը, մարտի 5-ին, առաւտօնեան ժամը 10·30-ին։

Կոմս Սֆօրցան մեղ ընդունեց շատ սիրալիք կերպով։ Եւ երբ Փաշան նե-
րողութիւն խնդրեց որ մենք նրա կարճ ժամանակը խլում ենք, Կոմս Սֆօրցան
շատ վարդեա կերպով պատասխանեց։ «Ես միշտ ժամանակ ունիմ Հայաստա-
նի պատուիրակների համար»։ Մենք նորից շնորհակալ եղանք այդ սիրալիք
խօսքերի հսմար։

Փաշան, առաջինը խօսք առնելով ասաց, թէ դիտնալով պ. նախարարի
համակրութիւնը զէպի հայ աղջը, ինք չի կասկածում, որ այս կրիզի օրերուա
նա մեղ կը պաշտպանի։

— Ինձ համարում են թրքառէք, — ասաց Սֆօրցան, — բայց խնդրեմ հա-
մառալ, որ ես հայկական դատը լքող չեմ։ Ե՛ւ թիւրքերը ե՛ւ դուք հողային
ընդարձակ յոյսեր էք ունեցել, որ պէտք է սղմել։ Մնացածը հեշտ է։

Փաշան ուշադրութիւն հրաւիրեց, որ մենք արդէն իսկ բաւական զիջել
ենք մեր նախնական պահանջներից։ Բայց եթէ Հարկաւոր է խաղաղութեան
համար, մենք պատրաստ ենք նորից զոհեր յանձն առնել։ «Ես — ասաց նա
— անցեալ օրը արդէն յայտարարեցի Տրապիզոնի համար, թէ Հրաժարուու
ենք։ Կարծեմ, սա ապացոյց է, թէ մինչեւ ի՞նչ աստիճան մենք պատրաստ ենք
խաղաղութեան օժանդակել։ Այժմ ողտք է թիւրքերի վրայ աղջել։ Եւ այս է,
որ խնդրում ենք ձեզ։

Կոմս Սֆօրցան։ — «Իրաւունք ունիք։ Ես արդէն իսկ ասել եմ թիւրքերին,
որ նրանք պէտք է նոյնպէս զիջող լինին ձեր հանդէս։ Այդ է պահանջում ե՛ւ
նրանց շահը։ Եթմար մարդիկ չեն։ Բէքեր Սամին շատ հասկացող մէկն է։
Յուսամ, իմ խորհուրդները ապարդիւն չպիտի անցնին։»

Ես խօսք առայ. — Պ. նախարար, ձեր ուշադրութիւնը թոյլ տուէք Հրա-
ւիրել երկու կէտի վրայ։

«1. Թիւրքերը հեշտ յայտարարութիւն են անում, բայց իրօք խոյս են տա-
լիս բուն Հարցից։ Նրանք իրենց զրոյցների մէջ միշտ նկատի ունին Կովկաս-

եան Հայաստանը : Այս ձեզ յայտնի է, թէ մեզ համար տարբերութիւն չկայ Հայաստանի երկու հատուածների մէջ : Բայց մենք զիտենք նաև, որ Հայկական Հարցի ծագումը կապուած է Թիւրքաց Հայաստանի հետ, եւ նրա մասին է, որ խօսում ենք եւ նրանից է, որ ընաւ չենք հրաժարուի, Այս է, որ Թիւրքերը պէտք է հասկանան, ինչպէս եւ այս, որ եթէ Թիւրքերը խանդարն Միացեալ Հայաստանը, գրանով նրանք կը հեշտացնեն ուռւսների հետապայ առաջ խաղացումը եւ վորքիկ, թոյլ Հայաստանի փոխոքին իրենց սահմանի վրայ կ'ունենան մի հզօր ու վտանգաւոր զբացի, որի արգելքը Թիւրքերը շատ լաւ զիտեն վաղուց ի վեր : Թիւրքերը ահուելի ոճիրներ են զործել հայերի դէմ եւ քաւել կարող են միմիայն զիջելով մեզ մեր արիւնով ողողուած հողերը : Սա խնդրի բարոյական կողմն է : Կայ եւ քաղաքականը : Առանց Թիւրքաց Հայաստանի մենք հետազայտ շատ աւելի մեծ դժուարութիւններ կ'ունենանք կազմակերպուած Ռուսիայ հետ, քան եթէ Թիւրքաց Հայաստանը միացած լինի Կովկասեան Հայաստանին : Վերջին գէպքում մենք խորը հաւատ ունինք, որ Հայաստանը կարող է մնալ ազատ : Նա կը դամնայ միջազգային դաշինքով ու իրաւունքով ապահով մի պիտութիւն : Հետեւապէս, մենք պէտք է ունենանք, եւ պետութիւնները չալէտք է զրկեն մեզ Թիւրքաց Հայաստանից, եթէ վճռել են ազատ, անկախ Հայաստան ստեղծել : Միայն Միացեալ Հայաստանը կարող է կենսունակ լինել :

«2. Մենք, ինչպէս ասաց Փաշան, պատրաստ ենք չափաւոր զիջումներ առել, մեր սահմանները սղմել, մի պայմանով, որ մնացածը մենք զրաւենք առանց կոռուի, որովհետեւ, ինչպէս զետէք, մենք մի կաթել արիւն իսկ չունինք թափիլու : Մենք շատ ենք վախճառում, որ Մուսատաֆա Քէմալը ձեւացնի զիջում, իսկ իր փոխարքին մի ուրիշը իր գերը խաղայ երգումում, ինչպէս կարա Բէքիր փաշան, կամ թէ մեր դէմ հանեն զինուած տեղական մուսուլմաններին» :

Խամս Ափօրցան : «Ես ձեզ մեծ ուշադրութեամբ լսեցի : Զեր արդումնունենակից մի քանիսը արդէն թիւրքերին ասել եմ, կը հասկացնեմ մնացածը եւս, որոնք շատ հետաքրքիր են : Ես յոյս ունեմ, որ Թիւրքերը կը հասկանան : Այդ իրենց շահն է : Իրաւունք ունիք . պէտք է այս խաղաղութիւնը վերջնական լինի եւ arrangement-ի կառուցուածքի մէջ այլեւ հօսսու չկիրակի : Խնդրում եմ ինձ հաւատալ, որ ես ձեզ հետ եմ, եւ որ իմ ջանքերը ապարդիւն չեն մնայ :» :

ՄԱՆՉԵՍՏՐԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մարտ 6, 1921, Լոնտոն

Այսօր միաբանուած պատուիրակութիւնը ողջունելու համար Մանչեստրի գաղութի կողմից հասան ոլ . Յ. Գամբէքեան, Գ. Ֆնդկիւն և (անունը չկայ) վարդապետ : Ողջունեցին պատուիրակութիւնը եւ վերջում իրենց ցաւը յայտնեցին, որ Պօղոս փաշան, «առանց հասուցման, շտապել է հրաժարուել Տրապիզոնից» :

Փաշան բացատրեց, բայց նրանք մնացին չհամողուած, եւ այս պարագան Փաշային խիստ դառնացրեց :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԱՆՉԻՏՏԱՐԻ ՀԵՏ

Մարտ 5, 1921, Լոմոնոս

Ճաշից յետոյ, այսօր Փաշայի հետ դնացինք այցի Վանդիտարին։ Նրա ասածներից պարզուեց, որ մեր խնդիրը դեռ չէ կարգադրուած, եւ լուծումը կախուած է ամբողջ Արեւելեան Խնդրի լուծումից։ Նա շատ մեծ արժէք էր տալիս Վրաստանի անցքերին։

— Եթէ Վրաստանը յետ մղի բոլչեւիկեան յարձակումը, ձեր հարցն այս- տեղ շատ հետ կը կարգադրուի, քանի որ բոլչեւիզմը ձեզ էլ չի սպառնայ։ Այլապէս շատ գժուար է, — տաց նա։

— Բայց Թիւրքաց Հայաստանը կայ, — ասաց Փաշան, — մի՞թէ չէ կա- րելի այնտեղ կտպել մեր պետութիւնը։

— Թիւրքաց Հայաստանը, առանց Կովկասեան Հայաստանի, կատարեալ խիմերայ է, — բացականչեց Վանդիտարը, — առանց ժողովրդի պետութիւն չի լինի։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԱՆՉԻՏՏԱՐԻ ՀԵՏ

Մարտ 11, 1921, Լոմոնոս

Մի շարաթ առաջ Փաշան ու ևս խնդրած էինք Վանդիտարից մեզ տալ անզդիական կառավարութեան կարծիքը մեր եւ թիւրքերի ուղղակի բանակ- ցութեան համար։ Այսօր նա մեզ անսակցութեան կանչեց եւ յայտարարեց հե- տեւելլը։

1) Թիւրքերի հետ մեր անմիջական բանակցութիւնները համարւում են անօդուու, անժամանակ։ Հանգամանքների դասաւորութիւնն է այդպէս։

2) Հայաստանի մասին Գերագոյն Խորհուրդի որոշումը հետեւեալն էր։ — «Ազգերի լիդայի խորհուրդը նշանակում է մի Յանձնաժողովը, որ կ'երթայ տեղն ու տեղը Հայաստանի եւ Թիւրքիայի սահմանները որոշելու։ Այս Յանձ- նաժողովի վճիռները պարագաներ պիտի լինին երկու կողմէրի համար։ Թիւրք պատուիրակութիւնը այս առաջարկը, ինչպէս ե'ւ բոլոր միւս առաջարկները յանձն առաւ ներկայացնել կ. Պոլսի եւ Անդարայի կառավարութիւններին, ո- րովհետեւ ինքը իրաւասութիւն չունի ընդունելու։ Թիւրք պատուիրակու- թեան հասկացրուած է, որ բոլոր առաջարկները, բոլոր փոփոխութիւնները Սեմրի զանազրի հեման վրայ, կազմում են մի ամբողջութիւն, եւ պիտի ըն- դունուեն, կամ մերժուեն միասին։ Լոյդ Զորջը այս պայմանը յայտարարել է շատ վճռական շեշտով։

— Ուրեմն մենք դարձեալ պիտի սպասենք «Յունական օրացոյց»ին, — ա- սացի։

— Տարաբախտարար, այս՝ — պատասխանեց Վանդիտար, — իրաղէս որեւէ լուծում չկայ Արեւելեան Խնդրի։ Ե'ւ Գերագոյն Խորհուրդը ե'ւ Թիւրքե- րը սպասում են Խուսաստանում զարգացող անցքերին։ Թիւրքերի մի մասը, չափաւոր ու խոհեմ պահանջների կողմակց, պատրաստ է ընդունել՝ վախենալով որ բոլչեւիզմի խորակումը իրենց դիրքը կը թուլացնի։ Իսկ

միւս մասը յոյսեր ունի եւ մնում է անհաշտ : Տեսնենք թէ ի՞նչ կ'ասեն անցքերը :


Փաշան, որ առաւօտից շատ ուրախ էր թերթերում (Daily Telegraph) կարդալով այն մասին, թէ 1) Թիւրքաց եւ Կովկասեան Հայաստան իրարից զատւում են եւ 2) Թիւրքաց Հայաստանում ստեղծուում է Հայերի մի Home, Հարցրեց՝ թէ որքա՞ն ճիշդ է այդ բոլորը եւ թէ արդեօք ենթադրեալ Յանձնաժողովը միայն Թիւրքաց Հայաստանի՝ սահմանները պիտի զծի :

— Ո՞չ, պատասխանեց Վանդիտուար, — այդ Յանձնաժողովը գծելու է ամբողջ Հայաստանի սահմանները եւ Կովկասում :

2) Որ նախատեսուած էր Սեվրի դաշնագրով : Իսկ Հոմե-ը Թիւրքաց Հայաստանում կարող է կազմուել Դամի վորձ է դուրս չորթելու Հայկական հողը թիւրքերից : Այսուհետեւ ի՞նչ բովանդակութիւն ասես՝ կարելի է դնել Հոմե-ի գաղափարի մէջ : Դա նոյնպէս պետութիւն է :

Մենք դուրս եկանք այս յայտարարութիւնից շատ բնկառուած :

Այս յայտարարութիւնը Վանդիտուար մեղ արեց Լորդ Քըրզմի կողմէց պաշտօնաւալէս :



ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՒԶԵԻ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

Գրեց՝ ԱԽԵՏԻՍ ԱՀԱՄԲՈՆԵԱՆ



ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒԹՅԵՐԻ ՀԵՏ

I

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Պ. Գ. ԿԻՒՎԱՌԵՆԻԵԱՆԻ ԵՒ ՃԱԼԻՑ ԲԼՅԻ

Այսօր, Մարտի 20-ին, Կիւլպէնկեանը տեսնուել է ձաւիտ բէյի հետ։ Զըրոյցի նիւթը հայ-թիւրք համաձայնութեան կարելիութիւնն էր։ Կիւլպէնկեանը խօսել է «իր անունից ևւ, ի միջի այլոց», թէեւ կասկածից դուրս է, որ ձաւիտ բէյը հասկացել է, որ խօսակիցը ներշնչուած է։

Ձաւիտ բէյը տանը է մօտաւորապէս հետեւեալը։ Թիւրքերը համաձայնութեան դէմ չեն, բայց առայժմ իրենք անկարող կը լինէին գործնական քայլեր անել այդ ուղղութեամբ։ զնում են Անդարա տանելով Լոնդոնի առաջարկները։ Ինքը կարծում է, թէ Անդարայում որոշ թիւթեւութիւններ ձեռք բերել Ալէքսանդրապոլի և Կարսի մասին հնարաւոր է, բայց զնում է, որ վաղաժամ է խօսել Վանի և Թիւրքահայ այդ գաւառների մասին։ «Մենք էլ տաքզլութիւններ ունինք, ինչպէս եւ զուք, որոնք խօսք հասկանալ չեն ուղում։ Եւ յետոյ՝ մեր արեւելեան բանակը զբեթէ ամբողջապէս հայկական վիլայէթներից է, զբժուար կը լինի այժմ նրանց հասկացնել ձգել հեռանալ այդ հողերը, տօելով, թէ տրուելու է հայերին։ Ձաւիտ բէյ աւելացրել է, թէ շատ բան հնարաւոր է յօդուած հայերի, եթէ կարելի դառնայ կովկասեան Հանրապետութիւնների ֆեղերացիա — հայերը պիտի աշխատին այդ նպատակով մօտենալ Ադրբէյջանին և Վրաստանին։ Հայկական հարց ասածն ինչ է, բացականչել է ձաւիտ բէյ։ Մի անապատ, որ մի կողմի տուքզլութիւններ պահանջում են, միւս կողմի տաքզլութիւններ մերժում են, այս է ամբողջը»։

Կիւլպէնկեանի տպաւորութիւնն այն է եղել, որ թիւրքերը շատ էլ տրամադրեցին զին զրուցելու և Լոնդոնի Համաժողովը նրանց դարձրել է պահանջկոտ ու անհաշտ։

Մարտ 20, 1921, Պարիզ

Այս զրոյցից մի երկու օր յետոյ, Թափա Զերժուեւ ինձ հեռախոս արեց Հարցնելու, թէ չէինք կամենայ արդեօք տեսակիցել թիւրք կարեւոր անձնա-

ւորութեան հետ : Ենթադրում է Բէքիր Սամին, որի մասին նույնական իշխան է Հոնդոն մեկնելուց առաջ : Որոշեցինք, որ Խատիսեանը իրեւ ծանօթ, տեսնը-իք Բէքիր Սամիի հետ :

II

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
Ա. ԽԱՏԻՍԵԱՆԻ ԵՒ ԲԼՅՈՒԹ ՍԱՄԻԻ

Այսօր Մարտի 24-ին Ա. Խատիսեանը, որպէս վազածանոթ, առանց պաշտօնական հանգամանքի, պատուիրակութեան անդամների եւ եկտոր ընկերների — (Գ. Փաստրմճեան, Ս. Արարատեան) համաձայնութեամբ տեսնուեց Բէքիր-Սամիի հետ :

Անդարայի պատուիրակութեան շէֆն առել է . Հայ-թիւրք վէճը լուծելու երկու ճամբար կայ, կամ պէտք է պետութիւնները զինու զօրով մեղ պարտադրեն իրենց պայմանները յօդուած ձեզ, կամ մենք պիտի ուղղակի համաձայնութեան դամք : Չեր այսօրուայ այցից ևս տեսնում եմ, որ դուք նախընտրում էք վերջինը :

— Այո՛, պատասխանել է Խատիսեան, մենք գէմ չենք ձեզ հետ համաձայնութեան դալու : Բայց դրա համար մի քանի նախապայմաններ կան, որինակ դուք անշուշա չէք պնդելու Ալէքսանտրապոլի դաշնադրի վրայ :

— Ո՞չ, պատասխանել է Բէքիր Սամի :

— Բացի այդ, չարունակել է Խատիսեան, դուք պիտի ասէք, համաձայն էք արդեօք սկզբունքով մեղ զիջել հողեր 14 թուի սահմանից անդին թէկուզ մի թիզ :

— Անշուշա, զիջելու ենք : Բայց հասկանանք իրար : Դուք ձեր պահանջները շատ լայն բանեցիք : Սակայն, կամաց կամաց տեսաք դրա վնասները :: Լոնդոնում կարծեմ պարզ եղաւ ձեզ համար, թէ դուք անօդնական էք : Համաձայնութիւնը մեղ համար էլ, ձեղ համար էլ նախընտրելի է : Խնդիրը չափերի մէջն է : Որո՞նք են ձեր պահանջած սահմանները :

Խատիսեանը — Ես պաշտօնական հանդամանք չունիմ սահմանների մասին ձեզ հետ խօսելու, բայց կ'առեմ, որ 1) մենք պիտի գուրս զանք ծովլ Իրգէի վրայով եւ 2) մենք բնականապէս պիտի ստանանք Վան, Մուշ, Բիթլիս : Այդ երկու կէտերի մէջ զժուար չէ մեր եւ ձեր սահմանները գծել, վէճը այսուղ է :

— Էրզրումի վրայ, ուզում էք ասել — դա մի վէճ է, որի վերջը յայտնի է, էրզրումը չի կարող ձեզ տրուել, ասում է Բէքիր Սամին : Վէճը կարող է լինել մնացած հողերի վրայ :

— Այսուղ էլ վէճի վախճանը յայտնի է, այդ հողերը չեն կարող մերը չմինել, դուք այդ գիտէք :

Բէքիր Սամին խօսքը դարձնում է Ռուսիային . խնդիրը միայն մեր համաձայնութեան մէջ չէ, ասում է նա, այլ Ռուսիայի ընթացքի : Ամէն բան կախուած է ուուներից, էրզրումը ձեզ տալ, միեւնոյն է թէ տալ ուուներին . առաջասարակ, հայերին զիջած հողերը մենք նկատում ենք Ռուսիային զիջած, որը հաւասարապէս սպանում է մեզ : Մեր այսօրուայ համաձայնութիւնը սովուների հետ, մեր ժամանակաւոր տակտիկական երեւոյթն է, որ ապագայ

չունի, վաղ թէ ուշ մոռւսիան նորից պիտի կիրարկի իր արեւելեան քաղաքականութիւնը՝ այսինքն առաջնազացութիւն դէպի Պոլիս եւ հարաւ։ Այս է վրաւանդը եւ ա'յս է, որ պէտք է մեզ զբաղեցնի, աւելի քան հոգային այս կամ այն զիջումը։ Այս վտանգի առաջ կարելի է առնել միայն կազմելով մի Կովկասեան Ֆետերացիա։ Երբ այդ լինի, մեր փոխարարելութիւնները շատ կը հեշտանան։ Ինչ վերաբերում է հողային զիջումներին, այս՝ մենք այն պիտի անենք ձեզ — բայց մեր մտածումով, «ոչ՝ Թիւրքաց Հայաստան անունով» այլ որպէս սահմանների շտկումն (rectification des frontières)։ Ամէն պարագայի, ես համաձայն եմ, որ մենք պէտք է զրուցենք։ Ես գնում եմ Անդարա, կարծում եմ, որ երկու ամսից յետ կը գամ։ մինչեւ այդ, լաւ կը լինի, որ մենք հանդիպենք եւ ժամ տուած եղրակացութեան զանք։ Սա իմ անհատական մտածումն է։ Եթէ Անդարայում համաձայնեցին իմ հայեցակէտի հետ, ապա ես ձեզ կը հեռազրեմ եւ մենք կը համաձայնենք հանդիպումի տեղի եւ ժամանակի մասին։

Խատիսեանը տուել է մեր Պատուիրակութեան հասցեն։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՐԱՍՍԻՆԻ ՀԵՏ

Մարտ 24, 1921, Պարիզ
Լոնդոն, ապրիլ 7, 1921

Այսօր, առրիլի 7-ին, հետո ունենալով պրոֆեսոր Աղոնցին տեսակցութիւն ունեցայ Կրասսինի հետ։ Զբոյցի նիւթն էր այն հեռազիրը, որով Վրացեանը բողոքում էր սովորական զօրքերի յարձակման դէմ եւ պահանջում էր կանգնեցնել ոռուական արշաւանքը Հայաստանի վրա։

Ես ասացի մօտաւորապէս հետեւեալը —

Հայ ժողովուրդը ունեցել է եւ այժմ էլ պահպահում է մոռւսիոյ հանդէպ բարեկամական զգացումներ, բայց ուսւ սովետը ամէն ինչ անում է այդ լաւ զգացումները փակցնելու։ Սովետական ներկայացուցիչներին ընդունելով, հայ ժողովուրդը դեկտ. 2-3-ին կարծում էր թէ յանձին ուսւ բոլշևիկների երկրի հոգատարներ են եկել թիւրքերի դէմ եւ իր կարիքները հոգացողներ։ Արդէն այսպիսի լողունզներով յայտնուեցին Հայ Յեղ-կոմի անդամները։ Փորձը ցոյց տուեց Հակառակը — Հայերը շուտով նկատեցին որ, որ ա) եկողները թիւրքերի դաշնակիցներն են. բ) Զը կարողացան կամ չը կամ հոգացան թիւրքերին գուրս քշել նոր զրաւած ուսւահայ զաւառներից, գ) երկրում քաղցը ու կարիքը ծայրադոյն չափերի հասոււ, դ) եղած չնչին պաշարը կրուեց դէպի հիւսիս, ե) քաղաքական վատթար անսակի հալածանքներն սկսուեցին, զ) բանտերը լցուեցին Հայ մտաւորականներով, հակառակ տրուած հանդիսաւոր խոստումների, է) եւ, վերջապէս, տիրահաչակ Աթարքէդեանի գալով սկսուեցին բանտարկեալների կոտորած, սպանների ձերբակալութիւն (մօտ 1200 հոգի) եւ աքսոր դէպի մոռւսաստան։ Ֆողովրդի համբերութիւնը հատաւ եւ առաջ եկաւ այս տարուայ վերարուար 18-ի տարերային ապստամբութիւնը։ Այժմ մոռւսաստանից նոր զօրքեր են հասել եւ աւերում են մեր երկիրն ու ժողովուրդը։ Ա՞յլ է ժողովուրդների ինքնորոշումը, որ դուք հոչակել էք։ Մեր ժողովուրդը անկարող է սովորական ուժիմը տանել, քանի որ զբա համար ո՛չ մի պայման չը

կայ եւ այլովիսի ռեժիմը ինչպէս տեսնում էք միայն դօրով, արիւնով, աւերածով պէտք է մացնել: Ի՞նչ շահ դրանից նուսասատնին, ի՞նչ շահ ձեր գաղափարին: Եւ միթէ այլ ճամբայ չը կայ աւելի բարուք յարաբերութիւններ ոտեղծելու նուսասատնի հետ, որից երկու կողմերն էլ մեծապէս կը շահուին: Ինչո՞ւ, օրինակ, զուք կարողանում էք համաձայնութիւններ կնքել Պարսկաստանի, Աւղանստանի, Լիտվայի, Լատվայի, անդամ Թիւրքիայի հետ աւանց նրանց պետական ռեժիմը խախտելու եւ միայն Հայաստանը տրորում էք, ոտքի տալիս Հայաստանը, որ բազմաթիւ մօրակ իրաւունքներ ունի միտնդամայն տարրեր վերաբերմունք անոնելու ուռաների կողմից, քանի որ համաշխարհային այս կտառկիրջի օրերին, նաև միակը եղաւ, որ մինչեւ վերջը ձեզ հաւատարիմ անաց: Եւ մեր խնդրածը շատ բան չէ: Դադարեցնել արշաւանքը, հնար տալ մեր երկիրը կառավարել մեր ժողովուրդի կամքի համաձայն, եւ դրանով միաժմանակ մեծապէս նպաստել մեզ Թիւրքաց Հայաստանի միացումին, քանի որ զուք առաջնորդ եղաք թիւրքահայերի աղատազրութեան իրաւունքը ճանաչող: Մենք զիտենք մեր յարաբերութիւնները թիւրքերի հետ եւ բնաւ նպատակ շունինք ձեզ իրար հետ թշնամացնել. մենք խնդրում ենք միայն ճանաչել մեր իրաւունքը կովկասեան Հայաստանում, եւ այն ժամանակ մենք կը կարողանանք ձեռք բերել Թիւրքաց Հայաստանը: Որքան զուք ճնշում էք Կովկասը, այնքան հեռանում է մեղնից Թիւրքաց Հայաստանը: Դուք ահսաք, որ մեր արշաւանքի հետեւանքով գեկտ. 1-3-ին, Միացեալ Հայաստանը զարձաւ Իօմե—Հակառակ Մելքրի Պաշնազրին: Մենք շատ ենք վախենում, որ այս նոր արշաւանքով զուք խստա սպանէք Հայկակոն Հարցը: Ի՞նչ է ձեր շահը: Միեւնոյն է, վերջ ի վերջոյ մեր ժողովուրդը կը ջարդի, բայց չի ընդունի սովորական ռեժիմը եւ ամէն յարմար առթիւ պիտի սոքի ելիք: Լուազոյնը չէ՝ մի տօդս նիւնդ:

Կրասինը պատասխանեց: — Ես խօսում եմ անհատապէս, քանի որ իօն իրաւունքից զուրս է քաղաքակոն բանակցութիւններ վարել, իսկ կարող եմ ձեզ վստահացնել, որ Մոսկուայում շատ են այն վարիչները, որոնք բաժանում են իմ մասնութեալ Հայոստանի մասին: Ասեմ նախ, որ զուք սխալ ձեռով էք զնում Հարցը, երբ խօսում էք «Հայ ժողովրդի» անունից «ոռւս ժողովրդին»: Դուք կարծես մոռանում էք զասակարգային կոիւը, որի անունը մենք զործում ենք: Ես շատ լաւ զիտեմ, որ մեր բուրդուա ինտելիգենցիան — օրինակ մի Պատել Օսմանիչ Ղուկասով, խանդով զործում է մեր Միլիլուկովիների հետ մեր զէմ: Այս մէկը: Եւ յետոյ՝ մենք բնաւ վատահամեթիւն չունինք զէմի Դաշնակցականները, որոնք զործիք են ենտեն-ի ձեռքին մեր զէմ: Եւ, վերջապէս, զուք ասում էք թէ մեր ժողովուրդը զէմ է սովհանին, բայց ես այսօր իսկ հեռազեր ունիմ, որ Երեւան մանող սովհատական զօրքերին ժողովուրդը ընդունել է զրկարաց եւ ծափահարութեամբ: (Կրասինը կուտայ ինձ ապրիլ 5 թուակրով հեռագեր Աթարբէզովի սոորազրութեամբ Երեւանի գըրաւանի մասին):

Հարուածը ճիշդ տեղին հասաւ ինձ եւ ես յանկարծակի եկած, յետ ընկայ թիկնաթոռի մէջ մի վայրկեան, թողնելով, որ Աղոնցը խօսի: Ես այն մարդու վիճակն ունէի, որ զնացել է բոնակալի մօտ իր դատապարտուած եղբար ներուածը, վրկութիւնը ձեռք բերելու ու յանկարծ լուսամուտից նրան

ցոյց են ապիս և պօր կտրած գլուխը։ Զապեցի յուզմունքս եւ շաբունակեցի դրոյցը։

Ես— Մենք չենք մոռացել զասակարգային կախը, եւ հէնց այդ տեսակտից է, որ խօսում ենք — ի զուր էք ծանրանում մեր բուրժուազիայի վըրայ — կռուղ զասակարդը միմիայն մեր աշխատաւոր, զիւղացի բանուոր ժողովուրդն է — բուրժուազիան մեր երկրից հնուռ է եղել եւ այժմ իսպառ հեռացած է — ո՞ւր են մեր յիշած Դուկասովները……

Կրասին։— Անջուղու, Պարիզում։

Ես— Այս՝ Պարիզում մեր Միլիւկովների հետ։ Դուք արիւնուում եւ սավամահ էք գարճում միայն եւ միայն մեր աշխատաւոր ժողովուրդը։ Դաշնակցութեան չէք հաւատում — հնար չը կայ Gage պահանջել — եւ վերջապէս այդ անվտահութիւնը մի ողբալի թիւրիմացութիւնն է, որին զոհւում է մեր ժողովուրդը — եւ այս նոր չէ — ցարական կառավարութիւնն էլ մեր պայքարովներին համարում էր անդիւկական ազենաններ, իսկ անդիւկական կառավարութիւնը՝ ոռուական ազենաններ — Առվթանը գիտէր միայն, թէ ում հետ գործ ունի։ Գիտէք մնացածը։ Մենք նրա աչքում ապստամբներ էինք — եւ վարւում էր, որպէս այդպիսինների հետ։ Նոյն այդ թիւրիմացութիւնն է, որ այժմ դուք էք կրկնում։

Կրասին։— Ես ուրախ եմ, որ լուսմ եմ այս բոլորը։ Գիտի ասեմ, որ շատ բան մեղ ատում են եւ հաւատացնում հէնց հայ բոլէվիկները — նրանք են շարունակ պնդել, թէ հայ ժողովուրդը ձկուում է դէպի կոմմունիզմ։ Եւ պիտի դիտնաք, որ յաճախ կետրոնը չի խմանում ինչ են անում հետունները։ Չեմ զարմանայ, որ այս նոր արշատանքն էլ հայաստանի դէմ հայ բոլէվիկների գործը լինի, որովհետեւ Մասկուայի տրամադրութիւնը այլ է։

Ես— Լաւ յիշեցիք հայ բոլէվիկները — նրանք մեր կեանքում շատ յանցագործ դեր են կատարում։

Կրասին։— Ինչո՞ւ, այնուամենայնիւ նրանք հայեր են, հրէշներ չեն։

Ես— Ընդունեցէք, պ. Կրասին, որ նրանց մէջ կան, այս՝, եւ պարզապէս հիւանդ մարդիկ, որոնց հոգեկանը հասնում է սատիզմի — այսպէս է հէնց Աթարբէզովը — որ, տնկասկած, հոգեկան հիւանդ է։ Ես ճանաչում եմ նրա ազգատումը — հօրը, պատկին — ափտաւոր ընտանիք է, եւ նա սորսափներ է կատարում ամէն կողմ յանուն սովետների, վարկարեկելով եւ սովետը եւ Ռուսիան։ Միւս հայ բոլէվիկները — մէծ մասամբ նախկին Դաշնակցականներ — եւ հէնց այս պատճառով հազար ու մի պատճառ ունին լինելու Դաշնակցութեան դէմ — անձնական, կուսակցական, փառասիրական եւ յետոյ կետրոնի առջեւ երես ունենալու տենչը նրանց դարձնում է աւելի եռանդով եւ աւելի կասկածելի միաժամանակ։ Երբ դուք գալարէք ձեր աեղեկութեանց ազրիւր նկատել այդ կասկածելի պարոններին, եւ իրերի ճշգրիտ կացութիւնն իմանաք, ինքներդ կը նկատէք, թէ զոհ էք թիւրիմացութեան։

Կրասին։— Ես խոստանում եմ այս բոլորը անմիջապէս հաղորդել Մոռկուա եւ ձեղ պատտախան տալ, երբ ստանամ։ Առ այժմ կարող եմ ձեղ յայտարարել, որ՝

1) Հայաստանը մեղ համար առանձին հետաքրքրութիւն չի ներկայացը նույն, ո՞չ տնտեսական, ո՞չ քաղաքական տեսակէտից — որպէս յարաբերութիւնների միջնորդ եւս բան չի արժէ։ Դուք չ'ունիք ո՞չ երկաթուղինների կա-

բեւոր գծեր, ոչ Բաքու եւ ոչ Բալթում։ Եթէ ևս ձեզ ասէի, թէ օրինակ Բագուն, Ադրբէյջանը մեղ չի հետաքրքրում, կը սխալուէի — մենք երբեք չենք ձգի Բաքուն։ Բայց այլ է Հայաստանը։ Մենք շատկութիւն չունինք այն տիրապետել, հողի ոլէտք չ'ունինք։ մեր ունեցածը շատ շատ է — Դուք տեսաք, թէ որքան մենք լայն եղանք մեր հողային զիջումների մէջ լեհաստանին։

2) Գալով բէժիմին — Կրկնում եմ, հայ բոլցեվիլիներն են մեղ համոզել թէ հայ ժողովուրդը ծարաւ է կոմմունիզմի, եթէ այդ այդպէս չէ, մենք ձեզ բոնագատելու դէմ կը լինինք։

3) Հայաստանի անկախութիւնը մենք ո՛չ միայն չենք վերացնի, այլ, ընդհակառակը, կ'աջակցենք նրան, որովհետեւ զա մեղ հարկաւոր է Ադրբէյջանը Թիւրքիայից բաժանելու համար։ Եւ որքան մեծ լինի անկախ Հայաստանը, այնքան լաւ մեղ համար։ Մի խարուէք մեր եւ թիւրքերի ժամանակաւոր բարեկամութեամբ. զա անցողական է եւ եթէ Թուրքիան սահմանակից դառնայ Ադրբէյջանին, նա շարունակ գրդումներ պիտի առաջ բերի մեր դէմ։ Ահա թէ ինչո՞ւ Հայաստանի անկախութիւնը մեղ հարկաւոր է։

4) Ես ձեզ խորհուրդ եմ տալիս անմիջապէս մարդ զրկել Լիտվինովի մօտ կամ անձամբ զնալ, թէ հնար է այս բոլորը պարզելու։ Կրկնում եմ, շատ բան կայ բացատրելու, ասելու։ Ես անտեսական խնդիրների համար եմ այստեղ, Լիտվինով՝ քաղաքական։ Ես իմ կողմից բոլոր լսածներս անմիջապէս կը հաղորդեմ Մոսկուա։ Կրկնում եմ, Մոսկուան, զո՞նէ իմ մեկնելու ժամկետին, ինձ պէս էր մտածում Հայաստանի մասին։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԱՆՉԻՏՏԱՐԻ ՀԵՏ

21 յունիս, 1921
Պարիզ

Այս առաւօտ ժամի 8·30-ին տեսայ Կըրզընի դիւանապետ պլ. Վանդիտարին, որ ընկերացել էր Բրիտ. արտ. գործոց նախարարին իր բանակցութիւնների ընթացքին Փրանս. նախարարապետ Բրիանի հետ։

Իմ հարցին, թէ արդեօք դաշնակից պետութիւնները այս բանակցութիւնների ընթացքին շօշափե՞լ են Հայոց հարցը, թէ ոչ, նա պատասխանեց։

— Դաշնակիցները զրադուեցին միմիայն Յունա-թիւրքական conflit-pif, հայոց մասին խօսուած չէ։

Իմ միւս հարցին՝ թէ ինչպէս կը վերաբերուէր Բրիտ. կառավարութիւնը, թէ մեր պատուիբակութիւնը գրաւոր մի դիմում անէր դաշնակից երեք պետութիւններին, որպէսզի առաջիկայ բանակցութիւնների ընթացքին Թիւրքիայի հետ, սրանք պահանջէին, որ Թիւրքահայ դաւաները, որոնք պիտի կցուին Հայաստանին, Թիւրքիան առանց դիմադրութեան յանձնի դաշնակից պետութիւններին, որոնք կը անօրինեն նրա բախար։

— Շատ լաւ զաղափար էք ունեցած, պատասխանեց Vansittart, Հայկական հարցը դնելու սա լաւագոյն ձեւն է։ Կարող եմ ձեզ վստահացնել, որ Բրիտ. կառավարութիւնն այսպիսի մի դիմումն կ'ընդունի շատ սիրով։ Ինչ վերաբերում է Թրանսիային ու Խառլիային, որքան եւ նրանց քաղաքականութիւնը շահեկան լինի Թիւրքերին, այսպիսի մի դիմումը անուշադիր թողնել չեն կարող։

Միաժամանակ սղ. Վանդիտտարու ասաց, թէ պէտք է տեսնուել նորից Բէ-քիր-Սամիկ հետ, աշխատելով համաձայնուել թիւրքերի հետ:

— Բայց ի՞նչ արժէք կ'ունենայ այդ համաձայնութիւնը, երբ, ինչպէս փորձը ցոյց տուեց, Անգարա կարող է միշտ պատռել այստեղ ստորագրածը:

— Այս անդամ այդ հնարաւոր չէ, ասաց Վանդիտտարու. թիւրքերը, վերջապէս, պէտք է ընտրեն կամ բոլչեվիկներին կամ արեւմուտքը: Բէքիր-Սամիկ երկրորդ անդամ գալին ասլացոյց է, թէ նրանք զերադասելու ևն արեւմուտքը:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՈՐՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲՐԻԱՆՌ ՀԵՏ

Յունիս 22, 1921
Պարիզ

Այսօր առաւօտեան ժամը 11-ին ևս, Զ. Ավալովը (Վրաստան), Թ. Զերմոնե (Լեռնական), Ա. Թօփչիբաշեւ (Աղբբէյջան) ներկայացանք Բրիանին յանձնելու համար մեր չորս պետութիւնների համաձայնագիրը կնքուած Յունիսի 14-ին, Պարիզում:

Ես ներկայացրի իմ ուղեկիցներին. Բրիան հրաւիրեց մեղ նստել. Ավալով խօսք առնելով ասաց, թէ ուրախ է հազորգել, որ Փրանսիական կառավարութեան ներշնչումով մեղ յաջողուել է համաձայնութեան գալ իրար հետ: Ազա թուելով համաձայնութեան գլխաւոր կէտերը, յոյս յայտնեց, որ Ֆրանսիան պիտի աջակցի ամրապնդելու այս համաձայնութիւնը, որից մեծապէս կը շտկուի եւ խաղաղութեան դործն Արեւելքում, եւ Դաշնակիցները քաղաքական եւ տնտեսական մեծ առաւելութիւններ կ'ունենան, քանի որ միջաղդային առեւտրին մեծ հետութիւններ են տրւում: Աւելացրեց, որ կովկասեան աղդգերի միութիւնը կարող է նաեւ բոլչեվիկ-թիւրքական դաշնքը խախտել:

Բրիան հարցրեց, թէ ի՞նչպէս է կացութիւնը կովկասում: Ես խօսք առաջ.

Ասացի, որ բոլչեվիկները թէւ տիրացան կովկասին բոնի ոյժով, բայց Լեռնականները ապստամբ են, Աղբբէյջանում խլրառամներ կան, ինչ վերաբերում է Հայաստանին, Փետրուար 18-ի ապստամբութիւնից յետոյ, 40 օր տեսող կոիւներ մղելով բոլչեվիկների դէմ, մերոնք ստիպուած եղան անցնիլ մեր երկրի լեռնային մասը — Սիւնիք, ուր հաստատուած է բանակը, կառավարութիւնը, պարլամենտը, քաղաքական վարչական ամբողջ կազմով եւ պայքարը շարունակում է բոլչեվիկների դէմ:

— Ի՞նչպէս են հաստատուած բոլչեվիկները կովկասում, հարցրեց Բրիան:

Ես պատասխանեցի, թէ կան սովետներ խրաքանչիւր երկրում, կազմը տեղական տարրերից, որոնք իրօք առանձին կարեւորութիւն չունին, քանի որ վարչական զեկը մնում է միշտ ուռւ բանակի գլխաւոր կայանի ձեռքին, որոնք ուռւներ են: Զեւականորէն պահպանում է անկախութիւնն այդ երկրներում, բայց դա ֆիկցիա է, սակայն մենք հաւատ ունինք, որ բոլչեվիկները երկար չեն մնայ մեր երկրում եւ նրանք այնտեղ բնաւ հող չունին:

— Ես հաւատում եմ — եւ մենք կ'աջակցենք ձեզ. այս միութիւնը իմ սրբին մօտիկ է, ես դիտեմ, որ ո՛չ Թիւրքիայում, եւ ո՛չ Կովկասում ժողովուրդները բոլչելի չեն:

— Պ. նախագահ, շարունակեցի ես, — Ձեր աջակցութիւնը այսօր իսկ կարող է մեծ բարեք անել: Ես գիտեմ, որ Դաշնակիցները հնար չունին ազգելու բոլչելիկների վրայ, բայց քանի որ զրայց է սկսուած թիւրքերի հետ, մենք վստահ ենք, թէ այս ճամրով հնար է մեզ օդնել: Բանն այն է, որ բոլչելի կովկասում ունեցած յաջողութեան մէջ մեծ բաժին ունին թիւրքերը — առանց թիւրքերի օժանդակութեան բոլչելիկները չեն կարող հաստատուել կովկասում. այն փաստը, որ նրանք գրեթէ այն օրը մտան Հայաստան անցկած դեկտեմբեր, ապացոյց է, թէ նրանց յարձակումը նախամտածուած ու ներդաշնակուած էր: Այսօր, ինչպէս զիտեք, թիւրքերը պահում են ո՛չ միայն թիւրքաց Հայաստանը, այլ եւ Կովկասնեան Հայաստանի կէսը: Եւ թէ թիւրքերի շահը պահանջում է, որ կովկասնեան ուժեղ միութիւն հաստատի, պէտք է նրանց հասկացնել, որ նրանք ժամ տաջ կարդաղրեն Հայկական ինդիրը, զիջելով Հայերին նրանց հասանելիք հողերը: Հայկական հողային պահանջները թիւրքայում այնքան արդար են, որ մեր այս երեք հարեւաններն էլ, սրոնցից երկուոր կրօնակից թիւրքերին — այս իսկ համաձայնութեամբ — ինչպէս այդ կը տեսնէք ներկայ փաստաթղթի 7-րդ յօդուածից, ընդունում են եւ խոսանուում աջակցել Հայերին ստանալ ստանմաններ թիւրքիոյ հողերում եւ այսպիսով լուծել Հայել. Հարցը: Ես երախտադէտ դէպէ մեր հարեւանները այս վերաբերմունքի համար, պիտի նկատեմ միաժամանակ, որ նրանց մտածումն է լուծել Հայել. Հարցը, ամբարդել կովկասնեան Միութիւնը: Նրանք գիտակցում են, որ առանց Հայերին դոհմացնելու, խաղաղութիւն անհնարին է — եւ պէտք է յայտարարեմ, պահապահ, ո՛չ մի Հայ պատուիրակութիւն մի քանի ժամ իսկ չի կարող մնալ իր տեղում, եթէ նա հրաժարուի թիւրքաց Հայաստանի հողերից:

— Քրիան, ձեզ հետ համաձայն եմ, որ թիւրք չափաւոր տարրերի հետ պէտք է կը բակացութեան գալ — ես Հայկական Հարցի լուծումը հենց այդպէս էլ զրել էլ Լոնզոնուում: Թիւրքերի հետ համաձայնութեան գալու իմ ջերմցանկութեան չնորհիւ, քիչ մնաց, որ ես վշտացնէի մեր բարեկամ անզիւցիներին. այս ճամրան ևս չեմ թողել: Բոլչելիկնեան եւ թիւրք դաշնքը մի անոմալիա է, որ յարատեւելու չէ: Թիւրքերը կորատարեր խաղ են խաղում. ուռաներին իրենց երկիրը քաշելով, որտեղից նրանք զուրու չեն գնայ: Թիւրքերին տրւում է այսօր եղակի առեթ վերաբնիւու իրենց պետութիւնը: Այս ուղղութեամբ պիտի աշխատինք: Ես ձեզ խոսանում եմ առաջիկայ Գերազոյն Խորհրդի նիստին դնել կովկասնեան ինդիրը, այնպէս, ինչպէս գուք ներկայացրիք:

Չերմոնի քանի մը խօսք ասաց, որոնց միտքն էր, թէ մուսուլմանները կրօնի համար ոտքի կ'ելլին, բայց Թիւրքիոյ պետական գործի համար՝ ոչ: Այդ է պատճառը, աւելացրեց նու, որ մուսուլմանները այս պատերազմին չը միացան թիւրքերին:

Բրիսն Հարցը, քանի՞ միլիոն են լեռնականները:

Չերմոն պատասխանեց՝ թէ 3½ միլիոն:

Ա 8 8
ՅՈՒՆԱԿԱՆ CHARGE' d'AFFAIRE-ԻՆ
Մ. METAXAS-ԻՆ

Այսօր, յուլիս 21-ին, այցի գնացի յունական Charge' d'Affaire-ին չնոր-հաւորելու Բիւթանիայի յազմութիւնը և մեր խնդակայութիւնը յայտնելու յոյն կառավարութեան այս առթիւ: Պ. Metaxas շատ զգացուած այս այցից, խոստացաւ յայտնել այն իր կառավարութեան:

Խօսք դարձաւ այսուհետեւ Հայ-յունական պրոպագանդի մասին Եւրոպա-յում, որ զրոյցի նիւթ է դարձած Աթէնքի մեր ներկայացուցչի եւ յոյն արտ. զործոց նախարարի մէջ: Ես ընդունելով Հանդերձ այդ կարգի պրոպագանդի համար մեր պարաստակամութիւնը աւելացրի, որ մեր ներկայ նիւթական կացութիւնը մեծ զժուարութիւնների առաջ է հանում մեզ այդ կարգի որեւէ ձևանարկի առաջ: Մորալ զործակցութեան համար մենք միշտ պատրաստ ենք, ասացի: Յայն ներկայացուցիչը չէր կարծում, թէ օրինակ Փրանսիական մամուլի ընթացքը հնարաւոր է փոխել դրամական միջոցներով: Կասկածից զուրս է, որ այսօրուայ թիւրքօֆիլ հօսանքի աղբիւրը Quai d'Orsay-ն է: Եւ այնքան ժամանակ, որ այնաեղ կը տիրի ներկայ քաղաքականութիւնը, թերքիրը կը շարունակեն իրենց այսօրուայ ընթացքը: Հետեւապէս, աւելացրից ու ՄՀԿան անդամութեան աշխատանք պիտի թուինք:

Այսուհետեւ զրոյցն անցաւ Զայենի մի փոքր տարականոն գրութեանը, քանի որ նա accredité եղած է առանց lettre de cre'ance-ի և այս մասին ակնարկներ եղած յոյն թերթերում: Ես նորից յիշեցրի այն պարագաները, որոնք ստեղծեցին այս զրոյցինը և յայտնեցի, թէ առաջին իսկ առթիւ, այդ լեռնարկութիւնը կառավարութիւնը կուղարկի, երբ կանոնաւոր յարարերութեան հնարաւորութիւնը ստեղծուի:

Ա 8 8
ՊԱՐՍԻՑ ԴԵՍՊՈԱՆ ՍԱՄՄԱԴ ԽԱՆԻՆ

Յուլիս 21, 1921
Պարիզ

Այսօր, յուլիս 21, կէսօրից յետոյ ժամը 3-ին, այցի գնացի պարսից գեսապանին: Մենք նրա հետ ծանօթներ էինք 1907 թուի La Hay-ի Խաղաղութեան Conference-ից: Այս պարագան մեր հանդիպումը շատ սրտազին դարձրեց եւ երկար զրոյց ունեցանք Հայ եւ պարսիկ բարեկամութեան մասին: Ես վերջում խօսք դարձրի Թէհրանի մեր ներկայացուցչութեան մասին: բոլշևիկները պահանջում են պարսից կառավարութիւնից, չը ճանաչել Արդութեանին եւ խնդրեցի հեռադրով խնդրել պարս: կառավարութեան, եթէ հնար է, տեղի չը առ այդ անիբաւ պահանջին: Աւելացրի, որ անզիւական ու Փրանսիական կառավարութիւնները նման գիմումն արդէն արել են: Ասմատ ման զրիչ առա եւ խնդրեց ինձ, շատ սիրամիր կերպով միասին կազմել հետազիւր ինչ որ արինք: Նո խոստացաւ անմիջապէս զրկել:

Ա.88

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆՈՐ ԳԵՍՊԱՆ ՀԱՐՐԻԿԻՆ

Այսօր, յուլիս 22, առ. ժամը 11½-ին, այցի գնացի Միացեալ Նահանգների նոր ղետպանին բարի գալուստ մաղթելու յանուն Հայաստանի: Ես օգտառում եմ այս առթից, ասացի, նորից արտայայտելու այս տեղ Հայ ժողովրդի խորունկ երախաազիտութիւնը հանդէպ ամերիկեան մեծ ազգի ու կառավարութեան, որ այնքան ազնուօրէն օդնութեան հասու մեղ մեր ծանր օրերին:

— Դա ամերիկեան ժողովրդի պարտքն էր — եւ ես կարող եմ ձեղ վըստահացնել Հայ ժողովուրդը շատ մեծ համակրութիւն ունի մեր երկրի ազգաբնակութեան բոլոր խաւերում եւ նա չի մոռացուի:

— Շնորհապարա եմ, ասացի, Զեր ազնիւ յայտարարութեան համար, որ աւելի թանկ է մեղ համար, քանի որ դեռ շարունակուում են մեր ազդի ծանր փորձութիւնները, եւ միւս կողմից մենք դեռ սպասում ենք մեր զաշնակից եւ բարեկամ պետութիւնների բազմաթիւ խօսառումների իրադորձման: Այս պայմաններում մեծ բախտ է մեղ համար, որ Ամերիկա, իր նոր կառավարութիւնը նորից հրապարակ է գալիս աշխարհի գործերում իր բարերար ազդեցութեամբ:

— Տարարախտարար, ասաց դեսպանը, — մեր երկիրը տակաւին լիովին չի ճշգել իր քաղաքականութիւնը Եւրոպայի հանդէպ: Բնական է, որ Հայաստանի մասին եւս մենք չը կարողացանք անել այն ինչ համապատասխան էր մեր ազդի համակրանքին — բայց մեծ յոյս ունեմ, թէ Ուսչինկթընի առաջիկայ Conference-ը կարող է ձեր փորձութիւններին վերջ դնել:

— Ես վերստին չնորհակալ եղայ, եւ զեսպանը նորից ու նորից կրկնեց ամերիկեան ազդի համակրանքը ինձ մինչեւ գուուը ուղեկցելով:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ, ՑՈՒՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ
ԲԱԼԴԱՑՑԻՒ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԳՈՒՆԱՐԻՍԻ ՀԵՏ

Յուլիս 22, 1921
Պարիզ

Յունական Charge^e d'Affaire պ. Մետաքսասի հետ համաձայնած էի, որ իրենց նախարարապետի եւ արտաքին գործոց նախարարի Պարիզ հասնելուն պէս նրանց հետ տեսնուեմ, նախ քան Բրիտանի մօտ նրանց ունկնդրութիւնը: Եւ այսօր, (Հոկտ. 20) առ. ժամը 12-30-ին, տեղի ունեցաւ այդ տեսակցութիւնը: Hotel Crillon-ի առանձին սալոնում ինձ ընդունեց պ. Բարդացցի եւ ինքն սկսեց առաջինը խօսել. նա ասաց, որ պ. Չայեանի հետ նա երկար զըրոյց է ունեցել, եւ լաւատեղեակ է մեր առաջարկներին ու ցանկութեան յոյն հայկական քաղաքական ու դիւնազիտական գործակցութեան մասին: Գիտեմ, ասաց, որ դուք կը կամենայիք 1) ապագայ զաշնազրի մէջ յօդուած լինի, որով թիւրքիրն ընդունին Անվրի դաշնագրով, կամ թեթեւ փոփախութեամբ կազմուած Հայաստանը, 2) որ մենք պահենք զրաւուած թիւրքական հողերը, մինչեւ թիւրքիան լիապէս կտուարի իր յանձնառութիւնները Հայաստանի վերաբերմամբ եւ, վերջապէս, 3) հետազայում, Հայաստանը անկախ պետութիւն

նկատուի, որպէս Յունատառանի կենսական շահերի համար անհրաժեշտութիւն եւ Թիւրքիայի կողմից որեւէ յարձակումն Հայաստանի դէմ Յունաստանը համարի casus belli: Այս երեք կէտերի մասին էլ, ինչպէս զուք զիտէք անշուշտ, մենք ձեր ներկայացուցիչ պ. Զայենանին սկզբունքային համաձայնութիւն տըւել ենք: Ես այժմ էլ կարող եմ նոյն վճռական յայտարարութիւնն անել — Հայստանի վերաբերմամբ մեր մասածումները նոյնն են:

Ես.— Շնորհակալ եմ ձեր այդ սրատապնդիչ յայտարարութեան համար. ճշմարիտ է, պ. Զայենան այդ բոլորն ինձ տեղեկագրել է, բայց ինձ համար առանձին հաճոյք է նոյնը լսել ձեր հեղինակաւոր շրթունքից: Մեզ այնպէս է թւում, որ Հայաստանի անկախութեան հաստատում գոյութիւնը յունական կենսական շահերի պահանջն է: Խնդրեմ նկատի առէք, որ երկու անդամ վերջին տարիները թիւրքերը օգտառելով մեր նեղ ու մենակ կացութիւնից, մեղ պարտադրեցին սահմանադիմ, որ միշտ նրանց միացնում էր Աղբբէյջանին: Սա դիպուածական չէ: Քաղաքական մտածումի իրազործութն է — Հայաստանը չնչել, միանալ մուսուլման ու թաթար Աղբբէյջանին եւ այնտեղից ձեռք մեկնել Միջին-Ասիայի, Անդրկասպիան երկրների մուսուլմանութիւնը ձեր կարծում ենք, որ նոյնիսկ թէ ձեզ հետ թիւրքերը խաղաղութիւն իսկ կնքեն, չը պիտի դադարին րեվանշ-ի համար պատրաստուել — Զմիւռնիան ու Թրակիան նրանք երբեք չեն մոռանայ: Արդ՝ բոլորովին հասկանալի է որ, կովկասում ամրանալով, թիւրքերը դէտք է compacte, մուսուլմանութիւնը ձեր դէմ շարժեն: Հետևապէս, սպասելով ձեղնից վերոյիշեալ երեք կէտերի իրազործումը յօդուտ Հայաստանի, մենք կարծում ենք մեր կողմից լաւագոյն հատուցումը ձեզ կը լինէր մեր պետութեան, մեր անկախութեան ապահովութիւնն ու հետագայ զարգացումն ու ամրապնդումը:

Բալդացցի:— Լիսպէս ձեզ հետ հսմածայն եմ. կ'աւելացնեմ, որ մենք ուրախ կը լինէինք, թէ՛ ձեր եւ թէ՛ մեր շահերի տեսակէտից կովկասեան եւ միւս ժողովուրդների աղատապրութեան, քրիստոնեայ թէ մահմեդական: Օսմանցիները — ես դիմածամբ այս տերմինն եմ գործածում խուսափելով Օսմանման բարից — օսմանցիները արեւելքում, որպէս տիբրապետողներ խողառ մթնացրել են պետական ամենաստարական հասկացողութիւնը եւ նրա տեղ դրել կամայականութեան, վայրագ սանձարձակութեան, աւերի, աւարի, ամենավատթար բռնութեան բարքերը: Օսմանցի չի նշանակում պետականութիւն, այլ պարզ աւաղակային, արիւնարրու, կազմակերպուած աւեր ու թշուառութիւն տիբրապետած ցեղերի վրայ. այս վայրագ ըմբռնումները պէտք է արմատախիլ անել նախկին Թիւրքիայում, մասնաւորապէս մահմեդականների մէջ: Այդ տեսակէտից քիւրդերը մնուշադիր ձգելու չէ: Ճշմարիտ է: Նըրանք ձեր դէմ մեծամեծ չարիքներ են գործել, բայց եւ այնպէս անհրաժեշտ է աշխատել ուրոյն Քիւրդիստան ստեղծել: Գոհ եղայ իմանալով, որ Պոլսում դուք նրանց զլիսաւորների հետ յարաբերութեան մէջ էք: Մտածելու է մասնաւորապէս Աղբբէյջանի մասին: Վասահելի չեն, եւ շատ հակամէտ դէպի թիւրքերը.

— Այս, ես դիտեմ, անվաստահելի են, բայց աշխատելու է:

Ես.— Դուք, երեւի, իմացաք, որ կովկասեան չորս ժողովուրդների ներկայացուցիչների մէջ այստեղ — Հայ-Թաթար-վրացի-լեռնական — համաձայնութիւն է կնքուած: Այս վասարը անշուշտ իր աղադայ զարգացումն է

ունենալու և մենք աշխատելու ևնք այդ ուղղութեամբ : Կարկանը ժամ սուաջ արեւելեան հարցի և մասնաւորապէս ձեր և մեր խնդրի շուռափոյթ կարգագրումն է : Եւ բնական է, որ ցանկանայի իմանալ, թէ ձեր այս ճամբորդութեան հետ ինչ յոյսեր են կազուած : Պիտի առևմ Ձեզ, որ նախարար, որ ես մասնաւոր արժէք իմ տալիս մասնաւոնդ՝ ձեր տեսակցութեանը Բրիանի հետ, քանի որ ձեր և մեր գժուաբութիւնը դվինաւորապէս ծագում է Ֆրանուիայից :

Բալդացցի .— Մեր գժուաբութիւնը հասկանում եմ, բայց ճշմարիան ասած, ևս չեմ կարողանում բացատրել Փրանսիական հակամարտութիւնը մեր գէմ : Տարիներից ի վեր այս երկիրը ձեր հանդէալ միայն համակրութիւն է ունեցել : Խոնչպէս եղաւ, որ այս ճշնաժամային կացութեան մէջ Ֆրանսիան ձեր գէմ է :

Ես .— Արդար լինելու համար պիտի առեմ, որ Ֆրանսիան առանձին չկամութիւն չ'ունի մեր գէմ . Համակրանքը կայ, միայն թէ անդօ-Փրանսիական հակամարտութիւնն է, որ անդրադառնում է ճախորդորէն մեր բախտի վրայ . միւս կողմից շատ պատճառներով, որոնցից մի քանիսը անհիմն չեն, Հայկական Հարցի անջատ լուծումը հնարաւոր չի նկատում . սպասում են Արեւելեան Հարցի, ձեր և թիւրքերի conflict-ի կարգագրութիւնը մերն էլ լուծելու համար : Զեմ կարծում թէ Ֆրանսիայում առանձին Հականայ քաղաքականութիւն կիրառուի, կայ ուժեղ թիւրքօֆիլ քաղաքականութիւն, որին զոհուում են մեր շահէրը : Այժմ երր գուք այստեղ էք, ևս պիտի խօսէք Բրիանի հետ, մենք յոյսեր ենք տածում, որ Արեւելեան Հարցը մտնում է մի նոր զիւանագիտական Փաղի մէջ, ևս քանի որ թիւրքերը կարող են անհաջող մնալ ուրայն Հայաստանի զաղախարին, չը կամենալով զի՞նել մեզ այն հողերը, որ մեզ տրամադրել է Սեվրի գաղնազիքը, ահա այստեղ է, որ մեզ հարկաւոր է Ֆրանսիայի բարեացակամութիւնը և ձեր աջակցութիւնը մեր զբոյցի սկըտրում արտայայտած ձեւով : Ձեր աջակցութիւնը նրանով է թանկազին, որ Փրանսիական և առհասարակ Դաշնակիցների հաճութիւնն ունենալով հանդերձ, մեր խնդրի լուծման համար միշտ կը Հարկաւորուի զինուած ոյժ, թիւրքերին հնազանդութեան բերելու : Ահա թէ ինչո՛ւ մենք այնպէս մեծ կարեւորութիւն ենք տալիս ձեր զբոյցին Բրիանի հետ, որը կ'իմանայ ձեր շըրթունքով, որ նթէ Ֆրանսիան և Դաշնակիցները վճռեն Հայաստանն աղատել թիւրքերից, այդ վճռոն իրազործել տուող մէկը կայ՝ Հայաստանի բարեկամ եւ բնական զաշնակից Յունաստանը :

Բալդացցի .— Դաշնազրի կնքելու պահուն, ինչպէս ասացի, մենք ձեր հանդէալ ստանձնած յանձնառութիւնները կը կատարենք . ինչ վերաբերում է Բրիանին, պէտք է առեմ, որ մենք այժմ եկած չենք Ֆրանսիայի կամ որեւէ այլ պետութեան միջնորդութիւնը հայցելու : Բրիանի հետ մենք պիտի խօսինք Թիւրքիայից մեր գրաւած հողերին վերաբերեալ ինդիրների մասին : Եթէ այդ զբոյցի ընթացքին Բրիան ինքը որէտք համարեց չօշափել Յունա-թիւրքական հաշտութեան Հարցը, մենք, բնականապէս, այլ խնդիրների կարդին եւ իր տեղին կը դնենք և Հայաստանի ինդիրը ձեր ուղած եղանակով : Բայց կրկնում եմ, Բրիանից է կախուած մեր զբոյցի հնազայ զարգացումը : Չափազանց ցաւալի է, չարունակեց Բալդացցի, որ Ամերիկ . Միացեալ նահանդները ձեռըն-

թուի եղան եւրոպական զործերից . Ամերիկան ձեզ խիստ համակրուժ է եւ կարող էր շատ բարիք անել ե՛ւ ձեզ ե՛ւ մեղ :

Ես — Ամերիկան ձևովաթիւնը մի փոքր պրորշեմատիկ է — Ամերիկացիք Եւրոպայից տարրեր գիւանագիտական ձեւեր ու սովորութիւններ ունին : Դժուար է իմանալ յաճախի թէ նրանք ե՞րբ Են ձևովաթիւններ ունին : Ամերիկայի ամառադաշտին, կարող եմ ասել, որ նրանք մեծապէս օգնեցին մեզ նորերս կիլիկիայի հարցում : Ֆրանսիական կառավարութիւնն անողաշոն կերպով ամերիկան կառավարութեան պարզ ու որոշ ցանկութիւնը լսեց չը լքել կիլիկիայի հայերին վերստին թիւրքերու վայրագ քմահանոյքին : Եւ Բրիտանի կառավարութիւնը, որ շատ պատճաներ ունի յարդելու Ամերիկայի այդ միջամտութիւնը, ստիպուած եղաւ . Անգորայի հետ իր բանակցութիւնների ընթացքին թիւրքիայից լրական երաշխիքներ պահանջել յօդուահայրի, եւ միայն այդ պայմանով հանարաւոր է Փրանսիական զօրքերի կիլիկիայից դուրս բերուելը : Եւ քանի որ քեմալականները լսել անգամ չեն ուզում որեւէ կանարուի մասին թիւրքական համարուած որեւէ հողամասի վրայ, Փրանսիօ-թիւրքական բանակցութիւնները ձգձգուում են եւ կարծեմ հեռուու են վերջնական յաջողութիւնից :

Բալդացցի .— Զեր այս յայտնութիւնը շատ կարեւոր է : Բայտ իս վատ չէր լինի, թէ գուշ անենուէիք ամերիկան դեսպանի հետ այսաեղ՝ ճշգելու համար այսօր ամերիկան հետաքրքրութեան չափը ձեր խնդրում : Եւ յետոյ, Աւաշինկութիւնի Conference-ը կայ, ուր մենք Հարութիւնուած չենք : Ձէ՞ք կարծում, որ այն-տեղ հայկական եւ առաջարակ արևելիան հարցը կարող է շօշափուել : Գուցէ լաւ լինէր, թէ գուշ Ամերիկա մեկնէիք այդ առթիւ :

Ես — Մեր էլ մտածումը նոյնն է եւ հաւանարար կամ ես, կամ ընկերակցու Ամերիկա անցնինք : Մենք էլ յոյսեր ունինք եւ մեր ներկայացուցիչն Ամերիկայում այդ յոյսերը չի ժխտում :

Ներս մտաւ մի քարտուղար եւ մի հեռազբք պարզեց Բալդացցիին : Ետ կարդաց ուշադրութեամբ, մնաց մասածկու, ծալեց, զբունը զրեց, տպա դարձաւ ինձ .

Բալդացցի .— Թիւրքերը Փրանսիացիներին մի քանի անգամ խարեցին եւ նոյնիսկ կիլիկիայում նրանց դէմ զէնք բարձրացրին — ձեզ տարօրինակ չի թւում այս պարագան, երբ Ֆրանսիա այսօր թիւրքի միակ պաշտպանն է հանդիսանում : Ես կարծում եմ, շարունակեց Բալդացցին, թիւրքերը յենուում են սովորական մուսաստանին, եւ նրանց անհաշտութիւնն այլ հիմք ունենալ չի կարող :

Ես .— Անշուշտ, այդպէս է . եւ այն կայ, որ թիւրքերն, ինչպէս ասացի, կիլիկիայում որեւէ սահմանափակումն չեն ընդունում իրենց գերիշխանութեան . իսկ Փրանսիացիք առանց այդպիսի սահմանափակումի կիլիկիա քշել չեն կարողանում . եւ նրանց բանակցութիւնները տակաւին կարող են շարունակուել նորանոր անակնկալներով :

Բալդացցի .— Այս բոպէին ստացածս հեռազիրն այդ մասին է, եւ ես քեզ կը կարգամ խիստ confidential կերպով, ի Հարկէ : Նա կարգաց, թէ Ֆրանսիայի եւ Անգլարայի մէջ կնքուել է զանազբք կիլիկիայի եւ Սիւրիայի վերաբերմամբ, բայց այդ համաձայնութիւնը ուժի մէջ է մտնելու Անգլարայի Մեծ ժողովի վաւերացումից յետոյ : Ի՞նչ կ'ասէք այս մասին :

Խս. — Պ. Նախարար, Փրանսիացիք որան տառամ են սոն de cloche, որ նոպատակ ունի թուլացնել ձեր համաձայնութեան շամսերը Փրանսիական կառուվարութեան հետ։ Այդ համաձայնութիւնը ինքուած է ձեր զալու առթիւ, սակայն, քանի որ Անգլարայի Մեծ ժողովի վաւերացումից է կախուած նրա արժէքը, հաւանաբար նորից ամէն ինչ ջուրն ընկնի, ինչպէս մի քանի անգամ եղած է արգէն։ Սպասելու ենք հետեւանքներին, կարծում եմ վաղաժամ է անհանդիստ լինել։

Այս պահուն ներս մտաւ նախարարապետ Գունարիս. Բալզացցին ինձ ներկայացրեց, ապա վիտսադարձ սիրալիք ողջոյնից յետոյ՝ խօսակցութիւնը շարունակուեց. Բալզացցին զեկուցեց Գունարիսին մեր զրոյցի էական մասերը. նախարարապետն իր կողմից լիակատար համաձայնութիւն յայտնեց։

Խս. — Մեր ներկայացուցիչ պ. Զայեան նորերս զրած էր ինձ Յունա-հայկան գործակցութեան մասին պրոպագանդի եւ դիւնազիտական քայլերի համար արեւմուտքում։ Աւելորդ է ասել, որ մենք համաձայն ենք եւ ես իսկոյն հեռագրով հազարգեցի արդ պ. Զայեանին։ Դուք զիտէք, սակայն, որ մեր աղդեցութիւնն ու միջոցները շատ փոքր են այդ նոպատակի համար. մենք ձեզ վրայ ենք յենուելու։ Մեր կարծիքով, զիտաւորը մեր հայեացքների ներդաշնակութիւնը պիտի լինի Սեվրի դաշնագրի մասին։ Հնորհակալ կը լինիմ, եթէ այս մասին ձեր մտածումներն իմանամ. դուք զիտէք, որ Լոնտոնի վերջին Conference-ը մեզ Home National-ը առաջարկեց, իսկ մենք շարունակում ենք պաշտպանել Սեվրի դաշնագրի բարձրացնելու ենք այնքան ժամանակ, քանի զիւանապիտական այդ ակաց ուրիշով փոխանակուած չէ։

Բալզացցի. — Մեր համոզումով զա միակ ուղին է հաստատուն գործունէութեան. Սեվրի դաշնագրի թէ եւ տակաւին չէ վաւերացուած, մնում է միակ իրաւական հիմունքը ձեր եւ մեր պահանջների. եւ մեր կարծիքով, թէ այն փոփոխուելու է, զա պիտի լինի միմիտյն յօդուա քրիստոնեայ ժողովուրդների եւ ոչ յօդուա պարտուած ու յանցաւոր թիւրքերի։

Գունարիս. — Ի գէպ, այս Home National-ը, Սեվրի դաշնագրի հետ ինչպէս են հաշտեցնում Դաշնակիցները այս Home-ը։

Խս. — Որչափ կարողացանք հասկանալ, անդամ մեր բարեկամ անդլիւցիք Home-ը նկատում են միանգամայն թիւրքիայից անկախ, ինքնավար մի երկիք, որ հետագային պիտի միանայ Հայաստանի Հանրապետութեան. այս իմաստն ունէր փետրուարին Լոնտոնի Conference-ի որոշումը եւ նոյն մաքով որոշում ընդունեց Ազգերի Լիդոյի Համաժողովը։ Home-ը մէջտեղ նետուեց Հայաստանի Հանրապետութիւնը ուսւ բոլչեւիկների ձեռքով զրաւուելու պատճառով։ Հօվտնաւոր պետութիւնները կարծում են, որ սովորուների գոյութիւնը ժամանակաւոր է, եւ նրանց անկումով Սեվրի դաշնագրը Միացիալ Հայաստանի վերաբերմամբ կ'իրականանայ զրեթէ աւտոմատ եղանակով։ Ահա թէ ինչո՞ւ Home-ի հեղինակները այն չեն նկատում Սեվրի դաշնագրի հակառակ, այլ ժամանակաւոր մի դրութիւն գէպի Միացիալ Հայաստան։ Բաւական է, որ Home անուանուած հայ երկրամասը թիւրքերի ձեռքից դուրս գայ եւ իսպառ անկախ լինի։

Այսքանով վերջացաւ մեր զրոյցը, որ տեսեց մի ժամ մի քանի ըստէ։ Այս նուհետեւ Գունարիս եւ Բալզացցի խօսացան ինձ հետ տեսնուել Բրիտանի հետ տեսնուելուց յետոյ։ Միաժամանակ նրանք ինձ ասացին, որ Հռոմ եւ

Լոնդոն են գնալու ու ցանկութիւն յայտնեցին, որ Էս էլ Լոնդոն զնամ իրենց այնոնք եղած ժամանակ :

Այս երկարաւեւ զրոյցից իմ տպաւորութիւնս այս է —

1) Յոյն կառավարութիւնը միապէս բմբոնում է Հայ-յունական շահերի համերաշխութիւնը :

2) Դէպի Կովկաս թուրքական ծաւալումի վասնզը նրանք նախատեսում են և Անկախ Միացեալ Հայաստանի գոյութիւնն ու ամրազնդումը նկատում են Յունաստանի ապագայ ապահովութեան խնդիր :

3) Կնքուելիք դաշնազրի մէջ նրանք կ'ուշխատին Հայաստանի ապահովութիւնը պահանջել, եթէ, ի հարկէ, ողէաք եղած աջակցութիւնը դանեն Անդմայից կամ միւսներից .

4) Իրենց ներկայ կացութիւնը շատ կայտն ու փայլուն չէ, շատ կ'ուզէին Ամերիկայի միջամտութիւնը տեսնել, Արեւելեան խնդրում .


5) Երկու նախարարների նպատակն է բարեացակամ մթնոլորտ ստեղծել Ֆրանսիայում, և դժգահ չեն լինի, թէ Բրիտանի հետ զրոյցի ընթացքին նրանց mediation (միջնորդութիւն) առաջարկուի, արին շատ չեն սպասում, բայց փնտում են անուղղակի կերպով :

« Գ. Գ. — Նոյն օրը երեկոյան եղայ մէր բարեկամ վեկտոր Բերարի մօտ այս տեսակցութեան մասին խօսեցի, եւ նու բառ առ բառ ասաց ինձ հետեւեալը .

) Si d'ici en huit jours Constantin n'abdique pas la Grece n'obtiendra rien en France, qui ne veut pas oublier l'assassinat de ses marins. Constantin a promis et il doit se retirer. C'est la dernière chance. Gounaris a fait un immense mal à son pays».)

Հոկտ. 21, 1921, Պարիզ

*) Եթէ առկէ ութը օրուայ ընթացքին Կոստանդինը հրաժարական չտայ, Յունաստանը ոչինչ ձեռք չի բերեր Ֆրանսայի մէջ, որը չուզեր մօռնուլ նաւասիներու սպանութիւնը : Կոստանդինը խոստացեր է և պարտաւոր է քաշուիլ : Առիկա վերջին պատեհութիւնն է : Կոնսարիու ահաւոր չարիք զործեց իր երկրին : ԱՄԲ .



ԱՐՏԱՐԱՊՈՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵԽ ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵՑ՝ ԱԽԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ



ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՅՈՅՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԳՈԽՆԱՐԻՍԻ ԵՒ ԱՐՏ. ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ
ԲԱԼՏԱՑԻ ՀԵՏ

Լոմտոն, Յոյնեմբեր 1, 1921

Այսօր երեկոյեան ժամը 5½-ին տեսհուեցի յոյն նախարարներ Գուհարիսի եւ Բալտացիի հետ : Ներկայ էր դեն . (զօրավար) Բաղրատունին :

Մէկ ժամ աեւող զրոյցից այն տպաւորութիւնը ստացայ, որ յոյները դժուարութիւն մէջ են : Ֆրանկո-քեմալական համաձայնութիւնը աւելի եւ մեծացրել է նրանց դժուարութիւնները : Նրանց ասելով՝ Բրիտանական կառավարութիւնն ու Հասարակական կարծիքը ամէն զնով խաղաղութեան կողմնակից են : Կ'ուղէին, որ մենք հայերս մեր զիւտանագիտական և պրոպագանդայի ճիշերով Արեւելեան Հարցի լուծումը փութացնենք ու հեշտացնենք :

Բալտացիի կարծիքով՝ Կիլիկիայի Հայութեան Համար ստեղծուած ծանր կացութիւնը ֆրանկո-թիւրք Համաձայնութեան հետեւանքով՝ յուղիչ նիւթ կարող էր լինել անզլ . Հասարակաց կարծիքի համար՝ Նա կ'ուղէի նոյնիսկ, որ Յունաստանի գրաւած վայրերի Հայութիւնը (Զմիւռնիա) հեռազրելով Լոնդոն եւ այլուր՝ իր բոլոր յայտներ թիւրքական տիրապետութեան որեւէ հնարաւորութեան դէմ : Նորից ու նորից խորհուրդ էին տալիս մեզ Ամերիկա պատուիրակութիւն դրկել եւ այսուղ եռանգով զործել :

Այս բոլորից հեշտ էր Կլրակացնել, որ նրանք դժուարութիւններ ունեն եւ, Հակասոկ Բրիտանական կառավարութեան բոլոր Համակրանքին, զգում են, որ իրական օգնութիւն չեն ստանայ եւ որոշ յոյսեր են կտպում Հայերի գործակցութեան եւ աջակցութեան՝ հետ :

Իմ Հարցին թէ իրենց զրոյցի ընթացքին խօսք եղե՞լ է Հայաստանի մասին՝ Բալտացի պաաստիանեց թէ յաճախ, եւ որ Բրիտ. բարձր շրջանակների արամադրութիւնը շարունակում է մնալ Համակիր Հայերին : Սակայն, նա աւելացրեց, որ այս հանգամանքը մեղ պէտք չէ լիտպէս գոհացնի : Եթէ Անդլիա եւս, Ֆրանսիայի եւ Իտալիայի օրինակին հետեւելով, ստիպուած լինի անջատ Համաձայնութիւն կնքել թիւրքերի հետ, վտանգ կայ, որ Հայաստանի խընդիւր կարող է զուրս մնալ եւ մենք կարող ենք զու զնալ : «Ահա թէ ո՛ր վտանգի դէմ զուք պէտք է պայքարէք» : Նա աւելացրեց ստկայն, որ Բրիտանի վերաբերք առաջ Արեւելեան խնդիրը մէջտեղ պիտի հանուի եւ որ դա մի բարեյաջող պարագայ է, քանի որ հնար կը տայ մեղ (Հայերին եւ յոյներին)

աշխատելու : Ասաց նաև, որ Անդրիան ճիզ պիտի թափի Արեւելեան հարցը կարգադրել միւս երկու դաշնակիցների հետ համախորհուրդ եւ միարան :

Յոյն նախարարները այսուղից զնում են՝ Հոռմ :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԻԲՆԿՑՈՐ ՕՍԹՈՐՆԻ ՀԵՏ

Լոնդոն, նոյեմբեր 2

Ես պատմեցի նրան Կարսի վերջին ոռւս-թիւրքական համաձայնութեան մանրամասները եւ ծանրացայ թիւրքերի կողմից Կովկասի գրաւման կարելիութեան եւ նրանից ծագող վտանգների վրայ :

Այս խնդիրների չուրջը բաւական երկար մաքերի փոխանակութիւնն եւ դաւ, որի ընթացքում, ես քարտի (քարտէզի) վրայ ցոյց տուի Սովետական Հայաստանի եւ Քեմալիստ թիւրքիայի միջեւ հաստատուած սահմանադիմը եւ նրա քաղաքական ու սաղմական նշանակութիւնը :

Զրոյցի նիւթ եղաւ նաեւ ֆրանկո-թիւրք վերջին համաձայնութիւնը եւ նրանից առաջ դալիք տհագին վուանգը Կիլիկիայի հայութեան համար, որ ձգում է անպաշապան թիւրքերի քմահանգըքին :

Ես դրեցի վերջում հետեւեալ կոնկրետ հարցելը.

ա) Ի՞նչ կը լինի Բրիտ. կառավարութեան դիրքը թիւրքիայի նոր առաջիսաղցութեան պահում դէպի կովկաս, դէպի Բաղու :

բ) Հնարաւո՞ր է Մեծն Բրիտանիայի անջատ համաձայնութիւնը թիւրքերի հետ, նման ֆրանսիականին :

գ) Այդպիսի համաձայնութիւնը կարո՞ղ է Հայկական հարցը դուրս թողնելու գոտի լինել :

Օսրոբնը պատասխանեց .

1) Եթէ թիւրքիան արշաւի Անդրկովկաս, Անդրիան հաղիւ թէ հնար եւ միջոց ունենայ այդ արշաւանքը խափանել: Դա շատ ցաւալի կը լինի, բայց ինքը սիրում է պատրանք չթողնել:

2) Անդրիան բնաւ որամադիր չէ որեւէ անջատ խաղաղութիւն կնքել թիւրքերի հետ, որովհետեւ նա առանձին նիւթական շահեր, առանձնաշնորհաւմներ չի հետամտում, այլ քաղաքական շահեր: Անդրիան Արեւելեան Հարցը կը լուծի Դաշտիկիցների հետ համերաշխի:

3) Եւ հետեւապէս Հայկական հարցը որովհ Սեվրի դաշնագրի ընդունած խնդիրներից մէկը, չի կարսղ գուրս մնալ եւ չոչտք է գուրս մնայ, այլ իբ լուծումը կը ոտանայ ամբողջի հետ միասին: Եւ, աւելացրեց վերջում, «վախենալու պէտք չունիք»:

4) Ինչ վերաբերում է Կիլիկիային, Օսրոբնը կարծում է, թէ դա խաղաղութիւն չէ Ֆրանսիայի եւ թիւրքիայի միջեւ, դա մի մասնակի համաձայնութիւն է, որ դուրս է Սեվրի դաշնագրից :

Տպաւորութիւնս այն է, որ Օսրոբնը Փրանկեւթիւրք համաձայնութեան մասին իր իսկական զգացումը չարտայայտեց եւ այդ մասին արած իմ առաջարկութիւններին խուսափողական որատասխան տուեց :

Լոնդոն, 8 նոյեմբերի, 1921

Այսօր նոյեմբերի 8-ին տեսնուեցի Միացեալ Նահանգների Լոնդոնի դես-

պան Պ. Հարվէյի հետ։ Զրոյցի նիւթն էր Փրանկօ-թիւրք վերջին համաձայնութիւնը։ Ես պարզեցի մեր հայեցակէուը այսպէս—

1) Դաշնակիցները Կիլիկիան գրաւել են Հայերի ղինուորական աջակցութեամբ, որի փոխարէն Հայերին խոսացուած են լուրջ երաշխիքներ Կիլիկիայում։

2) Դաշնակիցները քաջալերել են Հայերի վերադարձը Կիլիկիա, եւ այսօր նրանց թիւը 150 հազար է այնակդ։

3) Ֆրանուիան Կիլիկիան գրաւել է յանուն Դաշնակիցների քրիստոնեաների պաշտպանութեան համար։

4) Կիլիկիայի խնդիրն առանձին չի կարելի կարգադրել. նա կարուած է Արեւելեան խնդրի եւ Հայոց Հարցի հետ։

5) Անջատ համաձայնութիւնները միաժամանակ զօրացնում են թիւրքերին եւ նրանց դաշնակից բոլշևիկներին եւ ամբաղնդում նրանց փոխազարձ դիրքը Կովկասում եւ Հայաստանում։

Այս բոլոր պատճառներով ես ստիպուած իմ յանուն Հայ աղջի բողոքել Փրանկօ-թիւրք համաձայնութիւնան դէմ, որ առանց որեւէ իրական երաշխիքի 150 հազար Հայութիւն յանձնում է թիւրքերի տիրապետութեան այն ժամանակ երբ նոյն թիւրքերը ո՛չ միայն թիւրքաց Հայաստանն են տիրում, այլ եւ անցեալ տարուանից հրով ու սրով գրաւեցին Կովկասուն Հայաստանի մի կարեւոր մասը։ Գիտեմ, որ Ամերիկան անմիջապէս չի մասնակցում ևրոպական զործերին, բայց նրա բորոյական աղջեցութիւնն ահազին է։ Եւ քանի որ պահապանը Ամերիկան է ներկայացնում Գերազոյն Առհճողում, պիտի խնդրէի իր աղջեցութիւնը զործ զնել, որպէսզի Դաշնակիցներն առ այժմ չզտրպեն Կիլիկիան՝ առանց իրական երաշխիքների քրիստոնեաների աղջահովութեան համար եւ, եթէ, վերջ ի վերջոյ, Կիլիկիան ձգուելու է թիւրքերին, դա պէտք է կատարուի այն ժամանակ միայն, երբ թիւրքերը կը զատարկեն թէ՛ Կովկասուն եւ թէ՛ թիւրքաց Հայաստանը եւ կիրազործնեն փոքրամասնութեանց իրական երաշխիքները Կիլիկիայում։

Հարվէյ. — Զեր բոլոր ասածները ես կը Հազորդեմ իմ կառավարութեան։ Ես պէտք չունիմ ձեզ ասելու, բայց դուք հասկանում էք անշուշտ, որ անգլօ-Փրանուիական յարաբերութիւնները չափազանց լարուած են եւ այսպէս շարունակուել չեն կարող։ Ի մօտոյ կը գումարուի Գերազոյն Առհճողութը, որին անդամ իմ ես։ Կ'ուզէի մօտիկից ծանօթանալ ձեր Հարցի հետ։ Շատ ուրախ կը լինէի ձեռքիս տակ ունենալ մի յուշաղիք ձեր խնդրի մասին։ Ես խոսանում եմ ձեզ՝ պաշտպանել ձեր շահերը ձեր ներկայացրած եղանակով Գերազոյն Առհճողութ։

Ես չնորհակալ եղայ դեսպանից, երախառակատութիւնս յայտնեցի Ամերիկայի մեծահոգի եւ առատաձեռն օգնութեան համար Հայաստանին։

Մի քանի օր յետոյ, ներկայացրի ող. Հարվէյին ընդարձակ յուշողիք Հայկական Հարցի մասին՝ ցոյց տալով միաժամանակ նրա լուծման պայմանները։

ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ

ԲՐԵՏԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԼՈՐՏ ԿԸՀՁՅՆԻ ՄՕՏ

Լոնդոն, նոյեմբեր 19, 1921

Այսօր՝ նոյեմբեր 19-ին, Լորտ Կըրպըն ընդունեց ինձ եւ Նորատունկեանին: Ինձ ընկերակցում էր մեր ներկայացուցիչ դեն. Բաղրատունի, իսկ Նորատունկեանին ող. Մալքոն:

Կըրպընի մօտ մեղ տոաջորդեց իր կարինեոփ վարիչ ող. Վանդիտառ:

Նորատունկեանի ցանկութեան անսալով՝ տոաջինը խօսք առաջ ես:

Ահարոննեան. — Միլորա, — ասացի, — հակառակ մեր խորին համոզումին, որ Յերանական կառավարութիւնը ձեռքից եկածը չի խնայում օգնելու հայ ժողովրդին մեր դատի այս ցաւալի օրերին, այնուամենայնիւ մեզ թուաց, որ պարտք ունինք Զեր յատուկ ուշազրութիւնը հրաւիրել Գրանկօթիւրք Համաձայնութիւնից բխող մի քանի հետեւանքների վրայ, որոնք հայ ժողովրդի բախարի վրայ ծանրանալու բնոյթն ունին: Այս անսակէտից պարտք եմ Համարում նկատել տալ, որ Կիլիկիան այսովէս, առանց իրական երաշխիքի, պարտելով եւ այն թիւրքերին ձգելով, Դաշնակիցները ձեռքից թողնում են մի թանկարժեք զրաւական, որ մենակ գուցէ բաւական լինէր թիւրքերին բռնազրելու Արեւելեան հարցը կարգադրող որևէ զաշնապիր: Մինչդեռ Կիլիկիան տիրապետելով՝ թիւրքերն աւելի ըմրուս եւ աւելի պահանջկուա կը դառնան: Թիւրքերի ուշազրութիւնից չի վրիպում անշուշտ այն պարագան, որ Կիլիկիան նրանք ստանում են Դաշնակիցներից ձիւդ մի շարաթ յետոյ այն միւս զաշնապիր, — Կարսի զաշնապիր, — որով Սովետ Ռուսաստանի ճնշման տակ Հայաստանը սովետականներին թողնում է թիւրքիային Կովկասեան Հայաստանի մէկ կարեւոր բաժինը՝ Կարսի, Արդահանի եւ Սուրմալուի ըրջանները: Այս զուգագիտութիւնը մեծապէս քաջալերիչ է թիւրքերի համար:

«Այս նշանակալից փաստը պիտի բարձրացնի թիւրքերի վարկն Արեւելը քում ի վնաս ընդհանուր խաղաղութեան եւ մասնաւորագիս ի վնաս մեր Հայ Դատի: Խուսափելու համար այս ցաւալի հետեւանքներից՝ կարծում ենք, «որ Դաշնակիցները չափակի պարագն Կիլիկիան՝ 1) առանց կանխաւ դատարկել տալու հայկական բոլոր հողերը թիւրքական եւ կովկասեան Հայաստանում, եւ 2) առանց իրական երաշխիքներով ապահովելու Կիլիկիոյ հայութեան առ զատութիւնը թիւրքական բռնութիւններից, ինչ որ խոստացուած է նրան բարգիցու:

«Անդրում ենք նկատի առնել որ Կիլիկիան իրենց ձեռքին ունենալով եւ զօր բանալով, յենուած այդ փաստի առաջ բերած իրենց նոր վարկին, թիւրքերն այսօր լրջօրէն սպառնում են եւ Կովկասեան հայութեան: Այս երկիւղը մտացածին չէ, եթէ խորհինք, որ բոլշեվիզմը մի ժամանակաւոր, անհաստատ կացութիւն է, որ կարող է ամէն բռոկէ քաշուել Կովկասից, ինչզեւս այդ եղաւ 1918 թուին, եւ այզպիսով կամաւ կամ բռնադատուած լքել Կովկասը թիւրքական քմահանոյքին:

«Մենք լուրեր ունինք, վատահելի լուրեր, որ Կարսի կոնֆերանսում ուսու Սովետը, այս պատահականութիւնն ի նկատի առնելով, փորձել է համաձայնութեան դաշտ թիւրքերի հետ Կովկասը նրանց թողնելու պայմանների՝ մա-

սին, ևթէ Ռուսիան կոտի բռնուի Անհասանի կամ Ռումանիայի հետ: Ես խնդրում եմ Հաւատով, որ ոռւսների Կովկաս պարզելը բնաւ անհնարին չէ, եւ ներկայ պարագաներում, երբ ո՛չ Արեւելքան եւ ո՛չ Հայկական Հարցն է լուծուած, երբ Հայ-թիւրք յարարերութիւնների սրութիւնը թիւրքերի վայրագութեան քաջալերիչ պիտի լինի, այսպիսի մի հետանկարը՝ ոռւսների քաշուելը Կովկասից՝ կը լինի Հայութեան Համար դարձուրելի կատաստորոֆա: Հայ ժողովուրդը, բոլցեւիկներին ատելով Հանդերձ, սարսափում է թիւրքի առաջխաղացման հետանկարից: Սակայն, ինչպէս ասացի, ոռւսների նահանջը Կովկասից կարող է տեղի ունենալ անսպասելի ժամին, եւ թիւրքական արշաւանքը նոյնպէս իր բոլոր սոսկալի հետեւանքներով Հայութեան Համար: Այս անոնի կատաստորոֆից աղատուելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է այլևս չճղճղել եւ հնար եղածին չափ արագացնել Արեւելքան ու Հայկական Հարցի լուծումը՝ Հայ-թիւրք յարարերութիւնները նորմալ դարձնելու համար: Այլոպէս թիւրքերը պատեհ առթից օգտուելով՝ մահացու հարուած կարող են հասցնել Հայ ժողովրդին, եւ միաժամանակ Համայն Արեւելքը շփոթի ու խոռվի մէջ կը ձգնա:

Լորտ Կըրպըն: — Իրաւունք ունիք, եթէ թիւրքերը վերստին արշաւեն դէպի Կովկաս ու Հայաստան, Հայութիւնը իսպան կը փշանայ (Լորտ Կըրպըն ձեռքի յուսահատ շարժում արեց դէպի վար): Մենք կ'աշխատենք փութացնել Արեւելքան խնդրի կարդարութիւնը: Ինչ վերաբերում է Կիլիկիային, դուք զիտէք, որ այդ շրջանը վերաբերում է Թրանսիբային եւ զուք պիտի զիմէք Բրիանին, Բերթըլոյքին: (Լորտ Կըրպընի ձայնի եւ շարժումի մէջ ցասկոտ, զաղուած հեղնութիւն կար):

Ահարոննեան: — Մընք նրանց հետ տեսնուել ենք, միլոր: Մեր բոլոր անհնդատութեան Կիլիկիոյ Հայութեան սպառնացող վատնպի մասին նրանք միայն մի պատասխան ունին՝ թէ մենք պէտք է վստահինք, հաւատ ունենանք դէպի թիւրքերի պարկեւառութիւնն ու խոստումը: Դուք զիտէք, սակայն, թէ ի՞նչ արժէք ունի թիւրքի խոստումը, երբ մանաւանդ՝ զա վերաբերում է քրիստոնեաների ապահովութեան: Միւս կողմից, քանի որ Կիլիկիան զրաւուած է Փրանսիացիներից յանուն Դաշնակիցների, մեզ արդար եւ իրաւացի թուաց, որ դիմէնք բռնը Դաշնակիցներին եւ մասնաւորապէս Մեծն Բրիտանիայի կառավարութեան: Հայ ժողովուրդն այսօր պանդիկով բռնուած՝ մեզ է զիմուամ միջոցներ տալ իրենց զաղթելու: Գուցէ կարելի էր Փրանսիականի փսխարէն միջ-դաշնակցային զօրքերով կարգ պահպանել Կիլիկիայում մինչ չեւ Արեւելքան խնդրի կարդարութիւնը:

Լորտ Կըրպըն: — Հաւատացէք ինձ, որ ձեր խնդրով ես մեծապէս զրագուած եմ: (Աս խուսափողական պատասխան էր իմ կագեզարիկ առաջարկին):

Նորասունկեան: — Կիլիկիայի Հայ ժողովուրդը կուուել է այդ երկրի աղատավրութեան Համար Դաշնակիցների չարքերում եւ 150 հազար Հայութիւն, Դաշնակիցների խոսքին վստահած՝ ևկած Հաստատուած է Կիլիկիա: Այս ժողովուրդը նորից թիւրքերին յանձնելը նրանց ջարդել տալ կը նշանակի: Թրանկո-թիւրք Համաձայնութիւնն ամբողջ Արեւելքում պիտի ծառայի Դաշնակիցների վարկի նուազման եւ թիւրքերի քաջալերութիւն: Եթէ Թրանսիան Փինանսական զժուարութիւններ ունի, կարելի չէ՝ արդեօք խնդրի այդ Կող-

մը կարգադրել՝ փրկելու համար 150 հազար հայութիւնը։ Հաւատալ թիւրքերին անհնարին է։ Ես նրանց ճանաչում եմ մօտիկից, մասնաւորապէս քեմալիստ կոչուածներն վատթար աւազակներ են, բոլչեվիզմի բարեկամ, պանխաղմիսո, պանթուրանիստ։ Ցաւալի է, որ Ֆրանսիան թողեց Պոլսի սուլթանական օրինաւոր կառավարութիւնը եւ կապուեց այս աւազակների հետ։ Կիլիկիայի խնդրի այսօրինակ միակողմանի կարգադրութիւնը ամէն տեսակէտով աղէտաւոր է հայութեան համար։ Մենք պնդում ենք Սեվրի դաշնագրի վրայ եւ պիտի պնդեն։ Նա պէտք չէ թղթի կտոր դառնայ։ Աշխարհում տեսնըւած չէ, որ մի զաշնապիր մերժուի ո՞չ թէ պարլամենտներից, այլ սոորադրող կառավարութիւններից։ Եթէ Սեվրի դաշնապիրը պիտի փոփոխուի, նա պիտի կատարուի բոլոր սոորադրող պետութիւնների մասնակցութեամբ (առանց թիւրքիայի) եւ ոչ թէ այսպիսի միակողմանի ձեւով, ինչպէս Փրանկօթիւրք համաձայնութիւնն է։ Յետոյ, ես կը խնդրէի, որ մի միջ-զաշնակցային Յանձնաժողով մեկնէր Կիլիկիա՝ տեղի վրայ տեսնելու, թէ մինչեւ ո՞ր ասուիճան վտանգաւոր է թիւրքերին վստահիլ եւ ըստ այնու միջոցներ ձեռք տոնէր։

Լորտ Կըրպըն։ — Զեր բոլոր ասածները կարելի է երեք դիմաւոր մասի բաժանել։ — ա) Ֆրանկօթիւրք համաձայնութեամբ Մուստաֆա Քևալի կուժեղանայ ի վեա Դաշնակիցների։ Ես լիազէս բաժանում եմ այդ կարծիքը։ Դաշատ վտանգաւոր պարագայ է։ 2) Սեվրի դաշնապիր որեւէ փոփոխութիւն պէտք է Դաշնակից մէծ պետութիւնները միարան ու միասին կատարեն։ Ես եւս զտնում եմ, որ դա այդպէս պէտք է լինի եւ պնդում եմ Սեվրի դաշնապիր վրայ։ 3) Տարարախտարար Հիւսիսային Հայաստանն առաջման Սովետ է։ Ինչ վերաբերում է հարաւային Հայաստանին՝ դուք վուահ կարող էք լինել, որ առաջիկայ Համաժողովում ես այն կը պաշտպանեմ։ Հաւատացէք ինձ, որ Հայկական Հարցը, Հայերի իրաւունքների պաշտպանութիւնը, եթէ Հաւատում էք ինձ, Ես իմ ուժերը չեմ ինայի պաշտպանելու համար։ Մենք նոր ստացանք Փրանկօթական կառավարութեան պատասխանը մեր տուած նօտային։ Հաւատացէք ինձ, որ ես ամենառաշադիր եւ ամենակրկնած քննութեան ստայ յատկապէս Հայերին վերաբերեալ բաժինը։ Ես հայերին չեմ լքել, ինչպէս եւ Հայկական Հարցը։

Նորասունկեան։ — Կարո՞՞ղ էք հեռազրիլ Կիլիկիա, որ ժողովուրդը չգաղթի, մնայ իր տեղում։

Լորտ Կըրպըն (Մտածկուո)։ — Եթէ վախկուա են, կը փախչեն։ Բայց զերադասելի կը լինէր, որ քաջ լինէին ու մնային իրենց աեզերը։ Զեր կողմից կարող էիք հեռազրիլ այդ։

Ունկնդրութիւնը վերջացաւ, և բոլէ տեւեց։
Հրաժեշտի վայրէեանին ասացի։

Ահարոննեան։ — Միլորա, անցեալ տարի, մի այսպիսի ունկնդրութեան պահում Դուք բարի եղաք ասելու, թէ Հայ պետութեան ստեղծումը դուք ձեր կեանքի լաւազոյն գործերից մէկն էք համարում։ Զեր աղնիւ խօսքերը զիտէ մեր ժողովուրդը, նա սպասում է։

Լորտ Կըրպըն։ — Իրաւունք ունիք, ես չեմ մոռացել։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԱՆՉԻՏԱՐԻ ՀԵՏ

Լուսուն, 22 նոյեմբեր, 1921

Մեկնելուցու առաջ վերջին անգամ տեսնուեցի Լորտ Կըրպընի կարինէտի պլատուր Վանդիտարի հետ:

Զրոյցի նիւթն էր՝

1) Կովկասեան Հանրապետութիւնների հակարուշեւիկեան շարժման ձրդառները:

Ես ասացի, որ մեր ժողովուրդը, համոզուած հակառակորդ լինելով բոլշևիզմին, այնուամենայնիւ երկընարանքի կրիտիկական ըրջանում միշտ բոլշևիզմը կը գերազանի թիւրքից: Առաջինը չի կասորում, երկրորդը միայն կոտորել զիտէ: Մեր ժողովուրդի այս համոզումն այնքան անխախտ է, որ, հակառակ մեր բոլոր վատահութեան եւ հաւատին դէսի բրիտանական կառավարութիւնը, անգամ եթէ Լոնդոնից այդպիսի խորհուրդ տրուէր, Հայութիւնը բոլշևիկների դէմ չի դնայ այնքան ժամանակ, որ կը լինի թիւրքական սուաջաղացութեան արիւնուած հեռանկարը:

Վանգիստար. — Իրաւունքը ունիք, թիւրքերին չէ կարելի դերադասել բոլշևիկներից: Ես ուրիշ ասթիւ առել եմ եւ Զիսինկելիին: Այս պահուն բոլշևիկների դէմ որեւէ ձեռնարկ ձեր կողմից կը վերջանայ կատաստրոֆով ձեզ համար:

Ահարոննան. — Ոմանք կ'ուզէին այս ձեռնարկն առել թիւրքերի աջակցութեամբ և նոյնիսկ թիւրք հողի վրայ պատրաստել կազրեր թիւրք սպաներով: Մենք չենք ուզում քայլել այդ ճամբով եւ, վճռապէս, դէմ կը լինինք: Թիւրքերի հետ այդ ուղղութեամբ որեւէ ձեռնարկ, եթէ այն երբեւիցէ լինելու է, պիտի ստորագասուի Հայկական խողը լուծման և հայ հողերի վերտղարձին:

Վանգիստար. — Դուք ճիշտ գրիք խնդիրը. Յախ՝ Հայկական հարցի կարգադրութիւն, հայ հողերի վերադարձ, ապա՝ զբոյց այս մասին:

Ահարոննան. — Ձեր այս կարծիքը մեզ համար շատ թանկապին է եւ զուգագիպում է մերինին: Թոյլ տուէք, սակայն, մեր մի անհանգստութիւնն այսունդ պարզէլ: Ես իմանում եմ, որ այստեղ լոնգուում ըրջաններ կան, որոնք խորթ աչքով չենին զիտի, եթէ տեսնէին թիւրքերի մի նոր առաջխաղացումը դէպի Անդրկովկասի խորքերը, դէպի Բագու եւ թիւրքական հեգեմոնիք հաստատութիւնն այդ երկրների վրայ: Քատ ի՞ս՝ աւելի կարճամիտ ծրագիր դժուար է երեւակայիլ: Եթէ այսօր ուռւսներն այնոր լինին որ թիւրքը կարողանայ գրաւել կովկասը, հաւատացէք ինձ, որ նա հետաղուում կը զայ աւելի իրաւունքով, քան եթէ կովկասը մնար իր բնիկներին, հայերին, վրացիներին ու թաթարներին: Ռուսը կարող է, վերջ է վերջոյ, հասկանալ ու հաշտուիլ, որ կովկասը բնիկների սեփականութիւն գառնայ, բայց նա չի կարող հանդուրժել կովկասը թիւրքական: Թիւրքը կովկասում զիտի անվերջ յուզի թուսիայի ներսի եւ ըրջապատի մուսուլմաններին, եւ բնական է, որ Ռուսիան ըմբռուտանայ այս կարելիութեան դէմ: Կովկասեան ոկտութիւնները մինակ, առանց թիւրքի շատ աւելի հօմքեր ունին լեգալ ու juriditique, իրենց անկախ գոյութիւնն ընդունել տալու ուռւսներին քան թիւրքերի հետ, ու

բոնց մասնակցութիւնը այս արդար դատը, կովկասնան աղջերի սեփականութիւնը կը վերածուի մի վատ աւանտիւրայի: Հայ ժողովուրդը այսպէս է համոզուած եւ ամէն տեսակէտից նա չի կարող թիւրքական որեւէ առաջխաղացումն քաջարերել, եւս առաւել աջակցել ու գործակցել:

Վաճաղիստար.— Ես կատարելապէս ձեզ հասկանում եմ: Ես ուրախ եմ, որ դուք այդ ծրագրով էք զործելու: Ես շատ զոհ եմ, որ դուք տեսնուեցիք Լորտ Կըրպընի հետ: Ամէն տեսակէտից այդ շատ լաւ եղաւ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԶԿՈՆՆՈՐԻ ՀԵՏ

Լոնսոն, նոյեմբեր 23, 1921.

Զբոյցի նիւթին էր այդ դիմումը, որ մի խումբ բրիտանացի հայասէրներ մտադրած էին անել Բրիտանին Հայկական Հարցի համար:

Օկոննօր կամեցաւ իմ կարծիքն իմանալ այն մասին թէ՝

ա) Հարկաւո՞ր է այդ դիմումը.

բ) Բրիտան կը համաձայնի՞ ընդունել այդպիսի պատուիրակութիւն.

գ) Հայկական Հարցի ո՞ր կէտերի վրայ պէտք է ծանրանալ:

Առաջին Երկու կէտին ես տուի դրական պատասխան:

Գալով նիւթին, ես պարզեցի Օկոննօրին այն միտքը, որ միմիայն Կիլիկիայով կամ քրիստոնեաների պաշտպանութեամբ չպիտի բաւականանալ, այդ զնելու է զլիաւորապէս հայ պետութեան, թիւրքահայ հողերի անջատման ինդիրը թիւրքերից:

Նա համաձայնեց ինձ հետ: Դիմումը կատարելու էին Լորտ Բըայսի հետ:

(Շարունակելի)



ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՆԴՐ

ԵԽ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵց՝ ԱԽԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ



ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՎԱՐՉԱՊԵՏ Պ. ԲՐԵԱՆԻ ՀԵՏ

Պարիզ, 7 դեկտեմբեր, 1921

Այսօր ցերեկուայ ժամը 12-ին, արտաքին գործոց նախարարութեան շէնքի մէջ պ. Նորաատունկեանին եւ ինձ ընդունեց վարչապետ Բրիան մեր խնդրի համար :

Զրոյցի նկատման էք Փրանկօ-թուրք համաձայնութիւնը, կիլիկիայի պարումը եւ առհասարակ Հայկական խնդիրը :

Բրիան մենակ էր : Առաջինը խօսք առաւ Նորաատունկեան :

Նորաատունկեան . . . Պ. Նախագահ, մենք եկած ենք կիլիկիայի չարարաստիկ խնդրին ձևի հասնելու ու չնորհակալ ենք, որ բարի եղաք չուտափոյթ կերպով մեզ ունկնդրութիւն չնորհել : Դուք յիշում էք անշուշտ, պ. Նախագահ, որ ժամանակին, երբ դուք տակաւին վարչապետ չէիք, մեղ ասացիք, թէ Կիլիկիայի խնդիրը ձեր սեփական գործն է : Այն ժամանակից յետոյ, ահա մենք Փրանկօ-թուրք համաձայնութեան ծանր հետեւանքների տոջեւ ենք կանգնած : Տարաբախատարար, դուք բացակայ էիք, եւ մենք անկարող եղանք ժամ առաջ ձեր ուշադրութեանը յանձնել քանի մը կէտեր, որոնք, ըստ մեզ, կարող էին բարւոքիլ ստեղծուած ծանր դրութիւնը : Գոհ ենք, որ զէթ այժմ մէկ անհանդատութիւնները ձևկ կը յայտնենք : Ժամանակին մենք երկու յուշագիր ներկայացրինք Հանրապետական Կառավարութեան, որ զրկուեց զեն . Գուրօին եւ նրա հաճութիւնն իսկ ստացանք : Մենք ցոյց էինք տալիս կիլիկիոյ պրորեմը լուծելու արդար ու դործնական միջոցները : Եւ, սակայն, մնաց անուշաղիք : Այնուհետեւ դուք, պ. Նախագահ, Բէքիր-Շամիլի հետ համաձայնութիւն կնքեցիք, որը նոյնպէս աւելի տանելի էր : Այս նոր համաձայնութեան եւ հինք մէջ ահազին տարբերութիւն կայ ի վնաս մեզ : Եւ մեր գովուրդը վախում է սարսափած :

Պէտք է ասել, որ կիլիկիայի խնդիրն այնպիսի յուզում է պատճառել մէկ ժողովրդին, որ մեղ ամէն կողմից նեղում են յուսարեկիչ հեռազերերով, որոնք այսօր զէդ են կաղմում : Յաւալին այն է, որ մրանսիան համաձայնութիւն է կնքել Անգոռայի ժողովի հետ, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ոճագործների մի ժողովածու : Ես դրանց մեծ մասին անձամբ ճանաչում եմ : Շատերը քանի կնք տարուայ իմ պաշտօնավարութեան ընթացքին ձևոքիս տակով են անցել : Եւ կարող եմ վստահարար ասել, որ սակաւ բացառու-

թեամբ ամէնքը պանիստամբառ, պանթուրանիստ, ժանաւանդ օտարաստեաց յանցագործներ են, որոնց համար չկայ սրբութիւն։ Եւ մեր ժողովուրդը երեւակայել չէր կարող, թէ նորից այս մարդասպանների իշխանութեան պիտի ենթարկուի։ Սա մի սպասափելի պէտք է, որովհեաւ զրանք բարոյապէս սնանկացած, մի քանի անդամ սնանկ յայտարարուած մարդիկ են, որոնց հաւատալն այլեւս անհնարին է, մանաւանդ՝ որ իրենց բոլոր ոճինների համար ո՛չ միտյն որիւէ պոտոիժ չստացան, այլ սիրաշահուեցին, քաջալերուեցին։ Անցեալ մարտին Էռոդոնում Բէքիր Սամին եկաւ մի պատուիրակութեամբ, որի անդամներից երեքը յականէ յանուանէ յայտնի են որովհս իսկական ջարդաբարներ։ Բէքիր Սամիի ձեռքիրը հայ արեան մէջ չեն չաղախուած, բայց նա թուրք չէ, այլ չէրքէզ։ Մնացած երեքը իսկական մարդասպաններ։ Ի՞նչ պէս կարելի եղաւ, որ ևոյդ Զորջի եւ ալլոց հետ թէյի հրաւիրուեին։ Այս փառը հայ ժողովրդի սիրտը խոցեց։ Էլ ո՞ւր մնաց այն հանդիսաւոր յայտարարութիւնը, որով մէծ պետութիւնները պատասխանատու էին հոչակում այս շարագործներին հայերի կատորածի համար։ Ո՞ւր մնաց պատիժը։ Եւ այժմ, այս բոլորից յետոյ, Թրանկլին Բույոն մեզ հրաւիրում է վատահիլ, հաւատ ընծայել այս շարագործներին։ Մենք այդ չենք կարող անել, որ Նախագահ։ Անդորայի խոստումները կեղծիք են, վաստ խարէութիւն, եւ հայ ժողովուրդը զարհուրելիօրէն կը տուժի, եթէ հաւատ ընծայի նրանց խոստումներին։ Եթէ անմիջական կատորած էլ չանեն, հազար միջոց զիտեն փչացնելու հայերը։ Նրանք ամէնքը զաստիարակուած են Արդիւլ-Համբէդի ողիով, նրա ձեռքի տակ, իսկ յայտնի է, որ այդ զաման ուղիթանի զաստիարակութիւնն ու ողին առականութիւն էր։ Այս, Անդորայի ժողովը յայտարարել է քրիստոնեաներին ազատ զինուուրութիւնից . . .

Քրիան։ — Տեսնո՞ւմ էք, ահա՞ իմ հրաւանդների արդիւնքներից մէկը, եւ դեռ կան ուրիշները եւս։

Կարատունիկան։ — Այս։ — Բայց մինչեւ Ե՞րը։ Յետոյ, կան Re'quisitionները (բոնագրաւումները)։ Կան ծածուկ հալածանքները։ Կան անիրաւ զատարանները։ Կան աշխատանքի պատարուակով աներից, ընտանիքներից խըլուած երիտասարդները, որ էլ յետ չեն զալիս։ Ո՞ր մէկն ասեմ։ Նոր փորձների պէտք կա՞ր, այս բոլորն իմանալու համար։ Մենք պատրաստ ենք աջակցել մեզ խաղաղութեան, հանգստութեան գործին։ Բայց ո՞ւր է երաշխիքը մեր ժողովուրդի ապահովութեան։

Քրիան։ — Բայց դուք ի՞նչ կ'առաջարկէիք։

Կարատունիկան։ — Շատ ուրախ եմ, որ այս հարցը տուիք։ Այս բոլիքն իմ պաշտօնակից ող Աշարոնիան միշտ այդ հարցի պատասխանը կը տայ։

Քրիան։ — Դուք եւս պէտք է նկատի առնէք, պարոններ, որ այս համաձայնութիւնը կնքել մենք ստիպուած ենք եղել։ Թրանսիսայի դժուարութիւններին ծանօթ էք։ Մեր միջոցները չեն ներում Արեւելքում այդպիսի մէծածախս բանակ պահել։ Ոչ մի պարլամենտ չի կամենայ մեր պայմաններում այդ բանակի բիւածներից վերէարկել։ Մենք այնուամենայնիւ սպասեցինք մինչեւ վերջին կարելիութիւնը։ Աւելի սպասել մեզ համար, հաւատացէք ինձ, անհնարին է, մեր ուժերից վեր է։ Հաղարներով զահ առելինք կիմիկային եւ միլիոններ ծախսեցինք։ Սպասեցինք յունական արշաւանքին՝ յուսալով թէ նու լուծում կը բերի հարցին եւ մենք կը կարողանանք քաշել մեր զօրքերը։

Բայց տեսանք, որ թուրքերը նրանց յետ մղեցին, և սպասելի է, որ զարնանը նրանց գուրս կը քշեն նաեւ Զմիւռնիայից։ Արդ՝ երբ թուրքերը վերջացընեն յոյնի հոյների հետ, բնական է, որ պիտի պատերազմը զարձնեն մեր դէմ։ Իսկ մենք բնաւ ցանկութիւն, միջոց, հնար չունինք թիւրքերի հետ պատերազմելու։ Մեր երկերը այսպիսի պատերազմ չի ընդունի, չի հասկանայ, չի կամհայ։ Ի՞նչ էր մնում մեղ անել այս պարմաններում։ Փամ առաջ վերջացնել թիւրքերի հետ հաշտութիւնը և գուրս քաշել մեր զօրքերը կիլիկիայից, ուրեւ, ըստ Անվրի դաշնագրի, վերջ իվերջոյ մենք պարտական էինք նրանց վերապարձնել։ Պալով Հայերի ապահովութեան, խնդրում եմ հաւատալ, որ մենք պէտք եղած միջացները չեռք ենք տեղ, մեր պաշտօնեանները այնակղ ևն՝ հսկելու համար այդ ապահովութեան պայմանների իրազործման։ Ահա տեսնում էք, արդէն առաջին նշանը՝ քրիստոնեանները չպիտի զինուորազըրուին։ Սա լաւ փաստ է։ Կը լինին եւ նորերը, հաւատացէք ինձ։ Եւ, վերջապէս, պէտք է կարծել որ թիւրքերն էլ այնքան յիմար չեն, որ ներկայ պայմաններում ջարդ կազմակերպեն եւ խսպառ փշացնեն իրենց զործը՝ ամրութեւրոպան իրենց գէմ հանելով։ Ո՞չ, նրանք այդ չեն անի այժմ։ Ապադայում դա այլ խնդիր է։ Բայց զրա համար ժամանակ կայ։ Շուտով Գերազոյն Խորհուրդը զումարուելու է, եւ ևս ձեզ խսուանում եմ այս հարցը այնակղ աանել եւ ապահովել խոպառ քրիստոնեանների կեանքն ու աշխատանքը։ Բայց ասացի, որ մենք սպասել չէնք կարող։ Ֆրանսիան շատ գժուարութիւններ ունի։

Ես. — Ֆրանսիայի ծանր գրութեան ժամին խօսեցիք, պ. Նախազահ, եւ թէ այդ զրութիւնն է պատճառը, որ կիլիկիան այսքան ժախող պարմաններում յանձնուած է թիւրքերին։ Մենք, որ Ֆրանսիան մեր երկրորդ Հայրենիքը համարեցինք, սիրեցինք և սիրում ենք, մենք չենք, որ կարող ենք անդիտանալ այդ գժուարութիւնները։ Բայց զրա հետ միաժամանակ, ի՞նչպէս ձեր ուշադրութեանը չյանձնենք մեր ազգի, հայ ժողովուրդի թշուառ, անտանելի գոյութիւնը, որի վրայ այսօր աւելանում է կիլիկիոյ աղէտը։ Կիլիկիոյ բնակիչ Հայերը այսօր ծովերի վրայ թափառական, զլութ զնելու տեղ չունին, ինչպէս համայն հայութիւնը։ Պ. Նախազահ, թոյլ տուէք ձեղ ասել, որ մենք այսօր ձեղ բերում ենք համայն հայ աղջի սուզը եւ ողբը։ Թոյլ կը տա՞ք ինձ անկեղծ լինել։

Բրիան. — Խնդրում եմ։

Ես. — Այդ արցունքը ո՞չ միայն մեր ցեղի հակառազրի համար է, այլ նաև Ֆրանսիայի վարկի արեւելքում կրած այս ծանր հարուածի, այս մեծ նուազացումի համար։ Ֆրանսիայի վարկի նուազացումը, որ մենք ողբում ենք, նաև մեր սեփական նուազացումը, որովհետեւ մենք զարերով Ֆրանսիայի վարկին վարած մնացինք մեր բախառվ։ Ներեցէք ինձ, բայց ես չեմ կարող չլիւշեցնել այսօր, որ այն մեծ աւանդութիւնը, որով մենք դաստիարակուեցինք եւ որով քրիստոնեանները արևելքում Ֆրանսիայի ազգեցութեան մէջ էին գտնում իրենց իրական հովանին, այս դարաւոր աւանդութիւնը այսօր խողան չքացու։ Ահա դարձեալ մի արիշ ցաւը մեր ժողովրդի, որ Ֆրանսիային հաւատաց ու Ֆրանսիան սիրեց։ Սակայն, աղէտը տեղի ունեցաւ, փառը կատարուած է, ֆրանսիական զօրքերը դաստիարակել են արդէն կիլիկիան և հայ ժողովուրդը փախչում է այնտեղից ուշակորոյս։ Դուք մեզ հարցնում էք,

թէ մենք ի՞նչ միջոց կ'առաջարկենք այս աղբուր դարձանելու : Նախ քան այդ՝ ներեցէք, որ այստեղ վեր հանեմ մի զուգաղիպութիւն, որ Կիլիկիոյ խնդրի վրայ առանձին լոյս է սփոռում : Այս տարի Հոկտեմբերի 13-ին կարսում տեղի ունեցաւ Քեմալիստ թուրքերի և Մոսկուայի Սովետի ներկայացուցչների մէջ մի ժողով, ուր թիւրքերը կարողացան Մոսկուայի օդնութեամբ ընդունել տալ հայ թշուան Սովետին մի դաշնագիր, որով Կովկասիան Հայաստանի մի խոչսր բաժինը՝ Կարսի, Արդահանի, Կաղզուանի, Սուրմալուի շրջանները անցնում են թուրքերին : Այդ շրջանների հայութիւնը անցեալ տարւայ Դեկտեմբերից արդէն թիւրքերն իսպան ցրիւ տուին ու ջարդեցին, 8000 հայ երիտասարդներ քշեցին թիւրքիա և մօտ օրերո նրանցից յետ եկաւ միայն 700, մասցածը ջարգել են : Արդ՝ Կարսի այս դաշնագիրից մի շարաթ յետոյ, կնքում է ֆրանկօ-թիւրք համաձայնութիւնը, որով թիւրքերին թողնում է նաև Կիլիկիոն : Զէ՞ք զանում, ող. Նախագահ, որ այս պարագան քաջալերիչ պիտի հանդիսանայ թիւրքական պանմուրանիստ ձգտումներին, որի ճամբարն բանալու համար է, որ թիւրքերը զրաւնցին կովկասիան Հայաստանի մի մի խոչսր մասը :

Բրիան .— Բայց ներեցէք, ոտ մի խնդիր է, որ պիտի դայ Գերազոյն Աորհըրդի առաջ, և անջուղու մեծ պետութիւնները ոկտոք եղած միջոցները ձեռք կ'առնեն՝ այդ խնդիրը կարգադրելու համար : Կիլիկիոյ հարցը մի ուրոյն դործ է, որ ոկտոք էր կարգադրել այժմ :

Աս .— Պ. Նախագահ, իրաւունք ունիք, ինձ զուք յայտաբարեցիք, որ Կիլիկիան թողիք թիւրքերին, համաձայն Սեվորի դաշնագրի : Արդ՝ նոյն դաշնագիրը ևթէ Կիլիկիոն թողել է թիւրքերին, թիւրքիայի մի խոչոր բաժինն էլ թողել է հայերին : Մեզ թւում է, որ արդար չէ իրազործել Սեվորի դաշնագիրը թիւրքերի համար, և զլանալ նոյնը հայերին : Մեզ թւում է, որ Կիլիկիան թիւրքերին յանձնելուց առաջ կարելի էր նրանց պայման գնել, որ Կիլիկիան կարող են ստանալ միայն այն ժամանակ, երբ կը գտարկեն Սեվորի դաշնագրով Հայաստանին յատկացուած հողերը : Բայց կատարուած է ճիշդ դրա հակառակը . թիւրքերը մի շարաթ առաջ մի նոր դաշնքով իրենց են վերապահում ո՛չ միայն թիւրքաց Հայաստանը, այլև կովկասիան Հայաստանի մի խոչոր բաժինը, և մի շարաթ յետոյ, կարծես որպէս քաջալերութիւն այս անիրաւութեան, ստանում են եւ Կիլիկիան : Վերջապէս, փաստը կատարուած է : Անօգուտ է մեղնից հաւատ սպասել գէպի թիւրքերը : Գեներալ Գուրօ կոչ է անում հայերին եւ, Մուստաֆա Քեմալի Chevaleresque բնաւորութեան զովքը անելին վերջը, Հրաւերուած է հաւատալ նրա խոստումներին : Ո՛չ, ող. Նախագահ, Անզարայի խոստումներին մենք չենք կարող վասահիլ : Թո՞ղ Ֆրանսիան իշխանութիւնների ձեռքին է, շարունակի մնալ թիւրքերի իշխանութիւնից ազատ, որպէս հայութեան առաստան, մինչեւ որ Կիլիկիոյ հարցը կարգադրուի եւ հայերը կարողանան դառնալ իրենց օջազները :

Բրիան .— Բայց զա միեւնոյնն է, եթէ գուրօն է տառւմ :

Աս .— Դա միեւնոյնը չէ : Նա մեզ հրաւերում է հաւատալ թիւրքերին ոչ թէ ֆրանսացիներին : Կը խնդրէինք այժմ գէթ Դեօրթ-Եօլու շրջանը, ուր այսօր հաւաքուած են Կիլիկիայից հալածական հայերը, և որ տակաւին ֆրանսիական իշխանութիւնների ձեռքին է, շարունակի մնալ թիւրքերի իշխանութիւնից ազատ, որպէս հայութեան առաստան, մինչեւ որ Կիլիկիոյ հարցը կարգադրուի եւ հայերը կարողանան դառնալ իրենց օջազները :

Բրիան — Ես արգէն խեկ հրահանդ եմ տուել, որ մեզ մօտ լոյն ընդունելութիւն անեն բոլոր խոռափող հայերին եւ դիւրութիւններ տան ու տեղաւորեն։ Դուք գիտէք անշուշտ, որ չառ տեղ նրանց չեն ընդունել։ Բայց ֆրանսիան չի կարող անտարեր մնալ եւ պիտի հիւրընկալի նրանց։

Ես — Մենք կը խնդրէինք մէկ կամ երկու հայ պաշտօնեայ անուանել անդամ Կիլիկիա մեկնած Փրանսիական Mission-ի եւ այսպիսով գուցէ կարելի լինի մի փոքր վտանգութիւն ներշնչել խուժազած ու սարսափած հայութեան։

Բրիան — Այո՛, դա մի զաղոտիար է, որ կարելի է ուշադրութեան առնել։ Բայց եթէ դուք այս բոլոր կէտերը գրաւոր տայիք ինձ, դա չառ կը հեշտացընէք գործը։

Ես — Մենք գրած ունինք, պլ. Նախագահ — (Ես տուի Բրիանին մէր պատրաստած Aide Memoire-ը (յուշագիրը))։

Նարանութեան — Մեզ անհասկանալի մնաց, պլ. Նախագահ, որ Կիլիկիոյ պարզումը կապուեց Փինանսական զժուարութիւնների հետ։ Մինչդեռ Կիլիկիան լաւ ճանաչող պաշտօնեաններ, ինչոքն գնդապետ Բրեմոն, հաստատում են, որ Կիլիկիան իր արգիւնքով կարող էր լիովին գոհացնել տեղական զօրաբաժնի պէտքերը։ Մեզ թւում է, թէ ծախքերը մեծաքանակ աւելի շատ Սիւրիոյ զրաւող բանակի վրայ էր, քան Կիլիկիայի։

Բրիան — Օ, ոչ. Կիլիկիան ահազին ծախքով ծանրացած է մէր բիւդչէի վրայ. իսկ մենք խաղաղութեան այս պահում, իրաւումք չունինք մի սու խեկ ծախսել։ Բայց, վերջապէս, ես նորից կրկնում եմ մօտիկ ժամանակում զումարուելու է Գերազոյն Խորհուրդը, եւ ես խոստանում եմ մեզ պաշտպանել ձեր շահերը։ Արգէն Գաշնակիցները համամիտ են ամէնքն էլ այս կէտում։ Եւ վատահ եղէք, մենք մի ծոցներ ձեռք կ'առնենք հայ ժողովրդի ապահովութիւնը հաստատ հիմքերի վրայ դնելու համար։

Ես — (Զերօնէն, ամէնիս ոսքի)։ Ոչ, պլ. Նախագահ, այլիւս խօսքը «մէր ժողովրդի ապահովութեան» մասին չի կարող լինել Գերազոյն Խորհրդի առաջ, այլ հայ պետութեան, որ մեզ խոստացուած է կազմել թիւրքական հոգերի վրայ՝ հետազայում Միացեալ Հայաստան գառնալու համար Կովկասիան Հայաստանի հետ։ Գերազոյն Խորհուրդը, պլ. Նախագահ, մեզ համար սահմաններ զծեց՝ տառնց Հարցնելու մեզ թէ համաձայն ենք որոշման։ Ապա՝ մի ջնորդ-իրաւարար զտաւ յանձնին Միացեալ Նահանգների նախագահ վելսոնի, զարձեալ տառնց մեզ Հարցնելու։ Վերջապէս, մի ամբողջ զաշնաղիր կազմեց, որով ընդունուէր մէր անկախութիւնն իրը պետութիւն եւ մեզ հրաւիրեց սոորագրել։ Մենք լուինայն սոորագրեցինք եւ ընդունեցինք բոլորն, ինչ որ Մեծ պետութիւնների՝ մէր զաշնակիցների կամքը մեզ թելազրեց։ Արդ՝ այժմ այլիւս մէր համոզումով ոչ թէ «հայ ժողովրդի ապահովութեան» մասին է, որ պիտի հողայ Գերազոյն Խորհուրդը, այլ Սեվրի զաշնագրի որամադրութեամբ, հայ պետութեան հաստատութեան ու ապահովութեան։ Ինչոքն ոք, ըստ ձեր ասութեան, Սեվրի դաշնագրի հիմոն վրայ խաղաղ ձեւով Ֆրանսիան յանձնեց թիւրքերին Կիլիկիան, ճիշդ նոյն դաշնագրի հիման վրայ մէնք սպասում ենք, որ Ֆրանսիան պիտի աշխատի խաղաղ կերպով թիւրքերից զատարկել մեզ յակատացուած հոգերը։

Բրիան — (Ընկերութեան ու նեղուած տանով) Շատ լաւ, չառ լաւ, ի հարեւել ...

Նորատունիեան .— Պ. Նախազահ , գուք բարի կը լինիք թոյլ տուլ մեղ Կիւլիկիոյ և առհասարակ Հայկական խնդրի մասին ձեզ ներկայացնել մի մանրամասն յօւշադիր՝ այդ Հարցերի լուծումը Հեղուացնելու համար :

Բրիան .— Անպատճառ արէք այդ : Դա չատ անհրաժեշտ է : (Յանկարծ) Ինձ թուում է , պարոններ , որ Կիւլիկիոյ Հայերի այն խուճապի մէջ կան խորթ ներշնչումներ , ինտրիգաններ :

Նորատունիեան .— Ո՛չ , ու . Նախազահ , ինտրիգա չկայ եւ չի կարող լինել :

Բրիան .— Ամերիկայում ես Հայ պատգամաւորութիւններ ընդունեցի : Ամերիկայում ինձ որոշ յայտնութիւններ արին այս մասին : Բայց թողնենք այդ : Երբ պէտք համարէք ինձ աեսնել , կարող էք լուր տալ :

Հրաժեշտ առինք : Ջրոյցը տեսեց մօտ մի ժամ :

7 դեկտ . , 1921 , Պարիզ

Նոյն օրը (դեկտ . 7) երեկոյեան թերթերի մէջ լոյս տեսաւ կիսապաշտօնական լուր Quai d'Orsay-ի այն մասին , թէ ես ու Նորատունիեան գնացած էինք Բրիանին չոռհակալութիւն յայտնելու Փրանսիական կառավարութեան նրա ձեռք տուած երաշխիքների Համար Կիւլիկիայում :

Սովորած եղանք հերքել այս նենդ , ամօթալի յայտաբարութիւնը :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Պ. ՊԵՐԻՏՏԵԻ ՀԵՏ

Լոնդոնից վերադարձիս՝ ինձ տասցին , որ Պերիտտին ընդունելով Ազգային Պատուիրակութեան մէկ երկու անդամներին (Սինապիան և Զավանեան)՝ շատ խիստ տոնով էր խօսել նրանց հետ : Մեզաղը էր , թէ պրովազանդ են անում Հայերն ամէն կողմ Ֆրանսիայի դէմ , ակնարկել էր իմ եւ Նորատունիեանի Լոնդոն ճամրորդութիւնը և բացականչել էր .

«Մի՞թէ զուք յոյս ունիք տակաւին թիւրքիայում անկտխ պետութիւն կադրել» :

Այս միջադէպի ապաւորութիւնը ցըելու Համար գնացի Պերիտտիի մօտ : Ես ինձ ընդունեց շատ սիրով եւ բնուանական թարթաց այցի մասին խօսք չարաւ : Բնդ Հակոսակը , ես նրան տասցի բոլորն , ինչ որ ասել էի Բրիանին , եւ նա շատ քաղաքավար գրի տառ գլխաւոր կէտերը : Վերջում նաեւ խօսք բաց արի մեր Հինգ Հարիւր Հազար ստանալիքի մասին , ու նա զարմացաւ , որ մենք դեռ չենք ստացել ու տասց որ այդ Հարցը կարդագրուած է յօդուտ մեղ :

9 դեկտեմբեր , 1921 , Պարիզ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ Պ. ԲՐԻԱՆ ՀԵՏ

Այսօր՝ գեկանմբերի 16-ին , առաւօտեան ժամը 10.30-ին , ես եւ Նորատունիեան երկրորդ տեսակցութիւն ունեցանք Բրիանի հետ , իր յատուկ Հրաժերով :

Մեզ ընդունելով՝ Բրիան տասց .

Բրիան. — Պարոններ, ևս պէտք է ձեզ տուամ, որ մեր վերջին տեսակցութիւնից յիտոյ, ևս քննութիւն կատարել տուի, եւ ցաւ ունեմ ձեզ յայտնելու, որ, ըստ հաւաքուած տեղեկութիւնների, Կիլիկիայի Հայ աղբարնակութեան գաղթը արդիւնք է մեծ մասամբ այն եռանդուն պրոպագանդին, որ կատարել են տեղի վրայ զանազան ժութ անձինք եւ կոմիտէները: Խնչ նպատակով, չգիտեմ: Բայց այս պրոպագանդը Ֆրանսիայի համար կրկնակի գժուարութեանց աղբիւր է: Մի կողմից՝ հայութիւնը փախչում է Կիլիկիայից ու այսպիսով վարկարեկուամ Ֆրանսիան, որ իր թէ պէտք եղած չափով չի պաշտպանում իրեն ապաւինած հայութիւնը, եւ միւս կողմից՝ գաղթականները Ֆրանսիայից զուրս ուրիշ հովանաւոր չեն գտնուամ եւ գարձեալ մենք ենք ստիպուած նրանց ընդունել, հոգալ, տեղաւորել: Արդ՝ ևս ձեզ հարցնում, մինչեւ ե՞ր ոլիսի շարունակուի այս անսորմալ կացութիւնը:

Նորառունկեան. — Չեմ թոյլ տայ ինձ ձեր զործակուների տեղեկութիւնները կասկածի տակ դնել, բայց անշուշտ այստեղ թիւրիմացութիւն կայ: Չեմ կարծում, որ ժողովուրդը փախչում է պրոպագանդայի պատճառով: Ընդհանուր խուճապ կայ թիւրքական տերապետութեան հանդէպ: Եւ դա շատ հասկանալի է: Խնդրի խորքը պէտք է նայել, պ. Նախարահ, եւ այդպիսով կը բացատրուի ամբողջ այդ երեւոյթը: Ո՛չ, դա պրոպագանդայի արդիւնք չէ բնու:

Բրիան. — Վաստահացնում եմ ձեզ, որ մեր տեղեկութիւնները այդ են հասաւառում: Բանն այնտեղ է հասել, որ զիմում է կատարուած անգամ կարգինալ Մերսիէին Բեղդիայում եւ զուցից բրիական մի բազոքական պաստիոր այդ նպատակով Բելզիա է դնացել: Ո՛չ, պարոններ, համաձայնեցէք, որ սա անհանդուրժելի զրդուում է մեր բարի անուան դէմ:

Նորառունկեան. — Ես չգիտեմ, թէ ի՞նչ հայեր, ի՞նչ պրոպագանդա կարող էին անել: Բայց գժուարին գործ չէ միջամտել, որ այդպիսի արտրքները գաղարին, եւ դա մենք կ'անենք... Բայց...

Բրիան. — Այս, դա պէտք է անել:

Նորառունկեան. — Բայց խնդիրը դրանով չի լուծւում: Մենք ստացած ենք Կիլիկիոյ ծերունի կաթողիկոսի մի ընդարձակ զեկոյցը այն ժամին, թէ Ե՞նչողէս են անցել զարձել անցքերը Կիլիկիայում: Եւ դա ճշգրիտ տեղեկութիւն է: Եթէ զուրք հաճիք ծանօթանալ, կը տեսնէք, թէ որքա՞ն հեռու են այդ ցաւալի անցքերը պրոպագանդայից, ինդրիկիներից: Յիշեցնեմ ձեզ, պ. Նախագահ, որ այս խեղճ ժողովուրդը իր ապրած բոլոր խոռվքի մէջ մի վայրկան իսկ չմուացաւ Ֆրանսիան եւ շարունակ Ֆրանսիան փնտուց, նրան զիմեց: Եւ մենք այստեղ քանի՛ քանի՛ զիմումներ արինք, թեադրանքներ արինք, միջոցներ ցոյց տուինք՝ այդ խեղճ ժողովրդին իր տեղում պահելու համար եւ միշտ մնացինք անպատասխան: Ի՞նչո՞ւ զարմանալ, որ գժրախտ ժողովուրդը յուսահատ ու սարսափած՝ փախչում է իր հայրենի երկրից:

Բրիան. — Սակայն, թիւրքերը նրանց որեւէ վնաս չտուին, իրենց խոսաւումը պահպահին: Խո՞չ պէտք էր այդ ամբողջ զաղթը:

Ես. — Պ. Նախագահ, ներեցէք, որ ես երկու խօսք ասեմ, — միջամտեցի ևս՝ չըելով նորառունկեանի թիւրք, որ խօսքը ինձ թողնի. — Դուք մի կարուկ հարց էք զրի Կիլիկիայում տեղի ունեցած զրդուումի ժամին, եւ հարցը պահնջում է իր նոյն կտրուկ պատասխանը: Արդ՝ որպէս պատասխան ես թոյլ

եմ տալիս ինձ ասել, որ ինձ ընաւ չի զարժացնում, թէ կիլիկայում այս կամ այն դիտակից անհատը, մտաւրական առաջնորդը կամ վարիչ կոմիտէն խորհուրդ են առեւէ Հայ աղջարնակութիւն փախչելու, հեռանալու ձեր զօրքերի հետ: Ես գրա մէջ ընաւ չեմ տեսնում որեւէ չարամտութիւն, որեւէ յետին նըպատակ, բացի թշուառ ժողովրդին ժամ առաջ թիւրքի դանակից աղատելու հասկանալի, բնական ցանկութիւն: Նկատի պէտք է առնել, պ. Նախազահ, որ թիւրքի տիրապետութիւնը նշանակում է Անդորրայի Մէծ Ժողովի տիրապետութիւն, ուր բացմած են Բէթլիսի, Մուշի, կրպումի, Վանի ամենայայտնի ջարդարարները: Եւ այդ չափ ըստ զիտի Հայ ժողովուրդը: Եւ ո՞րն է այն դիտակից, սրտացաւ Հայը, որին երբ գիմի մի ընտանիքի Հայը, զաւակների մի ինկը մայր Հարցումով՝ մնա՞լ թէ վախչել, ո՞րն է այն դիտակից Հայը, որ խորհուրդ տայ, տրիութիւն ունենայ խորհուրդ տալու՝ մնալ ու սղասել թիւրքի դանակին: Սա զրդում չէ, պ. Նախազահ, այլ պարզ մարզկային սրտացաւութիւն: Ինչո՞ւ միայն նրանց՝ Կիլիկիոյ Հայ զործիչներին մեղաղբել այդ բանում, երբ մեղ են զիմել՝ պ. Նորատունկեանին եւ ինձ...»

«Նորատունկեան! — Ինձ զալով՝ ես հեռազրել եմ ի պատասխան ինձ եղած զիմումներին՝ calmie et tranquillité! (պ. Նորատունկեան կարող էր այդ չափ տալ, չանց չունէինք այդ ասելու):

Ես. — (Շարունակեցի) — Ես երբեք խորհուրդ չեմ տուել մնալ եւ երբեք խորհուրդ տալ չեմ կարող: Քանի այս կացութիւնը չի փոխուի, այս՝ պ. Նախազահ, ես արիութիւն չեմ ունենայ խորհուրդ տալու այդ թշուառ ժողովրդին պարանոցը թիւրքի դանակի տակ զնելու: Ես զիտեմ, զուք ձեր զործակալներն անիք այնտեղ եւ այդ էք Համարում երաշխիք: Բայց, պ. Նախազահ, ո՞չ թէ ձեր զործակալների, նոյնիսկ ձեր բանակի աչքի առաջ թիւրքերը, Քեմալի բանդաները կոտորեցին Մարազը, Զաջինը, Զէյթունը, Մարզուանը: Ի՞նչպէս էք կամ ենում, որ Հայ ժողովուրդը ազահով զգայ ինքնինքը միմիայն ձեր զործակալների ներկայութեան այսքան փորձերից յետոյ: Տասնեակ տարիներից ի վեր Հայոստանում սիստեմատիկ սարսափելի ջարդեր են յաջորդում իրար, մի՞թէ միշտ էլ մեծ պետութեանց զործակալները, հիւպատոսները ներկայ չեն եղել: Թիւրքերը ե՞րբ են ճնշուել: Կիլիկիոյ Հայութեան ապահովը մեղմելու եւ ցաւալի աղէտաւոր գաղթի առաջն առնելու համար, միշտ պարզ միշտ կար — մի հեռազիք, պ. Նորատունկեանի եւ իմ ստորագրութեամբ, որով մենք ասէինք վճռապէս. «Հայե՛ր, մի շարժուէք, մի՛ գաղթէք, մնացէք հանդիսում ձեր տեղերում»: Եւ Հաւատացէ՛ք՝ մի Հատիկ Հայ չէր շարժուի տեղից: Սակայն, այդպիսի մի հեռազիք մենք չտուինք եւ չենք կարող տալ, արիութիւնը չունիք: Զեղնից է կախուած, որ այդ հեռազիքը մեկնի: Դրա Համար մեզ պէտք է տրուին Հաստատ երաշխիքներ: Նորից խնդրում ենք, մի՛ լքէք Ֆրանսիային ապաւինած ժողովրդին եւ դէք կարդարեցէք, որ Ամանոսի շրջանը չդատարկուի, ուր ահազին թուով Հայութիւն է ապաստանել:

Բրիան. — (Մտածկոտ, մնաց լուր եւ շուարած, ապա սկզբի տանի խըստութիւնն ու պահանջների ձեւը բողած՝ յանկարծ խօսքը դարձեց վերի Հայաստանին) — Ասոցէք խնդրեմ, զուք ի՞նչ մտածումն ունեք Հայկական խնդրի ընդհանուր կարգադրութեան մասին, լոնգոն գնալուց առաջ չափ կ'ուզէի ձեզ լսել այս մասին:

Ես.—Պ. Նախագահ, ուրախ ենք ձեր այս հարցի համար։ Արդարեւ քանի որ զուք լոնդոն պիտի զնաք ուր հաւանաբար Արեւելեան Խնդրի մասին խօսիք, շատ պիտի իննդրէինք Հայկական Հարցը ձեր ազգու միջամտութեամբ օրակարգի մէջ զնել եւ լուծումն տալ այն ժողովրդի դատին, որ իր բախտը ահռելի զոհաբերութիւնների զնով ֆրանսիայի և Դաշնակիցների բախտին կապեց։ Եւ այդ լուծումը գիւղուր չէ պ. Նախագահ — Դաշնակիցներն, ինչպէս զիտէք, Հանդիսաւորապէս Միացեալ Անկախ Հայաստան հոչակեցին։ Արդ, այդ Միացեալ Հայաստանի մի մասը՝ Կովկասեան, այսոր գրաւած են սուս բոլշևիկները, զուք, պ. Նախագահ, անցեալները մեր Կովկասեան միւս Հարեւանների հետ տուած ընդունելութեան այն համոզումը յայտնեցիք, որ Կովկասում բոլշևիկների օրերը համրուած են—սա և մեր համոզումն է։ Թողնենք եւ սպասենք որ ժամանակը զործի մեջ համար Կովկասում, բայց այստեղ մնում է Միացեալ Հայաստանի միւս մասը, հարաւայինը։ Ի՞նչ արգելք կայ, որ այս մասը կազմի ծրագրուած ու հոչակուած հայ պետութիւն։

Բրիան։—Ի՞նչ սահմաններում էք ենթազրում այդ հայ պետութիւնը։

Ես։—Նախագահ Վիլսոնի իրաւաբարութեամբ գծուած սահմանները կան։ Դա մի զիծ է, որ սկսում է Տրավիզոնից արեւմուաք Դրիբոլիից, Խուրչիդի հովտի եզերքով, իշնում է Հարաւ, գրկում է Երզնկան, վար իշնում Բիթլիսից Հարաւ, անցնում է Հայկական Տաւրոսով եւ զնում միանում է պարսկական սահմանին։ Այս սահմանները շատերը համարեցին չափազանց։ Մենք պատրաստ ենք սահմանների նոր ճշդում ընդունել, Rectification des Frontières յօդուաթիւքների։ Մենք սպահանջուած չենք լինի, միայն մի պայմանով, որ մեղնից շիլտուին մեր ծովափեայ սահմանները։ Առանց ծովի, մենք ապրել չենք կարող։

Բրիան։—Որքա՞ն մեծ է ձեր ցանկացած տարածութիւնը։

Ես։—Կրճատումներով, երեւի, մօտ Հարիւր հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն, որի խոշորագոյն մասը լիսներ են եւ հազիւ 20%-ը մշակելի։

Նորատութիւն։—Մեր Երկիրը բարձրաւանդակ է։ Երզրումը երկու հազար մետրի վրայ է, Վանայ Շովք հազար վեց հարիւր։ Միանգամայն լիսներով է ծածկուած Հայաստան։

Բրիան։—Որքա՞ն է Հայկերի թիւը։

Ես։—Կարող եմ մեզ մատուր ճշդութեամբ ասել։—Կովկասեան Հայաստանում կայ մէկ միլիոն երկու հարիւր 70 հազար հայ։ Մաս վրայ աւելացան թիւրքահայ գաղթականներ թուով 350 հազար եւ Աղբբէջանից հայածեկան Հասած մօտ Հարիւր հազար հայեր։ Այսպիսով Հայերի թիւը Կովկասեան Հայաստանում կարելի է հաշուել մօտ մէկ միլիոն 6-7 հարիւր հազար։

Նորատութիւն։—Մօտ չորս հարիւր հազար եւս կայ Վրաստանում եւ մի փոքր աւելի պակաս Աղբբէջանում։

Բրիան։—Ուրիշ ո՞ւր ունիք հոծ հոյ բնակչութիւն։

Ես։—Կիլիկիայում՝ 150 հազար, Պոլսում՝ նոյնքան, Զմիւռնիայի ըրջանում՝ 40 հազար։ Այս եղիսակաս, Յունաստան եւ առհասարակ Բալկանները միասին 60-70 հազար։ Նաեւ Ամերիկա՝ մօտ 150 հազար։ Եւ այս բազմութիւնից խոշոր բաժինը օրեր է համարում Հայրենիք դառնալու համար։

Բրիան.— Ի՞նչպէս էք կարծում՝ կարել կը լինի՞ կազմել Հայկական պետութիւն։

Ես.— Առաջին պայմանը մեր հողերի դատարկուելն է թիւրքերից։ Եւ այժմ, երբ, ըստ երեւոյթին, Դաշնակիցները վճռել են Սևլիքի դաշնագիրը ըդգալի փոփոխութեան ենթարկել յօդուա թիւրքերի, մեղ բնաւ դժուարին չի թւում։ Եւ Հաւատացած ենք, որ Դաշնակիցները այդ զնով, այդ միջոցով կը պահանջնին, որ թիւրքերը դատարկեն Հայ հողերը։ Աւելացնեմ, որ մենք, իրեւե Սեվլիքի դաշինքը ստորագրող եւ զաշնակից, նոյնպէս կը Հրաւիրուինք այդ դաշնագրի վերաքննութեան պահուն։ Երբ թիւրքերը թողնեն մեր երկիրը, մեր ժողովուրդը կը թափուի իր Հայրենիքը, որ պէտք է բնականապէս գրաւել gendarmerie-ով, որի Համար մենք բաւական թիւ կամաւորներ Հաւաքելու վրայ ենք Հայերից հէնց այժմէն։ Ի Հարկէ, պէտք է յուսաւ, որ Դաշնակիցները նոյնպէս օգնութեան գան մեղ զինուորական միստիններով, կադրերով, եւ ֆինանսական աջակցութեամբ։ Աւելացնեմ, որ պետութիւն վարելու փոքրիկ փորձ էլ ունեցանք, երբ առանց մանաւագէրի՝ մենք մեզի ձգուած մեր փոքրիկ կովկասեան Հայաստանը կառավարեցինք մեր ուժերով երենք տարի։ Եւ պերջապէս, երբ այս բոլորը տեղի ունենայ, զուցէ անկարելի չլինի որեւէ փոքրիկ պետութիւն, ինչպէս Բելգիա, ունենալ որպէս մանդատէր։ Բայց զլիսաւը մեր երկիրը թիւրքերից ազատեն է։ Եւ այս է, որ սպասում ենք Թրանսխայից եւ Դաշնակիցներից, փոխարէն այն ծառայութիւնների, որ մենք յանձն տանք։ Եւ թոյլ տուէք, ու Նախագահ, գրանցից միայն մէկը լիշտակել՝ Բաղուի մեր պաշտպանութիւնը, որի Համար գերման զօր։ Լիւդին-զորֆ իր զրում զրում է թէ՝ Հայերը ևթէ չպաշտպանէին Բազուն եւ Հնար տային զերմանացիներին մի քանի ամիս տաւծ նաւթ տանալ, իրենք չէին պարտուի։ Ահա մեր ծառայութիւնը, մեր աջակցութիւնը Դաշնակիցներին։

Բրիան.— Աւրախ եմ, որ ձեզ տեսայ եւ լսեցի մեկնելուց տաւծ։ Այս բոլորը չառ հետաքրքիր է ինձ Համար։

Նորատունիկան։— Պ. Նախագահ, Հարցըրիք մեր թուի մասին։ Խնդրեմ, սակայն, ի նկատի տանել որ թիւրքերի թիւր Հայաստանում շատ աւելի նուազ է։ Այս պատերազմի ընթացքին այդ դաւաները մի քանի անգամ ձեռք անցան եւ խաղաղ անմարդարնակ դարձան։ Արդէն միշտ էլ Հայաստանում թիւրքերը քիչ են եղել։ Հայերից յետոյ զերակշոսդ տարրը եղած է քրդութիւնը։ Մի ժամանակ նոյնիսկ խօսք կար Հայ-քրդական պետութեան մասին։

Բրիան։— (Զերմանիկամբ) Օ, ո՛չ, ո՛չ, չարդացնենք խնդիրը։ Այսպէս, ինչպէս տասց ոլ Ահարանեանը, շատ լաւ է, շատ աւելի պարզ։

Ես.— Իրաւունք ունիք։ Մենք եթէ քիւրզեր ունենանք, նրանց Հետ Հայութը կը կարողանանք մեր սահմաններում։ Նրանք մօտ են մեղ իրենց ծառումով ու լեզուով։ Ես լու եմ ճանաչում քրդերին։

Բրիան։— Ես զո՞ւ եմ այս տեսակցութիւնից, շատ բան ինձ Համար այժմ պարզ է։

Նորատունիկան։— Բայց Կիլիկիան . . .

Ես.— Մենք նորից կը խնդրէինք կարզադրել նախ քան ձեր մեկնիւը, որ Դորթ եռուը չդատարկուէր ձեր զորքերից։

Նորատունիկան։— Արդէն չառ զօրքի պէտք չկայ։ Հազիւ Հազար-Հազար չինդ Հարիւր զինուորի պէտք լինի կարզ պահանձնու Համար։ Մենք շատ

ենք խնդրում ձեզ այս կարգադրութիւնն անել, որ ահադին սփոփանք կը մինի հայութեան համար:

Բրիան.— Բայց այդ ըրջանը մտնում է մեր համաձայնութեան մէջ թուրքերի հետ:

Ես.— Այո՛, դա մտնում է նաև Աելիքի դաշնադրի մէջ:

Բրիան.— Ես այդ մասին կը մտածեմ Լոնգոնից վերադարձիս:

Անկնդրութիւնը վերջացաւ ժամը $11\frac{1}{4}$ -ին:

Տպաւորութիւններ.— Նորատունկեանը գրառում ինձ ասաց, թէ չի հաւատում նրան հարց ու փորձի անկեղծութեանը եւ թէ այդ բոլորը որ ասաց մեզ խարելու համար էր՝ Կիլիկիոյ ծանր տպաւորութիւնը թուլացնելու համար: Ինձ, ընդհակառակը, թւում է, որ Կիլիկիոյ սկանդալից յետոյ, Բրիան ցանկութիւն ունի մի բանով մեզ դոհացնել Վերին Հայաստանում: Այլապէս նա այդ հարցերը չէր տայ եւ կը բաւականանար ընդհանուր ֆրազներով: Ես կարծում եմ նորից, որ ֆրանսիան ու Անգլիան կապուած են գաղտնի դաշնագրով:

Դեկտեմբեր 16, 1921, Պարիզ

(Շարունակելի)



ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄՐՆՉԵՒ ՍԵԽՐ ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵց՝ ԱԻԵՑԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԶԲՈՅՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐՏԱՐԱՐԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ
Ս. ՊԻԶՈՆԻ ՀԵՏ

Փետրուար 10, 1919

Ներկայացանք Փաշայի հետ:

Ես — Թոյլ տուէք ինձ պ. նախարար յանուն Հայաստանի Հանրապետութեան, ողջունել Ձեզ, աղինի Ֆրանսիայի ներկայացուցչին, եւ ասել, որ չնորհեւ Ձեր փառաւոր ու քաջարի բանակի յաղթութեան, արդարաւթիւնն ու իրաւունքը աշխարհում տիրապետող զարձաւ։ Հայաստանը, Համայն հայ ժողովուրդը, աղգերի փրկութեան սեղանի վրայ, Դաշնակիցների կազքին, զբեց բոլորն ինչ ունէք, անզամ եր զոյսութիւնը։ Մասնաւորապէս Կովկասում, մենք մեն-մենակ բանեցինք ուուների լքած ճակատը, որ, կարող եմ ասել հըպարաւութեամբ իմ ազգի համար, զարձաւ հայկական ճակատ։ Յանուն Դաշնակիցների, յանուն Ֆրանսիայի ամբողջ 8 ամիս մենք կառեցինք թուրքօթաթարական-քրդական կուլիցիայի դէմ։ ԶԵնք համարձակեւում մաածել ու յուսաւ թէ փառապանծ Ֆրանսիան պիտի սքանչանայ մէր ժողովրդի անձնութերութեամբ եւ արիութեան զործերով, քանի որ Հանրապետական Ֆրանսիան էր, որ սքանչացը աշխարհը։ Բայց ինդըում եմ հաւատաւ, որ մենք՝ հայերս մինչեւ վերջը լիապէս կատարեցինք մէր պարտքը։ Ես եկած եմ յանուն Հայաստանի Հանրապետութեան ասելու այս բոլորը եւ լսելու Դաշնակիցների խօսքը մէր բախտի վճռական տնօրինութեան համար։

Ս. Պիզոն։ — Զդացուած եմ և ձեր աղինի զդացուամերի համար չնորհապարու։ Անդըում եմ հաւատաւ՝ Հայաստանի զատն ու ապադան միշտ խիստ մօտ է եղել Ֆրանսիայի սրտին եւ մօտ էլ կը լինի միշտ։ Ֆրանսիան միշտ պատրաստ է հզօրապէս աջակցել ձեր ժողովրդի փրկութեան զործի բաւագոյն ելքի համար։

Ես — Շնորհակալ եմ, պ. նախարար, եւ երջանիկ եմ, որ առաջին մեր դիմումը Ֆրանսիային ենք ուղղում։ Մեզ մեծ ցաւ է պատճառել, որ հակառակ մէր այնքան անշահախնդիր եւ անվերապահ անձնութերութեան աղգերի դատին, այսօր Հայաստանը համապատերազմիկ (belligerant) չէ նկատուած եւ չէ ընդունուած Խաղաղութեան կոնքքասում։

Ս. Պիզոն։ — Ճշմարիտ է, այդ ցաւալի է, բայց նկատի տոէք, որ Կոնդրէ-սում մասնակցում են միայն կազմակերպուած պետութիւնները։

Ես — Անշուշտ, սակայն, եթէ թիւրքաց Հայաստանը տակաւին պետու-

թիւն չէ, Կովկասեան Հայաստանը, որ պատիւ ունիմ ներկայացնել, արդէն 10 ամիս է ինչ պետութիւն է, կազմակերպուած ու հաստատուն: Կարծում եմ, որ յանուն հայութեան, Հանրապեաութիւնը կարող էր եւ իրաւունք ուներ ընդունուելու Խաղաղութեան Կոնգրէսում: Բանի որ իւգօ-ուալիները, արաբ-ները, չեկո-ուլովակները ընդունուած են, մեղ մերժելու պատճառը լաւ չեմ հասկանում:

Ա. Պիգնի. — Ռուսական պրոբլեմը կայ:

Ես. — Կարծում եմ, սակայն, որ ոռւսական պրոբլեմը ընկնում է Լեհաստանի փաստով, Ֆինլանդայի անկախութեամբ, Բևսարաբիայի զիջումով Ռուսմանիային:

Ա. Պիգնի. — Ֆինլանդան տարբեր պարագայ է, Լեհաստանը ճանաչել են իրենք՝ ոռւսները, իսկ Բևսարաբիան իրենք՝ դարձեալ ոռւսները, թէեւ բոլշևիկ, Բրեստ-Լիտովսկի գանձակըսով զիջել էին իրենց թշնամուն:

Ես. — Բաւսական նշանակալից անալոգիս (նմանութիւն) կոյ մեր եւ Բևսարաբիայի մէջ: Ռուսները ո՞չ միայն մեզ լքեցին ու հեռացան թողնելով մեղ ժառանգութիւն մի պատերազմ, որ մեր ուժերից վեր էր մինակ տանել, այլ եւ նոյն մեր յիշատակած գանձակըսով նրանք մեր երկրի մի քանի մասները՝ Կարս, Արդահան, Կազզուան զիջեցին թիւրքիրին:

Ա. Պիգնի. — Իրաւունք ունիք, այսո՛, իրաւունք ունիք. անալոգիա կայ: Ներկայացրէք մեր զրոյցի խմասով մի յիշատակիր Խաղաղութեան Կոնցրէսուն եւ ես ձեզ խոստանում եմ իմ լիակատար աջակցութիւնը:

Այդ յիշատակիրը ես ներկայացրի Կոնգրէսին:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ TEMPS ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐԱՎՈԵՏ HERBETTE-Ի ՀԵՏ

Փետրուար 15, 1919

Ես. — Պ. խմբագրապետ, Դուք կամեցել էիք մի տեսակցութիւն հրատարակել Չեր թէրթում մեր խնդրի մասին: Շնորհակալ եմ եւ պատրաստ եմ տալ այդ ինտերվիեվը:

J. Herbette. — Այդ շատ լաւ: Բայց դուք զիտէք, որ Կիլիկիան մեզ հետաքրքրում է առանձնապէս, ուստի չէք զարմանայ, եթէ ես մեր զրոյցը սկսեմ Կիլիկիայից: Ի՞նչ է ձեր կարծիքը Կիլիկիայի մասին, այսինքն՝ մինչեւ Կիլիկիա հասնո՞ւմ է ձեր ենթադրեալ սահմանը:

Ես. — Հայաստանը միշտ թոյլ է մնացել ի միջի այլոց ծովի պակասութիւնից, մանաւանդ մեծ ծովի: Ձեզ չեմ զարմացնի, եթէ ասեմ, որ մեր անցեալի եւ շատ մօտիկ անցեալի զառն փորձերից խրատուած, մենք սահմուած ենք, այսո՛, անպատճառ ելք ունենալ գէսի Միջերկրական: Եւ այս, նկատի առէք, ո՞չ թէ Կիլիկիայի բամբակի կամ այլ հարստութեան համար, այլ ուրովհեաւ մենք արեւմուտքի աղդերէն մէկն ենք, ընկած Ասիոյ մէջ, եւ պէտք է մեր ճամբան բաց լինի գէսի արեւմուտք: Այս պատերազմը ցոյց տուեց, որ առանց ծովի, եթէ նոյնիսկ մեր ըարեկամ մեծ պետութիւնները կամենան, չպիտի կարգանան մեզ ողնութեան հասնել վտանդի ժամին, ինչոքս որ չկարողացան Դաշնակիցները, հակառակ իրենց կամքի:

Խմբագրապետը .— Կիլիկիան ստանալու ձեր ցանկութիւնը ինձ խիստ տիրեցնում է : Ֆրանսիան չի կարող համաձայնել Զեզ հետ :

Ես .— Բայց ներեցէք, մենք մինչեւ այժմ ենթադրել ենք, թէ մեր հակոռագը կիլիկիայի խնդրում Սիւրբան է, և ո՛չ թէ Ֆրանսիան : Մեզ համար խորունկ ցաւ է, որ Ֆրանսիան մեզ հակառակորդ նկատի :

Խմբագրապետը .— Ֆրանսիան գորերէ ի վեր ահապեն շահեր ունի կիլիկիայում, իսկ դուք՝ հայերդ . . .

Ես .— Ներեցէք, ոլ . խմբագրապետ, կիլիկիան չորս գար հայ պետութիւն է ունեցել, եւ վերջին թագաւորը՝ Լևոն V տակաւին հանդչում է St. Dennis-ի գերեզմանատունը այսպես Պարիզում, ձեր թագաւորների շարքում : Կարծեմ ուս բաւարար հիմ է, եթէ ուրիշ բազմաթիւ հիմունքներ չունենայինք :

Խմբագրապետը .— Դա հին բան է : Պատմական իրաւունքը հաշուի առնելու չէ : Կիլիկիան պիտի կցուի Սիւրբայի, որ առանց կիլիկիայի ասլրել չի կարող :

Ես .— Հայաստանը նոյնպէս աղքատ, եւ շատ տղքատ երկիր է, առանց կիլիկիայի ապրել չի կարող, մանաւանդ առանց Միջերկրականի : Հայ ժողովրդ-դի համակրութիւնները դէպի Ֆրանսիան չափազանց խորին են եւ հաստատ, որպէսզի նա կարողանայ որեւէ վատ զգացումն տածել դէպի Ֆրանսիան : Իրապէս չափազանց արտասուելի կը լինի, եթէ Ֆրանսիան կամինայ մեզնից չորթել կիլիկիան Սիւրբային կցելու համար :

Խմբագրապետը .— Շատ ցաւում եմ հ'ւ ես, որ Հայաստանը տակաւին չկազմակերպուած՝ իմպերիալիստական հովեր է առնում :

Ես .— Հնուու լինի մեղնից իմպերիալիզմը, որ այնքան ծիծաղելի է, երբ կցւում է այսօր հայ անուան : Զեզ բացատրեցի այն պատճառները, որոնք մեզ հրամայողաբար թելազրում են կիլիկիան պահանջիլ : Եթէ չկարողացայ Զեզ համոզել, շատ ցաւում եմ :

Մի քանի օր յետոյ վեերուար 27-ին Temps-ը, Խօսելով մեր պահանջների մասին Խաղաղութեան Կոնգրէսին ներկայացուած յօդուածի վերտառութիւնը դրել էր «L'Empire Armé'nien» (Հայկական կայութիւն) :

ԽԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒԽ

I

Փետրուար 25, 1919

Երէկ՝ վեերուար 25-ի երեկոյիան, ինձ մօտ ընթրիքի էին Westerman, Ժուրնալիստ ամերիկացի Gibbonse, Պողոս փաշա, Յովհաննէս Խան և Աջէմ-եան : Ընթրիքից վերջը անակնկալ կերպով ստացայ Խաղաղութեան Կոնգրէսի հրաւէրը յաջորդ օրը : Ճաշից յետոյ՝ ժամը 4-ին պէտք էր ներկայանալ Տասնի Կորհրդին (Le Consul de Dix) հայկական պահանջները ներկայացնելու :

Բոլոր ներկաներին այդ ուրախութիւն պատճառեց : Մնում էր միայն ճըշդիւ, թէ արդեօք Պօղոս փաշան էլ ստացել է նման հրաւէր թէ ոչ : Հաւատացած էինք, որ նոյնպիսի հրաւէր զրկուած կը լինի Փաշայի բնակարանը : Հեռախոսով արած հարցումին, սակայն, բացասական պատասխան ստացաւ :

Անհանդիստ եղանք ամէնքու էլ, իսկ Փաշան, յուզուած էր մինչեւ դայ-

բոյթը եւ չտապով տուն դնաց : Քիչ յետոյ՝ մեկնեց նուեւ Westerman մի քանի գործնական խորհուրդներ տալուց յետոյ : Խոստացաւ յաջորդ տուառու ինձ մօտ զալ դարձեալ մի քանի ձևական նշանակութիւն ունեցաղ հարցերի մասին խօսելու : Մեկնեց նաև Gibbonse :

Ես արտակարդ նիստ հրաւիրեցի պատուիրակութեան, ներկայութեամբ՝ իմ, Օհանջանեանի, Վարսնդեանի, Աջէմեանի, Յովհաննէս Խանի՝ յաջորդ օրուայ իմ տուիլիքները, որ վազուց հետէ պատրաստած ունէի, նրանց քըն-նութեան բովից անցնելու համար :

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուեց, եթէ Փաշան մինչեւ վաղը չհրաւիրուի, եւ ես մենակ մնամ Կոնդրէսում, ապա ամբողջական Հայաստանի զատը պաշտպանեմ, ինքու իսկ եթէ Փաշան յաջողեցնի ներկայանալ, այդ դէպքում ես պիտի ծանրանամ Կովկասեան Հայաստանի քաղաքական եւ էտ-նադրաֆիական եւ փառատական գոյութեան իրաւունքների վրայ, իսկ Փաշան պաշտպանելու է Թիւրքաց Հայաստանի իրաւունքը եւ երկուսս միասին վրա-ռապէս, առանց վերապահութեան, ովտի յայտարարենք եւ պնդենք Հայու-թեան երկու խոշոր համուածների անդամնալի որոշման վրայ միանալ իրար հետ եւ կազմել Միացեալ Հայաստան Խրամ գետից ու Ղարաբաղից ոկտեալ մինչեւ Կիլիկիա, մինչեւ Միջերկրականի ափերը : Միաժամանակ մասնաւո-րապէս Կովկասեան Հայաստանի Հանրապետութեան ճանաչումը պիտի պա-հանջէի, ինչպէս եւ նրա արժանի տեղը Կոնդրէսում որպէս կռուող պետու-թիւն (Etat bellige^{rant}) :

26 Փետրուար

Համապատասխան մտքով թուղթ պատրաստեցի դիշերը եւ յաջորդ տուա-ռու մինչեւ ժամը 12-ը մեր բարեկամ Վիկոր Բերարի սիրալիր աջակցու-թեամբ : Եւ այդ իսկ ժամին իմացայ Փաշայից, որ նա, չսահնալով հրաւէր, շատովել է անդլիական պատուիրակութիւն, զիմել է Սրբ Լուի Մալէտին, նրա հետ միասին գնացել են Բալֆուրի ժոտ : Բալֆուրը ապա հեռախոսով զի-մել է Փրանսիական արտաքին գործոց նախարար Ա. Պիզոնին, որ նախազահն էր Խաղաղութեան Կոնդրէսի Կլեմանսոյի հիւանդանութեան պատճառով, եւ Պի-զոնը համաձայնել է Պօլոս փաշայի ներկայութիւնը Կոնդրէսում :

Այսպիսով, թէեւ առանց գրտուր պաշտօնական հրաւէրի, Պօլոս փաշա-յին յաջողուեց ներկայանալ Կոնդրէսին ինձ հետ միասին : Ուստի, ըստ մեր կանխու համաձայնութեան Պօլոս փաշայի հետ :

1) Ես պիտի խօսէի տուաջինը .
2) Ես պիտի ծանրանայի Հայաստանի Հանրապետութեան իրաւունքների վրայ, իսկ Փաշան Թիւրքաց Հայաստանի եւ մասնաւորապէս պէտք է ոյժ տար Կիլիկիայի ինդրին :

3) Երկուով էլ մեր պահանջները պիտի վերջացնէինք վճռական յայտա-րարութեամբ երկու Հայաստանի միուրեան :

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

II

26 Փետրուար, 1919

Եւ այսպէս, այսօր հաշից յետոյ, ժամը 4-ին, ես ու Պօլոս փաշան հան-դիսկցինք իրար արտաքին գործոց նախարարութեան շնորի մէջ :

Պօղոս փաշան շատ յուրզուած էր և անվերջ թղթատում էր զբած յիշա-
տակաղը այս կամ այն ժաման՝ գանգատուելով, որ իրեն ժամանակ չեն տուել
պէտք եղած ձեւով պատրաստուելու համար: Գոհ էր, սակայն, որ յաջողեցը-
րել է Տառնի Խորհրդին ներկայանալ այսօր ինձ հետ: Վերստին մեծ յուղ-
մունքով պատմեց ինձ, թէ Հոն— Փրանսիական արտաքին դործոց նախարա-
րութեան ինարի ինքներով, աշխատել է իրեն՝ Փաշային չժողովնել այսօր

Իմ թուղթը պատրաստ էր, եւ ես բոլորովին պատրաստ էի իմ յայտարա-
րութիւնն անելու: Վճռել էի, ի հարկէ, կարդալ:

Փաշան հարցրեց ինձ, թէ ո՞վ պիտի առաջինը խօսի, ինքը՝ թէ ես:

Ես պատասխանեցի առանց որեւէ պատճառի, թէ լաւ կը լինէր, որ առա-
ջինը ես խօսէի:

Զարցացած մնացի, որ Պօղոս փաշան համաձայնէց: Անկառակած, վերջինը
խօսելուն նու առանձին կարեւոր նշանակութիւն է տալիս՝ նկատելով այդ իր-
քեւ աւելի վայել իր դիրքին ու տարիին: Այդ շատ անդամ եմ նկատել—
Երա խօսքն է՝ Les petit rôles passent le Premier:

Թէեւ մենք հրաւիրուած էինք ժամի 4-ին, բայց արդէն 5 էր, եւ մենք
դեռ սպասում էինք:

Ներսում Տառնի Խորհուրդը զրազուած էր վերստինի դաշնակից զինուու-
րական խորհրդի մի կարեւոր զեկոյցը լսելով:

Ժամը 5-ից անց, վերջապէս դուրս եկաւ Զին. Յանձնաժողովը, միա-
ժամանակ մեղ մօր եկաւ Հոն եւ հրաւիրեց ներս:

Նախազահում էր Փրանսիական արտաքին գործոց նախարար Ս. Պիղոն,
փոխանակ Կլեմանսովի, որ տակաւին չէր ասպաքինուած մի երկու շաբաթ ա-
ռաջ իր դէմ եղած մահափորձին ստացած վերքերից: Ներկայ էին Ամերիկայի
կողմից՝ Լանսինդ եւ Ռւայտ, Անգլիայի կողմից Բալֆուր եւ Հարտինդ, Բու-
լիայի կողմից Սանինո եւ Մարքիզ Ռազզի, Ճապոնիայի ներկայացուցիչների
անունները չպիտեմ: Կային եւ բազմաթիւ խորհրդականներ, ամբողջը մօտ
25-30 մարդ:

Ինձ առաջինը հրաւիրեցին խօսք առնել:

Մենք նախ ցրեցինք բոլոր անդամներին մեր մեծօրանուումի մի մի օրի-
նակ, եւ նրա կարգը (քարտէղը) բացած, նրանք սկսեցին հետեւել:

Ես բարձրաձայն ու հանդարտ սկսեցի կարդալ իմ յիշտակապիրը Փրան-
սիէն: Նստած էի Պիղոնի դէմ ու դէմ մի փոքրիկ սեղանի առջեւ:

Մի փոքր հեռու Բալֆուրի եւ Լանսինդի դէմ առ դէմ նստած անգլիացի
սկզբան, իմ ամէն մի պարբերութիւնից յետոյ, յիշտակապիրս թարգմանում
էր անգլիէրէն: Վերջում, իմ ընթերցումն աւարտելուց յետոյ, նախազահ-
Պիղոն հարցրեց ժողովականներին, թէ՝ հարց առողջ կայ: Աչ:

Հեռացայ սեղանից: Իմ անդն անցաւ Պ. Նուրար փաշան: Նա աւելի երկա-
րօրէն ծանրացաւ 1) Հայ ժողովրդի թուի վրայ՝ ցրելով մեր փոքրամանու-
թեան մասին մեր հակառակորդների արգումենտները եւ ցոյց տալով միաժա-
մանակ, որ մեր զոհերն այս պատերազմում, բանի նուազումը մեր թուի, ո՛չ
արգար եւ ոչ իրաւական արդումննա կարող են լինել մեր դէմ. 2) աւելի մեծ
իրանցով ծանրացաւ Ալլիկիայի խնդրի վրայ՝ պնդելով այդ հայ երկրամասի
անհրաժեշտութիւնը մեր պետութեան կհնառւակութեան համար:

Նոյն ձեւով Պօղոս փաշայի առածները թարգմանուեցին անգլիէրէն:

Հարցեր չորուեցին : Ժողովը սաքի ելաւ : Պատուիրակներից ոմանք մօտեցան մեզ եւ իրենց դոհունակութիւնը յայտնեցին մեր յիշտակադրի առթիւ :

ԶՐՈՅՑ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

26 մարտ, 1919, Պարիզ

Ես ասացի Westerman-ին .—

«Մեր վիճակի մէջ զինադադարից ի վեր ո՞չ միտյն որեւէ փոփոխութիւն չկայ, այլ նոյնիսկ ընդհանուր առմամբ հայութիւնն աւելի վասթար օրեր է ապրում : Հայէպում կոտորած, Կելիկայում՝ ջարդի սպառնալիք, մեր երկերն աւեր ու անապատ, մեր վախստականները տակաւին հայրենիքից դուրս, մեր կանայքն ու երեխանները հարիւր հազարներով թիւրքերի ձեռքին : Ի լրումն այս բոլոր թշուառութեան, սովի գործած աւերածը Հայաստանի Հանրապետութեան սահմաններում է օր աւուր :

«Եւ, սակայն, այնքան հետ էր այս բոլորի առաջն առնել : Ամիսներից ի վեր ես խնդրել եմ Եւ Խաղաղութեան կոնդրէսից եւ դիմել եմ Դաշնակցից պետութիւնների ներկայացուցիչներին առանձին՝ ցոյց տալով հետեւեալ միջոցները .—

«1) Ճանաչել Հայաստանի Հանրապետութիւնը եւ այսպիսով հնար տալ պետական ձեռներէցութեամբ օդնութեան հասնելու մեր սովալուկ ժողովրդին .

«2) Հաց եւ այլ մթերք հասցնել Հայաստան Հետևիսային կովկասից (Հաց) եւ Եւրոպայից այլ մթերքներ :

«3) Հայ զաղթականները տեղաւորել Թիւրքաց Հայաստանում՝ հնար տալով նրանց զաշտային աշխատանքները սկսելու այս գարնան՝ առաջիկայ տարուան սովոր կանխելու համար :

«4) Այս նպատակով իսկոյն դրաւել Թիւրքաց Հայաստանի գաւառները հայկական եւ Դաշնակցից զօրքերով» :

Professor W. L. Westerman, Chief of Division of Western Asia, որ շատ համակիր է եղել մեզ եւ հզօրապէս աջակցել իւրաքանչիւր առթիւ, ինձ հետ համաձայնում է, որ հանդէս հայերի կատարուել է եւ կատարուեմ է մեծ անթրաւութիւն : Եւ ապացուցանելու համար, որ ինքը իր կողմից միշտ կատարել է պէտք եղած դիմումները՝ նա տալիս է ինձ կարգալու մի վաստաթուղթ, որով ինքը՝ Westerman, հրաւիրում է ամերիկեան զելիգատների ուշադրութիւնը հայերի ծանր վիճակի վրայ եւ առաջարկում է այն միջոցները, որ ես եմ ընտրել :

«Ես կարող եմ առել,— աւելացնում է Westerman.— որ, ինչպէս առանում էք, գէթ իմ խիզն արդար է» :

Ես խնդրում եմ տեսակցութիւն յաջողցնել ինձ դնդապետ House-ի կամ, եթէ հնար է, նախադահ Վիլսոնի հետ :

Westerman ինձ առաջնորդում է Roy Stuward Baker-ի մօտ : Վերջինս ամերիկական Press Bureau-ի գլխաւորն է եւ նախադահ Վիլսոնի մտերիմը, ու նրա վրայ ահազին ազդեցութիւն ունի : Baker— համաձայն է մեզ հետ եւ

խորհուրդ է տալիս խնդիրը բացատրել Միստրը Bowman-ին, որ գնողապետ House-ի գործակիցն է:

Թէ՛ւ 40 տնց, բայց բարազին ևրիտասարդ, խելացի դէմքով մէկն է Միստրը Բօման: Westerman իմ փախարէն խօսք է առնում և քարտէզի տառջ կանգնած՝ ևրկարօրէն բացատրում է, թէ որքա՞ն հեշտ է գրաւել բրիտանական զօրքերով թիւրքահայ զաւաները դէֆ 100—150 քիլոմէտր խորութեամբ, և թէ ի՞նչ լաւ գործակից կարող են լինել Հայաստանի Հանրապետութեան զօրքերը՝ այդ գրաւումն իրագործելու համար:

Բառում սկզբում սասն, քանի գնում է յափշտակեում է Վեստերմանի արդումնափայով, բայց և այնպէս առարկում է, որ պետութիւնների վատ մըցակցութիւնը արդելք է դառնում այդ գրաւումն եւ որ հայերը զօհ են գընում այդ անիրաւ «marchandage»-ին:

Այսուամենայնիւ խորհրդակցութիւնը զալիս է հետեւեալ ևզրակացութեան — Վեստերման ու Բառում զալիս են այն եզրակացութեան, որ այդ գրաւումը կարող է լինել միայն անդլիացիների ձեռքով, քանի որ միայն նըրանք կովկասում զօրքեր ունին եւ քանի որ «ամերիկական բանակը ասկաւին հրահանող չունի ֆրանսիայից ու Գերմանիայից դուրս այլ անզ զնալ»:

Ուստի երկասվ յանձն են առնում յաջորդ օրն իսկ այս մասին խօսել Լանսոնդին եւ նախագահ Վիլսոնին: Ինձ խորհուրդ են առաջիս յաջորդ օրը իմ կողմից զիմել անդլիացիներին եւ յայտարարել հետեւեալը վճարագէս: — որ եթէ Լոյդ Ջորջը կոնդրէսում այժմ խնդիր հանի Հայաստանի զինուորական զրաւման մասին, նախագահ Վիլսոնը կը պաշտպանի անպատճառ: Ես արտօնութիւն ունիմ յայտարարելու այս մասին անդլիացիներին:

Զմունամ աւելացնել: Իմ հարցին թէ՝ ինչո՞ւ անդլիացիք վարանում են զրաւել թրքահայաստանը, Վեստերման պատասխանեց.

«Վախենում են ֆրանսացիների մըցակցութիւնից, որոնք իսկոյն հարակից (Կիլիկիա) կը շարժուին վեր՝ հիւսիս»:

ԶՐՈՅՑ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Մարտ 27, 1919

Այսօր առաւոտ զնացի Պօլս փաշայի մօտ, պատմեցի իմ անսակցութիւնը ամերիկացիների հետ և առաջարկեցի միասին զնալ անդլիական պատասխրակութեան մօտ՝ խնդրելու Հայկական գաւառների զինուորական զրաւումը:

Այս տեսակցութիւնը տեղի ունեցաւ ճաշից յետոյ՝ ժամը 4-ին, Hotel Astoria-ում: Մեղ ընդունեցին Սըր Լուի Մալիստ, անդլիական նախկին զեսպան կ. Պոլսում եւ այժմ արեւելեան զորձերի գլխաւոր վարիչ եւ իր օգնական թօքնիրի:

Ես ներկայացրի հարցը իր բոլոր լայնութեամբ, աւելացնելով՝ որ ամերիկացիներից համաձայնութիւն ունիմ յայտարարելու որ եթէ Անդլիան կամնայ զրաւել իր կամ Հայ Հանրապետութեան զօրքերով թիւրքահայ զաւուները, Լոնսինդ եւ նախագահ Վիլսոն կը պաշտպանեն այս պատճարկը:

Սըր Լուի Մալիստ պատասխանեց.

— Մեր զինուորական նախարարութիւնը զէմ է այդ զրաւման և նոյնիսկ

մենք մտադիր ենք, — ասաց, — քաշել մեր զօրքերը Կովկասից : Եւ առհասարակ, — առելացրեց նա, — ևս ամերիկացիների գիրքը լաւ չեմ հանկանում : Չորս կողմում խօսում են, թէ Ամերիկան է լինելու Հայաստանի հովանաւորը, իսկ նրանք ուզում են, որ մենք դրաւենք Հայաստանը : Ո՛չ, ես վճռապէս ասում եմ, մենք անկարող ենք : Խնդրեցէք ամերիկացիներին : Մենք զինուոր չունինք :

— Էվելան, — ասացի ես, — եթէ դուք զինուոր չունիք, դուցէ հնորաւոր կը համարէք այդ անհրաժեշտ գրաւումի համար օգտագործել Հայաստանի Հանրապետութեան մինչեւ 30 հազար համար հանոնաւոր բանակը, որ շատ հեշտ է ոտքի հանել ու շարժել, եթէ ոլէտք եղած ուագրամթերքն ու կենսամթերքը ու զգեստն ունենանք :

— Այդ անկարելի է, — պատասխանեց Լուի Մալետ, — հայ զօրքերի Լրեւալը կը լինի ընդհանուր ցեղային կոռւի ազդանշան :

— Սակայն, մեր զօրքերը դրուած կը լինին Դաշնակից սպաների հրամանաւարութեան տակ, եւ, յետոյ, դրանք սոսկական կամաւորներ չեն, այլ 4-5 տարի զինուորութիւն տրած, մարզուած, կարգապահ զինուորներ, — պատասխանացի ես :

— Այդ միեւնոյն է, մենք չենք կարող, — եղաւ պատասխանը :

— Excellence, — ասացի, — բայց նկատի առէք խնդրեմ, մեր ժողովրդի կացութիւնը, որ կոտորում է քաղցից ու հիւանդութիւններից : Այսպիսով մեր հայրենիքի վերածնութիւնը դառնում է անկարելի : Մենք չորս տարի ամէն զոհողութիւն տարանիք՝ սոլառելով Դաշնակիցներին, որպէս դերագոյն փրկութիւն : Դուք եկաք ահա եւ դարձեալ մենք կատորուում ենք : Ես կարծում եմ, որ մեր ժողովուրդը դժուար կը կարողանայ բացատրել Եւ այս անիբաւութիւնը եւ իմ ու Պօղոս փաշայի ներկայութեանն այստեղ Կոնդրէսի կողքին :

— Շատ ցաւում եմ, բայց մեր զինուորական նախարարութիւնը վճռապէս հրաժարւում է դրաւել Հայաստանը եւ խորհուրդ տալիս հայերին սպանել ու համբերել :

Մեկնեցինք ձեռնունայն ու դառնացած :

ԶՐՈՅՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԵՐԵՐԻ ՀԵՏ

Մարտ 28, 1919

Երէկ երեկոյ ստացայ մեր արտաքին գործոց նախարար Ա. Տիգրանեանի այն հեռագիրը, որով հաղորդում է ինձ թաթարների արշաւանքի մասին թիւրք սպաների սուաջնորդութեամբը Շարուր-Դարալազեազի, Նախիջեւանի, Ղարաբաղի, Սուրմալուի շրջաններում, եւ խնդրում է դիմել պետութիւնների աջակցութեան :

Այս հեռագիրը ձեռքիս այսօր ժամը 3-ին վեստերմանի հետ դնացի Միտրը Բառմանին :

Ես ասացի :

Այս նոր շարժումը թաթարական ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի նոր ակտ երե-

տառարդ Թուրքերի սկսած շարժման Հայէպում, Կիլիկիայում, Եղիսպառում։ Ա-Յ տարի Թիւրքօ-թաթարական կօալիցիայի եւ քաղցի ու թշուառութեան դէմ կոռուլուց յետոյ, մեր ժողովուրդն այլեւս ի վիճակի չէ նոր պատերազմ վարելու։ Քանի որ անդիմացիք չեն կամենում մեզ օդնել, պէտք է որ Ամերիկան ձեռք տոնի մեր օդնութեան դործը։ Յուսահասական է, որ ինձ Crillon հիւրանոցից (Ամերիկա) ուղարկեն Astiria հիւրանոց (Անգլիա) եւ այսուղից էլ առաջին տեղը։ Մեր ժողովրդի յուսահասութիւնն ու յուսախարութիւնը անսահման է։ Իմ տպաւորութիւնն այն է, որ անգլիացիք իրենց զօրքերը կովկասից քաշելու չեն, որովհեաեւ հեշտութեամբ չեն թողնի Բաթում-Բաղու-թիֆլիս գիծը, որ զնում է Պարսկաստան և Հնդկաստան, բայց եւ մեզ օդնելու չեն։ Եթէ Ամերիկան մեզ չօգնի, մենք կորած ենք։ Կրկնում եմ, Հայաստանը իրբեւ պետութիւն կամ այսօր իսկ պիտի կազմուի ձեր օդնութեամբ կամ նա կորած է յաւիտեան։ Քանի որ mandat-ի գործը ձգձգում է, մնում է որ Ամերիկան անմիջապէս ուղարկի կովկասին Հայաստան պէտք եղած քանակութեամբ սպաներ, դրամ և ուղամամթերք՝ մեր բանակը կազմակերպելու համար, որ մի ուժեղ կորիզ կը լինի բոլոր տեսակի վտանգների առաջ։ — Որչա՞փ դրամ եւ որչա՞փ սպաներ են հարկաւոր, — հարցրեց Բառուման։ Ենգրեցի մի քանի ժամ տալ ինձ այդ ներկայացնելու գրաւոր։

Բառուման հեռագրի պատճենն առաւ ու զնաց Լանսինդին համոզելու իմ առաջարկած ծրագիրն իրագործելու համար՝ խոստանալով ինձ պատասխանել այս երեկոյ ժամը 7-ին։

— Լանսինդին, — ասաց Բառուման, — վարանող բնաւորութիւն ունի։ Եթէ ես չյաջողցնեմ նրա հետ, այն ժամանակ իսուսանում եմ ձեզ նախագահ Վիլսոնին ներկայացնել, որ դուք անձամբ նրան ներկայացնէք Զեր դրութիւնը եւ Զեր պահանջները։ Որչա՞փ ցաւում եմ, որ մեր կառավարութիւնը չըմբռնեց զեն։ Կորդանովի այսակ ներկայութեան անհրաժեշտութիւնը։

ԶԲՈՑՑ 1. ՅՈՒՐԺՈՒԱՅԻ ՀԵՏ

Ապրիլ 9, 1919

Այսօր, առաւօտեան ժամը 11-ին, տեսակցութիւն ունեցայ Լ. Բուրժուայի հետ, որ նախագահն է Ազգերի Լիգի յանձնառողութիւն։

Զրոյցի նիւթին էր Հայկական Հարցի ներկայ անսառոյդ վիճակը, Հայաստանի անմիջակար դրութիւնը, թիւրքահայ զաղթականների խնդիրը, եւ Կովկասին Հայաստանում թաթարո-թիւրքական շարժումը, որ անշուշտ Երիտասարդ Թիւրքերի գործն է։ Մասնաւորապէս ես ծանրացայ այն մասին, թէ ի՞նչ արգելք կայ Հայաստանի Հանրապետութիւնը ճանշնալու որպէս belligerant եւ ընդունելու Խաղաղութեան կոնդրէսում։

Լ. Յուրժուա. — Քանի որ դուք արդէն կանչուեցիք Խաղաղութեան Կոնդրէսին մեր պահանջները ներկայացնելու, ես չեմ հասկանում ձեր ընդունելութեան յապաղումը։ Խոստանում եմ ձեզ այդ խնդրով լրջօրեն զրագուել։

Ես. — Զեր ուշագրութիւնն եմ Հրաւիրում այս Հանդամանքի վրայ, որ ուստաները դէմ չեն երկու Հայաստանների միացումին՝ integrale Հայաս-

տանը կազմելու համար : Եթր ոռւսներն անդամ չեն հակոռակում, ինձ թւռմէ է թէ մեր հարցը այժմ եւ եթ արմատապէս լուծելու հնարք կայ :

Լ. Բուրժուա .— Համաձայն եմ ձեզ : Սա կարեւոր պարագայ է : Գրեցէք ինձ խնդրեմ ամփոփ ձեր բոլոր պահանջները, եւ ես ձեզ խոսանում եմ այս օրերս պատասխանել : Կը խօսիմ մեր արտաքին գործոց նախարարին :

Ես .— Սակայն, այդ խնդիրները միայն է Pishon-ի բարեացակամութիւնից կախուած չեն :

Լ. Բուրժուա .— Գլուխմ : Կը փորձեմ բոլոր միջոցներին դիմել ձեզ պատասխան տալու և գոհացնելու հայտար : Զգիտէ՞ք արդեօք թէ պետութիւններից ո՞րն է հակառակ ձեր հարցի անմիջական լուծման և ձեր կանդրես հրաւիրուելուն :

Ես .— Զգիտեմ, եւ շատ երախտապարտ կը լինեմ, եթէ դուք, սկ. Բուրժուա, հնար ունենաք այս հարցի վրայ փոքրիկ լոյս սփառել : Ես տակարին չկարողացայ իմանալ : Գիտէք, թէ Զորսի Խորհուրդը որքան նախանձտինդիր է զազոնապահութիւն : Աւելացնեմ նաև, որ Դաշնակցները իրենց վերջին որոշումով միջազգային յանձնաժողով զրկել Արեւելք՝ աեզի վրայ ժողովուրդների ցանկութիւններն ու պահանջները ճշգելու, մեզ համար ծանր անակնկալ է : Այսպիսով մեր հարցի լուծումը կարող է շատ ուշանալ : Ես ձեզ պարզեցի, թէ որքա՞ն ժահացու հարուած է մեր հարցի լուծումը ուշացնել : Չեր միջամտութիւնը կարող է մեզ հզօրապէս օժանդակել :

Լ. Բուրժուա .— Համաձայն եմ, որ այդ որոշումը ո՛վարդէ է — ձախորդ է : Բայց ես յոյս ունիմ որ դա անիրազուրծելի է : Տարարախտարար, Խաղաղութեան կոնքրէսը շատ գանդապ է գործում առհասարակ : Ամէն պարագային Ես ձեզ խօսանում եմ իմ լիտկառար աջակցութիւնը : Գրեցէք ինձ խնդրեմ այս օրուայ մեր զբոյցի նիւթ եղող գլուխոր կէտերը :

Լ. Բուրժուա իմ տեսած Փրանսացիներից ամենէն ուշազիրն է եւ ամենէն խելահասը : Արագ եւ սուր ըմբռում ունի եւ, քիչ բառերով, առանց կեզծիքի, խօսելու շատ հաճելի ձեւ, որ արտադրում է :

Ճաշից յետոյ, այսօք անմիջապէս ուզարկեցի իր ցանկացած թուղթը :

ԶՐՈՅՑ ՎԵՍՏԵՐՄԱՆԻ ՀԵՏ

Ապրիլ 10, 1919

Երկու օրեց ի վեր Վեստերման ինձ թելազըռում է Մոնտպոմըրիի միջոցով ամերիկական մանդամը Հայաստանի վրայ խնդրել հրապարակով :

Ես եւ Փաշան սովոր ձեւով այդ մանդամը նախադաշտ Վիլսոնից խնդրելուց ի վեր, նոր քայլեր արած չեմք : Մենք այն կարծիքի ենք եղել, քանի որ Ամերիկան (Հայաստակական կարծիք եւ կառավարութիւն) միաձայն չեն այդ մանդամն ընդունելու խնդրում, որ Մոնրոյի ոկզրունքը տակաւին արդելք է այդ միաձայնութիւն, մեր հրապարակական արտայայտութիւնն այդ մասին վաղաժամ է :

Մոնտպոմըրին պնդում էր, ասելավ, որ գրանով կը յուզենք ամերիկական Հայաստակական կարծիքը եւ լուծումը կը փութացնենք :

Այսօր այս մասին փոքրիկ խորհրդածութիւն ունեցանք ևս, Փաշան եւ Վեստերմանը: Նորից տուեց նոյն հարցը՝ անմիջապէս պաշտօնական հրատարական յայտարարութիւն անել մեր մանդատի վերաբերմամբ՝ ուղղուած Ամերիկային:

Վեստերմանը հաւատացնում է, որ իր առաջարկը լոկ բարեկամական խորհուրդ է իր կողմից՝ առանց պաշտօնական հանդամանքի:

Իմ առաջարարութիւնն այն է, որ Հանսինը, կամ նոյնիսկ նախագահը անմասն չեն: Բոտ երեւոյթին, նախագահը մի այլդիմուի յայտարարութեան պէտք ունի՝ իր հակառակօրդների յամառութիւնը կոտրելու այս խնդրում:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՀ ՎԻԼՍՈՆԻ ՀԵՏ

17 ապրիլ, 1919

Ճաշից յետոյ, ժամը 5-ին, ներկայացանք ևս, Փաշան, պրոֆեսոր Տէր Յակոբեան, որ թարգմանում էր:

Նախագահ Վիլսոն. — Յոյս ունեմ, զու էք, որ ձեր խնդիրը լաւ է ընթառում:

Փաշան. — Լաւ կը լինի այն ժամանակ, երբ ձեր չորհիւ Ամերիկան կ'ընդունի Հայաստանի մանդան:

Նախագահ Վիլսոն. — Ես էլ եմ ցանկանում, որ Հայաստանի մանդան Ամերիկան ընդունի: Կարող եմ վաստացնել ձեզ, որ Ամերիկայի բոլոր լաւագոյն քաղաքացիների մատծումն ու զգացումն էլ այդ է: Եւ եթէ երբեք Ամերիկան որեւէ մանդա յոնձն տանի, այդ կը լինի Հայաստանին: Ես իմ ընկերութիւններին (կոնգրեսի) ասել եմ յաճախ, որ Ամերիկային որեւէ մանդա տալու գէպօւմ լաւագոյնը Հայաստանի մանդան է, որովհետեւ այդ աւելի հեշտ կ'ընդունուի չորհիւ այն խորոշներ Համակրութեան, որ Ամերիկան տածում է զէպի Հայ ժողովուրդը: Զեր տերրիտորիայի (Հոգերի) համար եւս աշխատում եմ: Ցանկութիւնս է ձեր պահանջած սահմաններում Հայաստանին տերրիտորիա տպահովել: Մրցումն կայ: Աւրիշներն էլ պահանջներ ունին: Բայց ես աշխատում եմ: Ազգերի լիգան այսուհետեւ լաւ հովանաւոր կը լինի: Մինչեւ այժմ, երբ որեւէ պետական ուրիշ պետութեան զործերին միջամտում էր, դա Համարում էր թշնամութիւն: Այսուհետեւ Ազգերի լիգան միջամտելու իրաւունք կ'ունենայ, առանց որ այդ թշնամութիւն նկատուի:

Տեսակցութիւնը տեւեց քսան բողէ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԷՄԻԼ ԴԻԼՈՆԻ ՀԵՏ

Մայիս 9, 1919

Ժուրինալիստ է. Դիլոն «Դէյլի Քրոնիկ»-ի մէջ մի յօլուած ունէր, որով յայտարարում էր Թիւրքիային վերաբերեալ պայմանները:

Բայտ Դիլոնի՝ որոշուած է Թիւրքիային թողնել մօտաւորապէս Սամսոն-Աղալիա դիմք միայն, որովէս պետութիւն, իսկ մնացածը Կիլիկիայից մինչեւ


Կովկաս Ամերիկայի մանդատի տակ կաղմել հայ պետութիւն։ Ամերիկայի մանդատի տակ է լինելու նաև կ. Պոլիաը եր արձակայքով։

— Այս բոլորն ինձ Հաղորդել է մի վստահելի բարձրաստիճան ամերիկացի, — ասաց Դիլլոնը։ — Նրա կարծիքով՝ մի երկու շաբաթից ի վեր Հայաստանի խնդրի շուրջը ինտրիգներ են անում զանազան ամերիկացի Փինանսիստներ՝ իրենց աջակից ունենալով ամերիկացի միսիոնարներին, որոնց նպատակն է թոյլ չտալ, որ Հայաստանը իրը անկախ պետութիւն բաժանուի Թիւրքիայից, այլ աշխատել իրադործել թիւրքերի ծրագիրը, որ է Հայաստանը եւ Թիւրքիան յանձնել Ամերիկայի մանդատին։ Այսպիսով թէ Փինանսիստները եւ թէ՝ միսիոնարները գործունէութեան լայն ասպարէզ կ'ունենան։

Բայց Դիլլոն յոյս ունի, որ Անդլիան այդ չի թոյլ տայ եւ որ Թիւրքիայի բաժանումի խնդիրը անդառնալի կերպով վճռուած է։

Խոստացաւ զբել «Դէյլի Քրոնիկլ»ի մէջ Հայաստանի արդի ծանր կացութեան մասին, ինչպէս որ մի անգամ արդէն գրեց մեր տուածին տեսակցութիւնից յետոյ, մարտ ամսին։

(Շարունակելի)



ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՒՋԵԿ ՍԵԼԻ

ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵց՝ ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ
ԸՆԴԱՆՈՒՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԴԻ ՄԱՐՏԻՆՕ-Ի ՀԵՏ



Յուլիս 17, 1919

Գնացի իմանալու, թէ որքա՞ն ճշմարիտ է իտալական զօրքերը կովկաս փոխադրելու լուրը անգլիականի փոխարէն:

Զրոյցի ընթացքում Դի Մարտինօ յայտնեց հետեւեալը.—

1) Իտալական զօրքեր կովկաս փոխադրելու մասին լուրջ դիտաւորութիւն կար եւ այս մասին առանձնապէս պնդում էին անգլիացիք: Բայց այժմ այդ որոշումը յետ է վերցուած: Իտալացիք կովկաս գնալու չեն:

2) Թուրքահայ գաղթականների մասին ասաց, թէ կոնֆերանսը հրաման արձակեց հայ գաղթականները տանիլ, վերահսատատել իրենց տեղերը:

3) Ամերիկացի գնդապէտ Հասկել նշանակուած է Հայաստանի Haut Commissaire — պարենաւորման եւ քաղաքական լիազօրութիւններով Conference-ի կողմից:

Իմ հարցին, թէ՝ Հայաստան ասելով պէ՞տք է հասկանալ արդեօք միայն թիւրքաց Հայաստանը, թէ նաեւ կովկասեանը, Դի Մարտինօն պատասխան եց.

— Հայաստան ասելով հասկանում ենք ամբողջական Հայաստանը, կովկասեան եւ թիւրքական:

Տուն դառնալով՝ երկտող ստացայ Վարանդեանից, Լոնդոնից, որով նա հաղորդում էր, թէ անգլիական զինուորական նախարար Զըրչիլ Համայնք-ների Տան մէջ յայտարարել է, թէ անգլիական զօրքերը կովկասից քաշուելու են միայն աշնանը եւ թէ այնուհետեւ Սեւ ծովեան ափերում (երեւի Բաթումի ըլջանում) կը մնայ 10,000 անգլիական կամաւորական բանակ:

Նոյնը օրը Temps եւ միւս թերթերը հաղորդեցին նաեւ, որ Conference-ը հրաման է արձակել վրացական կառավարութեան արգելքներ չհանել Հայաստան անցնող պաշարեղէնի տրանզիտի դէմ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԼԵՈՆ ԲՈՒՐԺՈՒԱՅԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 30, 1919

Այսօր առաւօտեան, ժամը 11-ին, տեսակցութիւն ունեցայ Լ. Բուրժուայի հետ իր բնակարանում Rue Palatine No. 3:

Զբոյցի նիւթը Հայաստանի եւ հայ ժողովրդի արդի կացութիւնն էր :

Կարդացի նրան Խատիսեանի սեպտ. 10-ի հեռագիրը, մեր պարլամենդի կոչը եւ Ստ. Մամիկոնեանի նամակը՝ խնդրելով աջակցել ինձ անմիջական օգնութիւն ձեռք բերելու Conference-ից եւ ազդել այդ ժքով կլեմանսոյի վրայ, որ, ըստ երեւոյթին, խոյս է տալիս Հայ Պատուիրակութեան հետ տեսակցութիւն ունենալ ներկայ իհափուկ հանգամանքներում :

— Տարաբախտաբար, — ասաց Լ. Բուրժուան, — Ֆրանսիան մենակ անզօր է, հակառակ մեր մեծ համակրութեան. Congress-ը իր ամբողջութեամբ պէտք է որոշումներ անի ձեզ համար : Յաւալի է, որ աշխարհի քաղաքականութիւնը այժմ վարած է Անդլիան, իսկ Ամերիկեան Միջանակ նահանգները նրան աջակցում են : Վիլսոնը ինքնազլուխ վճիռներ է արձակում մեն մենակ եւ հեռագրական կարգադրութիւններ անում : Ֆրանսիան անզօր է : Բայց եւ այնպէս, ձեր դրութիւնը անմիջական դարման է պահանջում : Ամերիկեան մանտան ինձ համար կասկածելի է թւում : Անմիջական միջոցների բեղումների ամփոփումը) ունի՞ք :

Ես տուի պատրաստ րեզումէն, ուր պահանջւում էր .—

1) Ազատ տրանզիտ.

2) Մեր զօրքի վերակաղմութիւն զէնքով ու ռազմամթերքով.

3) Պարենաւորում.

4) Դաշնակիցների միջամտութիւն ընդդէմ Մուստաֆա-Քեմալի.

5) Մեր անկախութեան ճանաչում :

— Կ'ուզէի, որ գէթ մեր այսօրուայ զրոյցը գործնական արդիւնք տար ձեր ազդու միջամտութեամբ, — ասացի :

— Մի քանի օրից նորից հանդիպեցէք ինձ :

Բաժնուեցինք :

Լ. Բուրժուայի տրտունջը Ամերիկայից եւ Անդլիայից տարբեր ձեւով լսում է ե՛ւ իտալիայում : Տիտոնին իր վերջին ճառում ակնարկում է այդ ասելով հետեւեալը ֆիումէի առթիւ .

«Մենք դիպլոմատիկական պարտութիւն ենք կրել Conference-ում, եւ մ'չ միայն մենք, այլ մեզ հետ նաեւ ֆրանսիան» :

Ֆրանսիայի պարտութիւնը կայանում է նրանում, որ նա, հակառակ իր բոլոր ճիգերին, չկարողացաւ թիւրքիայի համեմատական ամբողջութիւնը փրկել : Յայտնի է, որ այդ նպատակով ֆրանսական կառավարութիւնը Պարից բերել տուեց թիւրք պատուիրակութիւնը Ֆէրիտ փաշայի նախագահութեամբ, որ, սակայն, ձախողեց, չնորհիւ Անդլիայի ու Ամերիկայի : Ֆէրիտ փաշային յանուն Conference-ի տրուած կլեմանսոյի պատասխանը խմբագրել է Բալֆուր : Եւ հետագայում Տեմպր-ը դիպլոմադիական աշխարհին անվայել ու ասելով՝ թէ «այդ փաստաթղթի թարգմանուած լինելը ակնյայտ է» :

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Հոկտեմբեր, 20, 1919, Լոնդոն

Այս հոկտեմբեր 12-ին հեռագիր ստացայ մեր Լոնդոնի ժամանակաւոր գործակալ անդլիացի Ա. Միւրէիից, թէ արտաքին գործոց նախարար Լորդ

Կըրպենի կարդաղութեամբ ինձ ընդունելու է նախարարի օպնական Սըր Ճօն Տիլի:

Հոկտեմբեր 13-ին մեկնեցի Լոնդոն եւ 14-ին տեսակցեցի Սըր Ճօն Տիլիի հետ:

Տեսակցութիւնը տեւեց մի ժամ ու քառորդ, որի ընթացքում ես ներկայացրի նրան մեր երկրի ու ժողովրդի ճշգրիտ վիճակը եւ դարման ինդրեցի անգլիական կառավարութիւնից:

Տպաւորութիւնս այնպէս էր, որ, անգլիական կառավարութիւնը մեր հանդէպ իր սովորական րիզերվից (վերապահութիւն) դուրս գալու վրայ է:

Իմ դրած ինդիրներն էին.—

1) Տրանզիտի հարցը.

2) Գաղթականների վերադարձը.

3) Մեր երկրի պարենաւորումը.

4) Մեր սահմանների ճշդումը մեր հարեւանների հետ.

5) Մեր զօրքի նպաստաւորումը ուսպամթերքով ու զգեստով.

6) Մեր պետութեան ճանաչումը, որպէս միակ դարման մեր պետական տնտեսութիւնը վերականգնելուն փոխառութեան միջոցով:

Յետոյ, դրաւոր պատասխան ստացայ թէ՝

1) Տրանզիտի ինդիրը կարդաղբուած է անգլիական ներկայացուցչի ջանքերով հայ եւ վրացի կառավարութիւնների մէջ.

2) Սահմանների ճշդումը կը կատարի Conference-ը Հասկելի առաջադըրութեամբ եւ 3) Մեր երկրի պարենաւորման համար Լորդ Կըրդըն դիմել է Համագումարի Միջ-դաշնակից կոնկրէսին:

Սըր Ճ. Տիլիից յետոյ, ես տեսնուեցի Լոյդ Զորջի առաջին քարտուղար Ֆիլիպ Քըռի հետ: Ես նրան ներկայացրի հետեւեալ ինդիրները.—

1) Մեր զօրքի վերակաղմութիւնը.

2) Մեր զաղթականների վերադարձը.

3) Մեր սահմանների որոշումը եւ

4) Մեր պետութեան ճանաչումը:

Ֆիլիպ Քըռ խոստացաւ այս բոլորը ներկայացնել լ. Զորջին ու ինդրեց միաժամանակ իսկոյն իրեն հաղորդել, թէ ի՞նչ ծախք կը պահանջի 50 հազարնոց հայկական մի բանակ:

Ես խոստացայ մեր զինուորական խորհրդականների հետ կազմել եւ դրկել նրան այդ հաշիւը:

Ապա նա յանկարծ աւելացրեց, թէ՝ «եթէ դուք կամենում էք խորհրդականներ, զրեցէք ե՛ւ այդ»:

Վերջին առաջարկն ինձ համար անսպասելի էր եւ ապացուցում է, որ Անգլիան, ինչպէս վերեւում ասացի, մեր հանդէպ իր րիզերվից դուրս գալու նշաններ է ցոյց տալիս:

Իմ հասնելուց 3-4 օր յետոյ, հեռադիր ստացայ Օհանջանեանից, թէ Պօղոս փաշան նոյնպէս գալու է Լոնդոն: Այս ինձ համար անսպասելի էր, քանի որ մեկնելիս, հրաժեշտի ժամին, նա ինձ ոչինչ չասաց այդ մասին:

Պարզ էր, որ իմ մեկնումը, Լոնդոն նրան թելադրել էր նոյն բանն անել: Անախորժ եւ մեր դատի համար այսքան կորստարեր մրցակցութեան զգացումը, հակառակ իմ բոլոր ջանքերի, չի բողոք այսաւան:

Ես, իմանալով նրա գալու մասին, վճռեցի ընդհատել իմ տեսակցութիւն-ները եւ սպասել, մինչեւ որ նա հասնի՝ միասին ու միարան քայլեր անելու համար :

Տարաբախտաբար, Պօղոս փաշան հասաւ եւ, առանց ինձ ասելու, տեսակցութիւն ինդրեց Կըրպենից եւ գնաց մենակ :

Կըրպեն ասել է հետեւեալները —

1) Ամերիկան Հայաստանի մանտագն ընդունելու չէ.

2) Թիւրքական եւ հայկական խնդիրները կը քննուին ի մօտոյ, հաւանաբար Լոնդոնում .

3) Քանի որ Ամերիկեան մանտա չկայ, անհնարին է ՄԵԾ Հայաստան Կի-Մեկայով, որը պիտի մնայ Ֆրանսիային .

4) ՄԵՐ գրութիւնը ծանրանում է նրանով, որ Մուստաֆա Քէմալը 100 հազար զօրք ունի, եւ որեւէ պետութիւն յանձն չի առնի նրան այդ տեղից զէնքի ուժով հեռացնելու պարտքը : Հարկ կը լինի գործել դիալումադիական ճամ-քավ .

5) Ցաւ է յայտնել, որ զինադադարի պայմանները լաւ չսահմանեցին Հայաստանի գրաւումը սկզբից .

6) Գրեթէ վճռապէս յայտնուել է, որ քրդական պետութիւն պիտի կազմը Միջազեւքի ափում եւ շատ գո՞չ է եղել, որ մենք թուղթ ենք ստորագրել քիւրդերի ներկայացուցիչ Շէրիֆ փաշայի հետ, բայց նա ասել է թէ ես չեմ հաւատում ու չեմ վստահում .

7) Ասել է, որ հայերդ պիտի բաւականանաք Կովկասեան Հայաստանի եւ Թիւրքաց Հայաստանի երեք վկայէթների միացումով .

8) Որ ո՛չ Անդլիան, ոչ Ֆրանսիան ու Խտալիան չեն կարող ընդունել Հայաստանի մանտագը : Ինչ վերաբերում է փոքր պետութիւններին, ինչպէս Հոլանտիա, Շուէյցարիա, Կանատա եւ այլն, նրանք չեն կարող, որովհետեւ Հայաստանում կարդ պահելու համար պէտք է 150 հազարնոց բանակ .

9) Ցոյց է տուել ապշեցուցիչ անծանօթութիւն մեր ժողովրդի մասին՝ յայտարարելով, թէ Հայաստանի Հանրապետութեան սահմաններում հայերի թիւը ընդամէնը 400 հազար է : Փաշան հերքել է : ՄԵՐ խորհուրդ տուին շուտով դառնալ Լոնդոն :

ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒԽՆ ԶԱՅԿՈՎՍԿՈՒ ՀԵՏ

Դեկտ. 6, 1919

Զայկովսկին իր մօտ ժողովի էր հրաւիրել Ռուսաստանի այն ազգերի ներկայացուցիչներին, որոնք «Ճգտում են վերստին միանալ Ռուսիային» :

Հրաւիրել էր ե՛ւ մեզ :

Ես ու Համօն գնացլնք մասնաւոր զրոյցով պարզելու թէ ինչու՝ մենք՝ հակառակ մեր բոլոր համակրութեան դէպի ոռւսները, անկարող ենք յիշեալ ժողովներին մասնակցել :

Ես ասացի, որ, անկասկած պ. Զայկովսկին եւ ընկերները հաւատում են մեր զգացուաներին դէպի Ռուսիան, որի արագ վերածնութիւնն ու վերակազմութիւնը լայն, աղատական հիմունքներով, մեր ամենաբուռն իղձն է,

քանի որ անկախ Հայաստանը թուրանական ծովի մէջ միայն եւ միայն Ռուսաստանն ունի որպէս յենարան։ Բայց և ստիպուած ենք չմասնակցել «ռուսներին միանալ ցանկացող ազգերի ժողովներին», քանի որ մենք այսուհետեւ անկարող ենք Ռուսաստանին միանալ այն պարզ պատճառով, որ մենք արդէն իսկ միացած ենք Թիւրքաց Հայաստանին, եւ այդ հիմունքով է, որ պաշտպանել ենք ու պաշտպանում ենք մեր դատը Conference-ի առաջ։ Ամբողջ գրեթէ մի տարի մեզ Թիւրքաց Հայաստանին միացած յայտարարելուց յետոյ, այժմ գալ ե'ւ մենակ մասնակցել այդպիսի ժողովի, դա կը վնէր համազօր վերջին պահու մեր հայրենիքի խոշոր մասից՝ Թիւրքաց Հայաստանից հրաժարուելուն, ինչ որ դուք պ. Զայկովսկի մեզնից չէք պահանջի, եւ մենք էլ յանձն առնել չենք կարող։ Մենք այսուհետեւ կարող ենք եւ պէտք է դաշնակից մինենք Ռուսաստանին, բայց ոչ թէ միանանք նրան»։

Զայկովսկին պատասխանեց թէ մենք իրաւոնք ունինք։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՈՒԱՅՑԻ ՀԵՏ

Դեկտ. 8, 1919

Այսօր ճաշից յետոյ, ժամը 3-ին, Պողոս փաշան եւ ես՝ գնացինք տեսակցութեան ամերիկական երկրորդ պատուիրակ Ռւայտի հետ։

Մեր զրոյցի նիւթն էր իմանալ, թէ ի՞նչ պիտի անենք այն դէպօւմ, եթէ պետութիւնները, առանց սպասելու Ամերիկայի պատասխանին, ձեռք առնեն ու վճռեն Արեւելեան ու մասնաւորապէս Հայոց Հարցը։

Զրոյցի ընթացքում Ռւայտ յայտնեց հետեւեալները։

1) Անկարելի չէ, որ պետութիւնները դիտմամբ չկամենան սպասել եւ վճռեն Հայոց եւ Թիւրքիայի խնդիրները, մասնաւորապէս Ֆրանսիան, որ այդ միջոցով յոյս ունի պահել Կիլիկիան։ «Դուք զիտէք անշուշտ, ասաց Ռւայտ, — որ Կիլիկիան մենք ենք պահանջել»։

2) «Խորհուրդ չէի տայ ձեզ Ամերիկայի մերժումը բացարձակ նկատել եւ նոր քայլեր անել՝ ըստ այս համոզումի։ Ամերիկան կարող է անակնկալ ձեւով հաստատել դաշնագիրը։ Թէեւ, — աւելացրեց Ռւայտ, — ես յոյս չունեմ, թէ նա կ'ընդունի մանտաղը Հայաստանի։ Իսկ ուրիշ օգնութեան եղանակ ես տակաւին չեմ տեսնում։ Իմ խօսքին, թէ օրինակ Պարսկաստանի եւ Անգլիայի համաձայնութիւնը, հնար չէ՝ այդպիսի մի համաձայնութեամբ մեզ օգնել, նա աւելացրեց։ «Այդ անհնարին չէ, բայց դրա համար դարձեալ մեր հասարական կարծիքի պատրաստութիւն է պէտք»։

3) Դաշնագիրը կարող է հաստատել վերապահումներով, ինչպէս այդ զրում է Temps-ը եւ դա լաւագոյն ձեւն է։

4) «Ես յոյս ունեմ Ամերիկա հասնելով՝ պարզել շատ բան, եւ կարծում եմ, որ այնտեղ ձեզ աւելի օգտակար կը լինեմ, քան այստեղ։ Յամենայն դէպս դուք յուսահատուելու չէք»։

5) «Մեր պատուիրակութեան մեկնելով, — ասաց, — դուք յարաբերութիւն կը պահպանէք մեր դեսպանի հետ, որին մենք կը խօսինք այդ մասին։ Յաջորդ օրը ամերիկեան ամբողջ պատուիրակութիւնը մեկնեց Պարիզից։

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ՀՕԶԱՆ

ԿԱՅՄԱՆՍՈՆ ԼՈՆԴՈՆՈՒՄ

Դեկտեմբեր 10, 1919

Այսօր, իմանալով որ Կլեմանսոն Բերթըլոյի հետ Լ. Զորջի հրաւէրով մեկնում է Լոնդոն, ուր պիտի քննուի ի միջի այլոց Ե՛ւ թիւրքական պրորենմը, հեռախոսով խնդրեցի Պողոս փաշային, որ մենք երկսով անմիջապէս մեկնենք Լոնդոն։

Ես աւելացրի, որ նոյնիսկ այն դէպքում, եթէ մեր ճամբորդութիւնը անհետեւանք մնայ, դարձեալ մեղ վրայ պատասխանատուութիւն կայ անպատճառ այս պահուն Լոնդոն գտնուիլ։

Պողոս փաշան առարկեց, թէ անօգուտ է այդ ճամբորդութիւնը՝

1) Որովհետեւ Կլեմանսոն կը լինի Լոնդոնում հինգչարթի եւ յետոյ կը գայ շարաթ։ այդքան կարճ ժամանակում անհնարին է Արեւելեան կնճիռը քննել։

2) Որչափ ինքը գիտէ, Արեւելեան հարցի համար չէ, որ Կլեմանսոն գնում է, այլ Փինանսական եւ մէկ էլ Գերմանիայի համար։

Փորձեցի համոզել, որ սխալում է ի զուր։ Անգամ, երբ յայտարարեցի, թէ ես գնում եմ։

Իմ որոշումը գնալու՝ նրան շատ դժկամակեց։ Տոմսակն առայ, եւ չորեք շարթի երեկոյ գնացի Պողոս փաշային մնաք բարեւի, որ հինգչարթի առաջում մեկնեմ։

Նա նորից սկսեց ինձ համոզել, թէ ես սխալ եմ գործում գնալով, թէ այդ ճամբորդութիւնից ոչինչ չի դուրս գայ, թէ Կլեմանսոն շուտով պիտի յետ գայ, թէ Կլեմանսոյին շատ մօտիկ մի մարդ իրեն այդպէս է ասել։ Եւ երբ ես առարկեցի դարձեալ, նա մէջ տեղ նետեց մի արգումենտ, որ ինձ ճնշեց։ Նա ասաց —

«Ձեր ճամբորդութիւնը Լոնդոն ոչ միայն օգտակար չի լինի, այլ եւ վնաս կը բերի, քանի որ Կլեմանսոն, որ, առանց այն էլ, մեղ հետ լաւ չէ, պիտի նկատի որպէս մի անբարեացակամ ակտ՝ գնալ նրա քթի տակ տեսակցութեան անգլիացոց հետ։ Աւելի լաւ է չգնաք»։

Ես զիջեցի վերջին արգումենտին, տոմսակը յետ տալ տուի։

Երբ Կլեմանսոն 4 օր յետոյ վերադարձաւ, հասկցայ, որ մեծ սխալ էր չգնալը իմ կողմից, եւ ես պէտք չէ լսէի Փաշային, որ ինքը կնոջ պատճառով անկարող էր տեղից շարժուել, ինձ էլ դիտմամբ խափանեց գնալ։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ Ա. ՔԱՐՏՈՒՂԱՐ PHILLIPPE KERR-Ի ՀԵՏ

Ես հարցրի Կիլիկիայի մասին։

Ֆիլիպ Քըռ. — Կիլիկիայի խնդիրը մեր եւ Փրանսացոց միջեւ վերջացած է վերջնականապէս։ Կիլիկիան թողնուած է Ֆրանսային։ Եւ մենք չէինք կարող ուրիշ կերպ վարուել, որովհետեւ Ամերիկեան մանդան Հայաստանի վրայ այլեւս անյոյս է։ Այստեղ ես մի շարք ամերիկացիներ եմ տեսել, որոնք բոլորը միաբերան վկայում են, որ միանգամայն յոզնած են Եւրոպայի այս անմիտ միջամտութիւններից եւ կ'ուզէին վերջ տալ այդ դրութեան։

Ես.— Մենք ստիպուած ենք այսպիսով անել bonne mine et mauvais jeu: Իսկապէս էլ գոհ ենք: Եթէ Կիլիկիան մեզ չպիտի հասնի, գոնէ թիւրքերին չմնայ, այլ Ֆրանսիային: Այս նոր պայմաններում, սակայն, կ'ուզէինք դէթա) Ֆրանսիային թողուած դերիտորիային սահմանակից լինել:

Բ) Հայ ազգաբնակութեան ազդային շահերը ապահովուած տեսնել մի ռեժիմով, որ համապատասխան լինէր Ֆրանսիայի՝ մեզ արած խոստումներին այս մասին:

Գ) Քանի որ մենք այսպէս հեռանուած ենք Միջերկրական ծովից, Ֆրանսիան բարի գտնուէր մեզ երկաթուղային ելք տալու դէպի Միջերկրական ծովը:

Ֆիլիպ Փըռ.— Այս բոլորի մասին համաձայնութեան դալու է Ֆրանսայի հետ:

Ես.— Այս՝ բայց ձեր աջակցութիւնը մեր ճիգերին արդիւնք կը տայ եւ կ'ապահովէ: Յետոյ, Կիլիկիայից դուրս մնացած մեր վեց վիլայէթները անշուշտ մեզ պիտի պատկանին եւ պիտի կցուին Հայաստանին, այնպէս չէ՞:

Ֆիլիպ Փըռ.— Զեմ կարող ասել, բայց Հայաստանի երկու հատուածները պիտի միանան: Այս մասին կարող էք հանգիստ լինել:

Ես.— Շնորհակալ եմ: Բայց մենք անհանգիստ ենք մեր շրջապատից, — մի կողմից Մուստաֆա Քէմալից, միւս կողմից՝ Աղրբէջանից, իսկ հիւսիսից՝ բոլցեւիկեան մօտեցող քառուը: Իրերի այս կացութեան մէջ արդեօք Անդլիայի շահերը չե՞ն պահանջում ուաղմամթերքով եւ նիւթական միջոցներով կաղմակերպել մեր բանակը:

Ֆիլիպ Փըռ.— Այս մասին անպատճառ խօսեցէք զինուորական նախարար Ջըրչիլին եւ պարզեցէք մեր Ասիական տիրապետութիւններին սպառնացրղ վտանդը: Առայժմ շատ կը խնդրէի ինձ պատասխանել: Ի՞նչ թելադրութիւն դուք կարող էիք մեզ անել այն պարագային, եթէ Մուստաֆա Քէմալ չկամենայ դատարկել թիւրքահայ նահանգները ձեզ յանձնելու համար: Նկատի առէք, որ ճնշում, զինուորական կամ քաղաքական, չենք կարող գործադրել ոչ Պոլսում, որովհետեւ նա արդէն մեր ձեռքին է, եւ ոչ էլ թիւրքիայի այն մասում, ուր Դաշնակիցները տիրել են:

Ես.— Նախ քան ձեր հարցին պատասխանելը պարզենք թէ՝ ի՞նչ ուժ է ներկայացնում Մուստաֆա Քէմալը: Զգիտեմ՝ ի՞նչ է մեր կարծիքը, բայց մեր զինուորական կայանի տեղեկութեան նայելով՝ Մուստաֆա Քէմալի շարժման մէջ «հլուս»—ը մէծ բաժին ունի: Նրա զօրքի թիւը 10-12,000-ից չի անցնում, այն էլ վատ հաւաքուած ու վատ պատրաստուած: Մէկ երկու հաղար էլ քրտական հեծելաղօրք կարող է լինել: Յամենայն գէպս 15,000-ից աւելի չի լինի մեր շրջաններում, ուոյնքան էլ՝ յոյների գէմ: Այդպէս էր վլկայում նաեւ Ամերիկական զինուորական միսսիայի պետ զօրքալար Հարբորաը: Արդարեւ, եթէ Մուստաֆա Քէմալի ոյժը մէծ լինէր, նա հանդիսաւ չէր նստի մինչեւ այժմ: Բայց եւ այնպէս, 15,000-ը նոյնպէս ուժ է: Դուք հարցնում էք, թէ ի՞նչպէս կարելի է այդ ուժը հեռացնել: Սրդարն այն կը լինէր, որ ես ասէի թէ Դաշնակիցները պարտական են մեզ օգնել իրենց զօրքով դուրս քւելու թիւրքերը մեր հայրենիքից, քանի որ հայերը ձեզ համար 4 տարի անձնուիրաբար կռուեցին: Բայց ես գիտեմ, որ ոչ դուք ձեր սկզբան-

ՍԱՐԾԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

ցիներին կ'ուղարկէք Հայաստան, ոչ ֆրանսիան իր բրիտոններին եւ ոչ էլ իտալիան իր լոմբարդացիներին։ Հետեւարար, ձեզ կ'ասեմ։ Եթէ դուք կը զսպէք մեր թիկունքում Աղբարէյջանը եւ մեզ նիւթապէս հնար կը տաք մեր բանակը վերակաղմելու, կարող եմ ձեզ զստահացնել, որ Մուստաֆա Քէմալը մեր սահմաններից դուրս անել մենք կարող ենք։

Հարց— Ո՞րչափ զօրք դուք կարող էք ոտքի հանել։

Պատասխան— Ոչ աւելի քան 40,000։ Ահա այս 40 հազարի համար է, որ եկած եմ ինդրելու Անգլիայի աջակցութիւնը։

— Խօսեցէք Զըրչիլին, — ասաց Ֆիլիպ Քըռ։ — Ես եւս իմ կողմից կը խօսեմ Լոյդ Ջորջին։ Երեք օրից Լոյդ Ջորջ, Քըրգըն, ես եւ ուրիշներ գնում ենք Փարիզ՝ Թրքական եւ ձեր գործով զբաղուելու։ Եկէք ե՛ւ դուք անպատճառ։ Առ այժմ տուէք ինձ ձեր Փարիզի հասցէն։

ՆԱԽԱՃԱՇ ՖԻՑ ՄՈՐԻՍԻ ԵՒ ԳՆԴ. ՄԱԼՈՅԻ ՀԵՏ (Պարլամենտի անդամ)

Լոնդոն, 6 յունուար, 1920

Ֆից Մորիսը բրիտանական Պոլսի դեսպանատան նախկին թարգմանն է, լաւ գիտէ Արեւելքը, Հայերին եւ Հայկական Հարցը։ Ճանաչում է մասնաւորապէս Վարդգէսին, Փաստրմանեանին եւ Զօհրապին։ Իրլանդացի է, սրամիտ հետեւող եւ ըմբոստ է կառավարութեան դէմ, չի հաւատում թէ Անգլիական կառավարութիւնից որեւէ բարիք դուրս կը գայ։ Իր զրոյցը չափազանց հետաքրքիր է, բայց առանց գործնական արժէքի, որպէս հաճելի ժաման։

Գնդապետ Մալլօ հետաքրքուած է բոլշեւիկներով։ Ինք բոլշեւիկ չէ, բայց նրանց յաջողութիւնները ծափահարող է։ Նրա կարծիքով՝ Դենիկինի պարտութիւնից յետոյ, պետութիւնները ստիպուած պիտի լինին 3 ամիս չանցած յարաբերութեան մէջ մտնել Սովիէտների հետ եւ, հաւանարար, խաղաղութիւն կնքել։ Միաժամանակ, ասում է նա, կը ճանաչուին Բուսաստանից ծագում առած մանր պետութիւններ։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԳՆԴԱՊԵՏ ԳՐԻԲԸՆԻ ՀԵՏ

Լոնդոն, 7 յունուար

Գնդապետ Գրիբընը արտաքին գործոց նախարարութեան զինուորական կարեւոր խորհրդականն է։ Եւ նրան են ենթարկում Արեւելքի քաղաքական կաղմակերպութիւնների գործերը։

Աս երկրորդ տեսակցութիւնն է նրա հետ։ Առաջինը երկու օր առաջ էր, ուր զրոյցի նիւթն էր մեր զօրքի վերակաղմութիւնը։ Նա էլ այդ գտնուած էր անյետածգելի եւ անհրաժեշտ՝ խոստանալով իր լիակատար աջակցութիւնը։

Այս երկրորդ տեսակցութիւնը առաջինի չարունակութիւնն էր։ Գնդապետի կարծիքով՝ Մուստաֆա Քէմալ 15,000-ից շատ աւելի պակաս զօրք ունի։ Գլխաւորը մեր բանակի վերակաղմութիւնն է, որի մասին նա պատրաստում է զեկոյց արտաքին եւ զինուորական նախարարութիւնների համար։ Այս առթիւ նա կ'ուզէր լրիւ տեղեկութիւններ մեղնից։

Հարց.— Այս պայմանների մէջ Մուստաֆա Քէմալ կարո՞ղ է անցնել Հայաստան։

Պատասխան.— Հաւանօրէն ոչ։ Մեր լեռները, մեր գժուարին ճամբաները ձմբանը զինուորական շարժումները դարձնում են համարեա անհնարին։

Գնդ. Գրիբըն.— Այդ լաւ է։ Հետեւապէս, մենք մեր առջեւ ունինք Յ ամիս հայկական զօրքի վերակաղմութեան համար։ Կարո՞ղ էք ասել որչա՞փ զօրք ձերոնք կը հանեն։

Ես.— Եթէ լայն օգնութիւն լինի, կարծում եմ՝ 40 հազար։

Գրիբըն.— Կարո՞ղ էք կերակրել այդ զօրքերը, որովհետեւ մենք կ'ուզէինք զբաղուել զինուորական եւ հագուստների հարցերով միայն։

Ես.— Եթէ Ամերիկան այսպէս շարունակի իր օժանդակութիւնը, կը յուսամ որ պիտի կարողանանք։

Գրիբըն.— Կարո՞ղ էք ասել, թէ որքան ժամանակ կարող էք ձեր զօրքը զէնքի տակ պահել։ Ես ստուգապէս գիտեմ, որ յունական զօրքերը խստօրէն տրտնջում են այս յարատեւող կոփւներից։

Ես.— Յոյների եւ մեր քաղաքական դրութեան մէջ մեծ տարրերութիւն կայ։ Նրանք ճգնում են մեծացնել արդէն գոյութիւն ունեցող իրենց պետութիւնը, մինչդեռ մեր ժողովուրդը աշխատուամ է ազատուել թրքական լուծից եւ իր գոյութիւնը պահպանել։ Հոգեբանական այս դրութիւնը ընդունակ է մեր զօրքերին մղել թիւրքերի դէմ պայքարի, մինչեւ որ խսպառ ազատուենք թիւրքական վտանգից։

Գրիբըն.— Իրաւ է այդ, հասկանում եմ։ Որչա՞փ չոգեմեքենայ եւ վագոններ ունիք։

Պատասխան.— Մեր ունեցածները քիչ են։ Երկութաղային գծերը մեծ մասով գրաւեցին Վրաստանն եւ Աղրբէյջանը։ Դուք կարող էք նրանցից առնել մեր բաժինը։

Մի քանի այսպիսի զործնական հարցեր տուեց Գրիբընը, որոնց ես պատասխանեցի։ Նրան տուի զինուորական դրութեան մասին մի աշխատութիւն, որը պատրաստել է զօր։ Կորզանովը։

Նոյն օրը, որովհետեւ արտաքին գործոց նախարարը քաղաքում չէր, ես տեսնուեցի Sir John Dilly-ի հետ։ Նրան տեղեկացրի Քըրզընին տալու համար մի նօթ Ղարաբաղի մասին, որով պաշտպանելով մեր իրաւունքը պատմական եւ այլ տեսակիտից, ցուցահանում էի այն մեծ վտանգը, որ սպառնում է Հայաստանի՝ Ղարաբաղի Լեռնաստանի գրաւումով թաթարներից։

թ) Ներկայացրի նոյնպէս մի ուրիշ գրութիւն-հերքում Քըրզընի վերջին ճառի այն մասին, ուր նա ասում է, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ տեղացի հայերի թիւն է 500 հազար, իսկ թրքահայ գաղթականների թիւը 150,000։ Խմ թղթով ես տուի հայերի ճշգրիտ թիւը՝ հաստատուած ուռւսական եւ մեր կողմից։ Նախարարին տուի նաեւ մի ազգագրական քարտէզ Հայաստանի։

ՏԵՍԱԿԳՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԶԸՐՉԻԼԻ ՀԵՏ

Յունուար 8, 1920

Տեսակցութեան նպատակն էր նրանից խնդրել մեր բանակի համար զէնք եւ ռազմամթերք։ Ես նրան ասացի.

— Պ. նախարար, այս պատերազմի ընթացքում հայերը երկու բանաւոր անհերքելի ապացոյցներ տուին՝ անվերապահ կերպով անձնուէր եղան Անտանդին, թ) ցոյց տուին, որ գիտեն շատ արիաբար կոուիլ, երբ նրանց տրում է՝ ինչ որ անհրաժեշտ է։ Տարաբախտաբար, զինադադարի շրջանում Դաշնակիցները պէտք չհամարեցին հայ ժողովրդի այդ երկու տուեալները դնել ի սպաս խաղաղութեան գործին Արեւելքում եւ Հայաստանի ազատութեան։ Մեր բոլոր դիմումները մեր զօրքի օգնութեան առթիւ մնացին անհետեանք։ Այժմ, երբ բոլչեւիկների առաջխաղացումով Արեւելքը ընդհանուր չփոթի նախօրեակին է, որից պէտք է տուժեն ոչ միայն հայկական, այլ եւ Դաշնակիցների, մասնաւորապէս Անդլիայի շահերը, կարծում եմ որ հայ բանակի վերակազմումը պէտք է անյետաձելի նկատուի։ Խնդրեմ, այս առթիւ ի նկատի առնել, որ Մուստաֆա Քէմալ իր բանդաներով հարաւից սպառնում է եւ Հայաստանի եւ Դաշնակիցների շահերին։ Արեւելքում Աղրբեյյանը, թիւրքերի բնական դաշնակիցը, օգտուելով Հայաստանի ծանր դրութիւնից եւ Դաշնակիցների անտարբերութիւնից, գրաւեց Ղարաբաղի բարձրաւանդակը, որտեղից նա սպառնում է Հայաստանին։ Միւս կողմից՝ բոլչեւիկներն են յառաջանում, որոնց առաջ բերած չփոթը կարող է ազդանշան դառնալ ընդհանուր յարձակման թիւրքերի եւ թաթարների Հայաստանի վրայ՝ պանթուրանական եւ պանխստամիզմի իղձն իրագործելու համար։ Նկատելով այս բոլոր պայմանները՝ ես շատ եմ խնդրում, որ, վերջապէս, հար տաք մեր վերակազմելու մեր բանակը՝ հասցնելով այն մինչեւ քառասուն հազարի, որը միայն կարող է ազատել հայ ժողովուրդը անխուսափելի կոտաստրոֆից։ Խնդրում եմ ձեր աջակցութիւնը։

ԶԵՐԾԻԸ պատասխանեց.

— Ես հասկանում եմ դրութեան լրջութիւնը։ Ցաւում եմ որ ես մենակ իրաւասու չեմ ձեզ գոհացում տալու։ Եթէ ես այդշափ իրաւազօր լինէի, Դենիկինը այդպէս չէր պարտուի։ Տարաբախտաբար, պետութիւնները չ'ուզեցին հասկանալ, որ Դենիկինի գոյութիւնը ամէնքին հարկաւոր է։ Նա մի հովանոց էր, որ շատերին էր ծածկում։ Նրան միակ պէտք եղած օգնութիւնը չհասցրինք։ 20 մետր անդունդի վրայ 10 մետր տախտակ չեն ձգի։ Արդիւնքը մեր աչքի առաջն է։ Ցուսամ՝ պետութիւնները շուտով կը զգաստանան։ Բարեբախտաբար, Դենիկինի զօրութիւնը իսպառ փչացած չէ։ Նա նահանջել է բաւական կանոնաւոր կերպով։ Գալով ձեր խնդրին՝ հաւատացէք, որ ձեր զոհ հարերութիւնները զիտեմ եւ սրտանց համակիր եմ ձեզ։ Խսկոյն ներկայացը րէք ինձ մի գրութիւն ձեր պէտքերի մասին։ Ես երկու օրում կ'ուսումնասիրեմ եւ իսկոյն կը ներկայացնեմ մեր կառավարութեան։ Խոստանում եմ լինել ձեզ համար նոր լաւ կանալ։

Ես պատասխանեցի.

— Պ. նախարար, ես կը խնդրէի լինել ոչ միայն կանալ, այլ և լաւ փաստաբան մեր պէտքերի ու մեր վիճակի:


— Իսկոյն ներկայացրէք ձեր գրութիւնը: Ես խոստանում եմ անել այն, ինչ որ ինձանից է կախուած, եւ կը խնդրեմ հաւատացէք իմ խորը համակրանքին դէպի ձեր ժողովուրդը:

Զըրշէլ երիտասարդ ու եռանդուն մարդ է եւ խիստ համարձակ իր որոշումների մէջ:

Մեկնելուց առաջ, ես նրան թողեցի մի note verbal մեր զըրոյցի մասին, եւ յաջորդ առաւօտն իսկ ես նրան ուղարկեցի մեր զինուրական պէտքերի համար զօր. Կորկանեանի մի փաստաթուղթը քառասուն հազարնոց մի բանակի պէտքերի մասին:

Նոյն օրը վերադարձայ Փարիզ, ուր եկան Անդիմայի կարեւոր նախարարները կոյդ Զորջի հետ միասին:

(Շարունակելի)



ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՒՋԵՒ ՍԵԽԻ

ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

ԳՐԵՑ՝ ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԶՐՈՅՑ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆԻ ՀԵՏ



Պարիզ, դեկտեմբեր 16, 1921

Դուրս գալով Բրիանի մօտից (դեկտեմբեր 16, ժամը 11.30-ին), ես խղղեցի Նորատունկեանին լսել իմ մի մտածումը Հայաստանի սահմանների մասին։ Մենք ոտքով քալեցինք անցանք Port Alexandre-ը եւ ներս մտանք Dogen-ի ճաշարանը Champs Elyse'e-ում։ Ես այստեղ՝ պարզեցի իմ ծրագիրը Տրապիզոնի շրջանի մասին, որ հետեւեալն է։

Յոյները, ժամանակին մերժելով մեզ Տրապիզոնը, նպատակ ու յոյս ունէին Պոնտոսն ամբողջովին ազատել թիւրքերից։ Այդ, երբ ներկայ պարագաները, հանգամանքները այնքան ձախորդ են դասաւորուած մի այդպիսի ծրագրի համար, հնար չկա՞յ արդեօք, Տրապիզոնի մասին նոր զրոյց սկսել յոյների հետ։ Այդ շրջանի խոշոր բաժնը Վիլսոնը տուել է Հայաստանին։ Այժմ, երբ թիւրքերը բացարձակապէս սպառնական մի քաղաքականութիւն են որդեզրել՝ ջնջելու, ցրելու, հեռացնելու քրիստոնեաներին իրենց պետութիւնից, արդեօք յոյները չեմ գերազափ Վիլսոնի գծած սահմանները պաշտպանել եւ մնալ մեզ հետ ազատուելու թիւրքական անխուսափելի սարսափիներից։ Եթէ այս', ապա յոյներն իրենք պիտի պահանջեն նորից չգնել իրենց թիւրք արիւնալի տիրապետութեան տակ, այլ միացնել Հայաստանին։ Եւ որպէսզի նրանց հեռաւոր ծրագրին արդելք չկանոնական չէնք կորցնի եւ շատ կը շահինք, եթէ այժմէն յայտարարենք, որ ա) մենք նրանց կ'ապահովենք ամենալայն տեղական ինքնավարութիւն եւ բ) լիակատար յանձնառութիւն բաժանուել Հայաստանից օրինակ 15-20 տարուց յետոյ, երբ նրանք հնարաւոր գտնեն Պոնտոսի մնացած մասերն էլ չորթել թիւրքերից եւ միանալով ստեղծել իրենց ծրագրած Պոնտական պետութիւնը։ Ի՞նչ կը շահին երկու կողմերը 15-20 տարուայ կենակցութեամբ։ Յոյները — ապահովութիւն թիւրքական ջարդերից, տնտեսական ու ֆիզիքական զարգացում եւ մի կորիզ, որ պիտի դառնայ ապագայում Պոնտոսի պետութիւն։ Միւս կողմից՝ նրանք հզօրապէս կ'օդնեն Հայաստանի զօրացումին ու հաստատութեանը, որից մեծ շահ ունի Յունաստանն եւ հելլէնականութիւնը։ Մենք՝ հայերս կը շահուինք նրանով, որ ա) Մովի ելք կ'ունենանք Հայաստանից, բ) քրիստոնեայ ազգարնակութիւն մեր ճամրին՝ մեզ աջակից ու բարեացակամ, գ) դօրեղ արգումենտ, թէ մեզ յատկացուած հողերը մեզնից թափուր չեն, այլ բը-

նակուած են քրիստոնեայ տարրով, դ) յոյների աջակցութեամբ կը հաստատուինք Լաղիստանում, ե) Հայաստանի ընդհանուր զրաւումը կը հետաքրքրի ե՛ւ յոյն կառավարութիւնը եւ գրանից կարող են ծագել մի շարք հեռանկարներ :

Դա բոլորը լսելուց յետոյ, Նորատունկեանը սկզբունքով համաձայնում է ինձ հետ, որ զրանից շահ կարող է լինել մեզ, բայց միաժամանակ մտածե՛ռ էր յաջողութեան մասին :

— Այլ խնդիր է, — ասաց նա, — եթէ մենք խօսք անէինք յոյն մի իշխան մեր երկիրը զնելու, կամ յունական մանտաղի : Բայց այդ դէպքում էլ վարանումն ունիմ, թէ ո՞րն է լաւ՝ Հայ-թիւրքական գործակցութիւնն ապագայո՞ւմ, թէ՞ Հայ-յունական :

Այնուամենայնիւ նա համաձայնեց, որ ես մինակ անցնեմ Լոնդոն այս նիւթի մասին սոնդաց անելու Գունարիսի եւ Բալդացցիի մօտ եւ, համաձայն սորինքի, մենք հետազում որոշումն անենք :

ՀԱՅ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԹԵՇ ԻՕՄԵ!

Պարիզ, 16 դեկտեմբեր, 1921

Վախ ունեմ, որ երկու պատուիրակութիւնները այս երկու գաղափարների մասին լուրջ տարակարծութիւն ունենան :

Դեկտեմբեր 15-ի երեկոյեան մեր պատուիրակութեան մէջ ժողովի, կամ աւելի ճիշդ, մտքերի փոխանակութեան հրաւիրեցի Ազգային Պատուիրակութեան անդամներին : Եկան պ. պ. Նորատունկեան, Սինապեան, Պապաջանեան : Մեր կողմից՝ ես եւ Փափաղեան :

Դնութեան խնդիրներն էին —

1) Արտասահմանում կամաւորներ ցուցակադրելու ծրագիրը, իմ առաջարկած .

2) Առաջիկայ Գերագոյն Խորհրդին մեր ասելիքը .

3) Հայաստանի հողերը (Թուրքիայից) զրաւելու միջոցները :

Ես պարզեցի իմ առաջին առաջարկը, այն է՝ նշանակել որոշ թուով սպաներ եւ զրկել զաղութները, ուր նրանք ցուցակադրեն գիտակից, հայրենասէր եւ մանաւանդ զինուորական ծառայութիւն կատարած հայ երիտասարդներին : Կամաւոր զրուողը իր գործն ու աշխատանքը թողնելու չէ . նա պիտի շարունակի իր պարապմունքը : Միայն ազատ ժամանակ, տօն եւ կիրակի օրերը, կամ երեկոները հաւաքում են ամէնքը իրենց սպայի հսկողութեան տակ, նրա հետ պահպանում են մշտական կապ եւ, եթէ երկրի օրէնքները թոյլ են տալիս, նաև դինավարժութիւն են անում, կամ պարզ մարզանք, եթէ զինավարժութիւն չէ կարելի :

Այսպիսով մենք որոշակի գիտենք, թէ որքան երիտասարդ պատրաստ են պատասխանելու հայրենիքի կոչին, ի հարկին : Եւ երբ այդ պէտք լինի, հեշտ է նրանց զաղութներից հաւաքել 2-3 շաբաթից : Եւ մէկ կամ $1\frac{1}{2}$ ամիս վարժութիւններ անել տալ մեր երկիրը, որպէս ժանդարմերիա գրաւելու գործի համար : Մասն առայժմ մեղ կը նստին սպաները, որոնք բոլորն էլ պիտի

մնան իւրաքանչիւրը իր շրջանում, կամաւորների մօտ՝ նրանց դաստիարակութեանը հսկելով։

Աւելացրի, որ այս ծրագիրը հնարաւոր է իրազործել միմիայն, եթէ երկու պատուիրակութիւնները անկեղծ համերաշխութեամբ գործեն։

Ժողովականները գտան այս ծրագիրը շատ գործնական։ Կարդացինք զօրավար Կորգանեանի մի զեկոյցն այդ մասին, որ միանդամայն համաձայն էր իմ ծրագրին եւ բաժանում էր իմ հայեացքները։

Նորատունկեան եւ ընկերները խնդրեցին ժամանակ՝ քննելու համար Կորպանեանի ծրագիրն եւ իմ առաջարկը։

Երկրորդ խնդիրը՝ առաջիկայ Գերազոյն Խորհրդին մեր ասելիքը, տարաբախտաբար, լուրջ տարածայնութեան պատճառ դարձաւ իմ եւ մասնաւորապէս Նորատունկեանի մէջ։

Նորատունկեանի կարծիքով՝ ա) մենք պէտք է խնդրենք մեր սահմանների գծումը թողնել Աղդերի Լիգային. բ) պէտք է պնդենք Հոմե-ի եւ ոչ քէ Հայ պետութեան վրայ, եւ զ) մենք պէտք է Սեւրի դաշնադրի Հայաստանին վերաբերեալ յօդուածների մի մասը սրբագրենք՝ համաձայն Մարտ ամսին Հոմե-ի մասին եղած որոշման եւ Կովկասեան Հայաստանի սովորիզացիայից (Խորհրդայնացումից) ծագող հանդամանքներին, եւ այդպէս նոր կացութեանը աճարե՛ արած յօդուածները ներկայացնենք Գերազոյն Խորհրդին։

Ես բացէ ի բաց զէմ եղայ այս առաջարկներին։

ա) կէտում, որովհետեւ, եթէ մենք նորից սահմանները թողնենք Աղդերի Լիգային, կարող ենք մոռացուել։ Լաւ է, որ անմիջապէս Գերազոյն Խորհուրդը վերջացնի այս հարցը։

բ) Հայ պետութիւնը մեզ մերժուած չէ, այլ այդ պետութեան հիւսիսային մասն է զրաւուած։ Արգելք չկայ նոյն պետութիւնը հաստատել հարաւային՝ Թիւրքիոյ մասում։ Մանաւանդ, որ Հոմե-ը վտանգաւոր է նրանով, որ նա կարող է, վերջ ի վերջոյ, վերածուել մի անկիւնի Թիւրքիայի ծոցում եւ նրա դերիշիանութեան տակ, գուցէ ե՛ւ կտրուած Կովկասեան Հայաստանից։

գ) Սեվրի դաշնագրին մենք դիպչելու ո՛չ պէտք ունինք եւ ո՛չ իրաւունք։ Յօդուածները մեր ձեռքով փոփոխելը համազօր է նրանցից հրաժարուելուն։ Մենք խնդիրը կը դնենք համաձայն իմ արդումենտացիայի վերի երկրորդ կէտի, թողնելով պետութիւններին անել մնացած։

Մենք իրար չհամոզեցինք, եւս ես վախ ունեմ, որ դժուարաւ համաձայնութեան գանք այս կէտում։ Ես չեմ հաւատացած, թէ նրանց առաջարկը բխում է անկեղծ համոզումից։

Կ Ա Ն Ն

Յունիս 5, 1922

Այսօր մենակ մեկնեցի Կանն, ուր տեղի է ունենալու Գերազոյն Խորհրդի նիստը Համաեւրոպական տնտեսական կոնֆերենցիա հրաւիրելու մասին։

Կանն հասայ յաջորդ օրը յունուարի 6-ին առաւտեան ժամը 10.30-ին եւ իջայ Gonnet հիւրանոցը։

Մարսէյլից իմ հրաւէրով եկաւ Տիգրան Միրզայեանը, որպէս քարտուղար:

Կովկասեան միւս պետութիւններից եկած էին Գեղեջկորին եւ Թոփչիբաշեւը:

I. Ներկայացրի Գերազոյն Խորհրդին մի յուշագիր, որով մեր պատուիրակութեան անունից խնդրում էի փութացնել Հայկական խնդրի կարգադրութիւնը Սեվրի դաշնագրի եւ Վիլսոնեան Arbitrage-ի հման վրայ:

II. Ներկայացրի մի երկրորդ յուշագիր, որով մեր հարեւանների հետ մենք բողոքում ենք Կարսի դաշնագրի դէմ եւ պահանջում ենք այն չեղեալ նըկատել: Այս բողոք-յուշագիրը մշակուեց իմ պնդումի վրայ եւ իմ տուեալներով, հակառակ մեր հարեւանների, մասնաւրապէս Թոփչիբաշեւի դիմադրութեան, եւ մասամբ Դերմոնելի:

III. Հարեւանների հետ միասին ներկայացրինք մի երկրորդ յուշագիր, որով բողոքում էինք այն ծրագրած Concessions (զիջումների) դէմ, որ բոլշեվիկները Կովկասում պատրաստուած են տալ սրան նրան և չեղեալ ենք յայտարարում առհասարակ մեր երկրների մասին առանց մեզ կազմուած ակտերը:

IV. Հարեւանների հետ ներկայացրինք մի այլ յուշագիր, որով խնդրում էինք նկատի առնել, որ բոլշեվիկների տիրապետութիւնը Կովկասում բռնութիւն է, եւ խնդրում ենք այս պարագան հաշուի առնել Սովետ Ռուսիան Զենովայի Conference-ին հրաւիրելիս: Այս յուշագիրը մենք պատրաստեցինք՝ նկատի առնելով Դաշնակիցների այն յայտարարութիւնը, որով նրանք պայմաններ են զնում Սովետին եւ, ի միջի այլոց, պահանջում են, որ բոլշեվիկները դադարեցնեն իրենց յարձակումները հարեւանների դէմ: Մեր թղթի նպատակն է ցոյց տալ, որ կան հարեւաններ, Qui ont e'e non seulement attaqué'e, et même occupé's (որոնք ոչ միայն յարձակում կրած են, այլ եւ դրաւուած են) եւ պահանջում ենք վերջ տալ այս կացութեան:

Ցունուար 6, 1922

Այսօր յայտնուեց, որ Գերազոյն Խորհուրդը Լոյտ-Զորջի առաջարկութեան վրայ վճռել է հրաւիրել Զենովա մարտի սկիզբներին համաեւրոպական տնտեսական կօնֆերենցիա, մասնակցութեամբ բոլոր եւրոպական պետութիւնների, ե'ւ Գերմանիայի ե'ւ Սովետ Ռուսիայի: Եւրոպայից դուրս՝ հրաւիրում են ծապնիան եւ Միացեալ Նահանգները:

Կովկասեան նորակազմ պետութիւնների հրաւէրի խնդիրը բռւն վէճի տեղի է տուել: Բրիտան, Բոնօմի եւ բելղիական ներկայացուցիչները պահանջել են հրաւիրել կովկասեան ազգային կառավարութիւնները:

Լորտ Կըրզըն հակառակել է բռւն կերպով: Բոնօմին վերջում առաջարկել է հրաւիրել կովկասեան ե'ւ սովետ կառավարութիւնները ե'ւ ազգային կառավարութիւնը: Լորտ Կըրզըն հակառակել է ե'ւ այդ առաջարկին:

Վերջում որոշել են չհրաւիրել կովկասը, որպէս ասիական պետութիւններ:

Այս Փորմուլային զոհ է զնացել ե'ւ Պարսկաստանը:

Այս որոշման դէմ շրջաբերական-բողոք խմբագրեցի, որ Պարիզ հասնելուալէս կ'ուղարկեմ պետութիւններին մեր ներկայացուցիչների միջոցով: Բո-

զոքի հիմնական կէտերն են.— ա) Հայաստանը դաշնակից է ու belligerant փաստօրէն . բ) Հայաստանը , իր ամենաւեր դաշնակից երկիրը պատերազմի երեսից , չի կարող գուրս մնալ տնտեսական Conference-ից , որի նպատակն է պատերազմի առաջ բերած վնասներն ու աւերումները դարձանել :

Նամակ գրեցի իսկոյն Վարանդեանին եւ զօր . Բագրատունուն , որով նը- րանց ինդրում էի այդ ուղղութեամբ քայլեր անել Հռոմ եւ Լոնդոն , մինչեւ որ դրկենք մեր յուշագիրը Պարիզից :

Յունուար 9, 1922

Հասան Նորատունկեանն եւ Սըվազլին : Այցի էին եկած ինձ : Պահեցի նա- խաճաշի :

Սըվազլիին տեսնում էի առաջին անգամ : Գիւղի պառաւած տիրացուի տպաւորութիւն թողեց վրաս : Ամենէն ձանձրալի խօսակիցը , որին ես երբեւիցէ հանդիպել եմ :

Զրոյցի նիւթն է սուպի , մսի եւ կանաչեղինի աղղեցութիւնը մարդու ստամբսի եւ առողջութեան վրայ :

Այն մարդկանցից է երեւում , որոնց մասին Մ . Գորկին ասել է , թէ եթէ իրենց հիւանդութիւնը չլինի , զրոյցի այլ նիւթ չեն ունենայ :

Սըվազլին , երբ փորձում է լուրջ քաղաքական հարցի մասին խօսել , միշտ յիշեցնում է թիւրքական սրճարաններում նարդիէ քաշող ժողովրդական խի- կարները : Մանր , հիւանդու աչքեր ունի , որոնք , սակայն , փոքրիկ , խորա- մանկ մարդն են արտայայտում :

Ինո՞ւ էր նորատունկեանը սրան հետը բերել , չդիտեմ : Զարմանքով ի- մացայ , որ նորատունկեան սրան հեռազրով կանչել է Զմիւռնիայից :

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆԿԻԻՆ ԲՈՒԹՈՒՆԻ ՀԵՏ

Յունուար 10, 1922

Carlton հիւրանոցի վարի սրահում նստած էինք Թօփչիրաչեւ , Գիգեչկորի եւ ես , երբ մօտեցաւ Ֆրանկլին Բույօն :

Գիրուկ , միջաւասակ մի մարդ , դերասանի շարժումնեւով , որ աշխատում վրան ուշադրութիւն գրաւել . կենդանի ու շարժուն . ժպտում էր ամէնքի հետ եւ միշտ խօսակից վնտողի վիճակում : Ըստ երեւոյթին , զոհ է իր արածից : Թւում է իրեն , թէ ամէնքի հայեացքն իր վրայ է սեւեռած եւ երջանիկ է , երբ մէկին էլ գտնում ծանօթ : Տիպիկ Faiseur d'Affaire , որ այնքան յիշե- ցընում է թիֆլիսի կինտօն : Դէմքը տղեղ չէ , բայց պարարտ , առանց ազնը- ւականութեան , եւ աչքերն առանց իմաստութեան :

Թօփչիրաչեւը թուաւ ընդառաջ եւ , ըստ երեւոյթին , վաղեմի ծանօթներ , (ինչ որ ինձ համար նորութիւն էր) ողջոյն փոխանակեցին խիստ մտերմօրէն : Գիգեչկորին նոյնպէս թուաւ ուաքի : Թօփչիրաչեւ ներկայացրեց Գիգեչկորին :

Ես մնացի նստած դիտմամբ եւ անուշագիր : Երբ Թօփչիրաչեւ իմ անունը տուեց , Ֆրանկլին Բույօն , որ միայն մի անգամ էր տեսած ինձ տարիներ ա- ռաջ , վրայ թուաւ՝ երկու ձեռքերը պարզած բացականչելով .

— Օ՛ , եօնյօւր , տոն շեր ամի !

Ես ցուրտ կերպով եւ լոռութեամբ ընդունեցի պարզած աջը : Եւ տպաւո-

բութիւնս այն էր, որ իմ առջև կանգնած էր մի յանցագործ, որ արդարանալու պէտք էր զգում: Այս յայտնութիւնն աւելի եւս ոյժ տուեց իմ վերապահ դիրքին:

Զեւացեալ զբաղուած մարդու շարժ ու ձեւով ֆր. Բույօն խնդրեց մեզ մի վայրկեան սպասել՝ ասելով, թէ մեղ բոլորիս հետ խօսելիք ունի եւ հեռացաւ:

Անմիջապէս յետոյ ես ոտքի ելայ, ներողութիւն խնդրեցի ընկերակիցներից ասելով թէ աշխատանք ունեմ տանը, հեռացայ:

Մի կէս ժամ յետոյ, նստած էի իմ հիւրանոցի պարտիզում, երբ վաղէվազ եկաւ Ա. Միրզոյեանը եւ ասաց հետեւեալը.

— Ֆր. Բույօն եկել է, շատ վշտացած, որ ես հեռացել եմ: Ասում է, որ նա դիտէ թէ իմ արածը ցոյց է իր դէմ եւ շատ խնդրում է զալ բացատրուել: Եւ թէ Թօփչիքաշեւի եւ Գիգէչորի նոյնպէս շատ խնդրում են զալ:

— Գնա ասա՛, — պատասխանեցի, — որ ֆր. Բույօն պէտք է տեսնուէր ինձ հետ կիլիկիա գնալուց առաջ եւ ո՛չ թէ Կիլիկիան քանդելուց յետոյ:

Միրզոյեանը զնաց, ես մնացի:

Ինքս ինձ խորհելով եզրակացրի, որ այս դասն անհրաժեշտ էր ֆր. Բույօնին իր բոլոր զէշութիւնների համար հանդէպ հայութեան: Բայց Եթէ վերըստին նա դիմի ինձ հանդիպելու նրա հետ բացատրութիւնից խոյս չեմ տայ՝ ամբողջ դառնութիւնս վրան թափելու համար:

Հաւատացած էի, որ նորից կը դիմի եւ չսխալուեցի: Յաջորդ օրն իսկ, ճաշում էի նոյն Carlton հիւրանոցում, երբ ֆր. Բույօն մօտեցաւ, ցաւ յայտնեց, որ ինձ չէր կարողացել տեսնել նախընթաց օրը եւ խնդրեց հանդիպել ճաշից յետոյ ժամը 4-ին:

— Nous devons bavarder (պիտի շաղակրատենք) ասաց:

— Très volontiers, — պատասխանելով ընդունեցի ես:

Ճաշից յետոյ, ժամը 4-ին, ես հանդիպեցի նրան Carlton Hotel-ի թէյառեղանի առջեւ: Նստած էին եւ Matin-ի խմբագրապետը, թղթակից Զառւիրվայն եւ քանի մը ուրիշ journalist-ներ, ինչպէս Daily Telegraph-ի մեր բարեկամ թղթակից պրոֆեսուր Ժիրօֆելով:

— Ես ուրախ եմ, — ասաց նա, ժպտալով կեղծ մտերմութեամբ, — որ մեր հանդիպումը տեղի ունեցաւ մեր այս բարեկամների ներկայութեամբ:

— Ես եւս գոհ եմ, — ասացի, — եւ հէնց ձեզնից հարցնում եմ՝ հանդի՞ստ է մեր իսկզն 50 հազար հայութիւն բնաւեր դարձնելուց յետոյ:

— Դուք էւ, ինչպէս բոլոր հայերը, ինձ էք դատում, — ասաց նա, — բայց ինձանից լաւ բարեկամ չունիք: Յիսուն հազար հայեր գաղթեցին, որովհետեւ նրանց անպատասխանատու մարդիկ մղեցին զէպի այդ ճամբան: Բարերախտարար, զալթողներն իսկոյն նկատեցին իրենց սխալները եւ արդէն 25 հազար յիտ են եկած: Մնացածներն էլ զալու վրայ են:

— Աւելի վատ դարձողների համար, որովհետեւ նրանց կը կոտորեն Անգորայի ձեր բարեկամները:

— Միաւում էք, դուք չէք ճանաչում թիւրքերին:

— Հրաշալի եմ ճանաչում, — ասացի: — Դուք եւ առհասարակ Փրանսացիներդ էք կուրացել, ինչպէս կուրացել էիք 1914 թուին, պատերազմի նախօրեակին, երբ նրանք խարեցին ձեզ եւ մեր զրամը, առած փոխառութեամբ,

գործ դրին ձեր դէմ պատերազմի : Ils vous ont roulé ! Alors, ils vous roulent à présent (Ձեզ խարեցին այն ատեն, ձեզ պիտի խարեն հիմա ալ) :

— Ի՞նչ փաստ ունիք Անդարայի մարդոց եւ յատկապէս Քէմալին ջարդարար համարելու :

Պատասխանի փոխարէն ևս նախ քըքջացի հեղնօրէն :

— Սիրելի պարոն, — ասացի, — Հայաստանը ջարդող դահիճները ողջ Անդարա են ապաստանած, եւ հայութիւնը նրանց ճանաչում է յականէ յանուանէ : Ահա թէ ինչո՞ւ են փախել Կիլիկիայից եւ ո՛չ թէ կողմնակի խորհըց դատուների խօսքերով :

— Բայց Քէմալը եւ իր շրջապատը մի քանի անգամ կեանքերնին վտանգի են Ենթարկած աղատելու համար հայերը : Քէմալը ինչո՞ւ է ջարդարար :

— Քէմալի զօրավար Քեաղիմ Գարա Բէքիր փաշան էր, որ 1920 թուի դեկտեմբերին ջարդեց եւ ցրիւ տուեց Կարսի ու Արտահանի 200,000 հայութիւնը : Ողջ Անդարան մարդասպաններ են : Ահա ձեր դաշնակիցները :

— Կարսի ջարդը... Բայց դուք էլ թիւրքերին էք ջարդել, — բացականչեց Ֆր. Բույօն :

— Ձեր աղբիւրը թիւրքերն են եւ ձեր յայտարարութիւնն այդչափ արժէք ունի :

— Սակայն, Ֆրանսիան չէր կարող մնալ Կիլիկիա : Այնքա՞ն ծախք, զուհեր ...

— Ֆրանսիա չպիտի պահանջէր բրիտանական կռուավարութիւնից դատարկել Կիլիկիան բրիտանական զօրքերից, եթէ ինքը մնալու չէր այնտեղ : Դուք Կիլիկիան առիք Բրիտանիայից՝ թիւրքերին տալու համար, թէ՞ քրիստոնեաների պաշտպանութեան համար :

— Չիսուինք այդ մասին : Ֆրանսիան մենակ ի՞նչ անէր : Մեղաւորները, ա՛յ, այս անգիտացիք են, — ցոյց տալով Daily Telegraph-ի թղթակցին :

— Շատ եմ ինդրում ձեղ մեղ չդնել Ֆրանսիայի եւ Անդիայի պայքարի մէջ : Մենք շատ փոքր ենք այդ դերն ստանձնելու համար : Այսօր խօսքը ձեր եւ Անդարայի դաշնագրի մասին է, ուրիշ ոչինչ, եւ այդ դաշնագիրը յանցանք է :

Ֆրանկիին Բույօն տօնր փոխեց :

— Ի՞նչ էք պահանջում արժմ : Որո՞նք են ձեր ըմբռնումով ձեր իրաւունքները :

— Դուք, պ. Ֆր. Բույօն, — ասացի, — այդ լաւ դիտէք, քանի որ Ֆրանսիայում դուք համարուել էք հայասէր եւ պաշտպանում էիք հայերի իրաւունքները պատերազմի ընթացքին եւ սլաքներ էիք նետում թիւրքերին հայկական ջարդերի համար : Ի՞նչ էիք պաշտպանում, ասացէ՞ք :

— Այն ժամանակ Ֆրանսիան ունէր իր հետ Դաշնակիցները : Այժմ նա մենակ է :

— Ուրեմն...

— Ֆրանսիան չի կարող ձեր հողային պահանջներին գոհացում տալ :

— Ձեզ յայտնի է, որ անցեալ սեպտեմբերին այդ մենակ Ֆրանսիան, իրաւուր մենակ, հրապարակ եկաւ լէօն Բուրժուայով Ժընեվի Աղդերի Լիդի ժողովում թափանց անելու, երբ յայտարարում էին, թէ թիւրքաց Հայաստանը պէտք է անջատուի թիւրքիայից :

— Լ. Բուրժուան Ֆրանսիա չէ :

- Յանուն ֆրանսիայի նա արեց իր յայտարարութիւնը :
- Բայց, վերջապէս, ի՞նչ էք պահանջում դուք :
- Վելսոնի սահմանները, թէկուզ կրծատուած :
- Այդ անկարելի է : Զէ՞ որ դուք Հայաստան ունիք արդէն Կովկասում :
- Նոր հասկացայ ձեզ, պ. Ֆր. Բույօն: Դուք կ'ուզէիք, որ մէկ միլիոն երկու հարիւր հազար հայ կոտորելուց յետոյ, ձեր բարեկամ թիւրքերը տիրանան նրանց հողերին: Կարո՞ղ էք այդպիսի զարհուրելի փաստը պարտըկել ֆրանսիայի փառաւոր պատմութեան մէջ: Մտածո՞ւմ էք զրա մասին:
- Ես ասում եմ, թէ թիւրքերը չեն տայ:
- Թուրքերը կը տան մեր հողերը մեզ, եթէ նրանց գաղտնի քաջալերող չունենան մերժելու համար:
- Այս վէճը դեռ շատ կ'երկարի: Հաւատացէք ինձ, որ թիւրքերը նախկինները չեն: Դուք պիտի փոխէք ձեր քաղաքականութիւնը նրանց հանդէպ: Պետութիւնները ձեզ շահագործում են: Կը գամ Պարիզ, կը գամ Պարիզ, կը խօսենք: Դեռ շատ բան ունեմ ասելու ձեզ:
- Ֆրանսիան պարտական է մեզ,— վերջացրի ես:

**ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ
ՄԱՐՔԻՉ ՏԵՇԱ-ՏՈՐՐԻՏԱՅԻ ՀԵՏ**

Ցունուար 12, 1922

Առաւտեան ժամը 11-ին տեսնուեցի Մարքիզ Տորիխտայի հետ:

Ահարոնեան.— Պ. նախարար, ես Պարիզում եւ Լոնդոնում առիթ ունեցայ վերջերս տեսնուել պ. Բրիտանի եւ Լորդ Կըրքընի հետ: Պատրաստում էի Հռոմ անցնել ձեզ տեսնելու համար, երբ խմացայ, որ Կաննի Conference-ի առթիւ դուք այստեղ պիտի լինիք: Շնորհակալ եմ ինձ ընդունելու համար՝ հակառակ ձեր բազմազբաղ ժամանակին: Ի մօտոյ Պարիզում կայանալու է երեք նախարարների խորհրդակցութիւնն՝ Արեւելեան կնճիռը կարգադրելու համար ձեր մասնակցութեամբ, եւ ես կ'ուզէի ձեզ պարզել այդ առթիւ հայկական հայեցակէտերը: Խտալիան, որպէս անմասն անդլօ-Փրանսիական սուր հակամարտութեան, կարծում եմ, մեր խնդրում պիտի կամենայ շատ մարդասէր ու արդար դե րկատարել: Ես կը կամենայի քանի մի պայմանների վրայ ձեր ուշադրութիւնը հրաւիրել: Նախ՝ ներեցէք, որ ասեմ, թէ Հայկական Հարցը, մարդասիրական լինելուց զատ, նաեւ գերազանցապէս թերագութիւնը է: Դաշնակիցները գերմանացիներից թերագութիւնը էն պահանջում: Կարծում ենք, որ Հայաստանի թերագութիւնը հոգացուելու էր: Ո՛չ մէկ երկիր այնպէս աւերուեց, որպէս Հայաստանը, եւ ո՛չ մէկ երկիր այնպէս մոռացուած է այժմ, որպէս Հայաստանը:

Տեղլա-Տորրիխտ.— Պարիզի խորհրդակցութեան այդ հարցով պիտի դրազուինք, եւ կարող էք վստահ լինել, որ իմ անձնական եւ իմ երկրի համակրանքները շատ մեծ են հայերի հանդէպ, եւ ես հնարաւորը կ'անեմ տուեալ պայմաններում յօդուած Հայաստանի:

Ահարոնեան.— Երբեք չենք կասկածել ե՛ւ ձեր ե՛ւ ի մասնաւորի Խտալիայի

համակրութեան մասին։ Մենք սիրել ենք իտալիան, որին շատ բան ենք պարտական մեր ժամանակակից կուլտուրայով։ Բայց ներեցէք ինձ ասել, որ մեր կացութիւնը ներկայումս այնքա՞ն ծանր է, որ իրական ու արագ դարմանի պէտք ունի։

Տեղլա-Տորրիտա.— Որո՞նք են միջոցները, ձեր կարծիքով։ Ես ուրախ կը լինէի լսել։

Ահարոննան։— Նախ՝ ասեմ, որ խօսւում է հայերին ապահովութիւն տալու մասին։ Սա անարդարութիւն է։ Խնդիրը հայկական պետութեան մասին է, որ ճանաչուած է Սեվրի դաշնագրին նախընթաց մի ակտով, եւ յիշեալ դաշնագրի վաւերացումն ու ոչ-վաւերացումը առանձին առնչութիւն չունի մեր պետութեան անկախութեան հետ։ Եթէ մեր պետութեան մի մասը գրաւած են բոլցեւիկները, ոչինչ չի կարող արգիլել, որ ազատագրուի թիւրքերի ձեռքերից հարաւային մասը, թիւրքաց վիլայէթները։ Սեվրի դաշնագրի վերաքննութիւնը լաւ առիթ է, թիւրքերին որոշ գոհացումն տալու փոխարէն, պահանջել որպէս հատուցումն թիւրքաց Հայաստանի հողերի պարպումը։ Եւ այս խնդրում մենք յոյս ենք կապում ձեր աշակցութեան։

Ապա՝ Ես մի առ մի թուեցի Հայաստանի պաղայա կազմակերպութեան բոլոր հնարաւորութիւնները, — Հայերի թիւը, ֆինանսական հարցի կարողութեան եղանակը, ժանդարմըրիի կազմութիւնը, վարչութեան ձեւը մանտաղի տակ։

Տեղլա-Տորրիտա.— Բարի եղէք, խնդրեմ, այս բոլորը յուշագրի ձեւով ինձ ներկայացնել եւ վստահ եղէք իտալիայի բարեացակամ աշակցութեանը։

Տեսակցութիւնը վերջացաւ։ Ես դուրս եկայ ճնշուած տպաւորութեամբ։ Իտալիայի նախարարի արտաքինն իսկ զօրացնում էր այդ տպաւորութիւնը։ Մարքիզը փոքրիկ վախտ մարդ է, նիհար, մումիայի դէմքով, կենդանի բայց անախորժ աչքերով, որոնք վստահութիւն չեն ներչնչում։

Եւ յետոյ, բազմաթիւ փորձերից յետոյ, ես բնազդական վախ ունեմ այն պետական մարդկանցից, որոնք դիւնանազիտական զրոյցը դարձնուած են սոսկ համակրական զգացմունքի արտայայտութեան միջոց, մանաւանդ՝ երբ խօսում են սեփական համակրանքից՝ խոյս տալով իրական եւ որոշ հարցերից։

Տեղլա-Տորրիտայի վրայ ես առանձին յոյս չունեմ։ Այս Memoire-ը ներկայացրի։

Կաննում տեղեկութիւնների տեսակէտից շատ մեծ ծառայութիւն ցոյց տուին ինձ Բելդիայի ընկերվարական Debrucet, թղթակից, Wansipe եւ կաննից մեկնեցի Ֆրանսա 15-ին։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐԻ ՊԵՐԵՏՏԻ ԴԲ-Ա ՌՕԿԿԱՑԻ ՀԵՏ

Այսօր, յունուար 21-ին, տեսնուեցի Պերիտոիի հետ։ Խնդրեցի ասել, թէ արդեօք կառավարութեան փոփոխութիւնն առաջ բերե՞լն է քաղաքանու-

թեան փոփոխութիւն Արեւելքում եւ մասնաւորապէս Հայաստանի վերաբերմամբ:

Պերիտոփի.— Ո՞չ, քաղաքականութեան մէջ փոփոխութիւն չկայ Հայաստանի վերաբերմամբ: Բայց շատ երկիւղ ունիմ, որ թուրքերը intransigeant լինին Հայաստանի հանդէպ: Անցեալ օրը ինձ մօտ էր մի թուրք, որ ասում էր, թէ Հայաստան չկայ եւ թէ հայերի թիւը ամբողջ թիւրքիայում 300 հազարից անց չէ: Ես հարցրի թէ պատերազմից առաջ հայերի թիւը այնտեղ աւելի էր մէկ միլիոն ու կէսից: Ապա ո՞ւր են մնացածը, այսինքն՝ մէկ միլիոն երկու հարիւր հազարը: — «Մեկնել են երկրից»— պատասխանեց թուրքը: «Մեկնել են», բացականչեցի ես, երեւի ձեր ձեռքով երկինք: Պարզ էր կոտորածի խոստովանութիւնը թուրքի կողմից:

Ահարոնեան.— Մեր վերջին տեսակցութեան Բրիանի հետ Կիլիկիայի մասին, նա թողեց այդ խնդիրը եւ դարձաւ Հայաստանին, ասել ուզելով, թէ Կիլիկիայի խնդրում փոփոխութեան հնար չկայ, եւ թէ նա, պատրաստ է մեզ աշակցել Հայաստանի խնդրում, այսինքն՝ ստանալ մեր հողերը թուրքերից: Այս հարցումն է, որ ես կ'ուզէի հաւաստիք ունենալ նոր կառավարութեան առթիւ: Կարո՞ղ ենք յուսալ ֆրանսիայի աշակցութեան վրայ այս խնդրում:

Պերիտոփի.— Վստահացնում եմ ձեզ, որ մեր քաղաքականութիւնը Հայաստանի հարցում փոխուած չէ:

Ահարոնեան.— Ես կը կամենայի հասկանալ ձեր խօսքերը այն իմաստով թէ՝ Կիլիկեան հարցը այնքան ի վնաս մեզ լուծելուց յետոյ, ֆրանսիան ինքինքը մինչեւ մի որոշ աստիճան պարտական է զգում Հայկական վիլայէթներն ազատել թիւրքերից եւ հայ ժողովրդին յանձնել: Ես չեմ թագցրել ձեզնից, պ. Մինիստր, թէ ի՞նչ ցաւազին արձագանք ունեցաւ Կիլիկիոյ հարցը բոլոր հայ սրտերում:

Պերիտոփի.— Մենք չենք կարող մոռանալ Հայաստանը. La Cause Arménienne est une Cause Française:

Ես շատ զարմանքով լսեցի այս վերջին խօսքերը, որ միանդամայն անըսպասելի էին Պերետոփի չըթունքներում: Այդ զարմանքը նկատեց Պերետոփին եւ ժպտալով հարցրեց.

— Quoi, est-ce que vous on doutez? (Ի՞նչ, կը կասկածի՞ք):

Ահարոնեան.— Ո՞չ, պ. Մինիստր, ես բնաւ չեմ կասկածում, որ հայ դատը ֆրանսիական դատ է: Միայն թէ՝ մեր այս ծանր օրերում այսքան սրտապնդիչ յայտարարութիւնը ինձ համար ուրախութիւն է, եւ այդ ուրախութեան համար ձեզ երախտապարտ եմ: Զեր նշանակալից խօսքերը ես երբեք չեմ մոռանայ:

Պերիտոփի.— Վստահ եղէք ինձ վրայ: Դուք այստեղ, այս յարկի տակ, հաւատարիմ բարեկամ ունիք. Vous avez, ici un ami fidèle:

Եզրակացութիւն.— Ըստ իմ ստացած տպաւորութեան, Պերետոփին մեր հանդէպ նոր եւ մեզ համար ո՞չ—աննպաստ ներշնչումն է ստացել: Սակայն, չեմ կարող ասել, թէ ֆրանսիական քաղաքականութիւնը վերջնապէս իր համար պարզե՞լ է մեր խնդրում բռնելիք ընթացքը: Կարծում եմ, որ Պուանկարէն աւելի նպաստաւոր քաղաքականութիւն, կամ աւելի ճիշդ տրամադրութիւն ունի մեր հանդէպ, բայց դեռ իր անելիքը շատ որոշ չէ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

TEMPS ԹԵՐԹԻ ԳԼԽԱՀՈՐ ԽՄԲԱԳԻՐ JEAN HERBETTE-Ի ՀԵՏ

Այսօր, յունուարի 23-ին, իմ հրաւէրով, որ ընդունուեց շատ փութով ու մեծ սիրով, մի փոքրիկ թէյասեղանի շուրջը՝ La Rue ճաշարանում հանդիպեցինք Temps-ի խմբաղիր պ. J. Herbette-ի հետ։ Ներկայ էր ե'ւ Ա. Խատիսեան։

Զրոյցի նիւթն էր Ֆրանսիայի քաղաքականութիւնը հայկական հարցում։ Մեր ցանկութիւնն էր իմանալ, թէ Ֆրանսիան պիտի աջակցի՞ մեղ արդեօք թիւրքաց Հայաստանի խնդրում։ Աւելացրինք, թէ առանց Ֆրանսիայի անկեղծ ու վճռական աջակցութեան, երկիւղ ունենք, որ թիւրքաց Հայաստանի հարցը վերածուի սոսկ փօքրամասնութեան երաշխիքների ձեւին, ինչ որ Հայաստան ու հայկական հարց խսպառ լքել ասել է։

Jean Herbette.— Թիւրքաց Հայաստանի անկախութիւնը ներկայ պայմաններում ինձ բնաւ հնարաւոր չի թւում հօմե-ի ձեւով կամ այլապէս։ Ցաւն այն է, որ թիւրքերը կամաւ չեն զիջի, իսկ նրանց բռնադատելու որեւէ միջոց ես չեմ տեսնում։ Հստ իս՝ հայերը բաւականանալու են Կովկասեան Հայաստանով, ուր կարող են ամրապնդուել եւ սպասել լաւագոյն օրերի։ Ինչ վերաբերում է թիւրքաց Հայաստանին, իրեւ փոքրամասնութիւն, հայերը կը կարողանան համախմբուել քաղաքներում, երկրի առեւտուրը ձեւոք առնել, բազմանալ եւ լինել լաւագոյն յարաբերութեան մէջ թիւրքերի հետ։ Ես այլ հեռանկար չեմ տեսնում այսօրուայ պայմաններում։ Հասկանում եմ, մեր կացութիւնը, որպէս վարիչների, շատ ծանր է։ Դուք Կովկասում 300 հազար թիւրքահայ զաղթականներ ունիք, որոնք շարունակ պիտի ճգտին դէպի թիւրքիա։ Բայց վարիչների քաղաքական իմաստութիւնը պէտք է գերակշռի։

Ահարոննեան։— Հարցն այսքան հեշտ չէ։ Հայաստանի մէկ միլիոն զոհը այսպիսի արդիւնքի համար չէր։ Պետութիւններն եւ ի մասնաւորի Ֆրանսիան ծանր պարտք ունին մեր հանդէպ։ Բնադատելու միջոցները չեն պակասում, եթէ պետութիւնները եւ ի մասնաւորի Ֆրանսիան այդ կամենան։ Քանի որ Մեվրի դաշնագրի վերաքննութեամբ Ֆրանսիան յաջողեցրեց ահագին շահթիւրքերին, փրկեց թիւրքիան, նա կարող է թիւրքերից Հայաստանի պարպումը պահանջել։

J. Herbette.— Ֆրանսիան այդ չի կարող անել մենակ։ Դրանով նա միայն թիւրքերին պիտի դարձնի իր դէմ՝ առանց չահի ձեզ համար։ Ֆրանսիան կարող է Հայաստանի պարպումի խնդիրը դնել միայն այն ժամանակ, եթէ կարողանայ գոհացնել թիւրքերին նրանց միւս պահանջների հետ։ Արդ՝ դուք դիտէք, որ Անգլիա լսել չի ուզում այդ մասին։ Եթէ դուք կարող էք համոզել անզլիացիներին ընդունելու թիւրքերի բոլոր պահանջները, այն ժամանակ հնարաւոր կը լինի ե'ւ մեր հարցի լուծումը ձեր ուզած ձեւով։

Ահարոննեան։— Յուսամ, դուք այդ առաջարել լրջօրէն չէք անում։ Մենք պարզ անդօ-ֆրանսիական վէճի մէջ մտնել։ Ֆրանսիան պարզ չենք, որ կարող ենք անդօ-ֆրանսիական վէճի մտնել։ Մենք չենք պահանջում ֆրանսիայից զօրք, Փինանսներ, այլ միմիայն նրա բարի խօսքը, յօդուա Հայաստանի, որ իր յոյսը դրել է

նրա վրայ: Կիլիկիայի թշուառութիւններից յետոյ, Թրանսիան այս նոր հիսթափութիւնը պէտք է ինայի հայ ժողովրդին:

J. Herbette.— Ես ասացի, որ մենք մենակ ենք: Եւ մեր այդպիսի պահանջը, կրկնում եմ, առանց ձեզ օգուտ տալու, մեր էլ յարաբերութիւնները կը դէշացնի Թիւրքիայի հետ...

Անօգուտ էր շարունակել այսպիսի զրոյցը J. Herbette-ի հետ: Պարզ էր, որ Temps-ի խմբագիրը իր կարծիքը փոխելու չէր:

Բաժանուեցինք շատ ծանր տպաւորութեամբ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԳՐԱՆՍԻԱՑԻ ՎԱՐՉԱՊԵՏ Է. ՊՈՒԱՆՔԱՐԵՒ ՀԵՏ

Այսօր, փետրուարի 20-ին, ճաշից յետոյ ժամը 5-ին, Նորատունկեանի հետ միասին տեսնուեցինք Պուանկարէի հետ:

Նորատունկեան, առաջինը խօսք առնելով, ծանրացաւ թիւրքաց Հայաստանի կազմութեան իրական կամ ենթադրեալ դժուարութիւնների վրայ: Հայ բնակչութեան թուի պակասը հերքեց ասելով, թէ Կովկասում եւ այլուր 500 հազարի չափ հայ փախստականներ են սպասում իրենց հայրենիքը վերադառնալու: Ժանդարմը ըստ համար յայտնեց, թէ հայութիւնը կը կարողանայ պէտք եղած թուով կամաւորներ տրամադրել՝ Դաշնակիցների կաղըբերով կարգն ապահովելու համար: Ֆինանսների համար ասաց, թէ Ամերիկայի բարգաւաճ հայութեան ներկայացուցիչները առաջարկուած էին անցեալները Ազգերի Լիգային 5000 հայ կամաւորներ եւ 25 միլիոն դոլլար, եթէ հոգատար մի պետութիւն յանձն առնէր Հայաստանը իր խնամքի տակ առնել ու կարգաւորել: Փոքրամասնութեանց իրաւունքների սիստեմով, ասաց Նորատունկեան, անհնարին է Թիւրքիայում ապահովել հայութեան վիճակը, որովհետեւ թիւրքերը հազար հնար ունեն խախտելու այդ կարգի համաձայնութեանց բոլոր կէտերը. Նրանք ջարդարաններ են, անվստահելի եւ անուղղելի. Անդարայի ժողովի անդամները մեծաւ մասամբ յանցագործներ են եւ հայերի դէմ ոճիրներ են կատարած:

Պուանկարէ, որ լսում էր ակնյայտ տհաճութեամբ, վերջին խօսքերից առաջ զայրոյթով ձեռքը սեղանին վրայ ցնցեց ու բացականչեց.—

— Թողէք ինդրեմ անցեալը: Մենք հնար չունենք թիւրքերին պատերազմ անելու: Ես չեմ կարող ժամանակս կորցնել: Խօսինք իրականութիւնից:

Նորատունկեան.— Նպատակս ձեզ թիւրքերի դէմ դրգուել չէ, այլ պարզապէս իրականութիւնը բացատրել: Բայց ես վերջացրի թիւրքաց Հայաստանի մասին: Պ. Ահարոննեանը կ'ասի թէ ինչե՞ր են կատարել նրանք Կովկասեան Հայաստանում:

Պուանկարէն ինձ դարձաւ, բայց դեռ սրտնեղած արտաքինով փոքրիկ միջադէպից եւ դէմքը կարմրած:

Զնջելու համար այս անախորժ տպաւորութիւնը, ես ստիպուած էի փոխել իմ ասելիքը եւ հեռուից մօտենալ նիւթին:

Ահարոննեան.— Պ. նախագահ, նախ՝ թոյլ տուէք ինձ իմ անկեղծ երախտագիտութիւնը յայտնելու ձեզ պ. Գերնիէին ուղղած ձեր նամակի համար ի

պատասխան Ֆրանսական պարլամենտի անդամների դիմումին, որով Դուք խոստանում էք հայկական Հօմե-ը պաշտպանել առաջիկայ կոնֆերանսում:

Մեզ համար այդ նամակը սրտապնդիչ երեւոյթ է, որին վաղուց կարօտ էինք:

Պուանկարէ: — (Ժպտալով) Այո՛, բայց պէտք չէ չափազանցել յոյսերը:
Պէտք է դիտնաք, որ կան մեծ դժուարութիւններ:

Ահարոննեան: — Գիտեմ, եւ Հնաց այդ դժուարութիւնների մասին պիտի խօսեմ, քանի որ դտնում եմ աւելորդ կրկնել այստեղ մեր իրաւունքների արդարութիւնը եւ մեր յանձն առած զոհարերութիւնների մեծութիւնը: Ֆը-րանսիական Հանրապետութեան նախագահ պ. Պուանկարէն լաւ զիտէր այդ բոլորը, հետեւապէս Ֆրանսիայի վարչապետ Պուանկարէն նոյնպէս: Մենք հաւատացած ենք, որ մեր հարցը ձեզ ծանօթ է գուցչ մեղնից աւելի:

Պուանկարէ: — (Ժպտալով) O, pas tant que ça (Օ՛, ոչ այդչափ):

Ահարոննեան: — Ձեզ հրաշալի ծանօթ են կովկասեան ճակատում մեր կը-ոխները. մեր 200 հազար զինուորների զործը ոռւսական եւ այլ ճակատնե-րում: Ձեզ քաջածանօթ է մարեշալ Ալենալիի վկայութիւնը Պաղեստինի ճա-կատում մերոնց կատարած դերի մասին եւ նորերս գեն. Լուգենդորֆ իր մի գրքում խօսում է նաեւ Բագրում մեր զօրքերի կատարած դիմադրութեան մասին, որ ուշացրեց մի քանի ամսով Գերմանիային նաւթը եւ վճռապէս աղ-դեց Գերմանիայի պարտութեան վրայ: Այս բոլորի հանդէպ Սելիի դաշնա-գիրը մեր վարձատրութիւնն եղաւ: Տարարախտարար, զինադադարը չիրա-գործեց թիւրքերի զինաթափումը: Մի սխալ, որից տուժում ենք այսօր ա-մէնքս, եւ որ Ֆրանսիայինը չէ:

Պուանկարէ: — (Ակնյայտ հանութեամբ) Լիսպէս համաձայն եմ ձեզ հետ: Դա ծանր սխալ եղաւ եւ այսօրուայ դժուարութեանց զլսաւոր պատ-ճառն է:

Ահարոննեան: — Եւ մեր մեծ աղէտին, թիւրքերը կարողացան բոլշեւիկեան օգնութեամբ ոչ միայն պահել թիւրքաց Հայաստանը, այլ եւ անցնել գրաւել կովկասեան Հայաստանի մի կարեւոր մասը: Ես այդ նախատեսել էի եւ բաղ-միցս հրաւիրել Դաշնակիցների ուշադրութիւնը թիւրքեւրուլչեւիկեան դործակ-ցութեան վտանգի վրայ: Բայց ճայնս լսելի չեղաւ: Փաստը մեր առջեւն է: Բայց դա անցեալն է: Մենք կարծում ենք, սակայն, որ Հակառակ այս դըժ-ուարին կացութեան, Համարաւոր է Հայկական խնդիրը կարգադրել, մանա-ւանդ՝ որ դա չի հակասում անդամ թիւրքական շահերին, եթէ նրանք իւելա-հաս լինին:

Նորատունկեան: — Անզամ կովկասեան մահմետական պետութիւնները պնդում են թիւրքաց Հայաստանի ազատագրութեան վրայ, ինչպէս եւ Հըն-դիկ մահմետականները, որը վկայեց նորերս Լորտ նորտկլիֆ:

Պուանկարէ: — Ճշմարիտ է, բայց Անգարայում խօսք հասկացող հոսանքը զօրել չէ: Դրա փոխարէն թիւրքերն այսօր այնքան կազմակերպուած են: Մենք մեր օրակարգի մէջ ունինք հայկական Հօմե-ը: Սակայն, խնդիրը թիւրքերին հարկադրելու միջոցների դժուարութեան մէջ է: Դաշնակիցները եւ, ի մասնաւորի, Ֆրանսիան չեն կարող նոր պատերազմ յայտարարել թիւրքիային:

Ահարոննեան: — Պ. Նախագահ, թիւրքերին պատերազմ յայտարարելու պէտք չկայ: Մենք գիտնենք, որ Դաշնակիցները յայտարարել են՝ ոչ մի

նրա վրայ : Կիլիկիայի թշուառութիւններից յետոյ, Ֆրանսիան այս նոր հիմնաթափութիւնը պէտք է խնայի հայ ժողովրդին :

J. Herbette — Ես ասացի, որ մենք մենակ ենք : Եւ մեր այդպիսի պահանջը, կրկնում եմ, առանց ձեզ օգուտ տալու, մեր էլ յարարերութիւնները կը գէշացնի թիւրքիայի հետ...

Անօգուտ էր շարունակել այսպիսի դրոյցը J. Herbette-ի հետ : Պարզ էր, որ Temps-ի խմբագիրը իր կարծիքը փոխելու չէր :
Բաժանուեցինք շատ ծանր տպաւորութեամբ :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ Է. ՊՈՒԱՆՔԱՐԵՒ ՀԵՏ

Այսօր, փետրուարի 20-ին, ճաշից յետոյ ժամը 5-ին, Նորատունկեանի հետ միասին տեսնուեցինք Պուանկարէի հետ :

Նորատունկեան, առաջինը խօսք առնելով, ծանրացաւ թիւրքաց Հայաստանի կազմութեան իրական կամ ենթադրեալ դժուարութիւնների վրայ : Հայ բնակչութեան թուի պակասը հերքեց ասելով, թէ Կովկասում եւ այլուր 500 հազարի չափ հայ փախստականներ են սպասում իրենց հայրենիքը վերադառնալու : Ժանդարմը համար յայտնեց, թէ հայութիւնը կը կարողանայ պէտք եղած թուով կամաւորներ տրամադրել՝ Դաշնակիցների կադրերով կարգն ապահովելու համար : Ֆինանսների համար ասաց, թէ Ամերիկայի բարգաւաճ հայութեան ներկայացուցիչները առաջարկում էին անցեալները Ազգերի Լիգային 5000 հայ կամաւորներ եւ 25 միլիոն դոլար, եթէ Հոգատար մի պետութիւն յանձն առնէր Հայաստանը իր ինամքի տակ առնել ու կարգաւորել : Փոքրամասնութեանց իրաւունքների սիստեմով, ասաց Նորատունկեան, անհնարին է թիւրքիայում ապահովել հայութեան վիճակը, որովհետեւ թիւրքերը հազար հնար ունեն խախտելու այդ կարգի համաձայնութեանց բոլոր կէտերը . նրանք ջարդարաններ են, անվատահելի եւ անուղղելի . Անզարայի ժողովի անդամները մեծաւ մասամբ յանցագործներ են եւ հայերի դէմոնիներ են կատարած :

Պուանկարէ, որ լսում էր ակնյայտ տհաճութեամբ, վերջին խօսքերից առաջ զայրոյթով ձեռքը սեղանին վրայ ցնցեց ու բացականչեց —

— Թողէք ինդրեմ անցեալը : ՄԵնք Հնար չունենք թիւրքերին պատերազմ անելու : Ես չեմ կարող ժամանակս կորցնել : Խօսինք իրականութիւնից :

Նորատունկեան — Նպատակս ձեզ թիւրքերի դէմ գրգռել չէ, այլ պարզապէս իրականութիւնը բացատրել : Բայց ես վերջացրի թիւրքաց Հայաստանի մասին : Պ. Ահարոննեանը կ'ասի թէ ինչե՞ր են կատարել նրանք Կովկասեան Հայաստանում :

Պուանկարէն ինձ դարձաւ, բայց դեռ սրտնեղած արտաքինով փոքրիկ միջնդէպից եւ դէմքը կարմրած :

Ճնշելու համար այս անախորժ տպաւորութիւնը, ես ստիպուած էի փոխել իմ ասելիքը եւ հեռուից մօտենալ նիւթին :

Ահարոննեան — Պ. նախազահ, նախ՝ թոյլ տուէք ինձ իմ անկեղծ երախտագիտութիւնը յայտնելու ձեզ պ. Գերնիէին ուղղած մեր նամակի համար ի

պատասխան ֆրանսական պարլամենտի անդամների դիմումին, որով Դուք խոստանում էք հայկական Հօմե-ը պաշտպանել առաջիկայ կոնֆերանսում։ Մեզ համար այդ նամակը սրտապնդիչ երեւոյթ է, որին վաղուց կարօտ էինք։

Պուանկարէ— (Ժպտալով) Այո՛, բայց պէտք չէ չափազանցել յոյսերը։ Պէտք է դիտնաք, որ կան մեծ դժուարութիւններ։

Ահարոննեան— Գիտեմ, եւ հէնց այդ դժուարութիւնների մասին պիտի խօսեմ, քանի որ զտնում ևմ աւելորդ կրկնել այստեղ մեր իրաւունքների արդարութիւնը եւ մեր յանձն առած զոհաբերութիւնների մեծութիւնը։ Ֆը-րանսիական Հանրապետութեան նախագահ պ. Պուանկարէն լաւ զիտէր այդ բոլորը, հետեւապէս ֆրանսիայի վարչապետ Պուանկարէն նոյնպէս։ Մենք հաւատացած ենք, որ մեր հարցը ձեզ ծանօթ է գուցէ մեղնից աւելի։

Պուանկարէ— (Ժպտալով) O, pas tant que ça (Օ՛, ոչ այդչափ)։

Ահարոննեան— Ձեզ հրաշալի ծանօթ են կովկասեան ճակատում մեր կը-ոխիւները. մեր 200 հազար զինուորների զործը ոռւսական եւ այլ ճակատնե-րում։ Ձեզ քաջածանօթ է մարեշալ Ալենպիի վկայութիւնը Պաղեստինի ճա-կատում մերոնց կատարած դերի մասին եւ նորերս գեն։ Լուգենդորֆ իր մի գրքում խօսում է նաեւ Բագրում մեր զօրքերի կատարած դիմադրութեան մասին, որ ուշացրեց մի քանի ամսով Գերմանիային նաւթը եւ վճռապէս աղ-ղեց Գերմանիայի պարտութեան վրայ։ Այս բոլորի հանդէպ Սեվրի դաշնա-պիրը մեր վարձատրութիւնն եղաւ։ Տարարախտարար, զինադադարը չիրա-գործեց թիւրքերի զինաթափումը։ Մի սխալ, որից տուժում ենք այսօր ա-մէնքս, եւ որ ֆրանսիայինը չէ։

Պուանկարէ— (Ակնյայտ հանութեամբ) Լիապէս համաձայն եմ ձեզ հետ։ Դա ծանր սխալ եղաւ եւ այսօրուայ դժուարութեանց զլիսաւոր պատ-ճառն է։

Ահարոննեան— Եւ մեր մեծ աղէտին, թիւրքերը կարողացան բոլշեվիկեան օգնութեամբ ոչ միայն պահել թիւրքաց Հայաստանը, այլ եւ անցնել գրաւել կովկասեան Հայաստանի մի կարեւոր մասը։ Ես այդ նախատեսել էի եւ բաղ-մից հրաւիրել Դաշնակիցների ուղաղրութիւնը թիւրքերուլւելիկեան զործակ-ցութեան վտանգի վրայ։ Բայց ձայնս լսելի չեղաւ։ Փաստը մեր առջեւն է։ Բայց դա անցեան է։ Մենք կարծում ենք, սակայն, որ հակառակ այս դըժ-ուարին կացութեան, հնարաւոր է հայկական խնդիրը կարգադրել, մանա-ւանդ՝ որ դա չի հակասում անդամ թիւրքական շահերին, եթէ նրանք ինելա-հաս լինին։

Նորատունկեան— Անգամ կովկասեան մահմետական պետութիւնները պնդում են թիւրքաց Հայաստանի ազատագրութեան վրայ, ինչպէս եւ Հըն-դիկ մահմետականները, որը վկայեց նորերս Լորտ նորտկլիֆ։

Պուանկարէ— Ճշմարիտ է, բայց Անգարայում խօսք հասկացող հոսանքը զօրեղ չէ։ Դրա փոխարէն թիւրքերն այսօր այնքան կազմակերպուած են։ Մենք մեր օրակարգի մէջ ունինք հայկական Հօմե-ը։ Սակայն, խնդիրը թիւրքերին հարկադրելու միջոցների դժուարութեան մէջ է։ Դաշնակիցները եւ, ի մասնաւորի, ֆրանսիան չեն կարող նոր պատերազմ յայտարարել թիւրքիային։

Ահարոննեան— Պ. Նախագահ, թիւրքերին պատերազմ յայտարարելու պէտք չկայ։ Մենք գիտենք, որ Դաշնակիցները յայտարարել են՝ ոչ մի

սու, ո՞չ մի զինուոր : Մենք խնդրում ենք թիւրքերին առաջարկելիք պայմանների մէջ զնել ե՛ւ հայկական հողերի դատարկումը : Եւ հաւատացած ենք, որ երբ պետութիւնները վճռապէս ու միակամ այդ պահանջն, թիւրքերը կը զիջնեն : Նրանք աղմկում են, սովոր են «բաղարլզղի», շահաղործում են պետութիւնների անտագոնիզմը (հակամարտութիւնը), բայց պիտի խոնարհին, հնաց որ պետութիւնները միահամուռ ու վճռապէս պահանջնեն : Միշտ այսպէս է եղած ահա մեր խնդիրը :

Պուանկարէ .— Մենք աշխատուամ ենք համաձայնութեան գալ Անդլիայի հետ եւ յոյս ունեմ կը հասնենք : Ինչպէս ասացի, Հայկական Հօմե-ը օրակարգի մէջ է առաջիկայ կոնֆերանսին եւ այն պայմանների մէջ է, որ առաջարքելու ենք թիւրքերին : Բայց կրկնում եմ, դժուարութիւնը այդ չէ, այլ այն, որ թիւրքերը կարող են մերժել, եւ մենք հնար չունենք նրանց հարկադրելու : Ես մարշալ Ֆօշի հեղինակաւոր կարծիքն ունեմ : Թիւրքերն այսօր այնքան հզօր են, որ կարող են ե՛ւ Անդլիայի դէմ զնել Միջազետքում, ե՛ւ մեր դէմ Սիւրիայում, ե՛ւ յոյների ե՛ւ մեր դէմ : Սա է փաստը : Եւ պէտք է հաշուի առնել այս : Մենք չենք կարող նոր կոիւ յայտարարել թիւրքիային, ի վիճակի չենք այդ անելու : Սակայն, հայկական Հօմե-ը կը պահանջնենք հընարաւոր պայմաններում :

Նորատունկեան .— Մի խնդիր եւս : Ինչպէս գիտէք, Կիլիկիայի հայութիւնը խոյս տուեց իր երկրից : Պիտի խնդրէինք հնար տալ նրանց իրենց հայրենիքը վերադառնալ եւ այնտեղ ստեղծել մի յատուկ ռեժիմ նրանց պաշտպանութեան համար : Կիլիկիան հայութիւն խոշոր կեղըոն է, որ կարող է Հօմե գառնալ փախստական հայութիւն : Ի հարկէ, մեր ցանկութիւնն է ունենալ Հօմե-ը բուն Հայաստանում : Բայց եթէ այդ անկարելի դառնայ :

Պուանկարէ .— (Ձդայնացած) Ո՛չ, ո՛չ, Կիլիկիոյ մէջ առանձին ռեժիմ մինել չի կարող : Ընդհանուր քրիստոնեաների պաշտպանութեան հարց կայ, Յամենայն դէպս Կիլիկիան կարող է յուսալ նոյնն ունենալու, ինչ որ Զմիւթիոյ շրջանի քրիստոնեաները :

Ահարօնեան .— Երկու խօսք եւս Զենովայի կոնդրէսի մասին, Գիտէք, որ սովետական պատուիրակութիւնը բերեյու է իր հետ եւ մի հայ բոլցեւիկ, որպէս Հայաստանի ներկայացուցիչ : Որպէս Հայաստանի լեզալ կառավարութեան ներկայացուցիչ, խնդրեմ, ի նկատի առնել, որ դա ծանր ոտնձգութիւն է մեր անկախութեան դէմ : Յուսամ՝ Փրանսիական կառավարութիւնն այդ թոյլ չի տայ :

Պուանկարէ .— (Վճռապէս) Ո՛չ, ո՛չ, կովկասեան պետութիւններն Ասիայումն են եւ չեն կարող մասնակցել այդ կոնդրէսին : Արդէն իսկ մենք մերժեցինք Վրաստանին :

Տեսակցութիւնը տեւեց 35 րոպէտ :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԶԻՉԵՐԻՆԻ ՀԵՏ

Զենովա, մայիս 15, 1922

Hotel Nizza

Այսօր, մայիս 15-ին, ճաշի ժամը 12-ից մինչեւ 1-ը տեսակցութիւն ունե-

ցայ Զիշերինի հետ Մ. Վարանդեանի եւ Ա. Գիւլխանղանեանի հետ միասին։

Վարանդեան ներկայացրեց ինձ ու Գիւլխանղանեանին։ Ես առաջինը խօսք առայ։

Ես ասացի ֆրանսերէն։ — Թոյլ տուէք ինձ, նախ, մի քո դստո սա։ Եւ նրան նկարագրեցի 1918 թուին թիւրքերի առաջխաղացման եւ ոռւս բանակի հեռանալու օրերին թիւրքիոյ հայ ժողովուրդի համակրանքը դէպի ոռւսները եւ թէ ես անձնապէս ինչ եմ արել այդ օրերին։ Աւելացրի, որ միայն ոռւսներին հովանու աջակցութեան պակասն եղաւ պատճառ, որ մենք ստիպուած եղանք մանղատէր վնասուել։ Ոռւսների վերադարձը դէպի Կովկաս, սակայն, թեւանցուկ թիւրքերի հետ, հայ ժողովրդին անասելի ցաւ դարձաւ եւ ծանր աղէտների աղրիւր եղաւ մինչեւ այժմ։ Ոռւսօ-թիւրք համաձայնութիւնը փաստ է այսօր։ Ոռւսը իր արեւելեան նոր քաղաքականութեան յենարան է համարում թիւրքիան, եւ մենք ստիպուած ենք հաշուի առնել այդ փաստը։ Մտածում ենք, սակայն, որ անհնարին չէ հաշտեցնել հայկական շահերը ոռւս-թիւրք համաձայնութեան տրամադրութիւնների հետ։ Մենք կարծում ենք, որ Հայկական Արեւելեան նահանգները, կամ նրանց մի մասը հայերին յատկացուելը աւելի եւս կ'ամրապնդէր ոռւս-թիւրք համաձայնութիւնը եւ թիւրքերի գործը կը հեշտացնէր աշխարհում, վերցնելով մէջտեղից մի դժընդակ պոռորլեմ, որի համար ամրող քաղաքակիրթ աշխարհը դէմ է թիւրքերին։ Մենք կարծում ենք, որ Մոսկուայի Սովետը, մնալով հանդերձ թիւրքին բարեկամ եւ նոյնիսկ այդ բարեկամութեան վրայ յենած, պիտի կարողանար մեղ մեծապէս օգնել մեր պրոբլեմը լուծելու՝ ճնում գործելով թիւրքերի վրայ։ Եւ այս տեսակչուր համայն հայութեանն է։

«Երէկ դուք ընդունել էք պ. Նորատունկեանին, իմ կարգին, առացի, եւ ես վստահ եմ, նա էլ նոյն տեսակչուր է պաշտպանել մեր առաջ»։


Զիշերին։ — Նախ ասեմ, որ պ. Նորատունկեան ձեզ չի ճանաչում։ Նրա հետ մենք խօսեցինք եւ ես խոստացայ անել հնարաւորը թիւրքահայերի համար։ Ինչ վերաբերում է կովկասեան Հայաստանին, մենք զիշեցինք Կարսի շրջանը թիւրքերին ստիպուած, որովհետեւ ձեր կառավարութիւնը այդ արդէն զիշել էր։ Մեղքը մերը չէ, ձերն է։ Այս պահուն այդ հողերը (Կարսի) թիւրքական է։ Եթէ դուք կարողանաք թիւրքերից այն վերցնել ձեր հօտե-ի համար, մենք ուրախ կը լինենք։ Տարրեր ձեւով, մենք թիւրքերին բռնադատել չենք կարող։ Մենք նրանց դաշնակիցներ ենք, եւ եթէ խօսք բանանք թիւրքաց Հայաստանի կամ Կարսի մասին, թիւրքերը պիտի մեզ մեղադրեն իմպերիալիզմի մէջ։ Մենք չենք կարող մեր արեւելեան քաղաքականութիւնը, որ յենուած է թիւրք բարեկամութեան վրայ, փորձութեան ենթարկել։ Ուրախ կը լինեմ, եթէ դուք յաջողեցնէք։ Եւ նոյնիսկ Մոսկուա վերադարձիս կ'աշ-խատեմ բարոյապէս ազդել թիւրք ներկայացուցիչների վրայ յօդուտ ձեզ։ Ցաւում եմ, սակայն, որ դուք եւ մեր պատուիրակութիւնը եւ մեր կուսակցութիւնը գործում է ոռւս Սովետի դէմ։ Զեր հակառակութիւնն այնքան մեծ է մեր դէմ, որ այն ժամին, երբ մեր ներկայացուցիչները Ալէքսանդրապոլ էին կարսի անկումից յետոյ, երբ Հայաստանում Սովետ էր յայտարարուած, մեր ընկերները Ալէքսանդրապոլում ստորագրեցին մի դաշնագիր, որի որոշ մի յօդուածը ուղղուած է Ռուսաստանի դէմ։

Գիւլխանդանեան .— Ես ստիպուած եմ ձեզ յայտարարել, որպէս յիշեալ դաշնագիրը ստորագրողներից մէկը, որ այդ ակտը ստորագրած ենք Երեւանի Սովետի անդամների հրահանգով եւ թելագրանքով եւ բնաւ մեր մտքովն անդամ անցած չէ հակառուս որեւէ քայլ անել յիշեալ դաշնագրով : Ես տեսնում եմ, որ տարարախտարար ձեզ թիւրիմացութեան մէջ են ձգել ձեզ զեկուցանողները :

Այնուհետեւ Զիշերինի զրոյցն անցաւ աւելի հանդարտ, պակաս ներվային տոնով, բայց եւ այնպէս նա շարունակեց իր անհիմն մեղադրանքները Դաշնակցութեան դէմ, Թաւրիզի մեր փախստականների դէմ, վերջում նորից խոստացաւ «Թիւրքերի մօտ բարեխօսել» յօդուտ Թիւրքաց հայութեան եւ հայ ազգային Հօմե-ի :

Մէնք գուրս ելանք խիստ հիասթափուած :

(Շարունակելի)




ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒՐ ԵՒ ԼՕԶԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

Գրեց՝ ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ժ Ը Ն Ե Ի, 1927
ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՍԵՆԱՏՈՐ ԴԵ ԲՐՈՒԽԿԵՐԻ ՀԵՏ



Սեպտեմբեր 4

ՏԵՍԱԿՑՈՒԵցի Դէ ԲՐՈՒԿԵՐի հետ այսօր։ Միանգամայն համամիտ է մեր յուշագրի հիմնական գաղափարին։ Ցաւ յայտնեց մեր բացակայութեան համար վերջին տարիները։

«Ես ժպտով էի լսում, — ասաց նա, — ձեր հայրենակիցներից ոմանց, որոնք եկած էին այստեղ անցեալներում պնդելու, թէ Հայաստանը (Սովետական) անկախ է կատարելապէս եւ թէ նա միայն դաշնակցական կապերով է Սովետ։ Ռուսիոյ հետ կապուած։ Եթէ սա մանչօվր էր փոխառութիւն ստանալու համար, լաւ, բայց ո՞ւմ կը հաւատացնես։ Ես տեսայ, որ ժողովին ներկայ պ. Փիրումովը իր հայրենակիցների հետ խօսում էր ոռւսերէն։ Ասել է, իր մայրենի լեզուն չգիտէր։ Տարօրինակ ներկայացուցիչ մի երկրի, որի լեզուն չգիտէ։ Այո՛, գաղթականական հարցը մի մասնաւոր փորձ է, որ չկարող եւ չպէտք է շփոթուի բուն Հայկական Խնդրի հետ։ Նանսէն ինդիրը մի փոքր ծուռ է զրել՝ կովկասեան Հայաստանը հօպե անուանելով։ Այս տարի կը փորձենք շտկել նորէն։»

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԼԲԵՐ ԹՈՄԱՅԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 4

— Ճաշից յետոյ, ժամը 5-ին, այսօր տեսնուեցի A. Thomas-ի հետ B. I. T.-ի չէնքի մէջ։

Մեր յուշագիրը ստացել էր ու կարդացել եւ գոհ էր։ Համաձայն է պաշտպանել այն։ Ինձ ուշագրութեամբ լսելուց յետոյ, ասաց —

«Բնաւ յուսահատուելու չէ հասարակաց կարծիքից, թէ կուզ մեր այս դժուարին օրերին։ Խաղաղ ճամբաներով հարցեր լուծելու ժամանակները հասունանում են։ Պատերազմը անհրաժեշտ պայման չէ արդարութիւն գտնելու համար։ Հայկական հարցը եւս կարող է լուծուել խաղաղ եղանակով։ Դրա համար աշխատանք պէտք է անընդհատ։ Ժամանակին ժօրէս, Պրէսանսէ, Դընի Կօչէն ինչ որ անում էին, պէտք է շարունակուի։»

«Գալով այստեղ անելիքին, գաղթականական հարցը, որով դրադւում է մեր Bureau-ն, մի ուրոյն ու մասնակի հարց է, որ պէտք չէ խառնել գլխաւորի՝ հայ ժողովրդի իդէալի հետ։ Նանսէն պէտք չէր կովկասի Home մէջտեղ նետէր։ Նա շատ ազնիւ մարդ է, բայց եւ ոչ խորը։ Ես S. D. N.-ի մէջ խօսք առնելու առիթ չունեմ, բայց պիտի նախաղահեմ Near East Reunion Annuelle-ին ու ամսիս 7-ին, եւ իմ ճառը կը լինի ճիշդ ճեր Memoire-ի իմաստով։»

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԻԿՈԼԱՅՈՍ ՊՈԼԻՏԻՍԻ ՀԵՏ

Յունաստանի ներկայացուցիչը Պարիզում, ինձ ընդունեց երեկոյեան ժամը 6-ին։ Նրա մօտ գտայ լ. Բաշալեանին եւ Ա. Մանդելտամին։ Նրանք եկած էին խօսելու Թիւրքիայում մերոնցից յափշտակուած կալուածների խնդրի մասին։

Պոլիտիս ընդհանուր տեսակէտներ պարզեց թէ՛ այդ մասնաւոր խնդրի եւ թէ՛ առհասարակ մեր հարցի մասին։

Քաղաքական ներկայ մօմենտում արդարութիւն գտնելու մասին նա շատ վատատես է։ Մարդկութեան մօրալի (բարոյականի) մակարդակն է իշխել։ Գալով թիւրքերին, պէտք է զիտնալ, որ մեծ պետութիւնները շարունակում են քծնել Թիւրքիայում։ Եւ հասկանալի է, իւրաքանչիւրը միլիարդներունի թողած այնտեղ եւ աշխատում է սիրաշահելու ճամրան, առանց կոռւի, մասմաս չորթել։

Հստ Պոլիտիսի, Թիւրքերը միայն հայերին ու յոյներին չկողոպտեցին, այլեւ մեծ պետութիւններին, որոնք անխոհեմութիւն ունեցան մի օր յայտարարել թէ Թիւրքիայի դէմ պատերազմելու համար «ո՛չ մի չիլինգ եւ ո՛չ մի դինուոր»։

«Եզր Վենիդելոս դարձաւ Ամերիկայից 1920 թուին, Պուանկարէն նրան իր մօտ հրաւիրեց՝ նրա կարծիքը լսելու Փոքր Ասիոյ մասին։ Վենիդելոս ասել է Պուանկարէին թէ՝ ‘Մեր բանակը կը պարտուի, այնուհետեւ կը պարտրւիք դուք, յաղթական դաշնակիցներդ’։ Պուանկարէն խնդացել է վերջին ֆրազի վրայ. ‘C'est l'expression d'amertume d'un patriote’ (Ասիկա հայրենասէրի մր դառնութեան բացարութիւնն է), ասել է Պուանկարէն։ Եւ սակայն, Վենիդելոսի ասածը բառ առ բառ կատարուեց»։

«Այսօր, — յարունակեց Պոլիտիս, — ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Անդիխան որեւէ քայլ չեն անի Թիւրքիայի դէմ, ինչ անախորժ բան եւ դէշութիւն էլ կատարեն Անդարայի վարիները։ Տարբեր բան է, եթէ Թիւրքիան Աղդերու լիկի մէջ մտնի։ Այդ ժամանակ շատ բան հնարաւոր է։ Եւ դա տեղի կ'ունենայ հաւանարար եկող տարի»։

Ես. — Բայց նա կարող է դուրս դնալ, ինչպէս այդ արեց Լօդանում, երբ իր առ նեւ անախորժ հարցեր հանուեն։ Բրաղիիխան, Խսանիխան օրինակ։

Պոլիտիս. — Դուրս կ'երթայ։ Այնքան էլ հեշտ չէ։ Մտիպուած պիտի յետ դայ, ինչպէս ձգտում են վերադառնալ միւս դուրս մնացածները։ Այսօր,

սակայն, դարձեալ պարապ մնալու չէք: Պէտք է չթոյլ տալ, որ ձեր հարցի վրայ լոռութեան տարիներ անցնեն: Պէտք չէ թողնել, որ հասարակաց կարծիքի մէջ ամրապնդուի այն համոզումը, թէ գա մի հին, մոռացուած, փոշիացած խնդիր է, աղէկ-Կէջ կարգագրուած: Ահա այս տեսակէտից S. D. N.-ին կատարած ձեր դիմումները միշտ էլ արժէքաւոր են:

ՆՈՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԴԵ ԲՐՈՒԻԿԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 6

Կրկին տեսակցութիւն: Նիւթն է՝ թիւրքերի հաւանական մուտքը Աղգերի Լիկի մէջ:

De Brucker չի հաւատում, թէ այս նստաշրջանին այդ տեղի ունեայ: Նշաններ չկան: Սակայն, 1928-ին անհնար չէ եւ նոյնիսկ հաւանական է:

Ես մատնանշեցի մեղ սպառնացող վտանգը, քանի որ Աղգերու Լիկը պէտք է վաւերացնի եւ իր հովանու տակ առնի անդամ դարձած թիւրքիոյ սահմանները: Աւելացըրի, որ իմ գալու նպատակներից մէկը այդ վտանգը կանխելն է:

De Brucker-ի կարծիքով՝ Լօղանի դաշնագրից յետոյ, այս երկրորդ խոշոր վտանգն է: Մեծ պետութիւնները ընդունակ են ներս առնել թիւրքերին՝ զոհ բերելով կրկին հայերին: Հարկաւոր է ժամ առաջ մի Փորմուլ գըտնել՝ զէթ ապահովելու համար հայ ժողովրդի իրաւունքը:

Ես ցոյց տուի հետեւեալ Փորմուլը . . .

La S. D. N. (Societe Des Nations) Tant en Reconnaissant les Frontieres de la Turquie. . . Proclame et recommande la necessite imperieuse d'un arrangement assurant au peuple Armenien un foyer national prevu par la resolution a telle. . . Date . . .

Թարգմանութիւն

«Աղգերու Դաշնակցութիւնը, որքան որ ալ կը ճանչնայ թիւրքիոյ սահմանները . . . կը յայտարարէ եւ կը յանձնարարէ հրամայական անհրաժեշտութիւնը հայ ժողովուրդին ապահովելու աղղային տուն մը, որ նախատեսուած է . . . թուականի որոշումով»:

— Հաւ է, եթէ թիւրքերն ընդունին, — ասաց Դէ Բրուկէր. — ինձ թւում է, — շարունակեց նա, — որ միջազգային իրաւունքի մասնագէտների սկզբ կայ, որպէսզի ապացուցուի հայերի իրաւունքը ընդգէմ Աղգերի Լիկի . . . յօդուածի, եւ որպէսզի Հայաստանը լեզալ իրաւունք ունենայ պահանջելու իր հողերը՝ առանց Աղգերի Լիկի . . . յօդուածի տրամադրութիւնը խախտելու: Ամէն պարագայի մէջ, լաւ է, որ այժմէն Աղգերի Լիկը հասկանայ, որ հայերը բնաւ համակերպուած չեն իրենց ըրած անիրաւութեան, զրկանքներին եւ պիտի շարունակեն պահանջել, մինչեւ որ ստանան: Հետեւապէս, լաւ է, որ ձեր յուշագիրը առաջ բերի ընդհանուր վիճարանութիւններ, թէ կուզառանց որեւէ րե'solution-ի, որը համարուի արդէն եղած:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԱՆՍԻՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 9

Միայն այսօր հասաւ Նանսէնը : Տեսնուեցի այսօր ժամը 12-ին :

Նրան սաստկօրէն զբաղեցնում է իր յարուցած գաղթականների հարցը, որ դարձեր է անձնական վարկի խնդիր : Լաւատես չէ : Ասաց, որ իր ներկայացուցիչը տեսնուել է Մոսկուայում Ս. Տէր Գարրիէլեանի հետ, որ յայտնել է, թէ Երեւանի կառավարութիւնը կը համաձայնի իւրաքանչիւր փոխադրուուղիւր ընտանիքի յատկացնել 1000 բուրլի ծախս փոխադրութեան :

«Բայց, երբ ես հեռագրեցի Երեւան Համբարձումեանին (կառ. պետ), վերջինս պատասխանեց, թէ յամենայն դէպս իրենց որոշումն այդ մասին չի կարող հասնել Ազգերի Լիկի այս նստաշրջանին : Այսպիսով, — ասաց Նանսէն, — Երեւանից ձեռնթափ եղայ» : Աւելացրեց, որ գերմանացիք տրամադրիր են դրամի մէկ մասը տալ :

Ծուկներ են պտտում, թէ Նանսէն խորապէս վշտացած է Ազգերի Լիկի ընթացքից այս հարցում, մտադիր է հրաժարուել եւ դուրս գնալ Լորդ Սեսիլի պէս :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ Պ. ԳԵՐԵՐՈՑԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 10

Բաշալեանի եւ Մանդելշտամի հետ, որոնք պարզեցին «լքեալ» գոյքերի խնդիրը Թիւրքիայում, խնդրելով պ. Շարլ Գյուրեցո-ին, որպէս անդամ Ազգերի Լիկի Խորհրդի, միջամտել այդ հարցը Լահէի միջազգային դատարանին տանելու համար :

Նա ցաւ յայտնեց, որ իր միջամտութիւնը ուշացած է, քանի որ երեք օրից ինք ստիպուած է Թողնել Խորհուրդը : Խոստացաւ, սակայն, այդ հարցը փոխանցել իր յաջորդին, որ նոյնքան սիրով կը շարունակի :

Այնուհետեւ անցանք իմ տուած Memoire-ին :

Ես պարզեցի իմ գալու նպատակը՝ յուզել Ազգերի Լիզայում նորէն Հայկական Օջազի հարցը Թիւրքիայում : Խնդրեցի, որ ինքը խօսք առնի առաջինը : Կան ուրիշներ, որ կը հետեւեն :

Նա սիրով յանձն առաւ : «Ես առաւել, — ասաց, — որ իմ կինը հայ է» : Քանի որ միտքը De Brucker-ն էր տուել դիմելու Շարլ Գյուրեցո-ին, անցայ եւ հաղորդեցի նրան այս արդիւնքը :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԻԳՈՒՍՏՈ ՌՈՍՍԻԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 12

Աւգուստո Ռոսսին արտաքին գործոց նախարարի օգնականն է : Նախարարից (Գրանդի) տեսակցութիւն էի խնդրում, ինձ զրկեց Rossi-ին : Ինքը մեկ-

նելու էր յաջորդ օրը եւ իրօք մեկնեց : Եկած էր, ըստ մամուլի, կարճ ժամանակով տեսակցութիւն պատրաստելու Մուսոլինիի, Բրիտանի եւ Գեմբերլինի հետ : Նրանց հետ տեսակցութիւն եւս ունեցաւ :

Թոսսին տեսայ այսօր ժամը 4.30-ին, Berges հիւրանոցում :

Զրոյցիս նպատակը երկու էր : Նախ՝ խնդրել իտալական պատուիրակութեան միջամտութիւնը մեր տուած յուշագրի իմաստով ասSEMBLE'Ե-ի մէջ եւ երկրորդ՝ իմանալ, թէ որքա՞ն հաւանական են իտալօ-թիւրք conflit-ի լուրերը :

I. Մեր յուշագիրը եւ իմ դալու նպատակը պարզելէն վերջը, խնդրեցի, որ, ինչպէս 1924 թուին, իտալիան եւս իր ձայնը միացնի Հայկական Հարցի սկզբունքային պաշտպանութեան :

Թոսսիի պատասխանը ինձ թուաց վարանոտ ու իեղճ :

«Դուք գիտէք, — ասաց, — որ մենք կասկածելի ենք նկատում Աղգերի լիկի որոշ շրջաններու, որպէս այդ հաստատութեան չհաւատացողներ : A tort ou a raison, մի կարծիք է կազմուած, թէ մենք հետամուտ ենք Աղգերի լիկը փշացնելու : Անարդար ու անհիմն կարծիք, որ տարարախտաբար, որոշ ցուցի է գտել : Այս պատճառով մենք ստիպուած ենք առհասարակ զգոյն լինել եւ այնպիսի հարցեր չյարուցանել, որոնք կարող են Աղգերի լիկի անզօրութիւնը ցայտուն դարձնել : Զեր հարցը հէնց դրանցից մէկն է : Այս պատճառով մենք ձեռներէց չենք լինի : Ինքս մասնաւոր վճռական պատասխան տալ չպիտի կարողանամ : Կը յայտնեմ այս բոլորը Շայսլային, որ ի վերջոյ գլխաւոր պատասխանատուն է » :

Այնուհետեւ նա ուզեց ծանօթանալ մեր երկրի արդի պայմաններին : Զեռքիս քարտէզը փոած՝ ես նրան բացատրեցի Կովկասեան եւ Թիւրքիոյ Հայատանի արդի կացութիւնը, մեր ձախորդութիւնները եւ մեր յոյսերը : Եւ երբ նկարագրում էի մեր երկրի աւերածն ու ամայութիւնը, շօշափեցի եւ քրդերի այժմու վիճակը : Նա յանկարծ հարցրեց .

— Իրա՞ւ է, որ քրդական ապստամբութիւնը վերջնականապէս ճնշուել է :

Ես բացատրեցի, թէ դա այնքան էլ ճիշդ չէ եւ թէ քրդական բռնկումները դեռ շատ երկար կարող են շարունակուել, նկատի առնելով երկրի աշխարհագրական պայմանները եւ քրդերի ցեղական իառնուածքը : Միաժամանակ պարզեցի Հայ-քրդական այժմու յարաբերութիւնները :

Պարզ էր, որ քրդական հարցը նրան մասնաւորաբար հետաքրքրում էր :

II. Զրոյցի ընթացքին ի միջի այլոց հարցը, թէ որքա՞ն հաւաստի էին մամուլի տուած լուրերը իտալօ-թրքական conflit-ի հաւանականութեան մասին :

Բնական է, ասացի, որ մամուլի լուրը միշտ ազդում է ամբոխների վրայ եւ ես չեմ թագնի ձեղնից, որ անզամ մեր ժողովրդի որոշ խաւեր մինչեւ այսօր իսկ յոյսեր են կապել այդ հեռանկարին : Գիտէք հայութեան զգացմունքը դէպի թիւրքերը : Այժմ էլ քիւրդերը, որոնց հետ գործակից ենք եւ համերաշխ եւ որոնք իրենց դատի պաշտպանութիւնը մեզնից են սպասում, նոյնպէս յաճախ մեղ են դիմում իմանալու, թէ կարելի՞ է յուսալ այդ ուղղութեամբ :

Ռոսսին ժպտաց, մնաց վարանուա եւ տարտամօրէն, մի բան ծածկող մարդու մտահոգութեամբ պատասխանեց.

«Իրաւ է, որ թերթերը գրեցին: Իրաւ է, որ մեղ վերագրեցին ռազմական պատրաստութիւններ: Բայց այդ բոլորը յերիլուած էր որոշ նպատակներով, որոշ պետութեան շահերն ապահովելու համար: Երբ նա գոհացաւ, այդ խնդրի վրայ լոռութիւն եղաւ: Իտալիան որեւէ արշաւանքի պատրաստութիւն չի անում»:

Ես յիշեցի Դէ Բրուկէրի ասածը նոյն հարցի մասին: Ակնարկը Անդլիային էր եւ Մուսուլին:

Մեր զրոյցը վերջացաւ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ JOURNAL DE GENEVE-Ի

ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 13

Journal de Geneve-ի խմբագրապետ պ. Chappuisat-ին գնացի խնդրելու, որ հարաբերակի մեր յուշազիրը իր թերթում, ինչ որ յանձն առաւ շատ սիրով: Ապա զրոյց եղաւ հայկական եւ առհասարակ կովկասեան խնդիրների մասին:

Նա հետաքրքրուեց իմանալ թէ ինչու մենք կովկասեան Bloc-ի մէջ չենք:

Ես պարզեցի մեր տեսակէտը, թէ մեր հարեւանների հետ համերաշխութեան բացարձակապէս համողուած կողմնակից ենք, բայց նրանք արդարօրէն հաշուի չեն առնում մեր բացառիկ դիրքը, թիւրքական սպառնալիքը, մօտիկ անցեալի դասերը: Այս է խափանարար պարագան իրական համերաշխութեան:

— Իսկ հանդէպ ոռւսների^o, — հարցրեց:

— Մենք էլ բացարձակ անկախութեան կողմնակից ենք, բայց վերի պարագան առ այժմ մեղ խստօրէն կաշկանդում է:

— Շատ լաւ, հասկանում եմ եւ գուք այլ կերպ չէք կարող վարուել՝ առանց ձեր գատը վտանգելու: Կարծո՞ւմ էք, սակայն, որ կովկասեան ազգերը խսպառ պիտի կտրին ոռւսների հետ:

— Բարդ հարց է, — ասացի, — խսպառ կտրելը: Այո՛ եւ ո՛չ: Այո՛, որովհետեւ պէտք է անկախ լինել, եւ ո՛չ, որովհետեւ բացարձակ անկախութիւն չունեն այսօր նաեւ մեծ պետութիւնները, որոնք տնտեսապէս իրար իշխում են եւ իրարից կախուած են: Մեղ թւում է, որ ոռւսական մեծ պետութեան են եւ իրարից ստիպուած կը լինենք միշտ, թէ կուղ իրը անկախ պետութիւն, հաշուի առնել այս պարագան:

— Գիտէ՞ք, ի՞նչ, են ուրախ եմ Ձեզ լսել: Ես յաճախ եմ փորձում այս պարդ ճշմարտութիւնը հասկացնել մեր վրացի բարեկամներին, բայց ի զուր: Այդ մարդիկ իրական տուեալր արհամարհում են: Եւ անձամբ միշտ էլ պաշտպան մնալով ժողովուրդների աղատաղբութեան՝ գժուաբանում եմ հաւատալ կովկասի ժողովուրդների բացարձակ անկախութեան դէֆ առ այժմ: Սովետ-

ներից դուք, ի հարկէ, ոչինչ ունիք յուսալու։ Բայց ապագայ դեմոկրատիկ Ռուսիան, կարծում եմ, ձեզ հետ լեզու կը գտնի։ Այս է իմ տեսակէտը։

— Այսպէս է մտածում Եւ Յիրետելին, — ասացի — Վրացիներն էլ բաժանուած են այս հարցում։

Ջրոյցը վերջացաւ։ Բաժանուելիս ասաց։

Journal de Geneve sera toujours à votre dispositions. Ici vous etes chez vous.

«Ժուռնալ տը Ժընէւ» միշտ ձեր տրամադրութեան տակ է։ Հոս դուք ձեր տան մէջ էք։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԵՑՃԸՐ ՈՒՂՂԹԸՐ ԷԼԻՈՅ ՀԵՏ

Սեպտեմբեր 14

Լորդ Robert Cecil-ի հրաժարուելով, այս տարի բրիտանական պատուիրակութեան հետ մեր կազը կտրուած էր։ Անդամներից ո՞չ մէկին չի ճանաչում։ Բարեբախտաբար, Ժընէւ էր գտնուում վաղածանօթ Captain George Gracey, որին խնդրեցի ինձ յարաբերութեան մէջ զնել բրիտանական պատուիրակութեան որեւէ կարեւոր անդամի հետ։ Captain Gracey-ին շատ սիրալիր կերպով նամակ գրեց Major Walter Elliot-ին, խնդրելով ինձ ընդունել։

Շնորհիւ այս միջնորդութեան, ես կարողացայ տեսնուել այսօր առաւոտեան ժամը 9.30-ին (Hotel Richmond-ում) Walter Elliot-ի հետ։

Ենթադրելով, որ Կովկասեան ժողովուրդների (մեր հարեւան) քաղաքական Bloc-ը բրիտանական համակրութիւն ունի, ես սկսեցի հէնց այդ խնդրից։ Ասացի նախ՝ թէ եկած եմ խնդրելու, որ բրիտանական պատուիրակութեան աջակից լինի մեզ մեր յուշադրի իմաստը պաշտպանելու, երբ հարցը դայ Ազգերի լիկի Assemble'e-ի մէջ։ Աւելացրի, որ Հօմե-ը անդիական զաղափար է, եւ Ազգերի լիկի առաջին բանաձեւը այս մասին պատկանում է Լորդ Robert Cecil-ին։ Ասացի նաեւ, որ մեր այս դիմումը աւելի հեռաւոր նպատակ ունի։ Կովկասի մեր հարեւանները անկախութեան բնական ձգտումով միացած են մի ճակատով Ռուսաց դէմ։ Մէնք առ այժմ ստիպուած ենք դուրս մնալ թիւրքական սպառնալիքի պատճառով։ Սակայն, պատրաստ ենք այդ Bloc-ին միանալ, եթէ հարթուի հայ-թիւրքական կնճիռը։ Եւ դա հնարաւոր է, երբ թիւրքերը Ազգերի լիկի անդամ դառնալ ուղինան։ Եւ եթէ այդ պահուն Ազգերի լիկը եւ մանաւանդ, մեծ պետութիւնները, որոնք հայ աղջային Հօմե-ը հռչակեցին, թիւրքիային խաղաղ ճամրով պարտադրեն որոշումի իրազործումը։ Մէնք այժմէն ենք յարուցանում այս հարցը, որպէսզի կանխենք Լողանի դաշնադրի անարդար անակնկալը։ Եւ յետոյ, երբ մենք թիւրքիոյ գալուն միաւն յայտնուինք, մեր փորձերը եւ քայլերը կարող են նկատուիլ մի տեսակ սոսկ թշնամական sabotage լնդդէմ մեր հին ոսոխի։ Միւս կողմից՝ մենք երկիւղ ունենք, որ Ազգերի լիդը, որ վերջին տարիներուն հայկական բուն, արմատական խնդիրը մէկդի թողած, դրազուեց դաղթականների պալիաղիւներով (կիսամիջոցներով), ի վերջոյ կարող է կարծիք

ստեղծել, թէ հայ ժողովուրդը գոհ է, կամ ընդունել է իր վիճակը, հնազանդուել է իր ճակատագրին: Կ'ուզէինք այս ցաւալի մտայնութիւնը ցրել եւ թարմացնել իրողութիւնների մէջ ոմանց խոստումները, Ազգերի լիկի կրկնակ որոշումները 1920-1921 թուերին եւ հայ ժողովրդի գրանց կապուած սպասելիքներն ու յոյսերը: Անցողակի կ'ասեմ, որ հայ ժողովուրդը կարող է մոռանալ թափած արիւնը եւ վրէժխնդրական նկատումներով չտարուել, եթէ իրեն վերադարձնեն գէթ իր հայրենի երկրի մի մասը Թիւրքիայում: Ահա քարտէզը (փոեցի քարտէզը), ահա ահազին տարածութիւններ ամայի, եւ մեր ժողովուրդը թափառական, անհող եւ Ազգերի լիկը Նանսէնի հետ փորձում է ճահճճներ չորացնելով, հայ փախստականներ տեղաւորելու: Այստեղ կարգադրուելիք մի ահազին անիրաւութիւն կայ: Մենք հաւատում ենք, որ Ազգերի լիկը եթէ ունենայ բրիտանական կառավարութեան և նրան համամիտ պետութիւնների աջակցութիւնը, պէտք է որ կարողանայ կարգադրել հայկական Հօմե-ի հարցը: Խնդրում եմ ուշադրութեան առնել, որ այս հարցի կարգադրութիւնը նաեւ Կովկասեան բոլոր ժողովուրդների քաղաքական բախտին կ'անդրադառնայ, հնարաւոր դարձնելով Վրաստանի եւ մեր միւս հարեւանների եւ Հայաստանի հաստատուն միութիւնը: Այդ ժամանակ միայն մեր եւ թիւրքերի մէջ կարող են զարգանալ բարի հարեւանութեան զգացմունքները: Ահա՝ այս է իմ գալու նպատակը, եւ, ինչպէս տեսնում էք, մեր խնդիրն ու քայլերը անցնում են մեր հայրենիքի սահմաններից եւ դառնում են Համակովկասեան շահեր, որով հաւատացած եմ, հետաքրքրուում է բրիտանական կառավարութիւնը: Երբ Ազգերի լիկը հարթի հայ-թիւրքական կնճիռը, միաժամանակ ստեղծած կը լինի Համակովկասեան Միութիւնը:

— Զեր տեսկէտը հասկանում եմ եւ համարում եմ լիովին արդար եւ տրամաբանական: Իրաւ որ եթէ թիւրքերի հետ գայիք, կը նկատուէր մի փոքր տարօրինակ եւ անհաճոյ: Զեր խնդրին ծանօթ եմ: Այս յուշագիրը ես կ'ուսումնասիրեմ: Կը խօսեմ պ. Զէմպըրլէյնին ու ըստ այնմ կը վարուենք: Դուք անշուշտ ընդունում էք, որ ես աւելին չեմ կարող ասել:

Զրոյցը վերջացաւ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ «ԹԱՅՄԱԶ»Ի ՆԱԽԿԻՆ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՍՏԻԴԻ ՀԵՏ

Ծանօթ էի Steed-ին Պարիզից, եւ ուրախ եղայ հանդիպելով նրան Ժընեւում: Խնդրեցի տեսակցութիւն, որ հաճոյքով ընդունեց:

Տեսնուեցի այսօր առաւօտ, ժամը 11-ին, Hotel de la Paix: Գիտէի, որ Steed մեր դատին եղած է միշտ համակիր, բայց դրանից աւելի ինձ հետաքրքրում էին նրա տեսակէտները Արեւելքի ու առհասարակ ժամանակակից քաղաքականութեան մասին աշխարհում:

Մեր զրոյցը տեւեց ամբողջ մի ժամ:

Ես նրան ասացի մօտաւորապէս այն, ինչ որ ասել էի Mr. Walter Elliot-ին:

1.— Կովկասեան Bloc-ը. Ես գտնում եմ ձեր հետեւած քաղաքականու-

Թիւնը կովկասում իմաստուն իրերի ներկայ կացութեան մէջ: Թիւրքիոյ եւ Ռուսիոյ փոխյարաբերութեան մէջ դուք չէք կարող առանց ոիսկի ենթարկել ձեր ժողովրդի ապագան եւ քայլել ձեր հարեւանների հետ ոռուսների դէմ: «Ca serait une folie»: Ես այն կարծիքի եմ, որ ոռուսների հետ, անշուշտ ո'չ բոլչեւիկների հետ, իրարհասկացողութիւնը հնարաւոր է:

Ես.— Մեզ երկիւղ է աղղում Ռւկրայնայի անջատումը Ռուսիայից, ինչ որ կարող է ունենալ իբր անմիջական հետեւանք Ռուսիոյ բաժան-բաժանումը:

Steed.— Ես բացարձապակէս անհնարին եմ նկատում այդ անջատումը: Սվեցկուն տեսնո՞ւմ էք: Նա մի երազող է: Առանց Ռւկրայնայի Ռուսիան չի կարող ապրել եւ պէտք է անխուսափելիօրէն կոուի կամ անյայտանայ կամ ընկճի նորէն Ռւկրայնան: Բնական հարստութիւն, կակուզ կլիմայ, ծով — բոլորը Ռւկրայնայում են: Ռուսիան չի կարող հրաժարուել այս բոլորից, նա կը մեռնի, առանց դրանց:

Ես.— Դուք ինձ զարմացնում էք: Ճիշդ այդպէս են մտածում ե'ւ ոռու դեմոկրատները:

Steed.— Որեւէ ոռուի հետ որ խօսած եմ, որ քիչ ու շատ հասկանում է մէկ պետութեան անհրաժեշտ ֆակտորները նա ուրիշ կերպ դատել չի կարող:

Ես.— Մեզ հաւատացնում են, որ բրիտանական կառավարութիւնը հետապնդում է Ռուսիոյ անդամահատումը Ռւկրայնայի անկախութեան ճամբաներով:

Steed.— Բնաւ մի՛ հաւատաք եւ բնաւ ականջ մի՛ կախէք: Ես կը զարմանամ, որ բրիտանական կառավարութիւնը այդպիսի ծրագիր ունենայ, որ բովհետեւ դա տղայական է: Ռուսիան ապագայ ունի:

II. Մենք եւ թիւրքերը.—

Steed.— Թիւրքերը մարդ դառնալիք չունին: Ես նրանց մասին խօսել եմ իիշողութիւնների առաջին հատորում: Թալաաթը իմ ներկայութեամբ Վարդգէսին «սիրելի բարեկամ» էր կոչում եւ սառնարիւն կերպով նրան ըսպաննել տուեց: Անհնարին ժողովուրդ է այս: Յախորտում են առ այժմ, բայց վերջ ի վերջոյ վիզերը պիտի ծռեն: Նրանց ըեֆորմները ո'չ մի արժէք չ'ունեն: Մի՛ վհատէք, ապագան ձերն է: Նարունակեցէք ձեր զզուշաւոր քաղաքականութիւնը: Ժամանակը աշխատում է ձեզ համար: Այս՛, իրաւունք ունիք, եթէ Թիւրքիան ժընեւ դայ, ձեր ինդիրը նորէն պիտի բարձրացնէք: Եւ լաւ էք արել, որ եկել էք: Սա ճիշդ ճամբայ է ձեր ընտրածը:

Ես.— Մամուլը մի ժամանակ շատ թմրկահարեց խտալօ-թուրք կոնֆլիկտի հաւատականութիւնը:

Steed.— Խտալական բըլլֆ: Այս մասին ինձ երկար խօսում էր ե'ւ բարեկամս

Victor Berard. Seulement il étais trop logique pour être juste. Il se trompe malgré l'apparence et la logique.

«Վիքթոր Պերար, միայն շատ ծայրայեղորէն տրամարանական էր արդար ըլլալու համար: Կը խարուի հակառակ երեւոյթին եւ տրամարանութեան»:

Նախ՝ թուրքերը ուզմական կորովը տակաւին պահում են, խտալացիք՝ ոչ: Երկրորդ՝ Խտալիոյ Փինանսականը մազից է կախուած. արուեստական

ձեւով լիրան բարձր պահելը շատ թանկ է նստում Խտալիային, որ գերի է Ամերիկային: Նա շարժուել չի կարող: Պատերազմը դրանով կը լինի: Ի հարկէ, Մուսուլինին ուզում է արտաքին յաջողութեամբ ներքին գժուարութիւնները հարթել, բայց նա ի վիճակի չէ: Եւ դա կարող է նրան շատ թանկ նստել:

Երբ Լոնդոն գաք, ինձ այցի եկէք, այս հարցերի մասին կը խօսենք: Առ այժմ այստեղից ես զնալու եմ Ամերիկա, ուր մեր Զեմբրլինը բաւական ցըրտութիւն է ցանել իր անխոհական ձառերով: Այս մարդիկ Ազգերի Լիկում խօսելիս միշտ մոռանում են, որ աշխարհում հեռազիր կայ, եւ որ մի ժամից Պուլիդր կարգում է նրանց խօսքերը: Երէկ ես ճիշդ ա՛յս էի ասում Զեմբրլէնին: Զեր այս տարուայ յուշազիրը դրկեցէք ինձ, ես կ'օգտագործեմ ձեր իդձերի համապատասխան եղանակով:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՌԱՌԻԼ ԴԱՆԴԻԻՐԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 16

Կանադայի ներկայացուցիչները միշտ պաշտպան են եղած մեր դատին, մասնաւորապէս պ. Dandurand: Նրա հետ տեսնուեցի այսօր Salle de Reformation-ի մէջ:

Ես պարզեցի նրան իմ mission-ը եւ մեր յուշազրի իմաստը: Ես անմիջապէս նկատեցի, որ Սովետ Հայաստանը եւ Նանսէնի ծրագիրը նրա միտքը իսպառ շփոթել են: Հայկական Հարցը նրա համար Նանսէնի ծրագիրն է:

Շատ ուշադրութեամբ եւ անվերջ հարցեր տալով ճղնում էր հասկանալ իմ բացատրած մեր քաղաքականութիւնը: Իբրեւ իրաւագէտ, անմիջապէս կառչում էր իրական փաստերին: Եւ երբ իմ խօսքերից եզրակացրեց, որ մենք հետամտում ենք յետ ստանալ մեր հողերը Թիւրքիայից, նա մի գիւտ արածի պէս յանկարծ ասաց:

— Բայց թիւրքերը չեն տայ այդ հողերը:

Ես ասացի, որ մեր նպատակն է թիւրքերից այդ պահանջն անել Ազգերի Լիկի միջոցով, երբ նա զայ Լիկի անդամ դառնալու:

— Այդ հասկանում եմ, — ասաց — բայց Ազգերի Լիկը ի՞նչ իրաւական հող ունի այդպիսի պահանջ դնելու թիւրքերին:

Ես յիշեցրի Ազգերի Լիկին 21 եւ 22 թուերի կրկնակ որոշումները, որոնք խսպառ անկախ են Սեվիրի դաշնագրից:

— Հասկանում եմ, — ասաց, — բայց այսօր, ի՞նչ պիտի լինի մեր անելիքը:

— Այսօր, — ասացի, — Հայաստանի բարեկամները, նկատի առնելով Նանսէնի ծրագրի ձախողանքը, պէտք է որ Հայկական Հօմի մասին եղած որոշումները կրկին իրենց ճառերի նիւթ շինեն՝ թարմացնելու համար ե՛ւ հասարակաց կարծիքը Ե՛ւ Ազգերի Լիկի յիշողութիւնը, որ, ինչպէս նկատում եմ, շատ բան է մոռացութեան տուել:

Dandurand ասաց, թէ՝ կը խօսի Նանսէնի հետ եւ միասին կ'որոշեն իրենց անելիքը:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԱՆՍԻՆԻ ՀԵՏ

17 սեպտեմբեր

Այսօր առաւօտ, ժամը 10:30-ին, Ազգերի Պալատում տեսակցութիւն ունեցայ Նանսինի հետ:

Ես պարզեցի նրան մեր յուշազրի իմաստը եւ իր գալու նպատակը: Իր առաջին իսկ բառերից ինձ համար պարզ եղաւ, որ պ. Նանսին, տարարախտաբար, միանգամայն սխալ համոզումն ունի մեր ժողովրդի բաղաքական իրական ձգտումների մասին: Նրան մոլորեցրել են մեր հայրենակիցներից ոմանք, կամ Երեւանում, կամ այստեղ՝ ժընեւում: Այս մասին մի քանի օր առաջ ինձ նախազգուշացնում էր Դէ Բրուկէրը, որ շատ մօտիկից զիտէ Նանսինին:

Նանսին, նախ, զառնօրէն զանգատուեց մեծ պետութիւններից եւ Ազգերի լիկից: «Ահա չորս տարի է, ասաց նա, որ ինձ յանձնել են Ազգերի լիկի բարձր Commissaire-ի mission-ը հայ եւ ոռու փախստականներին հողալու համար: Չորս տարի է, որ ես ահազին ճիգեր եմ արել, ճամբորդութիւններ կատարել, ծրագրեր կադմել հայ զաղթականները Սովետական Հայաստանում գէթ մասսամբ զետեղելու համար: Եւ ահա վերջին պահուն, երբ ես Մոսկուայի եւ Երեւանի հաճութիւնն ունեմ նրանց ընդունելու, Ազգերի լիկը մերժում է ինձ իմ պահանջած թեթեւ վարկը: Ո՛չ, ես այսպէս թողնել չեմ կարող. սա մի վրդովեցուցիչ փաստ է: Ես երէկ խօսեցի Ձեմքերլէնի հետ եւ ասացի այս բոլորը: Նրա պատասխանը վիրաւորական էր եւ անարդար: Նա, ուզած վարկի մերժումը բացատրելու համար, ասում էր, թէ 'ի՞նչ անենք, մենք շաւուներ ունենք, մեր Փինանսները ծանրաբեռնուած են': Ձեր Փինանսները ծանրաբեռնուած են, պատասխանեցի, դուք շաւուներ ունիք, մի փոքրիկ գումար խնայում էք հայ ժողովրդին, որ ո՛չ միայն իր կայքը, ստացուածքը չխնայեց ձեզ համար, այլ ե՛ւ իր մէկ միլիոն զաւակների կեանքք': «Արդարեւ, զուուի անիրաւութիւն է այս, — շարունակեց Նանսին, — որ ես ստիպուած եմ հրապարակ հանել մի գրքով, որից շատերը դժգոհ կր մնան: Բայց փոյթ չէ: Մէկ միլիոն հայ է ջարդուած — մէկ միլիոն առնուազն, — չեշտեց նա, — եւ այսօր այդ ժողովրդի մնացորդների հետ այսպիսի զուուի վարմունք: Ո՛չ, սա անհանդուրժելի է: Եթէ ուրիշ գրուածքի չեն հաւատում, թո'ղ կարդան Դր. Լեպսիուսի գիրքը: Գերմանացի է, կասկածից զուրս է ինչ որ գրել է Թիւրքիոյ կատարած սարսափների մասին: Ես դրում եմ, կր տեսնէք, թէ ի՞նչ կը գրեմ»:

Նանսինի վրդովմունքը այնքան մեծ էր, որ ես դժուարանում էի նրան օրուայ գործնական ինդիրներին բերել:

Ես. — Եւ ահա հէնց այս պատճառով է, մենք չենք կարող հրաժարուել Թիւրքաց Հայաստանից: Կովկասահայ հողերի քանակն ու որակը տեսած էք անձամբ: Սովետական կառավարութիւնը շատ վայր ի վերոյ լուրեր ու բեկլամներ է անում իր արած չարածի մասին, մեծ մասսամբ սուտ, չափաղանցրաբած, բայց ճիշդ է ասում, երբ յայտարարում է, որ Սովետական Հայաստանում հաղ չկայ ներգաղթի համար: Գուցէ գիտէք, որ հակառակ 10-15 հազար զաղթականների որ անցան Հայաստան վերջին տարիները, հարիւր

հազարի չափ մարդ է հեռացել Հայաստանից : Պարզ է, որ ապրել չի լինում : Սրան դարձան է պէտք : Եւ դարձանը՝ Թիւրքաց Հայաստանն է : Նայեցէք այս քարտէզը : (Մենք փուցինք Հայաստանի քարտէզը) Ահա այս բոլոր տարածութիւնը ամայի է Թիւրքաց ձեռքին, եւ նրանք երբեք չպիտի կարողանան բնակեցնել :

Նանսէն .— Ամայի է եւ այս, — նա ձեռքը տարաւ կարսի եւ Սուրմալուի վրայ :

Ես .— Անշուշտ, իրաւունք ունիք : Արդ՝ չէ՞ք գտնում, որ ժամանակը հասած է, քանի որ ձեզ մերժում են այդքան չնչին աջակցութիւն, մեր ճիզերը ուղղենք դէպի Թիւրքաց Հայաստան :

Նանսէն .— Ես էլ զիտեմ, որ այդ հողերը պարապ են : Ես գնացի մինչեւ Արաքսի ափերը եւ նայում էի Սուրմալուին, ամրողջը դատարկ է : Կարծեմ Մասիսի շուրջը քիւրդեր կան :

Ես .— Նրանց էլ վերջերս Թիւրքերը գաղթեցրին, փչացրին :

Նանսէն .— Բայց Հայերն ինչ ասում էին միշտ, թէ պէտք չէ Թիւրքիային գրգուել նորանոր պահանջներով . Հայերին նոր վնասներ կը տան :

Ես .— Պարոն Նանսէն, — ասացի, — Թիւրքերն էլ ի՞նչ պիտի անեն, որ չեն արել : Դա միանգամայն սխալ Հայեցակէտ է : Հայ ժողովրդի միակ ցանկութիւնն իր Հայրենի հողերի վերագրաւումն է եւ զրանից նա չի հրաժարուի երբեք : Հայկական Դատը միայն հայ փոքրաթիւ գաղթականների տեղաւորման ինդիր չէ :

Նանսէն .— Թ, ոչ, ես էլ ճիշդ ձեզ պէս եմ հասկանում Հայկական Դատը, բայց ի՞նչպէս անել, քանի որ Թիւրքերը կը մնան անզիջող :

Ես .— Հասկանում եմ ձեր հարցը : Մեր էլ մտահոգութիւնն այդ է : Մեր ցանկութիւնն է, գէթ առայժմ, թոյլ չտալ, որ մեր հարցի վրայ այս սկսուած կիսամիջոցներով մոխիր ցանուի եւ հասարակաց կարծիքը մոլորուի : Եւ յետոյ, Ազգերի Լիկի երկու յստակ որոշումները կան 1921 եւ 1922 թուերին Հայ Ազգային Օջաղի մասին : Այս ժողովը չի կարող ժխտել իր նախընթաց որոշումը :

Նանսէն .— Մեւրի դաշնագիրը չվաւերացուեց, սակայն :

Ես .— Այդ որոշումները Ազգերի Լիկի կապ չունեն Մեւրի դաշնագրի հետ, որ արդէն իսկ խախտուած էր 1921 թուի Լոնդոնի Conference-ին եւ, սակայն, դրանից յետոյ էլ Ազգերի Լիկը 1922-ին պնդեց Հայ Ազգային հօտե-ի վրայ :

Նանսէն .— Հասկանում եմ, իրաւ է : Բայց էլի մնացին Թիւրքերը : Ի՞նչպէս շորթել նրանցից Հայկական հողերը : Կամաւ չեն զիջի :

Ես .— Ասացի, նախ, առ այժմ հարկաւոր է պատրաստել Ազգերի Լիկի տրամադրութիւնը : Այստեղ իսպառ անծանօթ են մեր խնդրին եւ, բատ երեւոյթին, այն գոցուած են համարում : Երկրորդ՝ կայ Թիւրքիոյ անդամակցութեան հաւանականութիւնը Ազգերի Լիկին :

Նանսէն .— Եկող տարի հաւանաբար ...

Ես .— Ահա այդ առթիւ Հայկական Օջաղի ինդիրը պէտք է, որ հանուի Ազգերի Լիկի եւ Թիւրքիոյ առաջ, որպէս եղած որոշում, որից Թիւրքիան չպիտի թոյլ տալ որ խուսափի : Հակառակ պարագային, եթէ Թիւրքիան ըն-

դունուի առանց որեւէ պայմանի, դա կը լինի մեղ համար երկրորդ եւ աւելի սարսափելի հարուած Լօզանից յետոյ:

Նախնականում և՛մ: Թողէ՛ք, որ խորհիմ: Յամենայն դէպս, ևս սիրտի խօսեմ Assemble'eռում:

Ես ասացի, որ իր խօսքին հետեւողներ կը լինեն:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՖԻՆԱՆԺԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

Սեպտեմբեր 19

Շնորհաւորեցի իրենց ընտրութիւնը Աղգերի Լիկի Խորհրդի մէջ, եւ չնորհակալութիւն յայտնեցի իր կառավարութեան բարեացակամ վերաբերմունքի համար հանդէպ հայ փախստական անհատների, որոնք անցել են իրենց սահմանները:

Նա ասաց, որ մօտիկից ծանօթ է Հայկական Հարցին, կարդացել է Մանդելշտամի զիրքը եւ մի ուրիշը, երկհատոր, անունը չլիչեց, որոնք իր վրայ խորր տպաւորութիւն են թողել:

Այնուհետեւ մենք անցանք Հայկական Հարցի ներկայ վիճակին: Ես բացատրեցի եւ յանձնեցի իրեն մեր յուշագիրը եւ բացատրական նօտան:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏԻԴ ԲՐԻԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 24

Այսօր, սեպտեմբեր 24-ին, տեսնուեցի պ. Բրիանի հետ (արտաքին գործ. նախարար Ֆրանսայի):

Ես նրան մի քանի խօսքով բացատրեցի հայ ժողովրդի ակնկալութիւնները եւ յոյսերը եւ, միւս կողմից, Աղգերի Լիկի բռնած ընթացքը մեր հանդէպ, որ խորապէս նուաստացուցիչ լինելով, որեւէ շահ չունի: Ակնարկեցի ծըրացրած կոչին, որ Աղգերի Լիկի Խորհուրդը որոշել է վերստին ուղղել ազգերին գաղթականների համար: Եւ, միւս կողմից, ասացի, որ խոպան մոռացութեան տրուած է Հայկ: Հարցը, եւ այն, որ Աղգերի Լիկը երկու անգամ որոշում է կայացրել Հայ Աղգային Home-ի համար:

Բրիան:— Բայց ի՞նչպէս իրագործել Home-ը:

Ես:— Գիտեմ, այդ հարցը ծանրակշիռ է: Բայց չէ՞ որ թիւրքերի հաւանական մուքը կայ Աղգերի Լիկի մէջ:

Բրիան:— Ոչ, թիւրքիայի մուտքը Աղգերի Լիկի մէջ դեռ այդպէս չուտ չի լինի, յամենայն դէպս ո՛չ մօտիկ ժամանակներում: Բայց ենթադրենք, որ դա լինելու է, օրինակ, եկող տարի:

Ես:— Այդ ժամանակ Հայկական տեսակէտից երկու պարագայ կայ, որ պէտք է հաշուի առնել: Ա) այն, որ Լօզանի դաշնագրով թիւրքիոյ եւ Հայստանի սահմանները ձգուած են բաց եւ, պետութիւնները ճանաչելով թիւրքիոյ բոլոր սահմանները յիշեալ դաշնագրով, լոելեայն չեն ճանաչել

Թիւրքիոյ արեւելան սահմանները: Անցուշտ, սա առանց զիտաւորութեան չէ. բ) Ազգերի Լիկն երկու անգամ, 1921 եւ 1922 թուին, վճռապէս ճանաչել է, որ Հայերը իրենց Աղքային Օջախը պէտք է ունենան Թիւրքաց Հայաստանում: Այս որոշումներից նա չի կարող հրաժարուել: Այստեղ է մեր խնդրի էութիւնը: Հետեւապէս, երբ որ Թիւրքիան ներկայանայ, Ազգերի Լիկը, պարտական է յարուցանել Հայոց Աղքային Հօմե-ի խնդիրը և լուծել խաղաղ ճամբով: Այսօր ինչ որ կատարւում է Ազգերի Լիկի մէջ Հայերի համար իրապէս բարեգործութիւն է եւ բնաւ չի կարող եւ չպէտք է նկատուի որպէս Հայկական Հարցի զարգացումն:

Բրիան.— Ես ձեզ հասկացայ: Ես ձեզ հետ համաձայն եմ, որ կատարուածը Հայկական խնդրի լուծումը չէ եւ որ դա պարզ բարեգործութիւն է: Համաձայն եմ նաեւ, որ երբ Թիւրքիան ներկայանայ Ազգերի Լիկի անդամութիւնը խնդրելու, պէտք է որ Հայկական Հարցը նրա առջեւ դրուի: Այս ճիշդ տեսակէտ է եւ արդար: Խսկ այսօր:

Ես.— Այսօր բնական է, որ դժուար է մեր Հարցի գործնական լուծումը enyisage' անել, բայց եւ չպէտք է թոյլ տայ, որ նա մոռացուի: Ահա երեք շաբաթ է ես այստեղ եմ, բազմաթիւ մարդիկ եմ տեսել, եւ ցաւով նկատում եմ, որ մեր խնդիրը մոռացուած է կամ մոռացում է: Այս երեւոյթի դէմ պէտք է այդպէս Հակազդել նորանոր յայտնութիւններով: Ահա այս է մեր այսօրուան ուզածը:

Բրիան.— Այո՛, անհնարին եւ անօդուտ չէ այդ անել:

Յաջորդ օրը յանուն Փրանսիական պատուիրակութեան արուած յայտարարութիւնը պ. Bastid-ի համապատասխան էր այս զրոյցին:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԴԵ ԲՐՈՒԻԳԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 27

Այսօր գնացի մնաք բարի ասելու Դէ Բրուէրի եւ չնորհակալութիւն յայտնելու իր Հայանպաստ ճիղերի համար: Նա ցաւ յայտնեց, որ աւելին չկարողացաւ անել ներկայ պայմաններում:

«Սակայն, աւելացրեց նա, էականն ասուեց, եւ պէտք է հետապնդել: Զեր խնդիրը նման է, ասաց, Դանցիկի Corridot-ին: Ամէնքը զիտեն, որ նա պիտի չնջուի յօգուտ Գերմանիայի, բայց ոչ ոք վճռապէս չի դնում այդ Հարցը, անգամ Գերմանիան: Ժամանակի պէտք կայ: Այդպէս էլ Հայկական Հարցը: Ոչ ոք չի ուզում այսօր այն դնել եւ լուծումն պահանջել, բայց եւ ամէնքը զիտեն, որ դա մի խնդիր է, որ պէտք է մի օր լուծուի»:

(Այստեղ կը վերջանայ Աւետիս Ահարոնեանի քաղաքական օրագիրը:
Եթէ ասկէ յետոյ ան պահած է օրագիր, մեզ յայտնի չէ այդ: «Հ.» ԽՄԲ.):